ՆՈԲԵԼՅԱՆ
ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Ալբեր Կամյու

Ժանտախտը

Անտարես

https://1915.info

ՆՈԲԵԼՅԱՆ
ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Ալբեր Կամյու

Ժանտախտը

Երևան
«Անտարես»

Albert Camus
La Peste

Ֆրանսերենից թարգմանեց
ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԸ

Կամյու Ալբեր
Ժանտախտը: Վեպ/ Ալբեր Կամյու: Թարգմ.՝ Աննա Հակոբյան.– Եր.: Անտարես, 2019 – 296 էջ:

Ալբեր Կամյուի «Ժանտախտը» վեպն առաջին անգամ հրատարակվել է 1947 թվականին: Պայքարը, որ վեպում բնակչությունը տանում է ժանտախտի դեմ, իրականում խորհրդանշում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում եվրոպացիների դիմադրությունը ֆաշիզմին և նացիզմին:

ISBN 978-9939-76-260-9

Copyright © Editions Gallimard, Paris, 1947
All rights reserved
© Անտարես, 2019

Եթե փրամաբանական է բանտարկության մի տեսակը ներկայացնել մեկ ուրիշ տեսակի բանտարկությամբ, ապա նույնքան փրամաբանական է իրականում գոյություն ունեցող մի բան ներկայացնել գոյություն չունեցող մեկ այլ բանով:

Դանիել Դեֆո

Հետաքրքրաշարժ իրադարձությունները, որոնք կազմում են այս ժամանակագրության նյութը, տեղի են ունեցել 194... թվականին Օրանում: Ըստ համընդհանուր կարծիքի՝ այդ իրադարձություններն իրենց տեղում չէին և դուրս էին սովորականի շրջանակից: Առաջին հայացքից Օրանն իրոք սովորական քաղաք է՝ ընդամենը ալժիրյան ափի ֆրանսիական պրեֆեկտուրայի կենտրոն:

Քաղաքը ինքնին, պետք է խոստովանել, տգեղ է: Արտաքուստ խաղաղ է թվում, սակայն որոշ ժամանակ է պահանջվում՝ նկատելու այն, ինչով նա տարբերվում է աշխարհագրական բոլոր լայնությունների վրա գտնվող առևտրական մյուս քաղաքներից: Օրինակ՝ ինչպես պատկերացնել քաղաք առանց աղավնիների, առանց ծառ ու ծաղկի, առանց այգիների, որտեղ չես լսի ո՛չ թռչունների թևաբախյուն, ո՛չ տերևների սոսափյուն, մի խոսքով՝ մեկուսի մի վայր: Տարվա եղանակների փոփոխությունն ընթերցվում է միայն երկնքում: Գարնան գալուստն այստեղ ավետվում է միայն օդի փոփոխությամբ կամ ծաղիկների զամբյուղներով, որ փոքրիկ վաճառողները բերում են արվարձաններից. սա գարուն է, որ վաճառվում է շուկաներում: Ամռանը արևը հրդեհում է չոր ու պապակ տները, դրանք ծածկում գորշագույն մոխրով. այդ ժամանակ հնարավոր է ապրել միայն փակ փեղկերի ետևում:

Աշնանը, ընդհակառակը, ամենուր ցեխաջրի հեղեղ է: Լավ օրերը բացվում են միայն ձմռանը:

Քաղաքին ծանոթանալու ամենահարմար ձևը իմանալն է՝ ինչպես են աշխատում այնտեղ, ինչպես են սիրում և ինչպես են մեռնում: Մեր փոքրիկ քաղաքում (մի՞թե եղանակի պատճառով) այդ ամենն ամբողջություն է կազմում, ամեն բան կատարվում է նույն մոլեգին ու անտարբեր տեսքով: Այսինքն՝ այստեղ ձանձրանում են և ջանում ձեռք բերել սովորություններ: Մեր համաքաղաքացիները շատ են աշխատում, սակայն նպատակը մեկն է՝ հարստանալ: Նրանք հետաքրքրվում են հատկապես առևտրով և ըստ իրենց արտահայտության՝ «գործ են անում»: Բնականաբար նրանց հրճվանք են պատճառում նաև պարզ հաճույքները՝ կանայք, կինոն և ծովային լոգանքները: Բայց մեծ ողջախոհությամբ այդ հաճույքները նրանք պահում են շաբաթ երեկոյի ու կիրակի օրվա համար՝ ջանալով շաբաթվա մյուս օրերին ավելի շատ փող վաստակել: Երեկոյան դուրս գալով իրենց գրասենյակներից՝ ճիշտ նշված ժամին հավաքվում են սրճարաններում, զբոսնում նույն ծառուղիներում կամ նստում իրենց պատշգամբներում: Երիտասարդների ցանկություններն ավելի բուռն են ու վաղանցուկ, այնինչ առավել տարիքավորների մոլությունները սահմանափակվում են գնդիկախաղի ընկերակցություններով, բարեկամական ճաշկերույթներով ու խմբակներով, որտեղ խոշոր գումարով թղթախաղ են խաղում:

Անշուշտ կարող են առարկել, թե առանձնահատուկ ոչինչ չկա մեր քաղաքում, և որ, ի վերջո, մեր բոլոր ժամանակակիցներն էլ այդպիսին են: Իհարկե, այսօր ավելի բնական բան չկա, քան այն, որ մարդիկ աշխատեն առավոտից իրիկուն, իսկ հետո ընտրություն անեն իրենց կյանքի մնացած ժամանակը ծախսելու համար թղթախաղում, սրճարանում կամ շատախոսությամբ: Բայց կան քաղաքներ ու երկրներ, որտեղ մարդիկ ժամանակ առ ժամանակ կասկածում են, թե գոյություն ունի նաև այլ բան: Ընդհանուր առմամբ դա չի փոխում նրանց կյանքը: Սոսկ կասկած է հայտնվում, իսկ դա էլ ահագին բան է: Օրանը, ընդհակառակը, արտաքուստ քաղաք է առանց կասկածների, այսինքն՝ միանգամայն ժամանակակից քաղաք: Հետևաբար

անհրաժեշտություն չկա ճշտելու, թե ինչպես են սիրում մեզ մոտ: Տղամարդիկ ու կանայք կամ արագ հոշոտում են իրար, այսպես կոչված, սիրային գործողության մեջ, կամ աստիճանաբար սովորությամբ կապվում են միմյանց: Այս ծայրահեղությունների միջև սովորաբար միջին չի լինում: Այստեղ էլ յուրահատուկ բան չկա: Օրանում, ինչպես այլուր, ժամանակի և մտածմունքների պատճառով մարդիկ ստիպված են իրար սիրել անգիտակցաբար:

Մեր քաղաքի ամենայուրահատուկ դժվարությունն այն զգացումն է, որ մարդիկ ունենում են մեռնելիս: Դժվարությունը, ասենք, այնքան էլ ճիշտ բառ չէ, ավելի ճիշտ կլիներ խոսել անհարմարավետության մասին: Հիվանդ լինելը երբեք էլ հաճելի չէ, սակայն կան քաղաքներ ու երկրներ, որոնք քեզ սատարում են հիվանդության ժամանակ, երբ կարող ես ինչ-որ ձևով դիմանալ: Հիվանդը կարիք ունի քնքշության, նա հենարան է փնտրում, և դա բնական է: Սակայն Օրանում եղանակի կտրուկ փոփոխությունները, ձեռնարկվող գործերի կարևորությունը, շրջապատի անշուք զարդարանքը, մթնշաղի հապճեպությունը, հաճույքների որակը՝ այս ամենը պահանջում է ամուր առողջություն: Հիվանդ մարդն այստեղ իրեն միայնակ է զգում: Էլ ի՞նչ մտածես որոգայթն ընկած, տապից ճռնչացող հարյուրավոր պատերի ետևում մահացողի մասին, մինչդեռ նույն պահին մի ողջ բնակչություն հեռախոսափողն ականջին կամ սրճարաններում խոսում է պայմանագրերի, գործարքների կամ զեղչերի մասին: Կարելի է հասկանալ, թե որքան անհարմարավետություն կա անգամ ժամանակակից մահվան մեջ, երբ այն վրա է հասնում նման չոր վայրում:

Այս մի քանի դիտողությունը գուցե բավարար է մեր քաղաքի մասին գաղափար կազմելու համար: Մյուս կողմից էլ ոչինչ չպետք է չափազանցել: Հատկապես հարկ է ընդգծել քաղաքի և նրա առօրյայի հասարակ կերպարանքը: Սակայն հենց ձեռք ես բերում սովորություններ, օրերն իսկույն անցնում են առանց դժվարությունների: Եվ այն պահին, երբ մեր քաղաքը նպաստում է սովորությունների ձեռքբերմանը, կարող ենք ասել, որ ամեն բան գնում է դեպի լավը: Այս տեսանկյունից, իհարկե, մեր քաղաքն այնքան էլ գայթակղիչ չէ:

Բայց փոխարենը մեզ անծանոթ է անկարգությունը: Եվ մեր անմիջական, համակրելի ու եռանդուն բնակչությունը միշտ էլ ճանապարհորդի մեջ առաջացրել է խոր հարգանք: Այս ոչ գեղատեսիլ, բուսականությունից զուրկ և անհոգի քաղաքն ի վերջո թվում է հանգստավետ, և այնտեղ վերջապես քուն ես մտնում: Սակայն արդարացի կլինի ավելացնել, որ քաղաքն ասես պատվաստված է աննման մի բնապատկերի վրա՝ լերկ սարահարթի կենտրոնում, շրջապատված լուսավոր բլրակներով, կատարյալ գծագրությամբ մի ծովախորշի դիմաց: Միայն կարելի է ափսոսալ, որ այն կառուցված է մեջքը շրջած այդ ծովախորշին, և որ անհնարին է տեսնել ծովը որևէ կետից, և որ այն միշտ պետք է որոնել:

Այստեղ արդեն առանց դժվարության կարող ենք ընդունել, որ մեր համաքաղաքացիների համար որևէ անսպասելիություն չէին ներկայացնում այդ տարվա գարնանը տեղի ունեցած միջադեպերը, որ ինչպես մենք հետագայում միայն հասկացանք, լուրջ իրադարձությունների շարքի առաջին նախանշաններն էին, որոնք և ստիպեցին վարել այս ժամանակագրությունը: Այդ դեպքերը ոմանց շատ բնական կթվան, իսկ ոմանց էլ, ընդհակառակը, անհավանական: Բայց ի վերջո, ժամանակագիրը չի կարող հաշվի նստել հակաճառությունների հետ: Նրա պարտքն է միայն ասել՝ «Այսպես է պատահել», եթե նա գիտի, որ դա իրոք պատահել է, և որ դա հետաքրքրությամբ է լցրել մի ամբողջ ժողովրդի կյանքը, և ուրեմն կլինեն հազարավոր վկաներ, որոնք իրենց հոգու խորքում կընդունեն նրա ասածների ճշմարտացիությունը:

Բացի դրանից, պատմիչը, որի անունը ժամանակին կիմանանք, չէր համարձակվի ձեռնարկել նմանօրինակ մի գործ, եթե պատահականությունը նրան անմիջական հնարավորություն չընձեռեր հավաքելու որոշակի քանակությամբ ցուցումներ և եթե դեպքերի բերումով նրան մասնակից չդարձներ այն ամենին, որ նա հավակնում է վերարտադրել: Հենց դա է նրան արտոնում ստանձնել պատմաբանի առաքելությունը: Հասկանալի է, որ պատմաբանը թեկուզև սկսնակ, միշտ ունի փաստաթղթեր: Ուրեմն այս պատմության շարադրողն էլ ունի իր փաստաթղթերը, նախ՝ իր սեփական վկայությունը, հետո՝

https://1915.info

մյուսներինը, քանի որ իր կոչումով պետք է գաղտնիքներ քաղի այս ժամանակագրության բոլոր գործող անձանցից, և վերջապես՝ ունի ձեռքն ընկած պատահական նյութեր: Նա դրանց կանդրադառնա, երբ հարկ կհամարի, և կօգտագործի իր ուզածին պես... Բայց գուցե ժամանակն է ավարտելու մեկնաբանություններն ու լեզվական զգուշավորությունները, որպեսզի անցնենք բուն պատմությանը: Առաջին օրերի նկարագրությունը պահանջում է որոշակի մանրակրկիտություն:

* * *

Ապրիլի տասնվեցի առավոտյան, երբ բժիշկ Բեռնար Ռիոն դուրս եկավ իր բնակարանից, սանդղահարթակում ոտքը դեմ առավ մի սատկած առնետի: Առանց բանի տեղ դնելու մի կողմ հրեց կենդանուն և իջավ աստիճաններով: Բայց փողոց դուրս գալով՝ մտածեց, որ առնետն իր տեղում չէր, և վերադարձավ՝ այդ մասին դռնապանին հայտնելու: Պարոն Միշելի արձագանքից նա ավելի լավ պատկերացրեց, թե որքան արտառոց էր իր հայտնագործությունը: Այդ սատկած առնետի ներկայությունը նրան ընդամենը զարմանալի էր թվում, մինչդեռ դռնապանի համար խայտառակություն էր: Վերջինիս կեցվածքը վճռական էր. շենքում առնետներ չկան: Բժիշկը զուր էր փորձում նրան հավատացնել, որ առաջին հարկի հարթակում եղել էր մեկ առնետ և ամենայն հավանականությամբ՝ սատկած, պարոն Միշելի համոզվածությունն անդրդվելի էր: Շենքում առնետներ չկան, ուրեմն ինչ-որ մեկը պետք է բերած լինի դրսից: Մի խոսքով՝ անհամ կատակ էր:

Նույն երեկոյան Բեռնար Ռիոն մինչ իր բնակարան բարձրանալը, շենքի նախամուտքին կանգնած, բանալիներն էր փնտրում, երբ միջանցքի խորքում նկատեց մի խոշոր առնետ՝ երերուն քայլերով ու թրջված մազերով: Կենդանին կանգ առավ՝ ասես փորձելով հավասարակշռությունը գտնել, հետո գնաց դեպի բժիշկը, նորից կանգ առավ, պտտվեց ինքն իր շուրջը, թույլ ծվոց արձակեց և ընկավ՝ արյուն ցայտեցնելով կիսաբաց մռութից: Բժիշկը մի պահ հապաղեց, հետո բարձրացավ իր բնակարանը:

Առնետի մասին չէր, որ մտածում էր: Այդ ցայտած արյունը նրան վերադարձրեց իր մտահոգությանը: Կինը, որ մի տարուց ի վեր հիվանդ էր, առավոտյան մեկնելու էր լեռնային առողջարան: Կնոջը գտավ պառկած իրենց ննջարանում, ինչպես ինքն էր խնդրել: Այդպես նա կնախապատրաստվեր հոգնեցուցիչ ճանապարհորդությանը: Կինը ժպտաց.

– Ինձ շատ լավ եմ զգում,– ասաց նա:

Մնարի լուսամփոփի ներքո բժիշկը դիտում էր իր կողմը շրջված դեմքը: Չնայած երեսուն տարվան և հիվանդության թողած հետքերին, Ռիոյի համար այդ դեմքը միշտ նույնն էր, ինչպես երիտասարդ ժամանակ, գուցե ժպիտի պատճառով, որն իր մեջ ամփոփում էր ամեն ինչ:

– Քնիր, եթե կարող ես,– ասաց նա:– Հիվանդապահուհին գալու է ժամը տասնմեկին, և ես ձեզ կուղարկեմ կեսօրվա գնացքով:

Համբուրեց թեթևակի խոնավ ճակատը: Ժպիտը նրան ուղեկցեց մինչև դուռը:

Հաջորդ առավոտյան՝ ապրիլի տասնյոթին, ժամը ութին, դռնապանը կանգնեցրեց անցնող բժշկին և բողոքեց չար կատակասերներից, որոնք երեք սատկած առնետ էին դրել միջանցքի կենտրոնում: Երևի օգտագործել էին շատ մեծ թակարդներ, որովհետև դրանք ամբողջովին արնաթաթախ էին եղել: Դռնապանը որոշ ժամանակ սպասել էր դռան արանքում՝ առնետների թաթերից բռնած և մտածելով, որ մեղավորները կհայտնվեն և իրենց կմատնեն որևէ թունոտ կատակով: Բայց ոչինչ տեղի չէր ունեցել:

– Լա՜վ,– ասում էր պարոն Միշելը,– ես դրանց հերը դեռ կանիծեմ:

Շփոթահար Ռիոն որոշեց իր շրջագայությունը սկսել արվարձանային թաղամասերից, որտեղ ապրում էին իր ամենաչքավոր հիվանդները: Այստեղ աղբը հավաքվում էր շատ ուշ, և մեքենան, որ սլանում էր թաղամասի ուղիղ ու փոշեպատ փողոցներով, դիպչում էր մայթեզրին շարված աղբարկղերին: Նման մի փողոցում բժիշկը հաշվեց մոտ մեկ տասնյակ առնետ բանջարեղենի ու աղտոտ փալասների վրա:

Առաջին հիվանդը, որին այցելեց, պառկած էր անկողնում: Սենյակը, որը նայում էր փողոցին, ծառայում էր և՛ որպես ննջարան, և՛ որպես ճաշասենյակ: Մի ծեր իսպանացի էր՝ կոպիտ ու կնճռոտ դեմքով: Նրա առջև՝ վերմակի վրա, դրված էր սիսեռով լի երկու կաթսա: Այն պահին, երբ բժիշկը մտավ, հիվանդը, կիսով չափ նստած անկողնում, ետ էր ձգվում՝ ջանալով վերագտնել ծեր ասթմատիկի իր խռպոտ շնչառությունը: Կինը մի տաշտակ բերեց:

– Հը՛, բժիշկ,– ասաց հիվանդը ներարկման պահին,– տեսե՞լ եք դրանց՝ ինչպես են դուրս գալիս:

– Այո՛,– ասաց կինը,– հարևանս երեքը բռնել է:

Ծերուկը ձեռքերն իրար շփեց:

– Դուրս են գալիս, բոլոր աղբարկղերը լիքն են: Սով է:

Ռիոն առանց դժվարության հավաստիացավ, որ ողջ թաղամասը խոսում է առնետների մասին: Այցերն ավարտելով՝ նա վերադարձավ տուն:

– Հեռագիր ունեք այնտեղ՝ վերևում,– ասաց պարոն Միշելը:

Բժիշկը նրան հարցրեց, թե չի՞ հայտնաբերել նոր առնետներ:

– Օ՛, ո՛չ,– պատասխանեց դռնապանը,– ես հետևում եմ, գիտե՛ք: Իսկ այդ խոզերը չեն համարձակվի:

Հեռագիրը հայտնում էր Ռիոյին, որ առավոտյան մայրն էր ժամանում: Հիվանդ կնոջ բացակայության ընթացքում նա պետք է զբաղվեր որդու տնային գործերով: Երբ բժիշկը բնակարան մտավ, հիվանդապահուհին արդեն այնտեղ էր: Ռիոն տեսավ կնոջը՝ հագնված, դեմքը շպարված: Ժպտաց նրան.

– Լավ է,– ասաց նա,– շատ լավ է:

Քիչ անց կայարանում նա արդեն տեղավորում էր կնոջը վագոն-ննջարանում: Կինը զննում էր խցիկը:

– Շատ թանկ է մեզ համար, չէ՞:

– Այդպես է պետք,– պատասխանեց Ռիոն:

– Այդ ի՞նչ պատմություն է առնետների հետ կապված:

– Չգիտեմ: Տարօրինակ է, բայց կանցնի:

Հետո արագ վրա բերեց, որ ներողություն է խնդրում նրան չհետևելու համար, անտարբերության համար: Կինը թափ

տվեց գլուխը՝ ասես ցանկանալով լռեցնել նրան: Բայց Ռիոն ավելացրեց.

– Ամեն ինչ ավելի լավ կլինի, երբ վերադառնաս: Ամեն ինչ կվերսկսենք:

– Այո՛,– ասաց կինը, և աչքերը փայլեցին:– Ամեն ինչ կվերսկսենք:

Հետո շրջվեց մեջքով և սկսեց նայել պատուհանից դուրս: Կառամատույցում մարդիկ շտապում էին, հրմշտվում: Շոգեքարշի շաչյունը լսվում էր այնտեղ: Ռիոն կնոջը կանչեց անունով, և երբ նա շրջվեց, տեսավ, որ դեմքը ծածկված էր արցունքներով:

– Պետք չէ,– ասաց քնքշորեն:

Արցունքների արանքից կրկին երևաց ժպիտը, բայց փոքր-ինչ այլայլված: Կինը խոր շունչ քաշեց:

– Գնա՛, ամեն ինչ լավ կլինի:

Ռիոն կնոջը սեղմեց կրծքին: Եվ հիմա կառամատույցում՝ ապակու մյուս կողմում, նա միայն կնոջ ժպիտն էր տեսնում:

– Շատ եմ խնդրում,– ասաց նրան,– հետևիր քեզ:

Բայց կինն այլևս չէր կարող լսել նրան:

Կայարանի կառամատույցի ելքի մոտ Ռիոն հանդիպեց պարոն Օթոնին՝ ոստիկանության քննիչին, որը բռնել էր փոքր երեխայի ձեռքը: Բժիշկը նրան հարցրեց, թե արդյոք չի՞ մեկնում ուղևորության: Պարոն Օթոնը, որ երկարահասակ էր ու սևազգեստ, կիսով չափ նմանվում էր, այսպես ասած, աշխարհիկ մարդու, իսկ կիսով չափ դիակիր էր հիշեցնում: Նա պատասխանեց սիրալիր, բայց հակիրճ.

– Ես սպասում եմ տիկին Օթոնին, որ գնացել էր իր հարգանքի տուրքը մատուցելու իմ ընտանիքին:

Շոգեքարշը սուլեց:

– Առնետները...– ասաց քննիչը:

Ռիոն շարժվեց գնացքի ուղղությամբ, սակայն իսկույն շրջվեց դեպի ելքը:

– Այո,– ասաց նա,– դատարկ բան է:

Այդ պահից նրա հիշողության մեջ մնաց միայն աղբատար հավաքարարը, որը բռնել էր սատկած առնետներով լի արկղը:

Նույն օրը՝ կեսօրից հետո՝ դեռ ընդունելության սկզբում, Ռիոյին այցելեց մի երիտասարդ, որի մասին հայտնեցին, որ լրագրող էր և որ առավոտյան էլ էր եկել: Նրա անունը Ռեյմոն Ռամբեր էր: Կարճահասակ էր, լայնաթիկունք, դեմքը՝ վճռական, բաց գույնի, խելացի աչքերով: Կրում էր մարզական ոճի զգեստ և ուներ անհոգ կյանքով ապրող մարդու տեսք: Առանց այլևայլությունների ուղղակի բացատրեց իր նպատակը, փարիզյան նշանավոր մի լրագրի համար նա նյութեր էր հավաքում արաբների կյանքի պայմանների վերաբերյալ և կուզենար տեղեկություններ ստանալ նրանց առողջական վիճակի մասին: Ռիոն ասաց, որ նրանց վիճակն այնքան էլ լավ չէ: Բայց ավելի հեռուն գնալուց առաջ կուզենար իմանալ, թե լրագրողն ի զորու էր ճշմարտությունն ասել:

– Իհարկե,– պատասխանեց լրագրողը:

– Ուզում եմ հարցնել՝ կարո՞ղ եք անվերապահորեն դատապարտել:

– Անվերապահորե՞ն, պիտի ասեմ՝ ոչ: Սակայն իմ կարծիքով նման դատապարտումն անհիմն կլինի:

Ռիոն նրբանկատորեն նշեց, որ իրոք, նման դատապարտումը կլիներ անհիմն, սակայն այդ հարցը տալով՝ նա ուզում էր ընդամենն իմանալ, թե Ռամբերի վկայություններն արդյոք կլինե՞ն առանց վերապահումների:

– Ես ընդունում եմ միայն անառարկելի վկայությունները: Այլապես չեմ կարող ներառել ձեր վկայությունն իմ տեղեկատվության մեջ:

– Խոսում եք Սեն-Ժյուստի լեզվով,– ավելացրեց լրագրողը ժպտալով:

Առանց ձայնը բարձրացնելու Ռիոն ասաց, որ ոչինչ չգիտի, այլ միայն խոսում է այն մարդու լեզվով, որը հոգնել է աշխարհում ապրելուց, սակայն սիրում է իր նմաններին և վճռել է որքան կարող է մերժել ամեն տեսակի անարդարություն և փոխզիջում: Ռամբերը լսում էր բժշկին ուսերը վեր քաշած:

– Կարծում եմ՝ հասկանում եմ ձեզ,– վերջապես ասաց նա վեր կենալով: Բժիշկը նրան ուղեկցեց մինչև դուռը:

– Շնորհակալ եմ, որ այդպես եք ընկալում իրերը:

Ռամբերն անհամբերության նշաններ ցույց տվեց.

– Այո՛,– ասաց նա,– հասկանում եմ, ներեցեք, որ անհանգստացրի ձեզ:

Բժիշկը սեղմեց նրա ձեռքը և ասաց, որ հետաքրքիր ռեպորտաժ կարող է ստացվել այդ օրերին քաղաքում հայտնաբերված մեծ թվով սատկած առնետների մասին:

– Օ՛,– բացականչեց Ռամբերը,– դա հետաքրքրում է ինձ:

Ժամը տասնյոթին, երբ դուրս էր գալիս նոր այցելությունների համար, բժիշկը աստիճանների վրա հանդիպեց բավական երիտասարդ մի մարդու, որը ծանրամարմին էր, իսկ դեմքը՝ լայն ու գոգավոր, գծագրված թավ հոնքերով: Նրան մի քանի անգամ տեսել էր իսպանացի պարողների մոտ, որոնք ապրում էին իրենց շենքի վերջին հարկում: Ժան Տարուն կենտրոնացած ծխում էր և դիտում մի առնետի վերջին ջղաձգությունները, որը սատկում էր իր ոտքերի առջև՝ աստիճանների վրա: Տարուն բժշկին նայեց իր գորշ աչքերի հանգիստ, սևեռուն հայացքով, բարևեց նրան՝ ավելացնելով, որ առնետների հայտնվելը հետաքրքիր իրադարձություն է:

– Այո՛,– պատասխանեց Ռիոն,– բայց ի վերջո սկսում է զայրացնել:

– Որոշ իմաստով, բժիշկ, միայն որոշ իմաստով: Մենք երբևէ նման բան չենք տեսել, ահա թե ինչ: Բայց իմ կարծիքով դա հետաքրքիր է, այո՛, միանգամայն հետաքրքիր:

Տարուն ձեռքը մտցրեց մազերի մեջ, որպեսզի դրանք ետ գցի, նորից նայեց այժմ արդեն անշարժացած առնետին, հետո ժպտալով ասաց Ռիոյին.

– Բայց վերջին հաշվով, բժի՛շկ, դա վերաբերում է հատկապես դռնապանին:

Հենց սրանից հետո բժիշկը դռնապանին տեսավ տան մուտքի մոտ՝ հենված պատին: Նրա դեմքը, որ սովորաբար արնաբուխ էր լինում, այժմ հոգնածություն էր արտահայտում:

– Հա՛, գիտեմ,– ասաց ծերուկ Միշելը Ռիոյին, որն ուզում էր նորությունը հայտնել,– հիմա զույգ-զույգ կամ երեք-երեք են գտնում: Բայց մյուս տներում էլ նույնն է:

Ուժասպառ ու մտահոգ էր երևում: Ինքնաբերաբար վիզն էր քորում: Ռիոն հարցրեց նրա առողջության մասին: Անշուշտ չէր

կարող ասել, թե լավ չէր, բայց մի տեսակ անհանգիստ էր: Իր կարծիքով՝ բարոյապես էր տանջվում: Այդ առնետներն իրեն տապալել էին, և ամեն բան լավ էր լինելու, երբ դրանք անհետանային:

Բայց հաջորդ առավոտյան՝ ապրիլի տասնութին, երբ բժիշկը կայարանից մորն էր բերում, պարոն Միշելին գտավ էլ ավելի ընկճված. նկուղից մինչև ձեղնահարկ տասնյակի չափ առնետներ էին սփռված աստիճաններին, հարևան տների աղբարկղերը ևս լեցուն էին առնետներով: Բժշկի մայրը չզարմացավ՝ լսելով նորությունը:

– Նման բաներ պատահում են:

Նա մի փոքրահասակ, արծաթահեր կին էր, սև ու մեղմաբարո աչքերով:

– Ուրախ եմ, որ նորից տեսնում եմ քեզ, Բեռնար,– ասաց նա:– Առնետները չեն կարող խոչընդոտել իմ ուրախությանը:

Ռիոն կրկին համոզվեց, որ իրոք, մոր հետ ամեն ինչ հեշտ է թվում:

Այսուհանդերձ, զանգահարեց հակաառնետային կոմունալ ծառայություն, որի տնօրենին ծանոթ էր: Արդյոք նա լսե՞լ էր առնետների մասին, որոնք մեծ խմբերով գետնի երես էին դուրս գալիս մեռնելու: Մերսյեն՝ տնօրենը, լսել էր այդ մասին, և անգամ իր գրասենյակում, որն այնքան էլ հեռու չէր կառամատույցներից, հայտնաբերել էին հիսունից ավելի առնետ: Բայցևայնպես կասկածում էր՝ արդյոք լո՞ւրջ բան էր: Ռիոն չէր կարող վճռել, բայց կարծում էր, որ հակաառնետային ծառայությունը պարտավոր էր միջամտել:

– Այո՛,– ասաց Մերսյեն,– բայց միայն կարգադրությամբ: Եթե կարծում ես, որ իրոք արժանի գործ է, ես կփորձեմ ձեռք բերել կարգադրություն:

– Արժի ջանքեր գործադրել,– պատասխանեց Ռիոն:

Սպասուհին քիչ առաջ նրան տեղեկացրել էր, որ հարյուրավոր սատկած առնետներ էին հավաքել մի մեծ գործարանում, որտեղ աշխատում էր նրա ամուսինը:

Մոտավորապես հենց այդ ժամանակ էր, որ մեր համաքաղաքացիները սկսեցին անհանգստանալ: Քանզի ամսի 18-ից սկսած գործարաններն ու պահեստներն իրոք սկսեցին հեղեղվել հարյուրավոր առնետների դիակներով: Եղան դեպքեր, երբ ստիպված էին

սպանել կենդանիներին, որոնց հոգեվարքը շատ երկար էր տևում: Բայց արվարձանային թաղամասերից մինչև քաղաքի կենտրոնը, որտեղից անցնում էր բժիշկ Ռիոն, կամ որտեղ հավաքվում էին մեր համաքաղաքացիները, ամենուրեք առնետների կույտեր էին նրանց դիմավորում աղբարկղերում կամ երկար շարքերով առվակների մեջ: Այդ օրվանից երեկոյան թերթերը սկսեցին զբաղվել այս գործով և հարց առաջադրեցին, թե արդյոք քաղաքապետարանը չի՞ պատրաստվում գործել՝ այո կամ ոչ, և որոնք են այն անհապաղ միջոցները, որ նա մտադիր է ձեռնարկել այդ գարշելի ներխուժումից իր քաղաքացիների ապահովությունը երաշխավորելու համար: Քաղաքապետարանը ոչինչ չէր նախատեսել և բոլորովին ոչինչ չէր ձեռնարկում, այլ փորձում էր ժողով գումարել իրավիճակը գնահատելու համար: Հրաման տրվեց հակաառնետային ծառայությանը՝ ամեն առավոտ, վաղ արշալույսին հավաքել սատկած առնետներին: Հավաքելուց հետո ծառայողական երկու մեքենա պետք է այդ դիակները տեղափոխեին աղբակիզման կայան՝ այրելու:

Սակայն հաջորդ օրերին դրությունը լրջացավ: Հավաքված կրծողների թիվը գնալով աճում էր, և բերքահավաքն օրեցօր ավելի առատ էր դառնում: Չորրորդ օրվանից առնետները սկսեցին խմբերով դուրս գալ մեռնելու: Խորշերից, ներքնահարկերից, նկուղներից, կոյուղիներից նրանք խարխափելով ելնում էին երկար շարքերով, երերում լույսի տակ, պտտվում իրենք իրենց շուրջը և հետո սատկում մարդկանց մոտ: Գիշերը միջանցքներում կամ փոքրիկ փողոցներում պարզորոշ լսվում էր նրանց հոգեվարքային թույլ ծվոցները: Առավոտյան արվարձաններում դրանց գտնում էին նույն առվի մեջ փռված՝ սուր դնչիկի վրա մի պուտ արյուն, մի քանիսը՝ փքված ու նեխած, մյուսները՝ պրկված և դեռևս ցցուն բեղիկներով: Անգամ քաղաքի կենտրոնում կարելի էր հանդիպել առնետների փոքրիկ կույտերի սանդղահարթակներում կամ բակերում: Նրանք գալիս էին սատկելու նաև մեկուսի՝ վարչական նախասրահներում, դպրոցների զբոսարաններում, երբեմն էլ՝ սրճարանների դարավանդների վրա: Մեր ապշահար համաքաղաքացիները նրանց հայտնաբերում էին քաղաքի ամենաբանուկ վայրերում. Ձենքի հրապարակը,

ծառուղիները, Ֆրոն-դը-մեր ճեմափողոցը նույնպես տեղ-տեղ աղտոտված էին: Լուսաբացին մաքրվելով այդ սատկած կենդանիներից՝ քաղաքն աստիճանաբար դարձյալ լցվում էր դրանցով, որոնք օրվա ընթացքում բազմապատկվում էին: Մայթերին էլ էին պատահում, հատկապես գիշերային ժամերին, երբ անցորդն իր ոտքի տակ զգում էր դեռ տաք դիակի առաձգական զանգվածը: Կարելի էր ասել, որ հողն ինքը, որի վրա կանգնած էին մեր տները, մաքրվում էր իր մեջ կուտակված աղտոտությունից, որովհետև թույլ էր տալիս գետնի երես դուրս գալ չիբաններին ու թարախաբշտերին, որոնք մինչ այդ գործել էին ընդերքում: Միայն պատկերացրե՛ք մինչ այդ այնքան խաղաղ մեր փոքրիկ քաղաքի ապշանքը, որը հիմա մի քանի օրում տակնուվրա էր եղել, ինչպես քաջառողջ մի մարդ, որի թանձրացած արյունը հանկարծ միանգամից փոթորկում է:

Բանն այնտեղ հասավ, որ Տեղփաստ գործակալությունը (տեղեկություններ, փաստաթղթեր, տեղեկատվություն ցանկացած թեմայի շուրջ) իր անվճար լրատվության ռադիոհաղորդման ընթացքում հայտարարեց, որ միայն մեկ օրվա՝ ամսի 25-ի ընթացքում 6231 առնետ է հավաքագրվել և հրկիզվել: Այս թիվը, որ պարզաբանում և իմաստավորում էր քաղաքացիների աչքի առաջ տեղի ունեցող ամենօրյա տեսարանը, էլ ավելի մեծացրեց խառնաշփոթությունը: Մինչ այդ տրտնջում էին միայն տհաճ փաստից: Այժմ զգում էին, որ այդ երևույթը, որի ծավալը անկարող էին ճշտել, ոչ էլ բացատրել նրա ծագումը, իր մեջ սպառնալիք էր պարունակում: Միայն ասթմայով տառապող իսպանացին էր շարունակ շփում ձեռքերն ու կրկնում ծերունական հրճվանքով.

– Դուրս են գալիս, դուրս են գալիս:

Ապրիլի 28-ին Տեղփաստը հայտարարեց, որ հավաքագրվել է 8000 առնետ: Քաղաքում տագնապը հասավ իր գագաթնակետին: Սկսեցին պահանջել արմատական միջոցառումներ, մեղադրել իշխանություններին, իսկ ծովամերձ տներ ունեցողներից շատերն արդեն խոսում էին քաղաքից հեռանալու մասին: Սակայն հաջորդ օրը գործակալությունը հաղորդեց, որ ներխուժումը կտրուկ անկում է ապրել, և որ հակաառնետային ծառայությունը հավաքել է սատկած

առնետների ընդամենը մի խղճուկ քանակություն: Քաղաքը թեթևացած շունչ քաշեց:

Սակայն նույն օրը՝ կեսօրին, երբ բժիշկ Ռիոն մեքենան էր կանգնեցնում իրենց շենքի առջև, փողոցի ծայրին նկատեց դռնապանին, որը քայլում էր դժվարությամբ, խամաճիկի տեսքով՝ գլուխը կախ, թևերն ու ոտքերը հեռու-հեռու գցելով: Ծերուկը թևանցուկ էր արել մի քահանայի, որին բժիշկը ճանաչում էր: Հայր Պանլուն էր՝ զարգացած ու աննկուն մի ճիզվիտ, որին երբեմն-երբեմն էր հանդիպում, և որը շատ հարգված էր քաղաքում, նույնիսկ նրանց շրջանում, ովքեր անտարբեր էին կրոնական հարցերի նկատմամբ: Ռիոն սպասեց նրանց: Ծերուկ Միշելի աչքերը վառվում էին, շնչառությունը սուլոց էր հիշեցնում: Իրեն լավ չէր զգացել, ասում էր նա, և դուրս էր եկել թարմ օդ շնչելու: Սակայն վզի, անութների և աճուկների շրջանի ուժեղ ցավերը ստիպել էին վերադառնալ և դիմել հայր Պանլուի օգնությանը:

– Ուռուցքներ են,– ասաց նա,– շատ են նեղում:

Ձեռքը դուրս հանելով մեքենայի պատուհանից՝ բժիշկը մատներով շոշափեց Միշելի՝ իրեն պարզած պարանոցը. այնտեղ քարի պես կոշտ հանգույց էր գոյացել:

– Գնացեք պառկեք, չափեք ջերմությունը, կեսօրից հետո կգամ ձեզ տեսնելու:

Երբ դռնապանը գնաց, Ռիոն հարցրեց հայր Պանլուին, թե ինչ է մտածում այդ առնետների հայտնվելու մասին:

– Դե երևի համաճարակ է,– պատասխանեց հայր սուրբը և ժպտաց ակնոցի կլորավուն ապակիների տակից:

Նախաճաշից հետո, երբ Ռիոն նորից էր կարդում առողջարանից ստացած հեռագիրը, որտեղ կինը հայտնում էր իր տեղ հասնելու մասին, հնչեց հեռախոսը: Զանգում էր իր հին հաճախորդներից մեկը, որն աշխատում էր քաղաքապետարանում: Երկար ժամանակ նա տառապում էր աորտայի նեղացումից, և որովհետև չքավոր էր, Ռիոն նրան բուժել էր անվճար:

– Այո՛, հիշում եք ինձ,– ասաց նա,– բայց խոսքն իմ մասին չէ: Արագ եկեք, հարևանս շատ վատ է զգում:

https://1915.info

Խոսում էր հևալով: Ռիոն հիշեց դռնապանի մասին և վճռեց, որ հետո կգնա նրա մոտ: Մի քանի րոպե անց նա արդեն բացում էր հեռավոր թաղամասում գտնվող Ֆեդերբ փողոցի ցածրիկ տան դուռը: Խոնավ ու գարշահոտ աստիճանների վրա նա հանդիպեց Ժոզեֆ Գրանին՝ քաղաքապետարանի ծառայողին, որն իջնում էր իրեն դիմավորելու: Նա հիսունին մոտ մարդ էր, դեղնավուն բեղերով, երկայնահասակ, մեջքը կոր, նեղ ուսերով ու նիհար վերջույթներով:

– Հիմա ավելի լավ է,– ասաց նա՝ հասնելով Ռիոյին,– բայց ինձ թվաց՝ արդեն վերջն է:

Քիթը մաքրեց: Երրորդ՝ վերջին հարկում՝ ձախ կողմի դռան վրա, Ռիոն կարդաց կարմիր կավճով գրվածը. «Մտեք, ես կախվել եմ»:

Ներս մտան: Պարանը կախված էր ջահից՝ շուռ եկած աթոռի վերևում, սեղանը անկյուն էր քշված: Բայց պարանի օղակը դատարկ էր:

– Ես նրան ճիշտ ժամանակին իջեցրի,– ասաց Գրանը, որն ասես անընդհատ ընտրովի բառեր էր փնտրում՝ չնայած խոսում էր շատ հասարակ լեզվով:– Դուրս էի գալիս և հենց այդ ժամանակ աղմուկ լսեցի: Երբ տեսա գրությունը, ինչպե՞ս բացատրեմ, կարծեցի՝ կատակ է: Բայց նա այնպիսի տարօրինակ, նույնիսկ կարելի է ասել՝ չարագուշակ տնքոց արձակեց:

Գլուխն էր քորում.

– Իմ կարծիքով այդ ամենը ցավոտ է եղել: Դե պարզ է, ես մտա:

Նրանք հրել էին դուռը և այժմ հայտնվել լուսավոր, բայց խղճուկ կահավորված սենյակի շեմին: Մի փոքրամարմին, գնդլիկ մարդ էր պառկած պղնձե մահճակալին: Շնչում էր մեծ դժվարությամբ և նրանց նայում արնակոխ աչքերով: Բժիշկը կանգ առավ: Շնչառության արանքներում կարծես առնետների ծվոցներ էին լսվում: Բայց ոչ մի խլրտոց չկար սենյակի որևէ անկյունում: Ռիոն մոտեցավ մահճակալին: Հիվանդն այնքան էլ բարձրից չէր ընկել և չէր ընկել հանկարծակի. ողերը դիմացել էին: Բնականաբար մի քիչ շնչարգելություն կար: Պետք էր ռենտգենով նկարահանել: Բժիշկը կամֆորա ներարկեց և ասաց, որ մի քանի օրից ամեն բան կարգին կլինի:

– Շնորհակալ եմ, բժի՛շկ,– ասաց հիվանդը խեղդված ձայնով:

Ռիոն հարցրեց Գրանին, թե այդ մասին հայտնե՞լ է ոստիկանատուն, և վերջինս կարկամեց.

– Ո՛չ,– ասաց նա,– դե, ո՛չ, ես կարծում էի, թե ավելի շտապ էր...

– Իհարկե,– ընդհատեց Ռիոն,– ուրեմն ինքս կհայտնեմ:

Բայց այդ պահին հիվանդը շարժվեց, նստեց անկողնում՝ բողոքելով, թե իրեն լավ է զգում, և չարժի որևէ մեկին հայտնել:

– Հանգստացեք,– ասաց Ռիոն:– Այստեղ խնդիր չկա, բայց ես պարտավոր եմ հայտարարել նման բաների մասին:

– Օ՜հ,– հառաչեց հիվանդը:

Եվ ետ ընկնելով բարձին՝ կամացուկ հեծկլտաց: Գրանը, որ բեղի հետ էր խաղում, մոտեցավ նրան:

– Դե՜, ի՞նչ եք անում, պարոն Կոթար: Փորձեք հասկանալ: Երևի բժիշկը պատասխանատու է: Եթե, օրինակ, հանկարծ նորից ուզենաք...

Բայց Կոթարն արցունքների միջից ասում էր, որ այլևս նման բան չի անի, որ դա խենթության մի պահ էր միայն, իսկ հիմա ուզում է պարզապես, որ իրեն հանգիստ թողնեն: Ռիոն դեղատոմս գրեց:

– Լա՛վ, եղա՛վ,– ասաց նա,– թողնենք, երկու-երեք օրից նորից կգամ: Բայց հիմարություններ չանե՛ք:

Սանդղահարթակում նա Գրանին ասաց, որ ստիպված է հայտնել ոստիկանությանը, բայց կոմիսարին կխնդրի քննությունը սկսել երկու օրից ոչ շուտ:

– Այս գիշեր պետք է հսկել: Ընտանիք ունի՞:

– Չգիտեմ, բայց ինքս կարող եմ մնալ նրա մոտ:

Նա թափ տվեց գլուխը:

– Չի կարելի ասել, թե իրեն էլ եմ ճանաչում: Բայց պետք է իրար օգնել:

Տան միջանցքներում Ռիոն մեքենայաբար զննում էր անկյունները և Գրանին հարցրեց, թե առնետները լրիվ անհետացե՞լ են նրանց թաղամասից: Վերջինս ոչինչ չգիտեր: Ճիշտ է, նրան պատմել էին այդ առնետների մասին, բայց սովորաբար ինքն այնքան էլ ուշադրություն չէր դարձնում թաղամասի ասեկոսեներին:

– Ես այլ հոգսեր ունեմ,– ասաց նա:

Ռիոն արդեն հրաժեշտ էր տալիս՝ սեղմելով նրա ձեռքը: Նա շտապում էր տեսնել դռնապանին, որպեսզի հետո պատասխաներ կնոջ նամակին:

Երեկոյան լրագրավաճառները հայտնում էին, որ առնետների արշավանքը կասեցված է: Սակայն Ռիոն իր հիվանդին գտավ անկողնուց կիսով չափ կախված, մի ձեռքը սեղմած փորին, մյուսով գրկած պարանոցը, բարձրաձայն որձկումներով վարդագույն մաղձ փսխելիս աղբադույլի մեջ: Մեծ ճիգեր գործադրելուց հետո հիվանդը կրկին պառկեց՝ հազիվ վերագտնելով շնչառությունը: Ջերմությունը երեսունինն ու կես էր, պարանոցի գեղձերն ու վերջույթներն ավելի էին ուռել, երկու սև բիծ գնալով մեծանում էին կողերի վրա: Այժմ գանգատվում էր ներքին ցավերից:

– Վառում է,– ասում էր նա,– վառում է անիծվածը:

Նրա մրագույն բերանը ծամծմում էր բառերը: Բժշկին հառեց գնդիկների պես կլոր աչքերը, որոնք արտասվակալել էին ուժեղ գլխացավից: Կինը տագնապով նայում էր Ռիոյին, որն ասես համրացել էր:

– Բժիշկ,– կրկնում էր նա,– սա ի՞նչ է:

– Ինչ ասես կարող է լինել: Բայց դեռ որևէ ստույգ բան չկա: Մինչև երեկո պահպանել սննդակարգը և լուծողական ընդունել: Թող հեղուկ շատ խմի:

Եվ իսկապես, դռնապանը մեռնում էր ծարավից:

Վերադառնալով տուն՝ Ռիոն զանգեց իր գործընկեր Ռիշարին՝ քաղաքի ամենահեղինակավոր բժիշկներից մեկին:

– Ոչ,– ասաց Ռիշարը,– որևէ արտառոց բան չեմ նկատել:

– Չկա՞ն տենդով հիվանդներ տեղային բորբոքումներով:

– Հա՛, իրոք, կան, երկու դեպք՝ այտուցված գեղձերով:

– Չափից դուրս ուռա՞ծ:

– Ը՛,– ասաց Ռիշարը,– դե գիտեք, չափը...

Այսուհանդերձ, երեկոյան դռնապանը զառանցում էր քառասուն աստիճան ջերմության մեջ և գանգատվում առնետներից: Ռիոն փորձեց բացել թարախակույտը: Բևեկնախեժի այրոցքից դռնապանը ոռնաց.

– Ա՛յ, անասունն՝ր:

Գեղձերն ավելի էին մեծացել ու կարծրացել և շոշափելիս փայտի պես պինդ էին թվում: Դռնապանի կինը կորցրել էր գլուխը.

– Մնացե՛ք նրա մոտ,– ասաց բժիշկը,– հարկ եղած դեպքում կանչե՛ք ինձ:

Հաջորդ օրը՝ ապրիլի 30-ին, արդեն տաք քամի էր փչում կապույտ ու խոնավ երկնքից: Նա բերում էր ամենահեռավոր արվարձաններից եկող ծաղիկների անուշաբույրը: Առավոտյան ձայները փողոցներում թվում էին սովորականից ավելի առույգ, ավելի ուրախ: Մեր ամբողջ փոքրիկ քաղաքում, որն ազատագրվել էր ամբողջ շաբաթ իր ապրած թաքուն վախից, այդ օրն ասես վերածննդի օր լիներ: Ինքը՝ Ռիոն, հանգստացած կնոջ նամակից, դռնապանի մոտ իջավ թեթև ու հանգիստ: Եվ իրոք, ջերմությունն առավոտյան ընկել էր մինչև երեսունութ աստիճան: Հիվանդը՝ թուլացած և ուժասպառ, ժպտում էր անկողնում:

– Արդեն լա՞վ է, չէ՞, բժիշկ,– հարցրեց կինը:

– Մի քիչ էլ սպասենք:

Սակայն կեսօրին ջերմությունը միանգամից բարձրացավ քառասուն աստիճան: Հիվանդն անընդհատ զառանցում էր, և փսխումները վերսկսվեցին: Պարանոցի գեղձերը ցավում էին դիպչելիս, և դռնապանն ասես ջանում էր հնարավորին չափ գլուխը հեռու պահել մարմնից: Կինը նստել էր մահճակալի ծայրին, ձեռքերը վերմակի վրայից զգուշորեն բռնել էին հիվանդի ոտքերը: Նա նայում էր Ռիոյին:

– Լսեք,– ասաց վերջինս,– նրան պետք է մեկուսացնել և հատուկ բուժում փորձարկել: Ես կզանգահարեմ, և շտապօգնության մեքենայով նրան կտեղափոխենք հիվանդանոց:

Երկու ժամ անց շտապօգնության մեքենան տանում էր հիվանդին: Բժիշկն ու կինը խոնարհվել էին նրա վրա: Նրա ուռած և այտուցված բերանից դուրս էին գալիս կցկտուր բառեր: «Առնետնե՛րը, առնետնե՛րը»,– ասում էր նա: Դռնապանը՝ դեմքը կանաչավուն, շրթունքներն ասես մոմաշեն, կոպերը արձձային, շնչառությունը կարձատև ու ընդհատումներով, կարծես քառատված գեղձերի ուռուցքներից, կծկվել էր բացովի թախտի վերին անկյունում՝ ասես

ցանկանալով այն փակել իր վրա, ասես գետնի տակից ինչ-որ բան անդադար կանչում էր իրեն, և ինքը շնչահեղձ էր լինում անտեսանելի ծանրությունից: Կինը լաց էր լինում:

– Ուրեմն, բժի՛շկ, այլևս հույս չկա՞:

– Նա մեռած է,– պատասխանեց Ռիոն:

* * *

Դոնապանի մահը, կարելի է ասել, նշանավորեց մտահոգություններով լի շրջանի ավարտը և սկիզբ դրեց մեկ այլ՝ հարաբերականորեն ավելի դժվար շրջանի, երբ առաջին ժամանակների անակնկալը քիչ-քիչ փոխակերպվեց խուճապի: Մեր համաքաղաքացիներն այսուհետ գիտակցում էին, որ երբևէ չէին մտածի, որ իրենց փոքրիկ քաղաքը մի օր կարող է դառնալ առանձնահատուկ նշված մի վայր, որտեղ առնետները սատկում էին արևի տակ, իսկ դոնապանները մեռնում տարօրինակ հիվանդություններից: Այս տեսակետից նրանք, ի վերջո, թյուրիմացության մեջ էին, և նրանց մտքերը վերանայման կարիք էին զգում: Եթե ամեն բան այդտեղ վերջանար, սովորություններն անշուշտ կհաղթանակեին: Սակայն մեր համաքաղաքացիներից շատերը, որոնք ոչ դոնապան էին, ոչ էլ աղքատ, ստիպված էին գնալ նույն ճանապարհով, որով առաջինն անցել էր պարոն Միշելը: Հենց այդ պահից էլ սկսվեց վախը, իսկ նրա հետ՝ նաև մտահոգությունը:

Այսուհանդերձ, նոր իրադարձությունների մանրամասների մեջ մտնելուց առաջ մեր պատմիչը օգտակար է համարում տալ մեկ այլ վկայի կարծիքը վերը նկարագրված ժամանակաշրջանի վերաբերյալ: Ժան Տարուն, որին արդեն հանդիպել ենք այս պատմության սկզբում, Օրանում էր հաստատվել այս դեպքերից ընդամենը մի քանի շաբաթ առաջ և այդ ժամանակից ի վեր ապրում էր կենտրոնի ամենամեծ հյուրանոցներից մեկում: Երևում էր, որ նա բավական դյուրին էր կարողանում ապրել իր եկամուտներով: Չնայած քաղաքը քիչ-քիչ վարժվել էր նրան, այսուհանդերձ ոչ ոք չէր կարող ասել՝ որտեղից էր եկել նա և ինչու էր այդտեղ: Նրան կարելի էր հանդիպել հասարակական բոլոր վայրերում: Հենց գարնան սկզբից

նրան շատ հաճախ էին տեսնում ծովափին անթաքույց հաճույքով լողալիս: Նա բարի էր, մշտապես ժպտուն, հավանաբար բոլոր բնականոն վայելքների կողմնակիցը, բայց ոչ դրանց ստրուկը: Իրականում նրա միակ՝ արդեն հայտնի դարձած սովորությունն այն էր, որ նա ջանասիրաբար այցելում էր իսպանացի պարողներին ու երաժիշտներին, որոնք բավականին շատ էին մեր քաղաքում:

Ամեն դեպքում նրա օրագրերը նույնպես այդ դժվարին շրջանի մի յուրահատուկ ժամանակագրություն են: Բայց խոսքը առանձնահատուկ ժամանակագրության մասին է, որի հեղինակն ասես նախօրոք վճռել է ամեն ինչ նսեմացնել: Առաջին հայացքից կարելի էր կարծել, թե Տարուն հնարամտորեն մտադրվել է իրերն ու մարդկանց դիտել մեծ ձեռնակնոցի հակառակ կողմից: Համընդհանուր խառնաշփոթի մեջ նա վերջին հաշվով ջանում է դառնալ պատմիչն այն բանի, որը չունի պատմություն: Պետք է անշուշտ ափսոսալ այս ընտրության համար և կասկածել նրա սրտի կարծրության մեջ: Սակայն դա չի նսեմացնում այն, ինչ այդ օրագրերը կարող են հայթայթել այդ շրջանի ժամանակագրության համար՝ երկրորդական բազմաթիվ մանրամասներ, որոնք սակայն ունեն իրենց կարևորությունը, և որոնց տարօրինակությունն իսկ կխանգարի արագ դատելու այս հետաքրքիր անձնավորության մասին:

Ժան Տարուի առաջին նշումները սկսվում են Օրան ժամանելու ամսաթվից: Դրանք հենց սկզբից ցույց են տալիս նրա հետաքրքրաշարժ գոհունակությունը, որ ինքը գտնվում է այդ շատ տգեղ քաղաքում: Այս նշումներում գտնում ենք քաղաքապետարանը զարդարող բրոնզաձույլ երկու առյուծների մանրամասն նկարագրությունը, բարյացակամ դատողություններ ծառերի բացակայության, անճաշակ տների և քաղաքի անհեթեթ նախագծի մասին: Տարուն այնտեղ մեջբերում է նաև տրամվայներում ու փողոցներում լսած իր երկխոսությունները առանց որևէ մեկնաբանության, բացի Կան կոչվածին վերաբերող մի խոսակցությունից: Տարուն ներկա էր եղել տրամվայների երկու վարորդի զրույցին.

– Կանին լա՞վ էիր ճանաչում,– հարցնում է մեկը:

– Կա՞ն: Հաղթանդա՞մ էր, սև բեղերո՞վ:

– Այո՛, այո՛: Սլաքավար էր:

– Դե իհարկե:

– Ուրեմն իմացիր՝ մահացել է:

– Օ՛, այդ ե՞րբ:

– Առնետների պատմությունից հետո:

– Ի՞նչ ես ասում: Եվ ինչի՞ց է մահացել:

– Չգիտեմ: Տենդից: Եվ հետո, այնքան էլ ամրակազմ չէր: Թևատակերին թարախակույտեր են եղել: Չի դիմադրել:

– Բայց սովորական տեսք ուներ՝ բոլորի նման:

– Ո՛չ, թույլ թոքեր ուներ, և երաժիշտ էր Օրփեոնում: Փողային գործիք էր նվագում: Անընդհատ փող փչելը մաշում է թոքերը:

– Ա՛հ,– վերջակետ դրեց զրուցակիցը,– երբ հիվանդ ես, չպետք է փող փչես:

Այս մի քանի դիտարկումից հետո Տարուն հարցնում է, թե ինչո՞ւ էր Կանն ընդունվել Օրփեոն՝ իրեն ակնհայտորեն ոչ ձեռնտու աշխատանքի, և որոնք էին այն հիմնական դրդապատճառները, որ նրան ստիպել էին վտանգի ենթարկել կյանքը՝ փողային նվագախմբով կիրակնօրյա շքերթներին մասնակցելու համար:

Այնուհետև Տարուն կարծես շատ էր տպավորված իր համար հաճելի մի տեսարանով, որը հաճախ տեղի էր ունենում իր պատուհանի դիմաց գտնվող պատշգամբում: Եվ իրոք, իր սենյակի պատուհանները նայում էին նեղլիկ փողոցին, որտեղ պատերի ստվերներում քնում էին կատուները: Բայց ամեն օր՝ նախաճաշից հետո, երբ ողջ քաղաքը տապից ընկղմվում էր նիրհի մեջ, մի փոքրիկ ծերունի էր հայտնվում փողոցի մյուս կողմում գտնվող պատշգամբում: Խնամքով սանրած սպիտակ մազերով, մարմինը պիրկ, ասես զինվորականի համար կարված հագուստով նա զուսպ և նաև քնքշալից ձայնով կանչում էր կատուներին՝ փի՛ս, փի՛ս: Կատուները բարձրացնում էին իրենց քնատ ու մշուշոտ աչքերը՝ դեռևս տեղից չշարժվելով: Ծերուկը վերևից թղթեր էր պատառոտում ու նետում փողոց, իսկ կենդանիները, հրապուրված այդ սպիտակ թիթեռնիկային անձրևով, առաջ էին շարժվում մինչև խճուղու մեջտեղը՝ վարանող

https://1915.info

թաթիկները ձգելով թղթի վերջին պատառիկներին: Այդ պահին ծերուկն ամբողջ ուժով թքում էր կատուների վրա՝ աշխատելով չսխալվել: Եթե իր թքած շիթերից որևէ մեկը հասնում էր նպատակին, ծերուկը լիաթոք ծիծաղում էր:

Մի խոսքով՝ Տարուն ասես վերջնականապես զմայլված էր քաղաքի առևտրային բնույթով, որի արտաքինը, աշխուժությունը և անգամ հաճույքները թելադրվում էին առևտրի անհրաժեշտությամբ: Այս եզակիությունը (եզրույթն օգտագործվում է օրագրերում) փորձարկում է Տարուն և իր գովաբանական նշումներից մեկն ավարտում է նույն բացականչությամբ՝ վերջապե՜ս: Սրանք միակ հատվածներն են, որտեղ ճանապարհորդի գրառումները կարծես զուտ անձնական բնույթ ունեն: Պարզապես դժվար է գնահատել դրանց իմաստն ու լրջությունը: Այսպես՝ նկարագրելով, որ հյուրանոցում սատկած առնետի հայտնաբերումից հետո գանձապահը թույլ է տվել սխալ իր գրառումներում, Տարուն ավելացնում է սովորականից ավելի դժվար ընթեռնելի ձեռագրով. «Հարց՝ ի՞նչ անել ժամանակն իզուր չկորցնելու համար: Պատասխան՝ զգալ ժամանակն ամբողջությամբ: Միջոցներ՝ օրեր անցկացնել ատամնաբույժի ընդունարանում՝ անհարմարավետ աթոռի վրա, կիրակի հետմիջօրեն անցկացնել տանը, պատշգամբում, գիտաժողովում լսել զեկուցումներ մի լեզվով, որը չես հասկանում, ընտրել երկաթուղային երթուղիներից ամենաերկարներն ու ամենաանհարմարավետները և ճանապարհորդել բնականաբար կանգնած՝ ոտքի վրա, հերթ կանգնել թատրոնների դրամարկղերի առջև ներկայացմանը չգնալ և այլն»: Բայց լեզվական և մտքի այս շեղումներից անմիջապես հետո օրագրերը սկսում են մեր քաղաքի տրամվայների մանրակրկիտ նկարագրությունը՝ նրանց մակույկանման ձևը, անորոշ գույնը, սովորական աղտոտ վիճակը, և այս նկատառումներն ավարտվում են «հիանալի է» արտահայտությամբ, որը ոչինչ չի բացատրում:

Ամեն դեպքում ահավասիկ այն ցուցումները, որ տվել է Տարուն առնետների պատմության վերաբերյալ.

«Այսօր դիմացի փոքրիկ ծերուկն ասես շվարած է. այլևս չկան կատուները: Իրոք, նրանք անհետացել են գրգռված փողոցներում

հայտնված բազմաթիվ սատկած առնետներից: Իմ կարծիքով կատուները երբեք սատկած առնետներ չեն ուտում: Ես հիշում եմ, որ իմ կատուները զզվում էին դրանցից: Բայց դա չի խանգարում, որ նրանք վազվզեն նկուղներում, և որ ծերուկն էլ շվարած լինի: Նա ավելի վատ է սանրված, թվում է՝ ավելի թուլակազմ: Զգացվում է, որ անհանգիստ է: Մի անգամ գնաց ու եկավ: Բայց մի անգամ թքեց դատարկության մեջ:

Քաղաքում այսօր տրամվայ են կանգնեցրել, որովհետև սատկած առնետ են հայտնաբերել, չգիտես, թե որտեղից էին բերել: Մի քանի կին՝ երկու կամ երեք, իջել են: Դուրս են նետել առնետին: Տրամվայը շարունակել է ընթացքը:

Հյուրանոցում գիշերային հսկիչը, որը վստահության արժանի մարդ է, ինձ ասաց, որ դժբախտություն է սպասվում այդ առնետների պատճառով: «Երբ առնետները լքում են նավը...»: Ես նրան պատասխանեցի, որ դա ճիշտ է նավերի պարագայում, սակայն երբևէ ստուգված չէ քաղաքների դեպքում: Այսուհանդերձ, նրա համոզմունքն անկոտրում էր: Ես նրան հարցրի՝ ըստ նրա՝ ի՞նչ դժբախտություն կարելի է սպասել: Չգիտեր, դժբախտությունը հնարավոր չէ կանխագուշակել: Սակայն չէր զարմանա, եթե երկրաշարժ լիներ: Ես համաձայնեցի, որ հնարավոր էր, իսկ նա հարցրեց, թե դա ինձ չի՞ անհանգստացնում:

– Միակ բանը, որ հետաքրքրում է ինձ,– ասացի նրան,– ներքին խաղաղություն գտնելն է:

Նա ինձ լրիվ հասկացավ:

Հյուրանոցի ռեստորանում մի շատ հետաքրքիր ընտանիք կա: Հայրը բարձրահասակ, նիհար մարդ է՝ հագին սև կոստյում, ձգված օձիքով: Գլխի կենտրոնը ճաղատ է, իսկ աջ ու ձախ կողմից ցցված են ալեխառն փնջեր: Մանր ու կլորավուն աչքերը, խիստ հայացքը, սուր քիթն ու բարակ շրթունքները նրան տալիս են դաստիարակված բվեճի տեսք: Նա միշտ առաջինն է հասնում ռեստորանի դռանը, մի կողմ է քաշվում, ճանապարհ տալիս սև մկան նման փոքրիկ կնոջը, հետո միայն մտնում ներս իր փոքրիկների՝ վարժեցրած շնիկների նման հագնված տղայի ու աղջնակի

հետ: Հասնելով իրենց սեղանին՝ նա սպասում է, որ կինը գրավի իր տեղը, հետո նստում է, որից հետո վերջապես երկու գանգրամազ շնիկները թառում են իրենց աթոռներին: Նա «դուք»-ով է դիմում կնոջն ու երեխաներին, կնոջ հետ մեղմ թունոտ կատակներ անում, իսկ ժառանգների հետ խոսում վճռական ու խիստ ձայնով.

– Նիկոլ, ձեր վարքագիծը չափազանց անհամակրելի է:

Եվ փոքրիկ աղջիկը քիչ է մնում լաց լինի: Այդպես էլ պետք է:

Այդ առավոտ փոքրիկ տղան անչափ հուզված էր առնետների պատմությունից: Սեղանի շուրջը ուզում էր ինչ-որ բան ասել:

– Սեղանի շուրջը առնետների մասին չեն խոսում, Ֆիլի՛պ: Այսուհետև ես ձեզ արգելում եմ արտասանել այդ բառը:

– Ձեր հայրն իրավացի է,– ասաց սև մկնիկը:

Երկու գանգրամազ շնիկները քթները խոթեցին իրենց լափի մեջ, և բվեճը գլխով շնորհակալական նշան արեց կնոջը, որ վերջինս կարծ էր կապել:

Չնայած այս գեղեցիկ օրինակին՝ քաղաքում շատ են խոսում առնետների պատմության մասին: Թերթերն էլ են խառնվել այս գործին: Տեղական լրատուն, որը սովորաբար բազմաբնույթ էր, այժմ ամբողջովին զբաղված է քաղաքապետարանի դեմ քարոզարշավով. «Մեր քաղաքապետարանի այրերը արդյոք նպատակ ունե՞ն դիմակայելու վտանգին, որը կարող են ներկայացնել այս կրծողները»: Հյուրանոցի տնօրենն այլևս անկարող է խոսել այլ բանի մասին: Բայց նա ևս վիրավորված է: Հայտնաբերել առնետներ նման հարգարժան հյուրանոցի վերելակում՝ նրան անըմբռնելի է թվում: Մխիթարելու համար ես նրան ասացի.

– Բայց դրանք բոլորի մոտ էլ կան:

– Բանն էլ հենց դա է, մենք հիմա բոլորի նման ենք:

Նա էր, որ առաջինն ինձ պատմեց այդ ապշեցուցիչ տենդի մասին, որից անհանգստանում են շատերը: Նրա հավաքարարուհիներից մեկը մահացել էր:

– Բայց հաստատ վարակիչ չէ,– արագ ճշտեց նա:

Ասացի, որ ինձ համար միևնույն է:

– Օ՛, տեսնում եմ: Պարոնը ինձ նման է, պարոնը հավատում է ճակատագրին:

Նման բան չէի ասել, և հետո՝ չեմ հավատում ճակատագրին»:

Այստեղից սկսած՝ Տարուի օրագրերն ավելի մանրամասն են պատմում այդ անծանոթ տենդի մասին, որով արդեն անհանգստանում էր հանրությունը:

Պատմելով, որ պատշգամբի ծերուկը վերջապես գտել է իր կատուներին առնետների անհետացումից հետո և համբերությամբ ճշտում է իր կրակոցների նշանառությունը, Տարուն ավելացնում է, որ կարող է արդեն նշել այդ տենդի տասնյակից ավելի դեպք, որոնց մեծ մասը մահացու է եղել:

Որպես փաստագրություն՝ կարող ենք արդեն վերարտադրել բժիշկ Ռիոյի դիմանկարն ըստ Տարուի: Որքան կարող է պատմիչը դատել, այն բավականին ճշմարտանման է.

«Թվում է երեսունհինգ տարեկան: Միջահասակ է: Ուսերը՝ ամուր: Դեմքը՝ գրեթե ուղղանկյուն: Աչքերը մուգ են, հայացքը՝ ուղիղ, բայց ծնոտները՝ ցցված: Քիթը մեծ է ու կանոնավոր: Մազերը սև են, կարճ կտրած: Բերանը կամարված է հաստ և գրեթե միշտ սեղմված շրթունքներով: Իր արևառ մաշկով, սև մազերով և միշտ մուգ գույնի հագուստով, որն իրեն շատ է սազում, նման է սիցիլիացի գյուղացու:

Քայլում է արագ: Մայթն իջնում է՝ չփոխելով քայլվածքը, բայց դիմացի մայթը բարձրանալիս ավելի հաճախ՝ երեքից երկուսի դեպքում, թեթևակիորեն ցատկում է: Մեքենայի ղեկի առջև ցրված է և հաճախ ուղղությունը փոխող սլաքները մոռանում է անջատել, անգամ, երբ արդեն կատարել է շրջադարձը: Միշտ գլխաբաց է: Իրազեկ մարդու տեսք ունի»:

* * *

Տարուի բերած թվերը ճշգրիտ էին: Բժիշկ Ռիոն հասկանում էր դրանցից: Դոնապանի մարմինը մեկուսացնելուց հետո նա զանգահարեց Ռիշարին, որպեսզի խորհրդակցի նրա հետ այս աճուկային տենդի մասին:

– Ոչինչ չեմ հասկանում,– պատասխանել էր Ռիշարը:– Մահվան երկու դեպք՝ մեկը՝ քառասունութ ժամում, երկրորդը՝ երեք օրում: Ընդ որում՝ վերջինը, որին տեսել էի առավոտյան, ուներ ապաքինման բոլոր նախանշանները:

– Եթե այլ դեպքեր էլ լինեն, զգուշացրեք ինձ,– ասաց Ռիոն:

Նա զանգահարեց ևս մի քանի բժշկի: Այսպիսով, լրացված հարցացուցակը նմանատիպ մոտ քսան դեպք էր հայտնաբերել մի քանի օրվա ընթացքում: Գրեթե բոլոր դեպքերն ավարտվել էին մահվամբ: Այդ ժամանակ նա Ռիշարից խնդրեց նոր հիվանդների մեկուսացման իրավունք՝ որպես Օրանի բժիշկների արհմիության նախագահ:

– Բայց ես ոչինչ չեմ կարող անել,– ասաց Ռիշարը:

– Անհրաժեշտ է նահանգապետարանի միջամտությունը: Իմիջիայլոց, ո՞վ է ձեզ ասել, որ կա վարակի վտանգ:

– Ոչ ոք ոչինչ չի ասել, սակայն ախտանիշները մտահոգիչ են:

Ռիշարը, այնուամենայնիվ, կարծում էր, որ իր հնարավորությունները բավարար չեն, և ինքը կարող է ընդամենը խոսել նահանգապետի հետ:

Մինչ նրանք խոսում էին, եղանակը փչացավ: Դռնապանի մահվան հաջորդ օրը խիտ մառախուղ պատեց երկինքը: Հորդառատ ու կարճատև անձրևներ թափվեցին քաղաքի վրա: Այս հանկարծահաս տարափներին հաջորդեց ամպրոպալից տաքություն: Ծովն ինքը կորցրել էր կապտավուն թանձրությունը և մառախլապատ երկնքի տակ արծաթագույն կամ մետաղափայլ ցոլքեր էր արձակում, որոնց նայելիս ցավեցնում էին աչքերը: Այս գարնան խոնավ շոգը ստիպում էր երազել հրատոչոր ամռան մասին:

Սարահարթի վրա գալարաձև կառուցված քաղաքում, որտեղից հազիվ էր երևում ծովը, մի մռայլ թմբիր էր իջել: Երկարաձիգ, սվաղած պատերի միջև, փոշոտ ցուցափեղկերով փողոցներում, տրամվայների աղտոտ դեղնագույնի մեջ քեզ զգում էիր ինչպես երկնքի գերի: Միայն Ռիոյի ծերուկ հիվանդն էր հրճվում՝ եղանակի միջոցով հաղթահարելով իր ասթման:

– Ուղղակի եփվում ես,– ասում էր նա:– Շատ լավ է բրոնխների համար:

Իրոք եռացնում էր, ճիշտ այնպես, ինչպես տենդն է եռացնում: Ամբողջ քաղաքը տենդի մեջ էր: Համենայնդեպս այդպիսին էր բժիշկ Ռիոյին հետապնդող տպավորությունը առավոտյան, երբ նա գնում էր Ֆեդյերբ փողոց, որպեսզի մասնակցի Կոթարի ինքնասպանության փորձի հետաքննությանը: Բայց այդ զգացողությունն իրեն անհեթեթ էր թվում: Իրեն պաշարած այդ զգացումը նա վերագրում էր նյարդայնությանն ու բազմազբաղությանը և ընդունում, որ անհրաժեշտ է անհապաղ կարգուկանոն մտցնել իր մտքերի մեջ:

Երբ տեղ հասավ, ոստիկանության սպան դեռ այնտեղ չէր: Գրանը սպասում էր սանդղահարթակին, և նրանք որոշեցին սկզբում մտնել նրա տուն՝ դուռը թողնելով կիսաբաց: Քաղաքապետարանի ծառայողը զբաղեցնում էր երկու սենյակ, որոնք կահավորված էին առանց կարգ ու կանոնի: Նկատելի էր միայն սպիտակ փայտե մի գրադարակ, մեջը՝ երկու-երեք բառարան, և մի կիսաջնջված գրատախտակ, որի վրա դեռ կարելի էր կարդալ «ծաղկած ծառուղիներ» բառերը: Գրանի կարծիքով՝ Կոթարը լավ էր անցկացրել գիշերը: Բայց առավոտյան արթնացել էր գլխացավով՝ անկարող որևէ հակազդեցության: Գրանը հոգնած ու նյարդային էր թվում, գնում-գալիս էր սենյակով, սեղանի վրա բացում-փակում ձեռագրերով լի մի մեծ թղթապանակ:

Այսուհանդերձ, նա պատմեց բժշկին, որ չնայած Կոթարին ինքը վատ էր ճանաչում, բայց ենթադրում էր, որ նա ունի մի փոքրիկ ունեցվածք: Կոթարը տարօրինակ մարդ էր: Երկար ժամանակ նրանց հարաբերությունները սահմանափակվում էին ողջույններով, որ փոխանակվում էին աստիճանների վրա հանդիպելիս:

– Ես նրա հետ զրուցել եմ ընդամենը երկու անգամ: Մի քանի օր առաջ սանդղահարթակում ես շուռ տվեցի կարմիր ու կապույտ կավիճներով լի արկղը, որ տանում էի իմ տուն: Այդ պահին դուրս եկավ Կոթարը և օգնեց ինձ հավաքել դրանք: Նա ինձ հարցրեց, թե ինչի՞ համար էին այդ տարբեր գույնի կավիճները:

Գրանն այդ ժամանակ նրան բացատրել էր, որ փորձում է վերականգնել իր իմացած լատիներենը, լիցեյում ձեռք բերած գիտելիքները մոռացվել են:

– Այո՛,– ասաց նա բժշկին,– ինձ վստահեցրել են, որ այս ձևով կարող եմ ավելի հեշտ ըմբռնել ֆրանսերեն բառերի իմաստը:

Ուրեմն նա գրատախտակին գրում էր լատիներեն բառերը, հետո կապույտ կավճով արտագրում էր բառերի այն մասը, որոնք փոխվում էին ըստ հոլովման կամ ըստ խոնարհման, իսկ հետո կարմիր կավճով արտագրում էր այն բառերը, որոնք երբեք չէին փոխվում:

– Ես չգիտեմ՝ Կոթարը լավ հասկացավ, թե ոչ, սակայն ինձ թվաց, թե հետաքրքրված է, և ինձնից մի կարմիր կավիճ խնդրեց: Ես մի քիչ զարմացա, բայց վերջիվերջո... ես իհարկե չէի կարող գուշակել, որ դա կարող է ծառայել իր նախագծին:

Ռիոն հարցրեց, թե ո՞րն է եղել երկրորդ զրույցի թեման: Սակայն քարտուղարի ուղեկցությամբ եկավ ոստիկանության ավագ սպան, որն ուզում էր սկզբում լսել Գրանի հայտարարությունները: Ռիոն ոստիկանության սպայի ուշադրությունը հրավիրեց այն բանի վրա, որ Գրանը Կոթարի մասին խոսելիս անունը տալու փոխարեն նրան անընդհատ անվանում էր «հուսահատը»: Նա մի պահ անգամ օգտագործեց «ճակատագրական վճիռ» արտահայտությունը: Նրանք քննարկեցին ինքնասպանության շարժառիթները, և Գրանն իրեն բծախնդիր դրսևորեց եզրույթների ընտրության մեջ: Վերջապես կանգ առան «անձնական վիշտ» բառերի վրա: Ոստիկանության սպան հարցրեց, թե որևէ բան չկա՞ր Կոթարի վարքագծում, որ կանխատեսեր Գրանի ասած «ճակատագրական վճիռը»:

– Երեկ նա իմ դուռը թակեց և լուցկի խնդրեց,– ասաց Գրանը:– Ես նրան իմ տուփը տվեցի: Նա ներողություն խնդրեց՝ ասելով, որ հարևանների միջև... Հետո հավաստիացրեց, որ տուփը կվերադարձնի: Ես ասացի, որ կարող է պահել իրեն:

Ոստիկանության սպան հարցրեց քաղաքապետարանի ծառայողին, թե Կոթարն իրեն տարօրինակ չէ՞ր թվացել:

– Ինձ տարօրինակ թվաց այն, որ նա ուզում էր զրույց սկսել ինձ հետ: Սակայն ես աշխատում էի:

Գրանը շրջվեց դեպի Ռիոն և շփոթահար ավելացրեց.

– Անձնական աշխատանք:

– Ոստիկանության սպան, այսուհանդերձ, ցանկացավ տեսնել հիվանդին: Բայց Ռիոն կարծում էր, որ ավելի լավ կլիներ Կոթարին նախապատրաստել այդ այցելությանը: Երբ մտավ սենյակ, վերջինս, որ միայն մոխրագույն ֆլանելե շապկով նստած էր անկողնում, շրջվեց դեպի դուռն ու նայեց տագնապալից հայացքով:

– Ոստիկանությո՞ւնն է, հը՞:

– Այո՛,– պատասխանեց Ռիոն,– բայց մի՛ խառնվեք իրար: Երկուերեք ձևականություն, և ձեզ հանգիստ կթողնեն:

Բայց Կոթարն ասաց, որ դրանք անիմաստ են, և որ ինքը չի սիրում ոստիկաններին: Ռիոն անհամբերության նշաններ ցուցաբերեց:

– Ես էլ նրանց չեմ պաշտում: Պետք է արագ և ճիշտ պատասխանել հարցերին, որպեսզի մեկընդմիշտ ազատվեք նրանցից:

Կոթարը լռեց, իսկ բժիշկը վերադարձավ դռան մոտ: Բայց անմիջապես լսեց փոքրիկ մարդուկի ձայնը, որը կանչում էր իրեն: Երբ մոտեցավ մահճակալին, Կոթարը բռնեց իր ձեռքը.

– Չեն կարող ձեռք տալ հիվանդ մարդուն, չէ՞, մարդուն, որը կախվել է, այնպես չէ՞, բժի՛շկ:

Ռիոն մի պահ ուշադիր նայեց Կոթարին և վերջապես հանգստացրեց նրան՝ ասելով, որ երբեք նման հարց դրված չի եղել, և որ ինքը, ըստ էության, այդտեղ է իր հիվանդին պաշտպանելու համար: Վերջինս կարծես թե հանդարտվեց, և Ռիոն ներս կանչեց ոստիկանության սպային:

Կոթարի համար կարդացի Գրանի վկայությունը և նրան հարցրին, թե կարո՞ղ է ճշտել իր արարքի շարժառիթները: Չնայելով ոստիկանի կողմը՝ նա միայն ասաց, որ «անձնական վշտերը շատ լավ էին հնչում»: Ոստիկանության սպան նրան ստիպեց ասել՝ կուզենա՞ր նորից փորձել: Կոթարն աշխուժանալով պատասխանեց՝ ո՛չ, և որ իր միակ ցանկությունն է, որ իրեն հանգիստ թողնեն:

– Թույլ տվեք հիշեցնել,– ասաց ոստիկանության սպան զայրացած,– որ առայժմ դուք եք խախտում ուրիշների հանգիստը:

Բայց Ռիոն նշան արեց, և ոստիկանը կարճ կապեց:

– Ինքներդ էլ գիտեք,– դուրս գալիս ասաց ոստիկանության սպան հոգոց հանելով,– որ մենք ուրիշ՝ ավելի կարևոր գործեր ունենք անելու այսօր, երբ խոսում են այդ տենդի մասին...

Նա հարցրեց բժշկին, թե արդյոք լո՞ւրջ էր խնդիրը, և Ռիոն պատասխանեց, որ ոչինչ չգիտեր:

– Եղանակն է, ահա և պատճառը,– եզրակացրեց ոստիկանը:

Անկասկած եղանակն էր մեղավորը: Ամեն ինչ կպչուն էր դառնում ձեռքերի մեջ օրվա շարժմանը զուգընթաց, և Ռիոն զգում էր՝ ինչպես է ահագնանում իր երկյուղը ամեն այցից հետո: Այդ նույն օրվա երեկոյան արվարձանում իր հին հիվանդի հարևանը, սեղմելով աճուկները, փսխում էր զառանցանքի մեջ: Նրա գեղձերի ուռուցքները շատ ավելի մեծ էին, քան դռնապանինը:

Դրանցից մեկը թարախակալվում էր և շուտով բացվեց հոտած մրգի պես: Տուն վերադառնալով՝ Ռիոն զանգահարեց նահանգի դեղորայքի պահեստ: Այդ ամսաթվի տակ նրա մասնագիտական գրառումներում նշված է միայն «Բացասական պատասխան»: Եվ արդեն նրան կանչում էին ուրիշ հիվանդների մոտ նմանօրինակ դեպքերով: Ակնհայտ էր, որ պետք էր բացել պալարները: Հերձադանակի երկու խաչաձև հարված, և գեղձերից թափվում էր արնախառն խյուսը: Քառատված հիվանդներն արնահոսում էին: Բայց բծեր էին սկսել հայտնվել նաև փորի ու ազդրերի վրա: Մի ուռուցք դադարում էր թարախակալել, հետո նորից էր ուռչում: Մեծ մասամբ հիվանդը մեռնում էր սոսկալի գարշահոտության մեջ:

Մամուլը, որ այնքան շատախոս էր առնետների դեպքում, այլևս ոչնչի շուրջ չէր խոսում: Որովհետև առնետները սատկում են փողոցներում, իսկ մարդիկ մեռնում են իրենց սենյակներում: Իսկ լրագրերը զբաղվում են միայն փողոցներով: Բայց ոստիկանության վարչությունն ու քաղաքապետարանը սկսում էին ուսումնասիրել խնդիրը: Քանի դեռ յուրաքանչյուր բժիշկ չէր հանդիպել երկու-երեքից ավելի նման դեպքի, ոչ մեկի մտքով չէր անցել անհանգստանալ: Սակայն բավական եղավ, որ ինչ-որ մեկը գումարում կատարի: Գումարման արդյունքը ցնցող էր: Ընդամենը մի քանի օրում մահացու ելքերը բազմապատկվել էին, և այս հետաքրքրական գործով

զբաղվողների համար ակնհայտ դարձավ, որ խոսքը իսկական համաձարակի մասին է: Ահա հենց այդ պահին էր, որ Կաստելը՝ Ռիոյի գործընկերը՝ տարիքով նրանից անհամեմատ մեծ, եկավ նրան տեսնելու:

– Բնականաբար, Ռիո,– ասաց նա,– բայց գիտե՞ք, թե ինչ է դա:

– Ես սպասում եմ անալիզների պատասխանին:

– Իսկ ես գիտեմ: Եվ կարիք չունեմ անալիզների: Իմ մասնագիտական գործունեության մի քանի տարին անցկացրել եմ Չինաստանում: Իսկ մոտ քսան տարի առաջ Փարիզում ականատես եմ եղել նման դեպքերի: Միայն այն ժամանակ չէին համարձակվում տալ դրա իսկական անունը: Հասարակական կարծիքը սուրբ է. չկա խելակորույս վիճակ, միայն չլինի խուճապ: Եվ հետո, ինչպես ասում էր գործընկերներիցս մեկը, «Անհնարին է, բոլորը գիտեն, որ այն վաղուց անհետացել է արևմուտքից»: Այո՛, բոլորը գիտեին, բացի մեռածներից: Դե, Ռիո, դուք ինձնից լավ գիտեք, թե ինչ է դա:

Ռիոն մտորում էր: Իր գրասենյակի պատուհանից նա դիտում էր ժայռի քարքարոտ լանջը, որը հեռվում իջնում էր ծովածոցի վրա: Երկինքը, թեև կապույտ, բայց փայլատ մի շող էր արձակում, որը մեղմանում էր հետմիջօրեի առաջխաղացմանը զուգընթաց:

– Այո՛, Կաստել,– ասաց նա,– անհավատալի է, բայց թվում է՝ ժանտախտ է:

Կաստելը վեր կացավ և ուղղվեց դեպի դուռը:

– Դուք գիտեք, թե ինչ կպատասխանեն մեզ,– ասաց ծեր բժիշկը,– «տարիներ առաջ այն անհետացել է բարեխառն գոտիներից»:

– Ի՞նչ է նշանակում «անհետանալ»,– պատասխանեց Ռիոն՝ թոթվելով ուսերը:

– Այո՛, և մի՛ մոռացեք՝ Փարիզում ևս, մոտ քսան տարի առաջ:

– Լավ: Հուսանք, որ այս անգամ ավելի դաժան չի լինի, քան այն ժամանակ: Բայց դա իսկապես անհավատալի է:

* * *

Ժանտախտ բառն արտասանվել էր առաջին անգամ: Պատմության այս կետում, երբ Բեռնար Ռիոն մնում է իր պատուհանի

https://1915.info

ետևում, պատմիչը հնարավորություն է ստանում արդարացնել բժշկի անվճռականությունն ու զարմանքը, քանի որ նրա հակազդեցությունը, չնայած որոշ նրբերանգներին, նույնն էր, ինչ որ մեր համաքաղաքացիներից մեծ մասի հակազդեցությունը: Աղետները, ինչ խոսք, սովորական բան են, սակայն դժվարությամբ ես հավատում, երբ քո գլխին է գալիս: Աշխարհում նույնքան շատ աղետներ են եղել, որքան և պատերազմներ: Եվ սակայն ժանտախտերն ու պատերազմները մարդկանց միշտ հանկարծակիի են բերել: Բժիշկ Ռիոն անպատրաստ էր, ինչպես անպատրաստ էին մեր համաքաղաքացիները, ահա այսպես պետք է մեկնաբանել նրա վարանումները: Ահա այսպես պետք է հասկանալ նաև նրա երկատումը կասկածի ու վստահության միջև: Երբ պայթում է պատերազմը, մարդիկ ասում են. «Սա երկար չի տևի, մեծ հիմարություն է»: Եվ անկասկած, պատերազմն իրոք մեծ հիմարություն է, բայց դա նրան չի խանգարում, որ երկար տևի: Հիմարությունը միշտ պնդաճակատ է լինում, դա հնարավոր կլիներ նկատել, եթե մշտապես չմտածեիր միայն քո մասին: Այս առումով մեր համաքաղաքացիները նման էին բոլոր մյուս մարդկանց: Նրանք մտածում էին իրենց մասին, այլ կերպ ասած՝ մարդասեր էին. նրանք չէին հավատում աղետներին: Աղետը չի համապատասխանում մարդու չափանիշներին. այդ պատճառով ասում են, որ աղետն անիրական է, վատ երազ, որն ահա կանցնի: Բայց այն չի անցնում, և վատ երազից վատ երազ՝ մարդիկ են անցնում, և առաջին հերթին՝ մարդասերները, որովհետև նրանք նախազգուշական միջոցներ ձեռք չէին առել: Մեր համաքաղաքացիներն ավելի մեղավոր չէին, քան մյուս մարդիկ, նրանք ընդամենը մոռանում էին համեստ լինել և մտածում էին, որ ամեն բան դեռ հնարավոր է իրենց համար, որն իր հերթին ենթադրում էր աղետների անհնարինությունը: Նրանք շարունակում էին գործարքներ վարել, ճանապարհորդություններ ծրագրել և կարծիքներ հայտնել: Ինչպե՞ս նրանք կարող էին մտածել ժանտախտի մասին, որը ջնջում է ապագան, տեղափոխություններն ու վիճաբանությունները: Նրանք իրենց ազատ էին կարծում, և ոչ ոք երբեք ազատ չի լինի այնքան ժամանակ, որքան կլինեն աղետները:

Անգամ այն ժամանակ, երբ բժիշկ Ռիոն ընկերոջից տեղեկացավ, որ մի խումբ հիվանդներ տարբեր տեղերում առանց որևէ նախազգուշացման մահացել էին ժանտախտից, վտանգն իր համար մնում էր անիրական: Պարզապես, եթե բժիշկ ես, ցավի մասին գաղափար ես կազմում և մեծ երևակայությամբ կարող ես այն պատկերացնել: Պատուհանից նայելով իր քաղաքին, որը չէր փոխվել՝ բժիշկը հազիվ զգաց ապագայի նկատմամբ իր մեջ ծնվող սրտխառնուքը, որը կոչվում է տագնապ: Նա ջանում էր մտքում ի մի բերել այն ամենը, ինչ գիտեր այդ հիվանդության մասին: Հիշողության մեջ թվեր էին ծածանվում, և ինքն իրեն ասում էր, որ պատմության ճանաչած շուրջ երեսուն ամենամեծ ժանտախտները խլել են մոտավորապես հարյուր միլիոն կյանք: Բայց ի՞նչ է հարյուր միլիոն մահը: Պատերազմի ժամանակ դժվարությամբ ես ըմբռնում անգամ մի մահը: Եվ քանի որ մեկ մեռած մարդը այնքանով է նշանակալից, որ արդեն գիտես, որ նա մեռած մարդ է, ապա պատմության երկայնքով սփռված հարյուր միլիոն դիակն ընդամենը մի ծուխ է, որն անցնում է երևակայությանդ միջով: Բժիշկը հիշեց Կոստանդնուպոլսի ժանտախտը, որը, ըստ Պրոկոպոսի, մեկ օրում խլել էր տասը հազար կյանք: Տասը հազարը հավասար է մի մեծ կինոթատրոնի հանդիսատեսի հնգապատիկին: Ահա թե ինչ պետք է անել: Հավաքել այդ հինգ կինոթատրոնից դուրս եկող մարդկանց, տանել նրանց քաղաքի հրապարակը և բոլորին սպանել միանգամից հստակ պատկերացում կազմելու համար: Գոնե այսպես կկարողանաս տարբերակել դեմքերը այդ անանուն խառնամբոխի մեջ: Բայց բնականաբար, դա անհնար է իրագործել, և ի վերջո, ո՞վ կարող է ճանաչել տասը հազար մարդու: Ասենք՝ պարզ է, որ Պրոկոպոսի նման մարդիկ հաշվել չգիտեին: Յոթանասուն տարի առաջ Կանտոնում քառասուն հազար առնետ սատկեց ժանտախտից, մինչ մարդիկ կսկսեին հետաքրքրվել այդ արհավիրքով: Սակայն 1871 թվականին էլ առնետները հաշվելու միջոցներ չկային: Հաշվումներն անում էին մոտավորապես՝ կլորացրած թվերով սխալվելու ակնհայտ հավանականությամբ: Այսուհանդերձ, եթե մի առնետի

երկարությունը հավասար է երեսուն սանտիմետրի, ապա քառասուն հազար առնետը, եթե կպցնենք պոչը պոչին, կստացվի...

Սակայն բժշկի համբերությունը սպառվում էր: Նա իրեն բարձիթողի էր արել՝ մի բան, որ չէր կարելի անել: Մի քանի դեպքի արձանագրումը չէր կարող նշանակել համաճարակ, և մի քանի կանխարգելիչ միջոցի ձեռնարկումը կարող էր բավարար լինել: Պետք էր սահմանափակվել իմացածով՝ թմրածություն, ուժերի անկում, կարմրած աչքեր, փառակալած շրթունքներ, գլխացավ, ավշային այտուցներ, ահավոր ծարավի զգացում, զառանցանք, բծեր մաշկի վրա, ներքին օրգանների ցնցումներ, և այս ամենի վերջում... Այս ամենի վերջում մի նախադասություն էր հնչում Ռիոյի գլխում՝ մի նախադասություն, որով հենց ավարտվում էր ախտանիշների թվարկման իր դասագիրքը. «Զարկերակը դառնում է թելանման, և մահը վրա է հասնում ցանկացած աննշան շարժումից»: Այո, այս ամենի վերջում կախվում են պարանով, և մարդկանց չորս քառորդը (սա ստույգ թիվ է) այնքան էլ համբերատար չէ, որ չկատարի այդ աննշան շարժումը, որը նրանց շտապեցնում է դեպի կործանում:

Բժիշկը շարունակում էր նայել պատուհանից: Ապակու մի կողմում գարնան ջինջ երկինքն էր, իսկ մյուս կողմում՝ բառը, որ դեռ հնչում էր սենյակում՝ ժանտախտ: Բառը չէր պարունակում միայն այն իմաստը, ինչը գիտությունը կուզենար արտահայտել, այլ արտառոց մի շարք պատկերներ, որոնք չէին ներդաշնակվում այդ դեղնագորշ քաղաքի հետ՝ այդ ժամին չափավոր աշխույժ, ավելի շուտ բզբզացող, քան աղմկալից, ի վերջո՝ երջանիկ, եթե հնարավոր է լինել միաժամանակ և՛ երջանիկ, և՛ մռայլ: Եվ այդ խաղաղ, և այդչափ անտարբեր հանգստությունը գրեթե առանց ճիգերի ժխտում էր արհավիրքի հին պատկերները՝ ժանտախտահար և թռչուններից լքված Աթենքը, լուռ հոգեվարք ապրողներով լեցուն չինական քաղաքները, Մարսելի թիապարտներին, որոնց արյուն կաթող մարմինները խցկում էին անցքերը, Պրովանսի մեծ պարսպի կառուցումը, որը պետք է կանգնեցներ ժանտախտի կատաղած քամուն, Ցաֆան և նրա զազրելի մուրացկաններին,

Կոստանդնուպոլսի հիվանդանոցի՝ գետնին կպած, խոնավ ու փտած մահճակալները, հիվանդներին, որոնց քարշ էին տալիս կեռերով, Սև Ժանտախտի ժամանակ բժիշկների խաղացած դիմակահանդեսը, ողջերի զուգավորումները Միլանի գերեզմանոցներում, մեռելներով լի սայլերը սարսափահար Լոնդոնում և գիշերուզօր, ամենուրեք և մշտապես հնչող մարդկային անվերջանալի ողբը: Ոչ, այս ամենը դեռ այնքան ուժեղ չէր, որպեսզի սպաներ այդ օրվա անդորրը: Ապակու մյուս կողմում լսվեց անտեսանելի տրամվայի հանկարծակի զնգզնգոցը և մի վայրկյանում հերքեց դաժանությունն ու ցավը: Միայն ծովն էր տների անգույն խաղատախտակի եզրից վկայում աշխարհում գոյություն ունեցող մտահոգիչ և երբեք չհանգստացող իրողության մասին: Եվ բժիշկ Ռիոն, որ նայում էր ծովածոցին, մտածում էր Լուկրեցիոսի պատմած հսկայական խարույկների մասին, որ ժանտախտահար աթենացիները վառում էին ծովափին: Գիշերը մեռածներին բերում էին այնտեղ, բայց տեղը քիչ էր, և ողջերը կռվում էին, իրար ծեծում ջահերով, որպեսզի տեղավորեին իրենց հարազատներին՝ գերադասելով ավելի շուտ մղել արյունալի մարտեր, քան լքել դիակները: Կարելի էր պատկերացնել խարույկների կարմրաշեկ բոցերը խաղաղ ու մթին ջրերի վրա, ջահերի ճակատամարտերը կրակներից ճարճատող, թանձր գոլորշիներից թունավորված գիշերվա մեջ, և սևեռուն երկինք բարձրացող կայծերը: Կարելի էր երկյուղել...

Բայց այս գլխապտույտ առաջացնող փաստերը չէին դիմանում տրամաբանությանը: Ճշմարիտ է, որ արտասանվել էր ժանտախտ բառը, ճշմարիտ է, որ հենց այդ րոպեին աղետը ցնցում և գետնահարում էր մի երկու զոհի: Եվ ի՞նչ, դա կարո՞ղ էր դադարել: Ի՞նչ էր հարկավոր անել, հարկ էր հստակ իմանալ այն, ինչը պետք է, որ իմացվեր, պետք է հեռացվեին անօգուտ տեսիլները և համապատասխան միջոցներ ձեռնարկվեին: Իսկ հետո ժանտախտը կդադարեր, քանզի ժանտախտը չէր պատկերացվում կամ սխալ էր պատկերացվում: Եթե այն դադարեր, և հավանաբար այդպես էլ կլիներ, ամեն ինչ լավ կլիներ: Հակառակ դեպքում կիմացվեր, թե դա ինչ

բան է, և եթե սկզբում դրան հաղթելու միջոցներ չլինեին, ապա հետագայում անպայման կծարվեին:

Բժիշկը բացեց պատուհանը, և քաղաքի աղմուկն անմիջապես ներխուժեց սենյակ: Հարևան արհեստանոցից լսվում էր մեխանիկական սղոցի կարճատև ու համաչափ կրկնվող սուլոցը: Ռիոն հավաքեց իրեն: Այստեղ էր վստահությունը՝ ամենօրյա աշխատանքում: Մնացյալը բռնված է թելից, ամեն բան կախված է աննշան շարժումից, հնարավոր չէ կանգ առնել: Ամեն մեկի համար գլխավորը իր գործը լավ անելն է:

* * *

Բժիշկ Ռիոն տարված էր իր մտորումներով, երբ հայտնեցին Ժոզեֆ Գրանի գալուստը: Քաղաքապետարանի ծառայողը, չնայած իր բազմապիսի զբաղմունքներին, պարբերաբար վիճակագրական ծառայություններ էր մատուցում քաղաքացիական ակտերի գրանցման բաժնում: Այսպես նրան հանձնարարել էին հաշվարկել մահացածների թիվը: Լինելով պարտաճանաչ անձնավորություն՝ նա համաձայնել էր Ռիոյին անձամբ հանձնել իր աշխատանքի ամփոփագրի մի օրինակը:

Ռիոյի մոտ Գրանը մտավ իր հարևան Կոթարի հետ: Ծառայողը մի թուղթ էր թափահարում:

– Բժիշկ, թվերն աճում են,– հայտարարեց նա,– տասնմեկ մահ՝ քառասունութ ժամում:

Ռիոն բարևեց Կոթարին և հարցրեց՝ ինչպե՞ս է: Գրանը բացատրեց, որ Կոթարը եկել էր բժշկին շնորհակալություն հայտնելու և ներողություն խնդրելու նրան նեղություն տալու համար: Սակայն Ռիոն զբաղված էր վիճակագրական տվյալների ուսումնասիրությամբ:

– Այո՛, այո՛,– կրկնում էր Գրանը՝ աստիճաններով իջնելով բժշկի ետևից,– իրերն իրենց անուններով պետք է կոչել, բայց ի՞նչ է այդ անունը:

– Չեմ կարող ասել, և բացի այդ, ձեզ ոչ մի օգուտ դրանից:

– Տեսնո՞ւմ եք,– ժպտաց ծառայողը:– Այնքան էլ հեշտ չէ:

Նրանք ուղղվեցին դեպի Զենքի հրապարակ: Կոթարը շարունակ լուռ էր: Փողոցները սկսում էին լցվել մարդկանցով: Մեր երկրի վաղանցուկ աղջամուղջը նահանջում էր արդեն գիշերվա առջև, և առաջին աստղերն էին հայտնվում դեռևս մաքուր հորիզոնում: Մի քանի րոպե անց վառվեցին փողոցի լապտերներն ու պայծառացրին ողջ երկինքը: Զրույցների ձայները՝ ասես մի ինչերանգ, բարձրացան:

– Ներեցեք ինձ,– ասաց Գրանը Զենքի հրապարակի անկյունում:– Պետք է տրամվայ նստեմ: Երեկոներն ինձ համար սրբազան են: Ինչպես ասում են իմ հայրենի երկրում. «Այսօրվա գործը վաղվան չեն թողնի»:

Ռիոն արդեն նկատել էր ծնունդով մոնտելիմարցի Գրանի այդ մոլությունը՝ տեղի-անտեղի մեջբերումներ անել իր երկրի ասացվածքներից և անգամ ավելացնել տափակ, ծամծմված դարձվածներ, որոնք ոչ մի տեղից էլ չէին ծագում, ինչպես օրինակ՝ «երազային ժամանակ» կամ «կախարդական լուսավորություն»:

– Ա՛, ճիշտ է,– հաստատեց Կոթարը,– ընթրիքից հետո նրան հնարավոր չէ դուրս հանել տնից:

Ռիոն հարցրեց Գրանին, թե աշխատո՞ւմ է քաղաքապետարանում: Գրանը պատասխանեց՝ ոչ, և որ ինքն իր համար է աշխատում:

– Հա՛,– ասաց Ռիոն մի բան ասած լինելու համար,– և ինչպե՞ս է, առաջ գնո՞ւմ է:

– Տարիներ շարունակ, որ աշխատում եմ այնտեղ, բնականաբար... թեև մեկ այլ իմաստով՝ չկա մեծ առաջխաղացում:

– Բայց ի վերջո, ինչո՞վ եք զբաղվում,– ասաց բժիշկը կանգ առնելով:

Գրանը ինչ-որ բան քրթմնջաց՝ ավելի խոր քաշելով կլոր գլխարկը իր երկար ականջների վրա: Եվ Ռիոն տարտամորեն հասկացավ, որ խոսքը վերաբերում էր ինչ-որ անհատական կատարելագործմանը: Բայց Գրանն արդեն հրաժեշտ էր տվել նրանց և ֆիկուսների տակով հապշտապ բարձրանում էր Մարնի ճեմափողոցով: Լաբորատորիայի դռան շեմին Կոթարն ասաց բժշկին, որ շատ կուզենար նրան հանդիպել և խորհուրդ հարցնել: Ռիոն, որ գրպանում ճմռթում էր վիճակագրության թերթիկը, հրավիրեց նրան իր ընդունելության

ժամին, բայց հետո ասաց, որ հաջորդ օրը այցի պիտի գնար նրանց թաղամասը և նրան նույնպես կայցելեր հետմիջօրեին:

Կոթարից բաժանվելով՝ բժիշկը զգաց, որ մտածում է Գրանի մասին: Նրան պատկերացնում էր մի ժանտախտի կենտրոնում, ոչ այս մեկի, որն անկասկած լուրջ չէր լինի, այլ պատմական մեծ ժանտախտներից մեկի կենտրոնում: «Սա այն տեսակի մարդկանցից է, որոնց խնայում են նման դեպքերում»: Նա հիշեց, որ մի տեղ կարդացել էր, թե ժանտախտը խնայում է թույլ կառուցվածքներին և ոչնչացնում հատկապես ուժեղ կազմվածք ունեցողներին: Շարունակելով իր մտորումները՝ բժիշկը Գրանի մեջ տեսնում էր մի փոքրիկ առեղծված:

Առաջին հայացքից Ժոզեֆ Գրանն իրոք ընդամենը քաղաքապետարանի ծառայող էր և ուներ դրան համապատասխան տեսք՝ բարձրահասակ ու նիհար. նա լողում էր իր հագուստների մեջ, որն ընտրում էր միշտ շատ մեծ այն պատրանքով, որ դրանք ավելի ուշ կմաշվեն: Ստորին ծնոտի վրա դեռ պահպանվում էին մեծ թվով ատամներ: Դրան հակառակ կորցրել էր վերին ծնոտի ատամնաշարը: Ժպիտը, որ արտահայտում էր հատկապես վերին շրթունքը, նրա բերանին հաղորդում էր քարանձավային տեսք: Եթե այս դիմանկարին ավելացնենք նաև ճեմարանի ուսանողի քայլվածքը, նրան հատուկ պատերին քսվելու և դռների մեջ խցկվելու արվեստը, նկուղային ու ծխի հոտը, ճղճիմության բոլոր նշանները, հասկանալի կդառնա, որ նրան հնարավոր չէր պատկերացնել մեկ այլ վայրում, քան գրասեղանի առջև, քաղաքի ցնցուղով բաղնիքների գնացուցակները ջանասիրաբար ստուգելիս կամ տնային աղբի հավաքման նոր հարկի վերաբերյալ մի երիտասարդ խմբագրի համար զեկույցի նյութեր հավաքելիս: Նույնիսկ անհիրազեկ մարդու համար տեսանելի էր, որ նա աշխարհ էր եկել կատարելու քաղաքային օժանդակ ժամանակավոր աշխատողի համեստ, բայց անհրաժեշտ գործառույթներ՝ վաթսուներկու ֆրանկ երեսուն սանտիմ օրավարձով:

Եվ իրոք, դա այն մակագրությունն էր, որ նա գրել էր տալիս ծառայողի փաստաթղթերում որակավորում բառի դիմաց: Երբ քսաներկու տարի առաջ արտոնագիր ստանալու համար փող

չունենալու պատճառով նա չկարողացավ շարունակել ուսումը, ընդունեց այս ծառայությունը: Նրան հուսադրեցին, թե շուտափույթ հաստիքավորում կստանա: Միայն թե որոշ ժամանակ պետք էր ապացուցել իր իրազեկությունը խրթին հարցերում, որ առաջադրում էր մեր քաղաքի վարչությունը: Դրանից հետո նրան վստահեցրին, որ նա բաց չէր թողնելու հնարավորությունը՝ հասնելու խմբագրի մի պաշտոնի, որը նրան թույլ կտար ապրել ըստ պահանջի: Անկասկած փառամոլությունը չէր, որ ստիպում էր Ժոզեֆ Գրանին գործ անել, դա հաստատում էր նրա մելամաղձոտ ժպիտը: Բայց ազնիվ միջոցներով նյութապես ապահովված կյանքի հեռանկարը և հետևապես հանգիստ խղճով իր սիրած գործին նվիրվելու հնարավորությունը նրան շատ էին հրապուրում: Եթե նա ընդունել էր իրեն արված առաջարկը, ապա դա արել էր՝ ելնելով արժանապատիվ պատճառներից և, այսպես ասած, իդեալի նկատմամբ ունեցած իր հավատարմությունից:

Երկար տարիներից ի վեր այդ ժամանակավոր իրավիճակը շարունակվում էր. կյանքը թանկացել էր չափազանց մեծ համամասնություններով, իսկ Գրանի աշխատավարձը, չնայած որոշ ընդհանուր ավելացումներին, մնում էր դեռևս խղճուկ: Նա այդ մասին գանգատվել էր Ռիոյին, բայց ոչ ոքի մտքով չէր անցել զբաղվել դրանով: Հենց այստեղ էր Գրանի ինքնատիպությունը կամ առնվազն դրա արտահայտություններից մեկը: Նա, իրոք, եթե չէր կարող ըստ արժանվույն պաշտպանել իր իրավունքները, որոնց վրա այնքան էլ վստահ չէր, ապա գոնե կարող էր հիշեցնել այն խոստումները, որ տվել էին իրեն: Բայց նախ՝ իրեն աշխատանքի ընդունող գրասենյակի պետը վաղուց մահացել էր, և հետո՝ Գրանը, ըստ էության, չէր հիշում իրեն տրված խոստումների լրիվ պայմանները: Վերջապես և հատկապես՝ Ժոզեֆ Գրանը չէր գտնում իր ասելիքը:

Եվ հենց այդ բնորոշ առանձնահատկությունն էր, որ լավագույնս էր բնութագրում մեր համաքաղաքացուն, ինչպես նկատել էր Ռիոն: Հենց դա էր, իրոք, որ նրան ամեն անգամ խանգարում էր գրելու իր մտորած բողոքը կամ այլ միջոցներ ձեռնարկելու՝ ըստ առաջացած հանգամանքների: Եթե նրան հավատանք,

հատկապես դժվարանում էր գործածել իրավունք բառը, որի իմաստն իրեն վստահություն չէր ներշնչում, ոչ էլ խոստում բառը, որը կարող էր ենթադրել տալ, թե ինքը պահանջում է իր հասանելիքը, և հետևաբար կարող էր ընկալվել իբրև հանդգնություն, որն անհամատեղելի էր իր կատարած համեստ գործառույթների հետ: Մյուս կողմից նա հրաժարվում էր այնպիսի բառերի կիրառումից, ինչպիսիք են բարեհաճություն, միջնորդություն, երախտագիտություն, որոնք իր կարծիքով վիրավորում էին իր մարդկային արժանապատվությունը: Այսպես էր, որ ճշգրիտ բառը չգտնելու պատճառով մեր համաքաղաքացին՝ Գրանը, շարունակեց կատարել իր համեստ պարտականությունները մինչև հասուն տարիքը: Ասենք, ինչպես դարձյալ հենց ինքը՝ Գրանն էր հայտնել բժիշկ Ռիոյին, առօրյայում նա համոզվեց, որ իր նյութական կյանքն ամեն դեպքում ապահովված է, քանի որ սովորել էր հարմարեցնել իր կարիքները եկամուտների հետ: Այսպիսով, նա ընդունեց քաղաքապետի՝ մեր քաղաքի խոշոր արդյունաբերողի սիրած խոսքերի ճշմարտացիությունը: Վերջինս համառորեն պնդում էր, թե ի վերջո (նա շեշտում էր այդ բառը, որ կրում էր դատողության ողջ ծանրությունը), և այսպես, ի վերջո, երբեք ոչ ոք չի տեսել սովից մեռնող մի մարդ: Ամեն դեպքում Ժոզեֆ Գրանի վարած գրեթե ճգնավորական կյանքը նրան վերջապես ազատեցին նման կարգի հոգսերից: Նա շարունակում էր փնտրել իր ասելիքը:

Ինչ-որ իմաստով կարելի է ասել, որ նրա կյանքն օրինակելի էր: Նա այն մարդկանցից էր, որոնք հազվադեպ են մեր քաղաքում, ինչպեսև այլուր, որ քաջություն ունեն արտահայտելու իրենց լավագույն զգացմունքները: Իր մասին այն քիչը, որ վստահել էր բժշկին, անշուշտ վկայում էր բարության և նվիրվածության մասին, որ քչերն են համարձակվում խոստովանել մեր օրերում: Նա չէր կարմրում, երբ ասում էր, թե սիրում է իր զարմիկներին և քրոջը՝ միակ ազգականին, որը մնացել էր իրեն, և երկու տարին մեկ գնում էր Ֆրանսիա՝ նրանց այցելության: Նա ընդունում էր, որ իրեն վշտացնում է ծնողների հիշատակը, որոնք մահացել էին, երբ ինքը դեռ շատ

երիտասարդ էր եղել: Խոստովանում էր, որ ամենից շատ սիրում էր իրենց թաղամասի այն զանգակը, որ մեղմորեն ղողանջում էր երեկոյան ժամը հինգի մոտերքը: Բայց նման հասարակ հույզեր արտահայտելու համար փոքրագույն բառ իսկ գտնելը նրան անասելի տառապանք էր պատճառում: Ի վերջո, այդ դժվարությունն էլ դարձավ նրա ամենամեծ հոգսը: «Ա՜խ, բժիշկ,– ասում էր նա,– որքան կուզենայի սովորել մտքերս արտահայտել»: Եվ այս նախադասությունը նա կրկնում էր ամեն անգամ Ռիոյին հանդիպելիս:

Այդ երեկո Ռիոն, նայելով հեռացող ծառայողի ետևից, հանկարծ գլխի ընկավ, թե ինչ էր ուզում ասել Գրանը. անկասկած նա գիրք էր գրում կամ դրա նման մի բան: Ամբողջ ճանապարհին, մինչև վերջապես լաբորատորիա հասնելը, այդ միտքն էր իրեն վստահություն ներշնչում: Նա գիտակցում էր, որ դա հիմարություն է, սակայն ի վիճակի չէր հավատալու, որ ժանտախտն իսկապես կարող է տեղավորվել մի քաղաքում, որտեղ կարելի է գտնել հարգարժան մոլություններ ունեցող համեստ պաշտոնյաների: Եթե ավելի ճշգրիտ լինենք, նա չէր պատկերացնում այդ մոլությունների տեղը ժանտախտի պայմաններում, և ուրեմն, ըստ նրա դատողության, գործնականում ժանտախտն ապագա չուներ մեր համաքաղաքացիների շրջանում:

* * *

Հաջորդ օրը իր համառ պնդումների շնորհիվ, որոնք անտեղի համարվեցին, Ռիոն ձեռք բերեց իշխանությունների համաձայնությունը առողջապահական հանձնաժողով հրավիրելու մասին:

– Ճիշտ է, որ բնակչությունն անհանգստանում է,– խոստովանեց Ռիշարը:– Դրան ավելացրած ասեկոսեները, որոնք չափազանցում են ամեն ինչ»: Ոստիկանապետն ինձ ասաց. «Արագացնենք, եթե ուզում եք, բայց անաղմուկ»: Նա, իմիջիայլոց, համոզված է, որ այս ամենը կեղծ ահազանգ է:

Բեռնար Ռիոն իր մեքենայով Կաստելին տարավ պրեֆեկտուրա:

– Գիտե՞ք, որ դեպարտամենտում շիճուկ չկա,– հարցրեց վերջինս ճանապարհին:

– Գիտեմ, զանգեցի պահեստ: Տնօրենն ասես ամպերից էր իջել: Հարկ կլինի Փարիզից բերել տալ:

– Հուսով եմ՝ երկար չի տևի:

– Ես արդեն հեռագրել եմ,– պատասխանեց Ռիոն:

Ոստիկանապետը սիրալիր էր, բայց նյարդային:

– Պարոնա՛յք, սկսենք,– ասաց նա,– պե՞տք է, որ ամփոփեմ իրադրությունը:

Ռիշարը կարծում էր, որ անիմաստ էր: Բժիշկները քաջատեղյակ էին իրավիճակին: Հարցը միայն այն էր, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեին:

– Խնդիրն այն է,– Ռիշարին կոպտորեն ընդհատեց ծերուկ Կաստելը,– որ իմանանք՝ սա ժանտա՞խտ է, թե՞ ոչ:

Որոշ բժիշկներ բացականչություններ արձակեցին: Մի քանիսն էլ վարանում էին: Իսկ ոստիկանապետը վեր թռավ տեղից, մեքենայաբար շրջվեց դռան կողմը՝ ասես ցանկանալով ստուգել, թե այն բավականաչափ ամուր էր փակված, որպեսզի չթողներ տարածվի այդ ահռելի լուրը միջանցքներում: Ռիշարը հայտարարեց, թե իր կարծիքով չի կարելի խուճապի մատնվել, խոսքը մի տենդի մասին էր, որն ուղեկցվում էր անութային գեղձերի ուռուցքների բարդացումներով: Սա էր ողջ եղածը, որ կարող էին ասել այդ պահին. վարկածները գիտության մեջ, ինչպեսև կյանքում, միշտ վտանգավոր են: Ծերուկ Կաստելը, որը հանգիստ ծամծմում էր դեղին բեղի ծայրը, պայծառ աչքերը հառեց Ռիոյին: Հետո մի բարեհաճ հայացք ձգեց ներկաների վրա և հիշեցրեց, թե ինքը շատ լավ գիտի, որ դա ժանտախտ է, սակայն հասկանալի է, որ միայն դրա պաշտոնապես ճանաչումը կպարտադրի ձեռնարկել խիստ միջոցներ: Ըստ էության՝ այդ պատճառով էին իր գործընկերներն ընկրկում, և հետևաբար նա կուզենար ընդունել, որ դա ժանտախտ չէ, որպեսզի ապահովեր նրանց հանգիստը: Ոստիկանապետն աշխուժացավ և հայտարարեց, որ բոլոր դեպքերում նման դատողություններն այս պահին ճիշտ չեն:

– Կարևորն այն չէ,– ասաց Կաստելը,– որ մտածելու ձևը ճիշտ լինի, այլ այն, որ ստիպի մտածել:

Քանի որ Ռիոն լռում էր, նրան խնդրեցին հայտնել իր կարծիքը:

– Գործ ունենք տիֆային տեսակի տենդի հետ, որը սակայն ուղեկցվում է ուռուցքներով և փսխումներով: Ես զբաղվեցի ուռուցքները կտրել-բացելով: Այսպիսով կարողացա անալիզներ անել, և լաբորատորիան հայտնաբերեց ժանտախտի կարճ և ուժեղ մանրէներ: Ամբողջական լինելու համար պետք է սակայն ավելացնել, որ մանրէի որոշ առանձնահատուկ կերպարանափոխություններ չեն համընկնում դասական նկարագրությունների հետ:

Ռիշարն ընդգծեց, որ դա տատանվելու իրավունք է տալիս, և հարկ կլինի սպասել առնվազն սերիական անալիզների վիճակագրական արդյունքներին, որոնք սկսվել են մի քանի օր առաջ:

– Երբ որևէ մանրէ,– ասաց Ռիոն կարճ լռությունից հետո,– ընդունակ է երեք օրվա ընթացքում քառակիորեն մեծացնել փայծաղի ծավալը, միջընկերքային գեղձային ուռուցքները հասցնել նարնջի մեծության և լցնել թանձր, շիլայատիպ խյուսով, նա այլևս մեզ իրավունք չի տալիս տատանվելու: Վարակման օջախները մեծանում և անընդմեջ ընդլայնվում են: Այն ընթացքով, որ տարածվում է հիվանդությունը, եթե չկանգնեցվի, կարող է երկու ամսում սպանել քաղաքի բնակչության կեսին: Հետևաբար կարևոր չէ՝ այն կանվանեք ժանտախտ, թե տարածվող տենդ: Կարևորը նրան խանգարելն է՝ թույլ չտալ սպանել քաղաքի բնակչության կեսին:

Ռիշարի կարծիքով՝ չպետք է ամեն ինչ սևացնել, և համաճարակը, ի դեպ, դեռ ապացուցված չէ, քանի որ այդ հիվանդների ազգականները ողջ և առողջ են:

– Բայց հիվանդները մահանում են,– նկատեց Ռիոն:– Եվ հասկանալի է, որ վարակման վտանգը երբեք բացարձակ չէ, այլապես կհասնեինք անվերջ մաթեմատիկական աճման և բնակչության կայծակնային ոչնչացման: Խոսքն ամեն ինչ սևացնելու մասին չէ, այլ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու:

Այսուհանդերձ, Ռիշարն ուզում էր իրավիճակի գնահատումն ամփոփել՝ հիշեցնելով, որ հիվանդությունը կանգնեցնելու համար, եթե ինքն իրեն կանգ չառնի, հարկ կլինի կիրառել օրենքով սահմանված կանխարգելության ուժեղ միջոցներ: Իսկ դա անելու

համար պետք է պաշտոնապես ընդունել, որ գործ ունենք ժանտախտի հետ: Բայց քանի որ այս հարցում բացարձակ համոզվածություն չկա, հետևաբար անհրաժեշտ է լավ մտածել:

– Հարցն այն չէ,– առարկեց Ռիոն,– որ իմանանք, թե օրենքով նախատեսված միջոցները խիստ են, թե ոչ, այլ թե որքանով են դրանք անհրաժեշտ քաղաքի կեսը մահից փրկելու համար: Մնացյալը վարչարարական հարց է, և դրա համար էլ օրենսդրությունը նախատեսում է ոստիկանապետներ, որոնք և պարտավոր են լուծել նման խնդիրները:

– Անկասկած,– ասաց ոստիկանապետը,– բայց ինձ պետք է, որ դուք պաշտոնապես ընդունեք ժանտախտի առկայությունը:

– Եթե մենք ընդունենք էլ,– ասաց Ռիոն,– այսուհանդերձ, քաղաքի կեսից ավելին զոհվելու վտանգի տակ է:

Ռիշարն ընդհատեց նրան բացահայտ զայրույթով.

– Ճշմարտությունն այն է, որ մեր գործընկերը հավատում է ժանտախտի գոյությանը: Դա է վկայում հիվանդության ախտանիշի նրա նկարագրությունը:

Ռիոն պատասխանեց, որ ինքը չի նկարագրել որևէ ախտանիշ, այլ այն, ինչ տեսել է: Իսկ տեսել է ուռած ավշահանգույցներ, բծեր մարմնի վրա, տենդ ու զառանցանքներ, որոնք մահաբեր են եղել քառասունութ ժամվա ընթացքում: Կարո՞ղ է արդյոք պարոն Ռիշարը պատասխանատվությունը վերցնել իր վրա և հաստատել, որ համաճարակը կանգ կառնի առանց կանխարգելիչ խիստ միջոցների կիրառման:

Ռիշարը վարանեց և նայեց Ռիոյին.

– Անկեղծորեն հայտնեք ձեր միտքը, իրո՞ք համոզված եք, որ խոսքը ժանտախտի մասին է:

– Հարցադրումը ճիշտ չէ: Անվանումների հարց չէ, այլ ժամկետների:

– Ձեր միտքն ուրեմն այն է,– ասաց ոստիկանապետը,– որ եթե անգամ ժանտախտ չէ, անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր նշված կանխարգելիչ միջոցները, որոնք ձեռնարկվում են ժանտախտի ժամանակ:

– Եթե ձեզ անպայման անհրաժեշտ է իմանալ իմ կարծիքը, իսկապես այդպես է:

Բժիշկները խորհրդակցեցին, և Ռիշարը վերջապես հայտարարեց.

– Ուրեմն մենք պետք է պատասխանատվությունը վերցնենք մեզ վրա և գործենք այնպես, ինչպես կգործեինք ժանտախտի դեպքում:

Բանաձևն ընդունվեց խանդավառությամբ.

– Ձեր կարծի՞քն էլ նույնն է, սիրելի՛ գործընկեր,– հարցրեց Ռիշարը:

– Բանաձևի նկատմամբ անտարբեր եմ,– պատասխանեց Ռիոն,– սակայն մենք իրավունք չունենք գործել այնպես, իբր քաղաքի կեսը չի գնում կործանման, հակառակ դեպքում այդպես էլ կլինի:

Ռիոն հեռացավ համընդհանուր նյարդայնության մթնոլորտից: Մի քանի րոպե անց տապակած ճարպի և մեզի հոտով լցված արվարձանում արյունոտ անութներով, հոգեվարքի մեջ ոռնացող մի կին փռվեց իր առջև՝ դեմքն իր կողմը շրջած:

https://1915.info

* * *

Խորհրդակցության հաջորդ օրը տենդը նորից մի փոքրիկ ոստյուն կատարեց: Այն անցավ անգամ լրագրերի միջով, թեպետ բարորակի ձևով, քանի որ հոդվածները բավարարվել էին միայն ակնարկներով: Ամեն դեպքում մեկ օր անց Ռիոն կարող էր կարդալ փոքրիկ, սպիտակ ազդագրեր, որ պրեֆեկտուրան շտապել էր կպցնել քաղաքի ամենաանշան անկյուններում: Այդ ազդագրերից դժվար էր եզրակացնել, թե իշխանություններն ուղիղ են նայում իրադրության դեմքին: Ձեռնարկված միջոցները խիստ չէին, թվում էր, թե դրանք զոհաբերվում էին, որպեսզի հանրության կարծիքը չփոթորկվի: Ազդագրի ներածական մասն իրոք հայտնում էր, որ Օրանի համայնքում արձանագրվել է վտանգավոր տենդի մի քանի դեպք, որը դեռ չի կարելի համարել վարակիչ: Այդ դեպքերը բավականին բնութագրական չեն իրապես մտահոգիչ լինելու համար, և անկասկած, բնակչությունը կկարողանա պահպանել սառնասրտություն: Այսուհանդերձ, ողջախոհության պահանջներից ելնելով, որոնք կարող են հասկանալի լինել բոլորի համար, ոստիկանապետը

որոշել է ձեռնարկել որոշ նախազգուշական միջոցներ: Այդ միջոցները, եթե խորապես հասկացվեն և ճշգրիտ կիրառվեն բնակչության կողմից, ինչպես հարկն է, կարող են կանգնեցնել համաճարակի յուրաքանչյուր սպառնալիք: Հետևաբար ոստիկանապետը մեկ վայրկյան անգամ չի կասկածում, որ իր ենթակաները ամենայն նվիրվածությամբ կնպաստեն իր ջանքերով ստեղծված ձեռնարկումներին:

Այնուհետև ազդագիրը հայտնում էր միջոցառումների ամբողջությունը, որոնց մեջ գիտական եղանակով առնետների ոչնչացում, թունավոր գազերի սրսկում կոյուղու մեջ և խիստ հսկողություն խմելու ջրի վրա: Այն հանձնարարում էր բնակիչներին պահպանել ծայրահեղ մաքրություն և վերջապես հրավիրում էր լվեր ունեցողներին ներկայանալ քաղաքային դիսպանսեր: Բոլոր ընտանիքները պարտավոր էին անհապաղ հայտնել բժշկի ախտորոշած դեպքերի մասին և համաձայնվել, որ իրենց հիվանդները մեկուսացվեն հիվանդանոցներին հատուկ կահավորված սենյակներում: Ի դեպ, այդ սենյակները կահավորված էին այնպես, որ հիվանդները բուժվեին ամենակարճ ժամանակամիջոցում և առավելագույն հնարավորություններով: Ազդագրի լրացուցիչ կետերում խոսվում էր հիվանդի սենյակի և փոխադրամիջոցների պարտադիր ախտահանման մասին: Վերջում բավարարվում էին հիվանդի մերձակիցներին հանձնարարելով ենթարկվել հսկողության:

Բժիշկը կտրուկ շուռ եկավ ազդագրից և նորից գնաց իր առանձնասենյակի կողմը: Ժոզեֆ Գրանը, որ իրեն էր սպասում, նրան տեսնելով՝ կրկին բարձրացրեց ձեռքերը:

– Այո՛, գիտեմ,– ասաց Ռիոն,– թվերն աճում են:

Նախորդ օրը տասնյակից ավելի հիվանդներ էին մահացել քաղաքում: Բժիշկն ասաց Գրանին, որ հավանաբար երեկոյան նրան կհանդիպի, քանի որ գնում էր Կոթարին տեսնելու:

– Իրավացի եք,– ասաց Գրանը:– Ձեր այցերն օգնում են նրան: Տեսնում եմ՝ փոխվել է:

– Ինչո՞վ:

– Քաղաքավարի է դարձել:

– Իսկ առաջ քաղաքավարի չէ՞ր:

Գրանը վարանեց: Նա չէր կարող ասել, որ Կոթարն անքաղաքավարի էր. արտահայտությունը ճիշտ չէր լինի: Պարզապես ինքնամփոփ ու լռակյաց մարդ էր, որն ասես վայրի վարազ լիներ: Իր սենյակը, համեստ ճաշարանը և մի քանի առեղծվածային հանդիպում՝ սա էր Կոթարի ամբողջ կյանքը: Պաշտոնապես նա գինիների և լիկյորների մի ընկերության ներկայացուցիչն էր: Ժամանակ առ ժամանակ նրան այցելում էին մի քանի հոգի, որոնք երևի նրա հաճախորդներն էին: Երեկոները երբեմն գնում էր կինո, որն իր տան դիմաց էր: Ծառայողն անգամ նկատել էր, որ Կոթարը նախընտրում է գանգստերական կինոնկարները: Ամեն առիթով ընկերության ներկայացուցիչը առանձնանում էր. նա կասկածամիտ էր:

Այս ամենը, ըստ Գրանի, լրիվ փոխվել էր:

– Չգիտեմ ինչպես ասեմ, բայց, հասկանում եք, ինձ թվում է՝ նա ցանկանում է հաշտարարի դեր կատարել, ուզում է բոլորին կապել իր հետ: Հաճախ է խոսում հետս: Առաջարկում է զբոսնել իր հետ, և ես միշտ չէ, որ կարող եմ մերժել: Ասենք, նա էլ է հետաքրքրում ինձ, և ի վերջո, ես փրկել եմ նրա կյանքը:

Ինքնասպանության փորձից հետո Կոթարին այլևս ոչ ոք չէր այցելել: Փողոցներում, վաճառասրահներում նա ձգտում էր շահել մարդկանց համակրանքը: Երբևէ ոչ ոք այդքան քնքշությամբ չէր խոսել նպարավաճառների հետ, ոչ ոք այդքան հետաքրքրությամբ չէր լսել ծխախոտավաճառուհուն:

– Այդ ծխախոտավաճառուհին,– ասում էր Գրանը,– իսկական օձ է: Մի օր այդ մասին ասացի Կոթարին, բայց նա պատասխանեց, որ ես սխալվում եմ, որ նրա մեջ կան շատ լավ գծեր, որ պետք է կարողանալ գտնել:

Վերջապես մի երկու-երեք անգամ Կոթարը Գրանին տարել էր քաղաքի ամենաշքեղ ռեստորաններն ու սրճարանները: Դարձել էր նրանց հիմնական հաճախորդը:

– Այնտեղ քեզ լավ ես զգում,– ասում էր նա:– Եվ լավ հասարակության հետ ես շփվում:

Գրանը նկատել էր սպասարկող անձնակազմի առանձնահատուկ ուշադրությունը Կոթարի նկատմամբ և հասկացել պատճառը,

երբ տեսել էր վերջինիս թողած չափազանց մեծ թեյադրամները: Երևի Կոթարը շատ էր զգացվում սիրալիր վերաբերմունքից, որ նրան ցույց էին տալիս իր տված փողի դիմաց: Մի անգամ, երբ ռեստորանի տնօրենն ինքն էր նրան ուղեկցել մինչև նախասրահ և օգնել էր հագնել վերարկուն, Կոթարն ասել էր Գրանին.

– Լավ տղա է, կարող է վկայել:

– Ինչի՞ համար վկայել:

Կոթարը կարկամել էր.

– Դե, ասենք... որ ես վատ մարդ չեմ:

Ի դեպ, նրա տրամադրության անկումները շարունակվում էին: Մի օր, երբ նպարավաճառն այնքան էլ սիրալիր չէր պատասխանել, նա տուն էր վերադարձել չափազանց մոլեգնած.

– Ստոր անասուն, նա էլ մյուսների նման է:

– Ո՞ր մյուսների:

– Բոլոր մյուսների:

Գրանը նույնիսկ ներկա էր գտնվել մի զավեշտալի տեսարանի ծխախոտավաճառուհու մոտ: Աշխույժ զրույցի թեժ պահին այդ կինը պատմել էր վերջերս կատարված ձերբակալության մասին, որն Ալժիրում մեծ աղմուկ էր բարձրացրել: Խոսքը մի առևտրական գրասենյակի երիտասարդ ծառայողի մասին էր, որն արաբ էր սպանել:

– Եթե այդ բոլոր թափթփուկներին բանտ նետեին,– ասել էր վաճառողուհին,– ազնիվ մարդիկ կարող էին շունչ քաշել:

Բայց այդ կինը կիսատ էր թողել խոսքը, որովհետև Կոթարը հանկարծակի այնպես էր բորբոքվել, որ դուրս էր նետվել կրպակից և նույնիսկ ներողություն չէր խնդրել: Գրանը և վաճառողուհին զարմանքից մնացել էին շվարած:

Որպես շարունակություն՝ Գրանը Ռիոյին հայտնեց նաև Կոթարի բնավորության այլ փոփոխությունների մասին: Կոթարը միշտ եղել էր շատ ազատամիտ համոզմունքների կողմնակից: Դրա վառ ապացույցն էր նրա սիրած արտահայտությունը. «Մեծերը միշտ ուտում են փոքրերին»: Բայց արդեն որոշ ժամանակ էր, որ նա կարդում էր միայն Օրանի ամենաառաջադիմական լրագիրը, և կարելի էր կարծել, թե ցուցամոլություն է անում, երբ

այն ընթերցում է հասարակական վայրերում: Կամ երբ նա արդեն ոտքի էր ելել, խնդրել էր Գրանին, որը գնում էր փոստ, ուղարկել հարյուր ֆրանկ հեռավոր քրոջը, նա ամեն ամիս փոխանցում էր այդ գումարը: Բայց այն պահին, երբ Գրանը դուրս էր գալիս, Կոթարը խնդրել էր նրան.

– Երկու հարյուր ֆրանկ փոխանցիր, քրոջս համար լավ անակնկալ կլինի: Նա կարծում է, թե ես չեմ մտածում իր մասին: Իսկ ճշմարտությունն այն է, որ ես նրան շատ եմ սիրում:

Եվ ի վերջո, նա Գրանի հետ մի հետաքրքիր զրույց էր ունեցել: Վերջինս ստիպված էր եղել պատասխանել Կոթարի հարցերին, որն անչափ հետաքրքրված էր այն փոքրիկ գործով, որին Գրանը տրվում էր ամեն երեկո:

– Ուրեմն,– ասել էր Կոթարը,– դուք գի՞րք եք գրում:

– Եթե ուզում եք իմանալ, այո՛, բայց դա շատ բարդ է:

– Օ՛,– բացականչել էր Կոթարը,– ես էլ կուզենայի գրել ձեզ նման:

Գրանը կարծես թե զարմացել էր, իսկ Կոթարը կմկմացել էր՝ ասելով, թե արվեստագետ լինելը կազատեր շատ հոգսերից:

– Ինչո՞ւ,– հարցրել էր Գրանը:

– Դե, որովհետև արվեստագետն ավելի շատ իրավունքներ ունի, քան մեկ ուրիշը, բոլորն էլ գիտեն դա: Նրա ձեռքի տակով շատ բան է անցնում:

– Ի՞նչ եք ասում,– ասաց Ռիոն Գրանին հենց այն առավոտյան, երբ ազդագրերը հայտնվեցին,– առնետների պատմությունը խփել է նրա գլխին, ինչպեսև շատերի: Կամ էլ վախենում է տենդից:

– Չեմ կարծում,– պատասխանեց Գրանը,– իսկ եթե ուզում եք իմանալ իմ կարծիքը, բժիշկ...

Առնետների ոչնչացման մեքենան խլացուցիչ աղմուկով անցավ նրանց պատուհանի տակով: Ռիոն լռեց, մինչև հնարավոր եղավ լսելի դառնալ, և ցրված հարցրեց ծառայողի կարծիքը: Վերջինս բազմանշանակ նայում էր նրան:

– Սա մի մարդ է,– ասաց նա,– որի խղճի վրա ինչ-որ բան է ծանրացած:

Բժիշկը թոթվեց ուսերը: Ինչպես ասաց ոստիկանապետը, կարելի է կարծել էլ բան ու գործ չունենք:

Կեսօրից հետո Ռիոն խորհրդակցություն ունեցավ Կաստելի հետ: Շիճուկները տեղ չէին հասնում:

– Իսկ դրանք կարո՞ղ են օգուտ տալ,– հարցրեց Ռիոն,– այդ մանրէն շատ տարօրինակ է:

– Է՛, ես ձեր կարծիքին չեմ,– առարկեց Կաստելը:– Դրանք հաճախ յուրօրինակ տեսք են ունենում: Բայց ըստ էության՝ նույնն են:

– Դա ընդամենը ձեր ենթադրությունն է: Իրականում մենք ոչինչ չգիտենք դրա մասին:

– Անշուշտ, իմ ենթադրությունն է: Սակայն բոլորն էլ միայն ենթադրում են:

Ամբողջ օրվա ընթացքում բժիշկը փոքրիկ գլխապտույտ էր զգում, հենց որ մտածում էր ժանտախտի մասին: Ի վերջո, ընդունեց, որ վախենում է: Երկու անգամ նա մտավ մարդաշատ սրճարաններ: Նա նույնպես, ինչպես Կոթարը, մարդկանց կարիք էր զգում: Իր կարծիքով դա հիմարություն էր, բայց դրա օգնությամբ հիշեց, որ խոստացել էր այցելել առևտրական տան ներկայացուցչին:

Երեկոյան, երբ բժիշկը մտավ Կոթարի մոտ, նա կանգնած էր ճաշասենյակի սեղանի մոտ, որի վրա բացված դետեկտիվ ժանրի գիրք էր դրված: Բայց մթնշաղն արդեն թանձրացել էր, և բնականաբար կարդալը դժվար էր այդ ծնվող խավարի մեջ: Կոթարը մեկ րոպե առաջ թերևս նստած էր եղել կիսախավարում իր մտորումների մեջ: Ռիոն նրան հարցրեց՝ ինչպե՞ս է զգում: Կոթարը նստելով քրթմնջաց, թե լավ է, և թե դեռ ավելի լավ պիտի լիներ, եթե վստահ լիներ, որ ոչ ոք չի զբաղվում իրենով: Ռիոն նկատեց, որ հնարավոր չէ միշտ մենակ լինել:

– Օ՛, խոսքս դրա մասին չէ, այլ նրանց, ովքեր զբաղված են մարդկանց տհաճություններ պատճառելով:

Ռիոն լռում էր:

– Ուշադրություն դարձրեք, ես նկատի չունեմ ինձ: Ահա, այս վեպն էի կարդում: Մի դժբախտ մարդ, որին մի առավոտ հանկարծակի

ձերբակալում են: Պարզվում է՝ նրանով զբաղվում էին, իսկ ինքը ոչինչ չգիտեր: Նրա մասին խոսում էին գրասենյակներում, անունը գրում էին քարտերի վրա: Ձեր կարծիքով դա արդարացի՞ է: Դուք գտնում եք, որ կարելի՞ է այդպես վարվել մարդու հետ:

– Նայած,– ասաց Ռիոն:– Ըստ էության՝ իսկապես երբեք իրավունք չունեն: Բայց այդ ամենը երկրորդական է: Չի կարելի անվերջ մնալ փակված: Պետք է դուրս գալ:

Կոթարը նյարդայնացավ, ասաց, որ հենց դա էլ անում է ամեն օր, որ եթե հարկ լինի ամբողջ թաղամասը վկայություն կտա իր օգտին: Անգամ թաղամասից դուրս նա կապեր ուներ:

– Ճանաչո՞ւմ եք պարոն Ռիգոյին՝ ճարտարապետին: Նա իմ բարեկամներից է:

Խավարը թանձրանում էր սենյակում: Արվարձանում փողոցներն աշխուժանում էին: Դրսում մի խուլ ու թեթևացած բացականչություն ողջունեց լույսն այն պահին, երբ վառվեցին լապտերները: Ռիոն դուրս եկավ պատշգամբ: Կոթարը հետևեց նրան: Շրջակայքի բոլոր թաղամասերից, ինչպես ամեն երեկո մեր քաղաքում, հովիկը բերում էր մրմունջներ, խորոված մսի հոտը, ազատության զվարթ ու անուշաբույր աղմուկը, որը քիչ-քիչ լցնում էր երիտասարդներով հեղեղված ողջ փողոցը: Գիշերը, անտեսանելի նավերի ուժգին շաչյունները, ծովից եկող ալեբախումները և ամբոխի երթևեկի աղմուկը. այդ ժամը, որ լավ գիտեր Ռիոն ու մի ժամանակ շատ էր սիրում, այսօր նրան թվում էին ճնշող այն ամենի պատճառով, որ նա գիտեր:

– Կարո՞ղ ենք լույսը վառել,– հարցրեց նա Կոթարին:

Լույսը վառվեց, և փոքրամարմին մարդը, կկոցած աչքերը թարթելով, նայեց նրան:

– Ասացեք ինձ, բժիշկ, եթե ես հիվանդանամ, ինձ կվերցնե՞ք ձեզ մոտ հիվանդանոց:

– Ինչո՞ւ ոչ:

Այնժամ Կոթարը հարցրեց, թե երբևէ պատահե՞լ է, որ հիվանդանոցից կամ բուժհիմնարկից ձերբակալեն որևէ հիվանդի: Ռիոն պատասխանեց, որ նման բաներ պատահում են, բայց այդ դեպքում հաշվի է առնվում հիվանդի վիճակը:

– Ես վստահում եմ ձեզ:

Հետո հարցրեց բժշկին, թե մեքենայով կարո՞ղ է իրեն տանել քաղաք:

Քաղաքի կենտրոնում փողոցներն ավելի սակավամարդ էին, իսկ լույսերը՝ ավելի հազվադեպ: Երեխաները դեռ խաղում էին իրենց դռների առջև: Կոթարի խնդրանքով Ռիոն մեքենան կանգնեցրեց երեխաների այդպիսի մի խմբի առջև: Նրանք գոռում-գոչյունով «դասարան» էին խաղում: Բայց նրանցից մեկը՝ դեմքը կեղտոտ, սև, հարթ, ասես սոսնձած մազերով, կիսված անթերի հերաբաժանով, Ռիոյին էր հառել իր բաց աչքերի ակնդետ ու վախեցնող հայացքը: Բժիշկը շրջվեց: Կոթարը, կանգնելով մայթին, սեղմեց նրա ձեռքը: Առևտրական ընկերության ներկայացուցիչը խոսում էր խռպոտ ու քմահաճ ձայնով: Մի քանի անգամ շուրջը նայեց:

– Մարդիկ խոսում են համաճարակի մասին: Դա ճի՞շտ է, բժի՛շկ:

– Մարդիկ միշտ էլ շատախոսում են, դա բնական է,– պատասխանեց Ռիոն:

– Իրավացի եք: Ու թե մի տասնյակ մարդ էլ մեռնի, աշխարհի վերջը չի լինի: Իսկ դա մեզ պետք չէ:

Շարժիչն արդեն դռռում էր: Ռիոյի ձեռքը արագության տուփի լծակի վրա էր: Բայց նորից նայեց երեխային, որն իր լուրջ ու հանգիստ հայացքով շարունակում էր համառորեն զննել իրեն: Եվ հանկարծ, առանց որևէ անցման, երեխան ժպտաց Ռիոյին՝ ցուցադրելով ողջ ատամնաշարը:

– Ի՞նչ է ուրեմն մեզ պետք,– հարցրեց բժիշկը՝ ժպտալով երեխային:

Կոթարը հանկարծ կառչեց մեքենայի դռնակից և փախչելուց առաջ բղավեց զայրագին և արցունքախառն ձայնով.

– Երկրաշարժ, իսկական երկրաշարժ է պետք:

Երկրաշարժ չեղավ, և հաջորդ օրը Ռիոյի համար անցավ միայն երկար վազքի մեջ՝ քաղաքի չորս կողմն այցելելով, հիվանդների ընտանիքների հետ բանակցություններ վարելով և հենց իրենց՝ հիվանդների հետ զրուցելով: Ռիոն երբեք իր աշխատանքն այդքան ծանր չէր համարել: Մինչև ժանտախտը հիվանդներն իրենք էին

հեշտացնում գործը՝ ամբողջովին տրվելով իրեն: Առաջին անգամ բժիշկը նրանց տեսնում էր անվճռական, վարանող, ապաստանած իրենց հիվանդության խորքում, մի տեսակ անվստահ ու զարմացած: Դա պայքար էր, որին բժիշկը դեռ չէր սովորել: Եվ երեկոյան՝ ժամը տասի մոտերքը, մեքենան կանգնեցնելով ծեր ասթմատիկի տան մոտ, որին նա այցելում էր ամենավերջում, Ռիոն մեծ դժվարությամբ կարողացավ պոկվել նստատեղից: Նա հապաղում էր՝ դիտելով մութ փողոցը և խավար երկնքում մերթընդմերթ հայտնվող ու անհետացող աստղերը: Ասթմայով հիվանդ ծերուկը նստած էր իր անկողնում: Կարծես ավելի լավ էր շնչում և հաշվում էր չոր սիսեռի հատիկները, որ մի կաթսայից լցնում էր մյուսի մեջ: Նա բժշկին ընդունեց ուրախ տեսքով:

– Ուրեմն, բժի՛շկ, խոլերա՞ է:

– Որտեղի՞ց հնարեցիք:

– Թերթում է գրված, և ռադիոն էլ է հայտնել:

– Ո՛չ, խոլերա չէ:

– Ամեն դեպքում,– ասաց ծերուկը շատ գրգռված,– շատ ուժեղ են գործում մեր խելոքների գլուխները, հը՞:

– Իսկ դուք մի հավատացեք ոչ մի բանի,– ասաց բժիշկը:

Նա արդեն քննել էր ծերուկին և այժմ նստած էր այդ աղքատիկ ճաշասենյակի մեջտեղում: Այո՛, նա վախենում էր: Նա գիտեր, որ հենց նույն արվարձանում վաղն առավոտյան իրեն սպասելու էին տասնյակից ավելի հիվանդներ՝ կկզած իրենց ուռուցքների վրա: Միայն մի երկու դեպք էր եղել, երբ ուռուցքների բացումը բարելավել էր վիճակը: Բայց հիվանդների մնացած մեծ մասը հիվանդանոց էր տեղափոխվելու, և ինքը գիտեր ինչ էր նշանակում հիվանդանոցը աղքատների համար: Հիվանդներից մեկի կինը հայտարարեց. «Ես չեմ ուզում, որ նա ծառայի ձեր փորձարկումներին»: Նա չէր ծառայի փորձարկումներին, նա կմեռներ և վերջ: Ձեռնարկված միջոցները բավարար չէին, դա ավելի քան ակնհայտ էր: Ինչ վերաբերում էր «հատուկ կահավորված» հիվանդասենյակներին, նա լավ գիտեր ինչ էին դրանք, երկու սրահ՝ հապճեպորեն դատարկված իրենց նախկին հիվանդներից, ճեղքերը խցանած երկու պատուհաններով

և շրջանակված առողջապահական ծոպանով: Եթե համաձարակն ինքն իրեն չդադարեր, նրան հնարավոր չէր լինի հաղթահարել վարչության ձեռնարկած միջոցներով:

Սակայն երեկոյան պաշտոնական հաղորդագրությունները դեռևս լավատեսական էին: Հաջորդ օրը Տեղփաստ գործակալությունը հաղորդում էր, որ ոստիկանական միջոցառումներն ընդունվել էին հանգիստ, և որ արդեն մոտ երեսուն հիվանդ էր ի հայտ եկել: Կաստելը զանգահարեց Ռիոյին.

– Քանի՞ մահճակալ են տրամադրում այդ հիվանդասենյակները:

– Ութսուն:

– Իսկ քաղաքում, կարելի է ենթադրել, երեսունից ավելի հիվանդ կա:

– Կան հիվանդներ, որոնք վախենում են, իսկ շատերը ժամանակ չեն ունեցել հայտնելու:

– Թաղումները հսկողության տա՞կ են:

– Ո՛չ: Ես զանգահարեցի Ռիշարին և ասացի, որ համալիր միջոցներ են անհրաժեշտ և ոչ թե դատարկ խոսքեր, որ համաձարակի դիմաց իսկական պատնեշ է հարկավոր բարձրացնել կամ ոչինչ չանել:

– Եվ ի՞նչ:

– Նա ինձ պատասխանեց, որ իշխանություն չունի: Իսկ իմ կարծիքով՝ թվերն աճելու են:

Երեք օրում իսկապես երկու սրահներն էլ լրիվ լցվեցին: Ռիշարի տվյալներով՝ պատրաստվում էին մի դպրոց փակել և վերածել օժանդակ հիվանդանոցի: Ռիոն սպասում էր շիճուկներին և կտրում-բացում էր ուռուցքները:

Կաստելը վերադարձել էր իր հին գրքերի աշխարհը և երկար ժամանակով փակվում էր գրադարանում:

– Առնետները սատկել են ժանտախտից կամ դրան շատ նման այլ հիվանդությունից,– եզրակացրեց նա:–Նրանք բաց են թողել տասնյակհազարավոր լվեր, որոնք կտարածեն վարակը երկրաչափական պրոգրեսիայով, եթե ժամանակին չկանգնեցվեն:

Ռիոն լռում էր:

Այդ ժամանակաշրջանում եղանակը կարծես կայունացավ: Արևը չորացնում էր վերջին տեղատարափ անձրևների ջրափոսերը:

Դեղին լույսից ճառագող երկնքի հոյակապ կապույտը, ինքնաթիռների դռռոցը հետզհետե ուժգնացող տապի մեջ, ամեն ինչ տրամադրում էր անխռովության: Չորս օրում, սակայն, հիվանդությունը չորս ապշեցուցիչ ոստյուն արեց՝ տասնվեց, քսանչորս, քսանութ և երեսուներկու զոհ: Չորրորդ օրը հայտնեցին, որ բացել են օժանդակ հիվանդանոց մանկապարտեզի շենքում: Մեր համաքաղաքացիները, որոնք մինչ այդ շարունակում էին քողարկել իրենց տագնապն ուրախ կատակների տակ, այժմ ավելի ընկճված ու լռակյաց էին երևում փողոցներում:

Ռիոն որոշեց զանգահարել ոստիկանության սպային.

– Ձեռնարկած միջոցներն անբավարար են:

– Ինձ մոտ են թվային տվյալները,– ասաց սպան,– դրանք իրոք անհանգստացնող են:

– Դրանք առավել քան անհանգստացնող են, դրանք պարզորոշ են:

– Ես կառավարությունից հրամաններ կպահանջեմ:

Ռիոն անմիջապես զանգեց Կաստելին.

– Հրամաննե՞ր, մարդ պիտի երևակայություն ունենա:

– Իսկ շիճուկնե՞րը:

– Այս շաբաթվա մեջ կհասնեն:

Պրեֆեկտուրան Ռիշարի միջնորդությամբ խնդրեց Ռիոյին կազմել զեկուցագիր, որ ուղարկեն գաղութի մայրաքաղաք հրամաններ ստանալու համար: Ռիոն գրեց հիվանդության բուժհետազոտական նկարագրությունը և տվեց թվային տվյալներ: Նույն օրը հաշվեցին մոտ քառասուն զոհ: Ոստիկանապետը, ինչպես ինքը հայտարարեց, հենց հաջորդ օրվանից ձեռնարկված միջոցներն ուժեղացնելու պատասխանատվությունն իր վրա վերցրեց: Հիվանդության առկայության հայտարարումը և հիվանդի մեկուսացումը մնացին ուժի մեջ: Հիվանդների տները պետք է փակվեին և ախտահանվեին, մերձավորները՝ ենթարկվեին անվտանգության կարանտինի, թաղումները պետք է կազմակերպվեին քաղաքային իշխանությունների կողմից՝ ըստ ստեղծված հանգամանքների: Մեկ օր անց շիճուկները ինքնաթիռով տեղ հասան: Դրանք կբավականացնեին բուժման մեջ գտնվող հիվանդներին: Սակայն եթե համաճարակը

https://1915.info

տարածվեր, այդքանը չէր հերիքի: Ռիոյի հեռագրին պատասխանեցին, որ պահեստային պաշարները սպառված են, և այժմ սկսված է նոր շիճուկների արտադրությունը:

Այդ ընթացքում շրջակա բոլոր արվարձաններից շուկա էր հասնում գարունը: Հազարավոր վարդեր էին թառամում մայթերի երկայնքով շարված ծաղկավաճառների զամբյուղներում, և նրանց անուշաբույրը թևածում էր ամբողջ քաղաքով մեկ: Արտաքուստ ոչինչ չէր փոխվել: Տրամվայները միշտ լեցուն էին թեժ ժամերին, իսկ օրվա ընթացքում դատարկ էին ու կեղտոտ: Տարուն նայում էր փոքրիկ ծերուկին, իսկ փոքրիկ ծերուկը թքում էր կատուների վրա: Գրանն ամեն երեկո վերադառնում էր տուն՝ շարունակելու իր առեղծվածային աշխատանքը: Կոթարը պտույտներ էր գործում քաղաքում, իսկ պարոն Օթոնը՝ ոստիկանության քննիչը, ղեկավարում էր իր գազանանոցը: Ասթմայով հիվանդ ծերուկը ամանեաման էր տեղափոխում իր սիսեռները: Փողոցներում երբեմն տեսնում էին լրագրող Ռամբերին՝ հետաքրքրասեր ու անվրդով տեսքով: Երեկոյան նույն բազմությունը լցնում էր փողոցները, և կինոթատրոնների մոտ շարվում էին հերթերը: Ի դեպ, համաճարակը կարծես նահանջել էր, և մի քանի օրվա ընթացքում միայն տասնյակի չափ մահ էր արձանագրվել: Հետո հանկարծակի այդ սլաքը կտրուկ բարձրացավ: Այդ օրը, երբ մահացածների թիվը նորից հասավ երեսունի սահմաններին, Բեռնար Ռիոն նայում էր պաշտոնական հեռագիրը, որ ոստիկանապետը մեկնեց իրեն՝ ասելով.

– Վախեցան:

Հեռագիրն ասում էր. «Հայտարարեք ժանտախտի համաճարակ: Փակեք քաղաքը»:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Այդ պահից սկսած՝ կարելի է ասել, որ ժանտախտը դարձավ մեր բոլորի գործը: Մինչ այդ, չնայած իրենց գլխին եկած եզակի իրադարձություններին, մեր համաքաղաքացիներից յուրաքանչյուրը շարունակել էր գործը իր սովորական տեղում, որքան կարողացել էր: Եվ անկասկած այդպես էլ պիտի լիներ: Բայց հենց որ քաղաքի դարպասները փակվեցին, նրանք հայտնաբերեցին, որ բոլորը, այդ թվում և պատմիչը, ընկել են նույն թակարդը և պետք է ինչ-որ կերպ հարմարվեն: Այսպես օրինակ՝ այնպիսի անհատական զգացում, ինչպիսին է սիրած էակից բաժանումը, հանկարծ մի ամբողջ քաղաքի բնակչության համար հենց առաջին շաբաթներից վախի հետ անսպասելիորեն դարձավ հիմնական տառապանքը աքսորի այդ երկար ժամանակներում:

Դռների փակման ամենանշանակալից հետևանքներից մեկն իսկապես եղավ հանկարծակի բաժանումը, որտեղ հայտնվեցին բոլորովին անպատրաստ մարդիկ: Մայրեր ու երեխաներ, ամուսիններ, սիրահարներ, ովքեր մի քանի օր առաջ կարծել էին, թե դա ժամանակավոր բաժանում կլինի, ովքեր համբուրվել էին մեր կայարանի կառամատույցներում՝ փոխանակելով մի երկու հանձնարարականներ, վստահ, թե կհանդիպեն մի քանի օր կամ մի քանի շաբաթ անց, համակված մարդկային տխմար վստահությամբ, որ

այդ մեկնումի պատճառով հազիվ թե կտրվեն իրենց սովորական զբաղմունքներից, հանկարծ իրար գտան անվերադարձ հեռացված՝ զրկված միանալու կամ հաղորդակցվելու հնարավորությունից: Քանի որ քաղաքի փակումը սկսվել էր պրեֆեկտուրայի կասեցման հրամանի հրապարակումից մի քանի ժամ առաջ, բնականաբար հնարավոր չէր եղել նկատի ունենալ անգամ մասնավոր դեպքերը: Կարելի է ասել, որ հիվանդության այդ բիրտ ներխուժման առաջին արդյունքը եղավ այն, որ մեր համաքաղաքացիները ստիպված էին գործել այնպես, ասես զուրկ էին անձնական զգացմունքներից: Հրամանի՝ ուժի մեջ մտնելու օրվա առաջին ժամերին պրեֆեկտուրան պաշարվեց հարցուփորձ անողների բազմությամբ, որոնցից ոմանք հեռախոսով, ոմանք անձամբ ներկայանալով պաշտոնյաներին՝ մատնանշում էին նաև այլ հետաքրքիր փաստեր, բայց միաժամանակ քննության ենթարկելով անհնարին իրավիճակները: Ճիշտն ասած՝ հարկ եղան բազմաթիվ օրեր, որպեսզի մենք մեզ հաշիվ տայինք, որ գտնվում ենք փոխզիջում չենթադրող իրավիճակում, և որ այնպիսի բառեր, ինչպիսիք էին պայմանավորվել, բարյացակամություն, բացառություն, այլևս իմաստազրկված էին:

Անգամ ամենաչնչին մխիթարանքը՝ նամակագրությունը, մերժվեց: Մի կողմից՝ քաղաքն իրոք սովորական հաղորդակցության միջոցներով այլևս կապված չէր երկրի մնացած մասի հետ, մյուս կողմից՝ մեկ ուրիշ հրաման արգելեց ամեն տեսակի նամակագրություն՝ ենթադրելով, որ նամակը կարող է դառնալ վարակի տարածման աղբյուր: Սկզբում որոշ արտոնյալների հաջողվում էր խցկվել քաղաքի դարպասների առջև կանգնած փոստային ժամապահների մոտ, որոնք համաձայնում էին ուղերձներ անցկացնել դուրս: Բայց դա դեռ համաճարակի առաջին օրերին էր՝ այն պահին, երբ պահակները բնական էին համարում զիջել հանուն կարեկցանքի: Սակայն որոշ ժամանակ անց, երբ հենց նույն պահակները խորապես համոզվեցին, որ վիճակը լուրջ է, կտրականապես հրաժարվեցին պատասխանատվություն ստանձնելուց, քանի որ չէին կարող կանխատեսել դրա ընդգրկունությունը: Միջքաղաքային հեռախոսային խոսակցությունները, որ թույլատրվում էին սկզբում,

առաջացրին այնպիսի գերլարվածություն քաղաքի հեռախոսային խցիկներում և գծերի վրա, որ մի քանի օր լրիվ արգելվեցին, իսկ հետո խստագույնս սահմանափակ դարձան միայն, այսպես ասած, հրատապ դեպքերի համար, ինչպես ասենք՝ մահվան, ծնունդի և ամուսնության: Այդժամ հեռագիրը դարձավ հաղորդակցման մեր միակ միջոցը: Մարդիկ, որոնք միացած էին հոգով, սրտով ու մարմնով, ստիպված եղան իրենց անցյալի կապը պահպանել մեծատառերով գրված տասը բառ պարունակող հեռագրով: Եվ քանի որ փաստորեն ձևերը, որ հնարավոր է գործածել հեռագրերում, արագ սպառվում են, համատեղ երկար տարիները կամ ցավացիր կրքերն արագ ամփոփվում էին կաղապարային պարբերական փոխանակությամբ՝ «Լավ եմ»: «Մտածում եմ քո մասին»: «Համբույրներ»:

Մերոնցից ոմանք, այսուհանդերձ, համառորեն գրում էին՝ մոգոնելով արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու զանազան խորամանկություններ, որոնք միշտ ավարտվում էին պատրանքներով: Եթե անգամ մեր հնարած խորամանկություններից մի քանիսը հաջողվում էին՝ չստանալով պատասխան, ոչինչ չէինք իմանում այդ մասին: Ուրեմն շաբաթներ շարունակ ստիպված էինք լինում անդադար վերսկսել միևնույն նամակը, արտագրել միևնույն կոչերը, մինչև որ որոշ ժամանակ անց բառերը, որ բխել էին մեր արնահոս սրտերից, լրիվ իմաստազրկվեցին: Մենք այդժամ կրկին վերսկսեցինք մեքենայաբար արտագրել՝ ջանալով այդ մեռած խոսքերին հաղորդել մեր դժվարին կյանքի ինչ-որ նշաններ: Եվ որպես վերջաբան այդ անպտուղ ու համառ մենախոսությանը, այդ անջրդի խոսակցությանը պատի հետ՝ հեռագրի պայմանական կանչը մեզ թվաց նախընտրելի: Մի քանի շաբաթ անց միաժամանակ, երբ ակնհայտ դարձավ, որ ոչ ոքի չի հաջողվելու դուրս գալ մեր քաղաքից, միտք ծագեց հարցում անելու, թե թույլատրելի կլինի՞ համաձարակից մի քանի օր առաջ մեկնածների վերադարձը: Մի քանի օր մտածելուց հետո պրեֆեկտուրան դրական պատասխան տվեց: Բայց ճշգրտում մտցրեց, որ հայրենադարձները ոչ մի դեպքում չէին կարող կրկին դուրս գալ քաղաքից, և եթե նրանք ազատ են գալու համար, այդպիսին չեն լինի նորից

դուրս գնալիս: Այդ ժամանակ անգամ որոշ ընտանիքներ, նշենք՝ սակավաթիվներ, չափազանց թեթևամիտ գտնվեցին և ողջամտությունից առաջ դնելով իրենց հարազատներին տեսնելու ցանկությունը՝ նրանց առաջարկեցին օգտվել առիթից: Սակայն շատ շուտով ժանտախտով գերեվարվածները հասկացան վտանգը, որին ենթարկում էին իրենց մերձավորներին, և հլու-հնազանդ համաձայնեցին կրել բաժանման տառապանքը: Հիվանդության ամենաբարդ շրջանում միայն մի դեպք տեսանք, երբ մարդկային զգացմունքներն ավելի ուժեղ գտնվեցին, քան չարչարանքներով լի մահվան վախը: Դա սիրահարների պատմություն չէր, ինչպես կարելի է ենթադրել, երբ սերը մեկին մղում է դեպի մյուսը՝ անտեսելով բոլոր տառապանքները: Խոսքն ընդամենը ծեր բժիշկ Կաստելի և նրա կնոջ մասին է, որոնք վաղուց էին ամուսնացած: Տիկին Կաստելը համաճարակից մի քանի օր առաջ մեկնել էր հարևան քաղաքը: Սա անգամ այն ընտանիքներից չէր, որոնք աշխարհին ընծայում են ցուցանմուշային երջանկության օրինակը, և պատմիչը չափի մեջ կլինի, եթե ասի, որ այս ամուսիններն ամենայն հավանականությամբ վստահ չէին, որ գոհ էին իրենց միությունից: Սակայն այս բիրտ ու երկարաձիգ բաժանումը նրանց հավաստիացրեց, որ իրենք չեն կարող ապրել իրարից հեռու, և որ այս հանկարծակի ծնված ճշմարտության առջև ժանտախտն աննշան բան էր:

Խոսքը բացառության մասին էր: Մեծամասնության համար ակնհայտ էր, որ բաժանումը պետք է ավարտվեր միայն համաճարակի հետ: Եվ մեզ՝ բոլորիս համար զգացմունքը, որ մեր կյանքն էր, և որը սակայն կարծում էինք, թե լավ ենք հասկանում (օրանցիները, ինչպես արդեն ասվել է, պարզ կրքեր ունեին), նոր կերպարանք էր ստանում: Ամուսիններ ու սիրեկաններ, որոնք մեծ վստահություն ունեին իրենց կողակիցների նկատմամբ, հայտնաբերեցին, որ խանդում են: Տղամարդիկ, որոնք սիրային հարցերում իրենց համարում էին թեթևամիտ, ձեռք բերեցին կայունություն: Որդիներ, որոնք ապրել էին իրենց մոր կողքին՝ հազիվ նկատելով նրան, այժմ իրենց ողջ անհանգստությունն ու զղջումը ամփոփում էին նրա դեմքի մի կնճիռի մեջ, որը հետապնդում էր իրենց հիշողությունը: Այդ բիրտ

https://1915.info

բաժանումը՝ առանց վրիպումների, անկանխատեսելի հեռանկարով, մեզ թողել էր շփոթահար, անընդունակ պատասխանելու այդ ներկայության՝ դեռևս այնքան մոտիկ և արդեն այնքան հեռավոր հիշողությանը, որով այժմ լցված էին մեր օրերը: Փաստորեն, մեր տառապանքը կրկնակի էր. նախ՝ մեր սեփական տառապանքը, և հետո՝ այն տառապանքը, որ պատկերացնում էինք բացակաների՝ որդու, ամուսնու կամ սիրեցյալի համար:

Այլ պարագաներում, ասենք, մեր համաքաղաքացիներն անմիջապես կգտնեին որևէ ելք՝ վարելով առավել օտարոտի և գործունյա կյանք: Սակայն միևնույն ժամանակ ժանտախտը նրանց դարձնում էր անգործունյա, ստիպում թափառել, պտույտներ գործել իրենց մռայլ քաղաքում և օրըստօրե ավելի տրվել հիշողությունների ընկճող խաղերին: Պատճառն այն էր, որ աննպատակ զբոսանքները նրանց տանում էին միշտ նույն ճանապարհներով, իսկ նման փոքրիկ քաղաքում դրանք մեծ մասամբ միշտ նույն ճանապարհներն էին, որ անցած ժամանակներում անցել էին բացակաների հետ:

Այսպիսով, առաջին բանը, որ ժանտախտը բերեց մեր քաղաք, աքսորն էր: Եվ պատմիչը համոզված է, որ այստեղ կարող է գրել բոլորի անունից այն, ինչ ինքն է զգացել այդ ժամանակ, քանզի զգացել է այն, ինչ զգում էին մեր համաքաղաքացիներից շատերը: Այո՛, հենց աքսորի զգացումն էր՝ դատարկության զգացումը, որ մենք հաստատապես կրում էինք մեր մեջ, այդ ճշգրիտ հուզմունքը, ետ վերադառնալու անխոհեմ ցանկությունը կամ, ընդհակառակը, արագացնելու ժամանակի քայլքը՝ չզգալու հիշողության նետերի այրոցքը: Եթե երբեմն տրվում էինք երևակայությանը և հաճույք էինք ստանում՝ սպասելով վերադարձի զանգին կամ սանդուղքի վրա հարազատ ոտնաձայներին, եթե այդ պահերին համաձայնում էինք մոռանալ, որ գնացքներն անշարժացել են, և եթե մեզ տրամադրում էինք տանը մնալ այն ժամին, երբ իրիկնային ճեպընթացով հասած ճանապարհորդը բնականաբար կարող էր գալ մեր թաղը, ինքնըստինքյան հասկանալի էր, որ այդ խաղերը երկար չէին տևելու: Միշտ գալիս էր մի պահ, երբ հստակ գիտակցում էինք, որ գնացքները չեն ժամանում: Մենք հասկանում էինք, որ մեր բաժանումը տևական է,

և որ պետք է ջանանք հարմարվել ժամանակի հետ: Այդ ժամանակից ի վեր մենք, ըստ էության, կրկին միանում էինք բանտարկյալի մեր ճակատագրին, ամփոփվում մեր անցյալի մեջ, և եթե անգամ մեզնից որևէ մեկը փորձում էր ապրել ապագայով, նա հրաժարվում էր այդ փորձից շատ արագ, որքան հնարավոր էր՝ տառապելով այն խոցերից, որ ի վերջո, երևակայությունը հասցնում է նրանց, ովքեր իրեն վստահում են: Մասնավորապես մեր բոլոր համաքաղաքացիները շատ արագ, անգամ հրապարակավ հրաժարվեցին բաժանման տևականությունը տանելու իրենց ձեռք բերած սովորությունից: Ինչո՞ւ: Որովհետև եթե անգամ ամենահոռետեսները դրա համար նախատեսել էին, օրինակ, վեց ամիս, կանխավ սպառում էին այդ ժամկետին հասնելու վիշտը՝ մեծ դժվարությամբ բարձրացնելով իրենց արիությունը այդ փորձության մակարդակին, լարելով իրենց վերջին ուժերը, որպեսզի կարողանան առանց թուլանալու դիմանալ, մնալ երկար օրեր շարունակ ձգվող տառապանքի բարձրության վրա, ապա պատահական մի հանդիպում բարեկամի հետ, լրագրում հայտնված մի կարծիք, մի թռուցիկ կասկած կամ հանկարծակի մի պայծառատեսություն նրանց հանգեցնում էր այն մտքին, որ ի վերջո հիմք չկա հուսալու, որ հիվանդությունը չի տևի վեց ամսից ավելի կամ գուցե մեկ տարի կամ ավելի շատ:

Այդ պահին նրանց արիության, կամքի ու համբերության փլուզումն այնքան կտրուկ էր տեղի ունենում, որ իրենց թվում էր, թե այլևս երբեք չեն կարողանա բարձրանալ այդ փոսից, որի մեջ ընկել էին: Այդ պատճառով նրանք իրենց հարկադրում էին երբեք չմտածել իրենց ազատագրման ժամկետի մասին, այլևս չշրջվել դեպի ապագան և միշտ պահել աչքերը, այսպես ասած, խոնարհած: Սակայն, բնականաբար, ողջամտության այդ դրսևորումները, ցավի հետ խորամանկելու այդ ձևը՝ թաքցնել թուրը ճակատամարտից հրաժարվելու համար, վատ էին վարձատրվում: Մյուս կողմից, եթե նրանք ամեն գնով խուսափում էին այդ փլուզումից, ապա զրկվում էին իսկապես այն բավական հաճախ կրկնվող պահերից, երբ սիրած էակի հետ մոտակա վերամիավորման պատկերները կարող էին ստիպել մոռանալ ժանտախտը: Եվ այստեղից ձախողված

անդունդի և լեռնագագաթի միջև կիսաճանապարհին՝ նրանք ավելի շուտ ծածանվում էին, քան ապրում՝ տրված աննպատակ օրերին և անպտուղ հիշատակներին, նման թափառող ստվերների, որոնք կարող էին միս ու արյուն ստանալ միայն արմատ ձգելով իրենց վշտերի հողում:

Այսպիսով, նրանք զգում էին բոլոր բանտարկյալների և բոլոր աքսորյալների հիշողությամբ ապրելու խորին տառապանքը, որն այլևս ոչինչ չարժեր: Այդ անցյալը, որի մասին մտածում էին անդադար, այժմ միայն ափսոսանքի համ ուներ: Նրանք կուզենային իսկապես այդ անցյալին ավելացնել այն ամենը, ինչի համար ողբում էին, որ չեն արել, երբ դեռ կարող էին անել նրա հետ, ում սպասում էին, և նույն կերպ բոլոր պարագաներում՝ անգամ հարաբերականորեն երջանիկ, իրենց գերեվարված կյանքին նրանք խառնում էին բացակայությունը և այն ներկան, որն այժմ չէր գոհացնում իրենց: Անհամբեր ներկայում, թշնամի իրենց անցյալին և զրկված ապագայից՝ մենք շատ նման էինք նրանց, որոնց մարդկային արդարությունը կամ ատելությունը ստիպում են ապրել ճաղաշարերի ետևում: Մի խոսքով՝ այդ անտանելի արձակուրդներից խույս տալու միակ միջոցը կրկին երևակայության գնացքների գործի դնելն էր և ժամեր սպանելը՝ անվերջ սպասելով, թե կղողանջի դռան զանգը, որը սակայն համառորեն լռում էր:

Բայց եթե դա իրոք աքսոր էր, ապա մեծամասնության համար աքսոր էր սեփական տան մեջ: Եվ չնայած պատմիչը գիտեր միայն այն աքսորի մասին, որը բոլորինն էր, նա չպետք է մոռանար նրանց, ինչպես օրինակ՝ լրագրող Ռամբերին և մյուսներին, որոնց համար, ընդհակառակը, բաժանման տառապանքները ահագնանում էին նաև այն պատճառով, որ ժանտախտով անակնկալի եկած և քաղաքում փակված ճանապարհորդները, միաժամանակ հեռու էին և՛ այն հարազատ մարդուց, որին չէին կարող միանալ, և՛ այն հարազատ երկրից, որը իրենցն էր: Համընդհանուր աքսորի մեջ նրանք կրկնակի աքսորյալներ էին, քանզի եթե ժամանակը նրանց, ինչպեսև բոլորի մեջ առաջ էր բերում թախծոտ տագնապ, ապա նրանք իրենց զգում էին նաև կապված տարածությանը և

անդադար բախվում էին պատերին, որոնք իրենց ժանտախտահար ապաստանն անընդմեջ բաժանում էին իրենց կորուսյալ հայրենիքից: Իհարկե, նրանց կարելի էր տեսնել օրվա բոլոր ժամերին քաղաքի փոշոտ փողոցներով թափառելիս՝ լռելյայն կանչելով միմիայն իրենց հայտնի երեկոները և իրենց երկրի արշալույսները: Նրանք իրենց ցավն ամոքում էին անարժեք նշավակներով, որոնք իրենց համար հուսակորույս ուղերձներ էին, ինչպես օրինակ՝ ծիծեռնակների չուն, իրիկնային ցողը կամ զարմանահրաշ ճառագայթները, որ արևը երբեմն ձգում էր ամայի փողոցներում: Նրանք փակում էին աչքերը ամեն ինչից փրկող արտաքին աշխարհի վրա, համառ և կամակոր՝ փայփայելով իրենց չափազանց իրական ցնորքները և ամբողջ ուժով հետամուտ լինելով այն երկրի պատկերներին, որի լույսի դույզն իսկ ցոլքը կամ բլրակների շարքը, սիրած ծառը կամ կանանց դեմքերը ստեղծում էին իրենց համար անփոխարինելի մթնոլորտ:

Վերջապես, եթե խոսենք հատկապես սիրահարների մասին, որոնք ամենահետաքրքրականն են, և որոնց մասին պատմիչը թերևս ամենից ավելի հիմք ունի խոսելու, նրանք տագնապահար էին նաև այլ անձկություններից, որոնց թվում պետք է նշել զղջումը: Իրոք, այդ իրավիճակը նրանց թույլ էր տալիս իրենց զգացմունքը դիտարկել իբրև տենդագին օբյեկտիվություն: Եվ շատ հաճախ նման դեպքերում սեփական թերությունները չէին երևում իրենց ողջ սրությամբ: Այդ պատճառով էլ դժվարության մեջ նրանք առիթը բաց չէին թողնում, որպեսզի պատկերացնեին բացակաների արարքները կամ շարժուձևերը: Այդժամ նրանք ափսոսում էին, որ չէին իմացել ինչպես բաշխել ժամանակը, իրենց մեղադրում էին, որ թեթևամտորեն անտեսել էին այդ կարևոր հարցը և ձևացրել, թե հավատում են, որ սիրող էակի համար սիրված մարդու ժամանակի բաշխումը բոլոր ուրախությունների աղբյուրը չէ: Այդ պահից սկսած՝ նրանց համար հեշտ էր վերադառնալ իրենց սիրո ակունքներին և քննել նրա անկատարելիությունը: Սովորական ժամանակներում գիտակցաբար կամ ոչ մենք հասկանում ենք, որ չկա այնպիսի սեր, որ անգերազանցելի լինի, և սակայն

ընդունում ենք առավել կամ պակաս հանգստությամբ, որ մեր սերը լինի միջակություն: Սակայն հիշողությունն ավելի պահանջկոտ է: Եվ մեծ հետևողականությամբ այդ դժբախտությունը, որ դրսից էր գալիս և հարվածում էր ողջ քաղաքին, մեզ միայն անարդարացի տառապանք չէր բերում, որից կարողանայինք միայն դժգոհել: Այն մեզ դրդում էր նաև, որ ինքներս մեզ տանջեինք և այդպիսով համակերպվեինք ցավին: Դա այն ձևերից մեկն էր, որով համաճարակը շեղում էր մեր ուշադրությունը և խառնում էր խաղաքարտերը:

Այսպիսով, յուրաքանչյուրը ստիպված էր ընդունել, որ պիտի ապրի օր օրվա ետևից և միայնակ՝ երկնքին դեմ հանդիման: Այդ համընդհանուր լքվածությունը, որ կարող էր ժամանակի ընթացքում քիչ-քիչ կոփել բնավորությունը, սկսում էր սակայն մարդկանց նկարագիրը վերածել ոչնչության: Օրինակ՝ մեր համաքաղաքացիներից ոմանց համար իրենց վիճակը մեկ այլ ստրկություն էր՝ կախվածություն արևից ու անձրևից: Նրանց տեսքից կարելի էր կարծել, թե առաջին անգամ էին ուղղակիորեն հայտնաբերում եղանակը: Նրանք ասես հրճվում էին ոսկեզօծ լույսի պարզագույն հայտնությունից, իսկ անձրևային օրերին թանձր շղարշով շպարում էին իրենց դեմքերն ու մտքերը: Դեռ մի քանի շաբաթ առաջ խույս էին տալիս այդ թուլությունից, այդ անմիտ ստրկացումից, որովհետև միայնակ չէին աշխարհին դեմ հանդիման, և էակը, որն ապրում էր իրենց հետ, ինչ-որ չափով կանգնած էր իրենց տիեզերքի դիմաց: Իսկ այդ պահից ի վեր, ընդհակառակը, նրանք ակնհայտորեն տրվեցին երկնքի կամակորություններին, այսինքն՝ սկսեցին տառապել, անիմաստ հույսեր փայփայել:

Եվ վերջապես, այս միայնակության ծայրահեղությունների մեջ ոչ ոք չէր կարող հուսալ հարևանի օգնությունը, և յուրաքանչյուր ոք մենակ էր մնում իր մտահոգության հետ: Եթե մեզնից մեկը պատահաբար ջանում էր վստահել կամ ինչ-որ բան ասել իր զգացումների մասին, ստացած պատասխանը, ինչ էլ որ լիներ, մեծ մասամբ վիրավորական էր թվում: Այդժամ նա մտածում էր, որ խոսակիցն ու ինքը նույն բանի մասին չէին խոսում: Ինքն իրոք

արտահայտվում էր իր մտատանջությունների ու տանջանքների՝ երկար օրերի խորքից, և պատկերը, որին ուզում էր հաղորդակից դարձնել դիմացինին, եփվել էր սպասումի ու կրքի կրակի վրա: Մյուսը, ընդհակառակը, պատկերացնում էր պայմանական մի հույզ, շուկայում վաճառվող մի ցավ, մելամաղձությունների մի շարան: Պատասխանը՝ լիներ բարյացակամ թե թշնամական, միշտ սխալ էր հնչում, հարկ էր լինում հրաժարվել սպասվող ցավակից զրույցից: Կամ էլ առնվազն նրանք, ում համար լռությունը դառնում էր անտանելի, չկարողանալով գտնել սրտակից խոսելաձև, հլուհնազանդ որդեգրում էին շուկայական լեզուն և իրենք էլ սկսում էին խոսել կարծրատիպ բառապաշարով, պարզ հարաբերությունների, զանազան դեպքերի մասին առօրեական ժամանակագրության կարգով: Այստեղ նույնպես ամենահիսկական ցավերը սովորություն էին ձեռք բերում մեկնաբանվել խոսակցական ամենահասարակ ձևերով: Միայն այդ գնով ժանտախտի գերիները կարող էին հասնել դռնապանի կարեկցանքին կամ շարժել իրենց ունկնդիրների հետաքրքրասիրությունը:

Սակայն և սա ամենակարևորն է. որքան էլ ցավագին լինեին այդ անձկությունները, որքան էլ ծանր՝ արդեն դատարկված սրտի համար, ստույգ կարելի էր ասել, որ այս աքսորյալները ժանտախտի առաջին շրջանում դարձան արտոնյալներ: Իսկապես, այդ նույն պահին, երբ քաղաքի բնակիչները սկսում էին խենթանալ, նրանց միտքն ամբողջությամբ ուղղվում էր դեպի այն մարդը, որին սպասում էին: Համընդհանուր հուսալքության մեջ սիրո ենասիրությունը նրանց պահպանում էր, և եթե մտածում էին ժանտախտի մասին, ապա սոսկ այնքանով, որքանով այն սպառնում էր իրենց բաժանումը դարձնել հավերժական: Այսպես նրանք համաճարակի հիմքն էին ընկղմում մի փրկարար ցրվածություն, որն ընդունվում էր որպես սառնարյունություն: Հուսահատությունը նրանց փրկում էր խուճապից, նրանց դժբախտությունը բարիք էր պարունակում: Օրինակ՝ եթե նրանցից մեկին տանում էր հիվանդությունը, ապա գրեթե միշտ հիվանդը չէր հասցնում անգամ գլխի ընկնել: Դուրս քաշվելով այդ երկար ներքին երկխոսությունից, որ վարում էր սիրած ստվերի հետ՝

նա առանց անցումի նետվում էր երկրի թանձրագույն լռության մեջ: Այլևս ոչնչի ժամանակ չէր ունենում:

Մինչ մեր համաքաղաքացիները փորձում էին հարմարվել այդ անակնկալ աքսորին, ժանտախտը պահակներ էր կարգում քաղաքի դարպասներին և ետ շրջում Օրանի ճամփան բռնած նավերը: Փակումից ի վեր ոչ մի փոխադրամիջոց չէր մտել այնտեղ: Այդ օրվանից սկսած՝ այնպիսի տպավորություն էր ստեղծվել, թե մեքենաները պտտվում էին իրենք իրենց շուրջը: Նավահանգիստը նույնպես մի առանձնահատուկ կերպարանք էր ստացել նրանց համար, ովքեր այն դիտում էին ծառուղիների բարձունքից: Սովորական եռուզեռը, որ տիրում է ծովափնյա որևէ նավահանգստում, իսպառ հանգել էր: Միայն երևում էր կարանտինի մեջ դեռ պահվող մի քանի շոգենավ: Կառամատույցներում հսկայական զինաթափ ամբարձիչները, կողքի շուռ եկած վագոնիկները, տակառների կամ պարկերի կույտերը վկայում էին, որ առևտուրը նույնպես մեռել է ժանտախտից:

Չնայած այս արտասովոր տեսարաններին՝ մեր համաքաղաքացիներն ակնհայտորեն լավ չէին հասկանում ինչ էր պատահել իրենց հետ: Կային ընդհանուր զգացումներ, ինչպիսիք էին բաժանումը կամ վախը, սակայն առաջնային էին նաև իրենց անձնական մտահոգությունները: Ոչ ոք դեռ իրապես չէր ընդունել հիվանդությունը: Մեծամասնության համար հատկապես անընդունելի էր այն, ինչը խախտում էր իրենց սովորությունները կամ դիպչում էր անձնական շահերին: Դրանից նրանք գրգռվում էին կամ զայրանում, սակայն գրգռվածությունը կամ զայրույթը այն զգացմունքները չեն, որ հնարավոր լինի հակադրել ժանտախտին: Օրինակ՝ նրանց առաջին հակազդեցությունը եղավ իշխանություններին մեղադրելը: Ոստիկանապետի պատասխանը քննադատներին, որոնց արձագանքում էր մամուլը («Չէի՞ն կարող մեղմել ձեռնարկված միջոցները»), բավական անսպասելի եղավ: Մինչև հիմա ոչ լրագրերը, ոչ Տեղփաստ գործակալությունը չէին ստացել հիվանդության վիճակագրական տվյալների պաշտոնական հաղորդագրությունը: Ոստիկանապետն ամեն օր սկսեց հաղորդումներ տալ գործակալությանը, սակայն խնդրեց նաև կազմել

շաբաթական հաղորդագրություն: Այսուհանդերձ, սրան էլ հասարակությունն անմիջապես չարձագանքեց: Իսկապես, հայտարարությունն այն մասին, որ ժանտախտի երրորդ շաբաթը տվել է երեք հարյուր երկու մահ, մարդկային պատկերացումից վեր էր մի կողմից՝ գուցե դրանք բոլորը ժանտախտից չէ, որ մահացել էին, մյուս կողմից էլ՝ ոչ ոք չգիտեր, թե սովորական ժամանակներում քաղաքում շաբաթական քանի մարդ էր մահանում: Քաղաքն ուներ երկու հարյուր հազար բնակիչ: Իսկ գուցե մահացության այդ չափը բնականոն էր: Սա այն կարգի ճշգրիտ հաշվարկներից է, որոնցով երբեք չեն զբաղվում, չնայած ակնհայտ հետաքրքրություն են ներկայացնում: Հասարակությունը որոշ առումով չուներ համեմատության հենակետեր: Միայն ավելի ուշ հավաստիանալով, որ մահացությունը կտրուկ աճում է, հասարակական կարծիքն ըմբռնեց ճշմարտությունը: Հինգերորդ շաբաթն իրոք տվեց երեք հարյուր քսանմեկ, իսկ վեցերորդը՝ երեք հարյուր քառասունհինգ մահ: Թվերի աճն ավելի քան պերճախոս էր: Սակայն դրանք այնքան ուժեղ չէին, որպեսզի մեր համաքաղաքացիներն իրենց անհանգստության մեջ չշարունակեին ապրել այն տպավորությամբ, թե խոսքը, անշուշտ, զայրացուցիչ, բայց ի վերջո ժամանակավոր պատահարի մասին է:

Նրանք առաջվա նման շարունակում էին թափառել փողոցներում, նստել դարավանդների սրճարաններում: Ընդհանուր առմամբ նրանք վախկոտ չէին, ավելի շատ կատակներ էին փոխանակում, քան տրտունջքներ, և այնպիսի տեսք էին ընդունում, թե լավ տրամադրությամբ են ընդունում ակնհայտորեն անցողիկ անհարմարությունները: Առերևույթ պատշաճությունը փրկված էր: Սակայն ամսվա վերջին և մոտավորապես աղոթքների շաբաթվա ընթացքում (որի մասին դեռ երկար ենք խոսելու) ավելի լուրջ իրադարձությունները փոխակերպեցին մեր քաղաքը: Նախ ոստիկանապետը միջոցներ ձեռք առավ մեքենաների երթևեկության և մատակարարման վերաբերյալ: Մատակարարումը սահմանափակվեց, իսկ բենզինը չափակարգվեց: Կարգադրվեց անգամ խնայել էլեկտրաէներգիան: Օդային և ցամաքային ճանապարհներով Օրան էին բերվում միայն

ամենաանհրաժեշտ ապրանքները: Այդպես երթևեկությունը քիչ-քիչ նվազեց, մինչև որ հասավ գրեթե զրոյի, օրըստօրե փակվեցին շքեղ խանութները, մյուսներն իրենց ցուցափեղկերը զարդարեցին բացասական ազդագրերով, մինչ գնորդների հերթերը շարված էին մնում նրանց դռների առջև:

Այսպիսով, Օրանը ստացավ բացառիկ տեսք: Հետիոտների թիվը զգալիորեն աճեց, և անգամ մեռյալ ժամերին շատերը, որ խանութների կամ գրասենյակների փակման պատճառով պարապության էին մատնված, լցվում էին փողոցներն ու սրճարանները: Առայժմ նրանք դեռ գործազուրկներ չէին, պարզապես արձակուրդի մեջ էին: Այդ ժամանակ, օրինակ՝ հետմիջօրեին՝ ժամը երեքի կողմերը, հոյակապ երկնքի ներքո Օրանը տոնախմբության մեջ գտնվող քաղաքի խաբուսիկ տպավորություն էր թողնում, որի երթևեկությունը դադարեցրել էին և փակել խանութները, որպեսզի թույլ տան անցկացնել հանրային ցույցը, և որ բնակիչները կարողանան հեղեղել փողոցները զվարճություններին մասնակցելու համար:

Բնականաբար կինոթատրոններն օգտվում էին այս համընդհանուր արձակուրդից և մեծ շահույթ էին ստանում: Սակայն կինոնկարների փոխանակությունը դեպարտամենտում դադարեցված էր: Երկու շաբաթ անց հիմնարկությունները ստիպված եղան փոխանակել իրենց ծրագրերը, իսկ որոշ ժամանակից հետո կինոթատրոնները սկսեցին անընդհատ ցուցադրել նույն կինոնկարները: Նրանց շահույթն այսուհանդերձ չէր նվազում:

Սրճարանները, շնորհիվ այն բանի, որ մեր քաղաքում գինու առևտուրն առաջին տեղն էր զբաղեցնում, և կուտակված էր ահագին պաշար, նույնպես կարողացան սննդով բավարարել մեր հաճախորդներին: Ճիշտն ասած՝ շատ էին խմում: Մի սրճարան ցուցանակով գովազդեց. «Գինին սպանում է մանրէները»: Այդ բնականոն գաղափարն արդեն իսկ բավական էր հասարակության համար: Եվ որ սպիրտը պահպանում էր վարակիչ հիվանդություններից, ամրացավ մեր մտքերում: Ամեն գիշեր՝ ժամը երկուսի մոտերքը, հարբեցողների մի բավական հոծ բազմություն, որոնց

քշում էին սրճարաններից, լցվում էին փողոցները և քարոզում լավատեսական մտքեր:

Սակայն այս բոլոր փոփոխությունները որոշ իմաստով այնքան տարօրինակ էին և տեղի էին ունենում այնքան արագ, որ դժվար էր դրանք ընդունել որպես բնականոն ու տևական: Արդյունքում մենք շարունակում էինք առաջին պլան մղել մեր անձնական զգացմունքները:

Քաղաքը փակ հայտարարվելուց երկու օր անց բժիշկ Ռիոն, դուրս գալով հիվանդանոցից, հանդիպեց Կոթարին, որը նրան պարզեց իր, կարելի է ասել, գոհունակ դեմքը: Ռիոն նրան շնորհավորեց առողջանալու առիթով:

– Այո՛, ինձ շատ լավ եմ զգում,– ասաց փոքրամարմինը:– Ասացեք, բժիշկ, այդ անիծյալ ժանտախտը կարծես թե ավելի է լրջանում, հա՞:

Բժիշկն ընդունեց, որ այդպես է: Իսկ Կոթարը նկատեց մի տեսակ հաճույքով.

– Պատճառ չկա, որ համաճարակը դադարի: Այժմ ամեն ինչ տակնուվրա է լինելու:

Որոշ ժամանակ միասին քայլեցին: Կոթարը պատմեց, որ իրենց թաղում մի խոշոր նպարավաճառ սննդամթերք էր ամբարել հետագայում բարձր գներով վաճառելու համար, և երբ եկել էին նրան հիվանդանոց տեղափոխելու, նրա մահճակալի տակ հայտնաբերել էին մեծ քանակությամբ պահածոյատուփ: «Պարզ է՝ մահացավ: Ժանտախտը չի վճարում»: Կոթարի գլուխը լի էր համաճարակի մասին սուտ ու սխալ պատմություններով: Օրինակ՝ պատմում էին, որ կենտրոնում առավոտյան մի մարդ, որ ժանտախտի նախանշաններ ուներ, հիվանդության զառանցանքների մեջ դուրս էր վազել և նետվել առաջին պատահած կնոջ վրա, նրան պինդ սեղմել գրկում՝ գլխապատառ գոռալով, թե ինքը վարակված է ժանտախտով:

– Հիանալի է,– ասել էր Կոթարը սիրալիր տոնով, որը կապ չուներ իր հավաստիացման հետ:– Մենք բոլորս էլ խելագարվելու ենք, վստահ եմ:

Նույն կերպ, նույն օրվա հետմիջօրեին Ժոզեֆ Գրանը անձնական խոստովանանքներ արեց բժիշկ Ռիոյին: Նկատել էր գրասեղանին դրված տիկին Ռիոյի լուսանկարը: Հարցական նայեց բժշկին: Ռիոն պատասխանեց, որ իր կինը բուժվում է քաղաքից դուրս: «Ինչ-որ իմաստով դա բարեբախտություն է»: Բժիշկը պատասխանեց, որ անկասկած, դա բարեբախտություն է, միայն պետք է հուսալ, որ կինը կառողջանա:

– Ա՛հ,– ասաց Գրանը,– հասկանում եմ:

Եվ առաջին անգամ այն օրից ի վեր, ինչ Ռիոն ճանաչում էր նրան, Գրանը սկսեց շատախոսել: Չնայած դեռևս իր բառերն էր փնտրում, բայց գրեթե իսկույն գտնում էր դրանք, ասես վաղուց մտածել էր, թե ինչ է ասելու:

Նա շատ երիտասարդ ամուսնացել էր չքավոր, նույնպես երիտասարդ մի աղջկա՝ իր հարևանուհու հետ: Հանուն ամուսնության անգամ թողել էր ուսումը և անցել աշխատանքի: Ոչ Ժաննան, ոչ ինքը երբեք դուրս չէին եկել իրենց թաղամասից: Նա գնում էր այցելության աղջկա տուն, իսկ Ժաննայի ծնողները մի քիչ ծաղրանքով էին վերաբերվում այդ լռակյաց ու անհաջողակ թեկնածուին: Հայրը երկաթուղային էր: Հանգստի ժամերին նրան կարելի էր տեսնել նստած պատուհանի առջև՝ մի անկյունում, մտածկոտ, հետևելով փողոցի անցուդարձին՝ հսկա ձեռքերը ուղիղ դրած ազդրերին: Մայրը մշտապես զբաղված էր տնային գործերով, Ժաննան օգնում էր նրան: Նա այնքան փոքրիկ ու նիհար էր, որ փողոցն անցնելիս Գրանը չէր կարող նրան հետևել առանց տագնապելու: Այդժամ մեքենաները նրան թվում էին չափազանց մեծ: Մի օր Սուրբ ծնունդի առթիվ բացված կրպակի մոտ Ժաննան հիացմունքով սկսել էր դիտել ցուցափեղկերը, հետո շրջվելով նրա կողմը՝ բացականչել էր. «Որքա՜ն գեղեցիկ է»: Գրանը սեղմել էր նրա ձեռքը, և այդպես որոշել էին ամուսնանալ:

Պատմության մնացյալ մասը Գրանի կարծիքով շատ պարզ էր՝ այնպիսին, ինչպիսին պատահում է բոլորի հետ. ամուսնանում են, էլի իրար սիրում են մի քիչ, աշխատում են: Այնքան են աշխատում, որ մոռանում են սիրել: Ժաննան նույնպես աշխատում էր, որովհետև

գրասենյակի պետը չէր պահել իր խոստումները: Այստեղ պետք էր մի քիչ երևակայություն ունենալ՝ հասկանալու համար, թե ինչ էր ուզում ասել Գրանը: Հոգնածության պատճառով նա իրեն բարձիթողի էր արել, ավելի ու ավելի լռակյաց էր դարձել և չէր օգնել իր երիտասարդ կնոջը՝ համոզված մնալու, թե սիրում է իրեն: Աշխատող մարդ, աղքատություն, դանդաղորեն մարող ապագայի հույս, երեկոյան լռություն սեղանի շուրջը, նման մթնոլորտում այլևս տեղ չկա կրքի համար: Հավանաբար Ժաննան տառապել էր: Այսուհանդերձ մնացել էր. պատահում է, որ երկար տառապում ես՝ չիմանալով այդ մասին: Տարիներ էին անցել: Եվ հետո հեռացել էր: Հասկանալի է՝ մենակ չէր գնացել: «Ես քեզ շատ եմ սիրել, բայց այժմ հոգնել եմ... Ես երջանիկ չեմ, որ հեռանում եմ, սակայն երջանկության պահանջից չէ, որ ուզում են կյանքը վերսկսել»:

Ահա, կարճ ասած, ինչ էր գրել նա:

Իր հերթին Ժոզեֆ Գրանն էլ էր տառապել: Նա կարող էր նոր կյանք սկսել, ինչպես նկատեց Ռիոն: Բայց արդեն հավատ չուներ:

Պարզապես անընդհատ կնոջ մասին էր մտածում: Շատ կուզենար նրան նամակ գրել, արդարանալ: «Բայց շատ դժվար է,– ասում էր նա,– երկար ժամանակ է, ինչ այդ մասին եմ մտածում: Այնքան ժամանակ, երբ սիրում էինք իրար, միմյանց հասկանում էինք առանց խոսքերի: Սակայն սերն անվերջ չէ: Այն ժամանակ ես պարտավոր էի գտնել խոսքեր, որոնք նրան կպահեին: Բայց չկարողացա»: Գրանը քիթը մաքրեց թաշկինակի նման քառեկավոր անձեռոցիկի մեջ: Հետո սրբեց բեղերը: Ռիոն նայում էր նրան:

– Ներեցեք ինձ, բժի՛շկ,– ասաց ծերուկը,– բայց ինչպե՞ս ասեմ... Ես վստահում եմ ձեզ: Ձեզ հետ կարող եմ խոսել: Բայց խոսելիս հուզվում եմ:

Ակնհայտորեն այժմ Գրանը հազար մղոն հեռու էր ժանտախտից:

Երեկոյան Ռիոն հեռագրեց կնոջը, որ քաղաքը փակված է, որ ինքը լավ է, որ կինը պետք է շարունակեր հետևել առողջությանը, և որ ինքն անընդհատ նրա մասին է մտածում:

Քաղաքի փակվելուց երեք շաբաթ անց էր, երբ հիվանդանոցից դուրս գալիս Ռիոն հանդիպեց իրեն սպասող մի երիտասարդի:

https://1915.info

– Կարծում եմ՝ հիշում եք ինձ,– ասաց վերջինս:

Ռիոյին թվաց, թե մտաբերում է նրան, բայց տատանվում էր:

– Ես ձեզ մոտ եկել եմ այս դեպքերից առաջ,– ասաց երիտասարդը,– ձեզնից տեղեկություններ խնդրելու արաբների կենսական պայմանների վերաբերյալ: Իմ անունն է Ռեյմոն Ռամբեր:

– Ա՜հ, այո՛,– ասաց Ռիոն,– և այսպես՝ այժմ դուք հիանալի նյութ ունեք հաղորդելու:

Դիմացինը նյարդային թվաց: Նա ասաց, որ խոսքն այդ մասին չէ, և որ ինքը եկել է օգնություն խնդրելու բժիշկ Ռիոյից:

– Ներեցեք ինձ,– ավելացրեց նա,– բայց այս քաղաքում ես ոչ ոքի չեմ ճանաչում, իսկ մեր թերթի թղթակիցը դժբախտ է, որովհետև հիմարի մեկն է:

Ռիոն նրան առաջարկեց քայլել միասին մինչև կենտրոնի դիսպանսեր, որովհետև այնտեղ որոշ հրահանգներ ուներ տալու: Նրանք իջան նեգրական թաղամասի նեղլիկ փողոցներով: Երեկոն մոտենում էր, սակայն քաղաքը, որ նախկինում այնքան աղմկոտ էր այդ ժամին, թվում էր զարմանալիորեն ամայի: Դեռևս ոսկեգույն երկնքում հնչում էին ինչ-որ շեփորի ազդանշաններ, որոնք վկայում էին, թե զինվորականները ճևականորեն կատարում են իրենց պարտականությունները: Այդ ընթացքում քայլելով զառիթափ փողոցների երկայնքով՝ կապույտ, դեղին և մանուշակագույն պատերով մավրիտանական տների արանքներով, Ռամբերը խոսում էր մեծ հուզականությամբ: Կնոջը թողել էր Փարիզում: Ճիշտն ասած՝ նա իր կինը չէր, սակայն ի՞նչ տարբերություն: Նրան հեռագիր էր ուղարկել, հենց որ փակվել էր քաղաքը: Սկզբում կարծել էր, թե խոսքը վերաբերում է ինչ-որ ժամանակավոր իրադարձության և ձգտել էր հաղորդակցական կապ հաստատել նրա հետ: Օրանցի իր գործընկերները նրան ասել էին, որ ոչինչ չէին կարող անել, փոստից նրան վռնդել էին, իսկ ոստիկանատան քարտուղարուհին հռհռացել էր դեմքին: Ի վերջո՝ երկու ժամ հերթում սպասելուց հետո, նրանից ընդունել էին մի հեռագիր, որտեղ ասվում էր. «Ամեն ինչ լավ է, մինչ հանդիպում»:

Բայց առավոտյան արթնանալով՝ հանկարծ միտք էր հղացել, որ ի վերջո ինքը չգիտեր, թե այդ ամենը որքան կարող էր տևել: Եվ որոշել

էր մեկնել: Քանի որ նա երաշխավորված էր (իրենք աշխատանքում արտոնություններ ունեին), նրան հաջողվել էր գրասենյակում տեսնել պրեֆեկտուրայի տնօրենին և ասել, որ ինքը ոչ մի կապ չուներ Օրանի հետ, որ գործ չուներ այնտեղ անելու, որ այնտեղ հայտնվել էր դիպվածով, և արդարացի կլիներ, որ իրեն թույլ տային մեկնել՝ անգամ հարկ եղածի դեպքում մեկ անգամ ևս անցնելով կարանտին: Տնօրենն ասել էր, թե շատ լավ հասկանում էր նրան, բայց չէր կարող բացառություն անել, որ ինքը դեռ կմտածեր, սակայն ընդհանուր առմամբ իրավիճակը բարդ էր, և որևէ բան հնարավոր չէր անել:

– Բայց չէ՞ որ ձեր քաղաքում ես օտարական եմ,– ասել էր Ռամբերը:

– Անշուշտ, բայցևայնպես եկեք հուսանք, որ համաճարակը երկար չի տևի:

Վերջում բժիշկը փորձեց մխիթարել Ռամբերին՝ նշելով, որ Օրանում նա կարող էր հետաքրքիր հաղորդագրություն գտնել, և որ աշխարհում չկա որևէ իրադարձություն, որ ուսումնասիրության դեպքում հետաքրքիր կողմեր չունենա: Ռամբերն ուսերն էր թոթվում: Հասնում էին քաղաքի կենտրոն:

– Անհեթեթություն է, բժի՛շկ, ինքներդ էլ եք հասկանում: Ես այս աշխարհ չեմ եկել ռեպորտաժներ անելու համար: Իսկ գուցե աշխարհ եմ եկել կնոջ հետ ապրելո՞ւ համար: Թե՞ դա խախտում է կանոնակարգը:

Ռիոն ասաց, որ ամեն դեպքում այդ ամենը ողջամիտ է թվում:

Կենտրոնական ծառուղիներում սովորական ամբոխը չէր: Մի քանի անցորդ շտապում էին դեպի իրենց հեռավոր տները: Ոչ ոք չէր ժպտում: Ռիոն մտածեց, որ դա այդ օրվա Տեղփաստի հայտարարության արդյունքն էր: Քսանչորս ժամ հետո մեր համաքաղաքացիները վերստին կսկսեին հուսալ: Բայց այդ օրը թվերը դեռ շատ թարմ էին մարդկանց հիշողության մեջ:

– Բանն այն է,– ասաց Ռամբերը առանց այլևայլության,– որ մենք իրար հանդիպել ենք բոլորովին վերջերս և լավ ենք հասկանում միմյանց:

Ռիոն լռում էր:

– Բայց ես ձանձրացնում եմ ձեզ,– շարունակեց Ռամբերը:– Միայն կուզենայի խնդրել՝ չէի՞ք կարողանա մի արտոնագիր պատրաստել ինձ համար, որտեղ կհաստատվեր, որ ես չունեմ այդ անիծյալ հիվանդությունը: Կարծում եմ՝ դա ինձ կօգներ:

Ռիոն գլխով համաձայնության նշան արեց, և այդ պահին մի փոքրիկ տղա բախվեց իր ոտքերին, որին նա բարձրացրեց և զգուշությամբ դրեց գետնին: Նորից քայլեցին: Հասան Զենքի հրապարակ: Անշարժ, փոշուց մոխրագույն դարձած ֆիկուսների և արմավենիների ճյուղերը կախվել էին Հանրապետության արձանի շուրջը, որը նույնպես փոշոտ էր ու կեղտոտ: Կանգ առան հուշարձանի մոտ: Սպիտակավուն քսուքից մաքրելու համար Ռիոն ոտքերը հերթով թփթփացրեց գետնին: Նայեց Ռամբերին: Լրագրողը՝ ֆետրե գլխարկը մի քիչ ետ գցած, կոճակներն արձակած վերնաշապիկով, որի օձիքը փողկապի տակ էր մտցրել, վատ սափրված, համառ ու փքված տեսք ուներ:

– Վստահ եղեք, որ ես հասկանում եմ ձեզ,– վերջապես ասաց Ռիոն,– սակայն ձեր դատողություններն այնքան էլ ճիշտ չեն: Ես ձեզ չեմ կարող տալ այդ տեղեկանքը, որովհետև իրականում չգիտեմ՝ դուք ունե՞ք այդ հիվանդությունը, թե՞ ոչ, և որովհետև անգամ այս պահին չեմ կարող հավաստել, որ գրասենյակից դուրս գալու և ոստիկանություն մտնելու վայրկյանին դուք չեք վարակվի: Եվ հետո՝ եթե անգամ...

– Եթե անգամ ի՞նչ,– հարցրեց Ռամբերը:

– Եթե անգամ տամ այդ տեղեկանքը, այն ոչնչի չի ծառայի:

– Ինչո՞ւ:

– Որովհետև այս քաղաքում միլիոնավոր մարդիկ կան ձեր կարգավիճակով, որոնց, այնուամենայնիվ, չի կարելի թողնել, որ դուրս գան:

– Բայց եթե նրանք էլ չունեն ժանտախտ:

– Դա բավարար պատճառ չէ: Սա հիմար պատմություն է, գիտեմ, բայց այն բոլորիս է վերաբերում: Ուրեմն այն պետք է ընդունել այնպես, ինչպես որ կա:

– Բայց ես տեղացի չեմ:

– Այժմյանից ի վեր, ավա՛ղ, դուք կլինեք տեղացի, ինչպես բոլորը:

Ռամբերը գրգռվում էր.

– Մարդկայնության հարց է, երդվում եմ: Գուցե դուք ձեզ հաշիվ չեք տալիս, թե ինչ է նշանակում նման բաժանումը երկու անձնավորությունների համար, որոնք այնքան լավ են հասկանում միմյանց:

Ռիոն միանգամից չպատասխանեց: Հետո ասաց, որ կարծում է, թե իրեն հաշիվ տալիս է: Ի սրտե ցանկանում էր, որ Ռամբերը նորից գտնի իր կնոջը, և որ բոլոր նրանք, ովքեր սիրում են, վերամիավորվեն, բայց գոյություն ունեն հրամաններ և օրենքներ, կա ժանտախտ, և իր դերն է անել ամեն բան, ինչ պետք է անել:

– Ո՛չ,– ասաց Ռամբերը դառնությամբ,– դուք չեք կարող ինձ հասկանալ: Դուք խոսում եք բանականության լեզվով, բայց ապրում եք վերացարկման մեջ:

Բժիշկը աչքերը հառեց Հանրապետության արձանին և ասաց, որ չգիտեր, թե խոսում է բանականության լեզվով, բայց գիտի, որ խոսում է ակնհայտության լեզվով, իսկ դա հաստատ նույն բանը չէ: Լրագրողն ուղղում էր փողկապը.

– Ուրեմն դա նշանակում է, որ ես պետք է ա՛յլ ելք գտնեմ: Բայց,– շարունակեց մի տեսակ մարտահրավիրական ձևով,– միևնույն է, ես կգնամ այս քաղաքից:

Բժիշկն ասաց, որ դարձյալ հասկանում է նրան, բայց դա իրեն չի վերաբերում:

– Ոչ, վերաբերում է,– վրա բերեց Ռամբերը հանկարծակի պոռթկալով:– Ես ձեզ դիմեցի, որովհետև ինձ ասացին, որ դուք մեծ բաժին ունեք ընդունվող որոշումների մեջ: Այդ պատճառով մտածեցի, որ գոնե մի դեպքում դուք չեք անի այն, ինչ պահանջել եք անել: Բայց ձեզ համար միևնույն է: Դուք ոչ մեկի մասին չեք մտածել: Դուք հաշվի չեք առել նրանց, ովքեր բաժանվել են:

Ռիոն ընդունեց, որ ինչ-որ իմաստով դա ճիշտ էր, ինքը չէր ցանկացել նրանց հաշվի առնել:

– Այո՛, հասկանալի է,– ասաց Ռամբերը,– հիմա կխոսեք հանրությանը ծառայելու մասին: Բայց չէ՞ որ հանրության բարիքը կազմված է յուրաքանչյուր անհատի երջանկությունից:

– Դե գիտեք ինչ,– ասաց բժիշկը, որն ասես դուրս էր գալիս ցրվածությունից,– չպետք է դատել: Զուր եք բարկանում: Եթե կարողանաք դուրս գալ այս գործից, ես ի սրտե ուրախ կլինեմ: Պարզապես կան բաներ, որ իմ աշխատանքն արգելում է անել:

Ռամբերն անհամբերությամբ թափահարեց գլուխը:

– Այո՛, զուր եմ բարկանում: Եվ ձեզնից էլ ահագին ժամանակ խլեցի:

Ռիոն խնդրեց իրեն տեղյակ պահել ձեռնարկումների մասին և ոխ չպահել իր հանդեպ: Հաստատ գոյություն ուներ մի հարթություն, որի վրա իրենք կարող էին հանդիպել: Ռամբերը հանկարծ մտահոգ թվաց.

– Հավատում եմ,– ասաց նա որոշ ժամանակ լուռ մնալուց հետո,– հավատում եմ՝ հակառակ ինձ, հակառակ այն ամենին, ինչ դուք ասացիք ինձ:

Մի պահ վարանեց.

– Բայց չեմ կարող հավանություն տալ ձեր ասածներին:

Նա ֆետրե գլխարկը իջեցրեց ճակատին և հեռացավ արագ քայլերով: Ռիոն տեսավ, որ նա մտավ այն հյուրանոցը, որտեղ ապրում էր Ժան Տարուն:

Բժիշկը թափահարեց գլուխը. լրագրողն իրավացի էր, եթե անհամբերությամբ պայքարում էր իր երջանկության համար: Սակայն իրավացի՞ էր նա, երբ մեղադրում էր իրեն՝ «Դուք ապրում եք վերացարկման մեջ»: Իրո՞ք վերացարկում էր իր անցկացրած օրերը հիվանդանոցում, որտեղ ժանտախտը կրկնապատկել էր արագությունը՝ շաբաթական խլելով մոտավորապես հինգ հարյուր կյանք: Այո՛, դժբախտության մեջ կար վերացարկման և անիրականի մի բաժին: Բայց երբ վերացարկումը սկսում է ձեզ սպանել, պետք է հենց վերացարկումով զբաղվել: Ռիոն գիտեր միայն, որ դա հեշտ բան չէր: Հեշտ չէր, օրինակ, ղեկավարել օժանդակ հիվանդանոցը (այդպիսիներն արդեն երեքն էին), որ իրեն էին հանձնարարել: Նա բացել էր ընդունելության հավելյալ սրահ, որից անցնում էին բժշկական քննության սենյակ: Փորված գետինն ասես կրեզոլով լի մի լճակ լիներ, որի մեջտեղում կար աղյուսե կղզյակ: Հիվանդին

տեղափոխում էին այդ կղզյակի վրա, արագ մերկացնում նրան, իսկ հագուստները նետում կրեզոլային լուծույթի մեջ: Լողացած, չորացած, հիվանդանոցի կարմրավուն շապիկը հագին նա արդեն անցնում էր Ռիոյի ձեռքը, հետո տեղափոխվում հիվանդասենյակ: Ստիպված էին եղել օգտագործել դպրոցի բակի ծածկված հրապարակը՝ այնտեղ տեղավորելով ընդհանուր հաշվով հինգ հարյուր մահճակալ, որոնք գրեթե բոլորը զբաղված էին: Առավոտյան ընդունելությունից հետո, որն ինքն էր անձամբ ղեկավարում, հիվանդներին պատվաստանյութ ներարկելուց, գեղձուռուցքները կտրելուց հետո Ռիոն կրկին ստուգում էր վիճակագրական տվյալները և վերադառնում իր հետճաշյա խորհրդատվություններին: Երեկոյան վերջապես իր այցերն էր կատարում և տուն էր վերադառնում շատ ուշ: Նախորդ գիշերը մայրն իրեն մեկնեց տիկին Ռիոյի հեռագիրը, որից բժշկի ձեռքերը դողացին:

– Այո, դողում են,– ասաց նա,– բայց ես ինձ պինդ պիտի պահեմ, որ ավելի քիչ նյարդայնանամ:

Ուժեղ էր և դիմացկուն: Իրականում դեռ հոգնած չէր: Բայց իր այցելությունները, օրինակ, անտանելի էին դառնում: Համաճարակային տենդի ախտորոշումը ստիպում էր արագ մեկուսացնել հիվանդին: Այդժամ սկսվում էր վերացարկումն ու իսկական դժվարությունը, քանի որ հիվանդի ընտանիքը գիտեր, որ վերջինիս այլևս տեսնելու է կամ առողջացած, կամ մահացած: «Խղճացեք, բժիշկ»,– ասում էր տիկին Լորեն՝ սպասուհու մայրը, որն աշխատում էր Տարուի հյուրանոցում: Ի՞նչ էր նշանակում խղճալ: Իհարկե, նա խղճում էր: Բայց իր խղճալը ոչ մեկին չէր կարող օգնել: Պետք էր զանգահարել: Շուտով շտապօգնության մեքենան ձայն էր տալիս: Սկզբում հարևանները բացում էին պատուհանները և նայում: Հետո պատուհանները հապճեպորեն փակվում էին: Եվ այդ ժամանակ էլ սկսվում էին կռիվները, արցունքները, համոզումները, մի խոսքով՝ վերացարկումը: Տենդից ու տագնապներից շիկացած այդ բնակարաններում խելագար տեսարաններ էին տեղի ունենում: Բայց հիվանդին տանում էին: Ռիոն կարող էր գնալ:

Առաջին օրերին նա սահմանափակվում էր զանգահարելով և անմիջապես վազում ուրիշ հիվանդների մոտ՝ չսպասելով շտապօգնությանը: Սակայն հիվանդի հարազատներն այդ ժամանակ փակում էին դռները՝ նախընտրելով ժանտախտի հետ առճակատումը բաժանումից, որի ելքն այժմ գիտեին: Աղաղակներ, կարգադրություններ, ոստիկանության միջամտություն, իսկ ավելի ուշ՝ զինված ուժի միջամտություն, և հիվանդը վերցվում էր գրոհով: Առաջին շաբաթներին Ռիոն ստիպված էր լինում սպասել մինչև շտապօգնության գալը: Հետո, երբ բժշկի յուրաքանչյուր շրջագայություն ուղեկցվում էր մի կամավոր ոստիկանով, Ռիոն կարող էր վազել մի հիվանդից մյուսին: Բայց ամենասկզբում բոլոր երեկոները նման էին այն երեկոյին, երբ մտավ տիկին Լորեի մոտ՝ հովհարներով ու արհեստական ծաղիկներով զարդարված փոքրիկ բնակարանը, նրան ընդունեց հիվանդի մայրը, որը հազիվ նշմարելի ժպիտով ասաց.

– Հույս ունեմ, որ սա այն տենդը չէ, որի մասին խոսում են բոլորը:

Իսկ ինքը, հանելով սավանն ու շապիկը, լուռ զննում էր փորի ու ազդրերի կարմիր բծերը, ուռած գեղձերը: Մայրը նայում էր աղջկա ազդրերի արանքը և ճչում էր՝ չկարողանալով տիրապետել իրեն: Ամեն երեկո մայրերն այդպես ոռնում էին վերացական ձևով՝ մահվան բոլոր նշաններով լի որովայնների առջև, ամեն երեկո Ռիոյի թևերից ձեռքեր էին կառչում, ինչում անիմաստ խոսքեր, որոնց անմիջապես հետևում էին խոստումներն ու հեկեկանքները, ամեն երեկո շտապօգնության ազդակներին պատասխանում էին հուսահատ նոպաները, որոնք նույնքան ապարդյուն էին, որքան և ցավը: Եվ նույնանման երեկոների երկարուձիգ այցելությունների վերջում Ռիոն այլևս ոչինչ չէր կարող ակնկալել, բացի միևնույն տեսարանների հերթագայությունից, որոնք կրկնվում էին անվերջանալիորեն: Այո՛, ժանտախտը վերացարկման պես միապաղաղ էր: Գուցե միայն մի բան էր փոխվում՝ ինքը՝ Ռիոն: Նա դա զգում էր այդ երեկո Հանրապետության արձանի ստորոտում՝ գիտակցելով միայն իրեն համակող անտանելի անտարբերությունը, աչքերը շարունակ հառած հյուրանոցի դռանը, որի մեջ անհետացել էր Ռամբերը:

Այդ հոգնատանջ շաբաթներից հետո, այդ բոլոր իրիկնալույսերի վերջում, երբ քաղաքը լցվում էր փողոցները՝ շրջապտույտներ կատարելու, Ռիոն հասկանում էր, որ այլևս անկարող էր պաշտպանվել գթասրտությունից: Հոգնում ես գթասրտությունից, երբ այն անօգուտ է: Եվ հասկանալով, որ սիրտը դանդաղորեն պարփակվում է ինքն իր մեջ, բժիշկը զգաց, որ կթեթևանա այդ ուժասպառող օրերից, նա գիտեր, որ իր պարտականությունը շուտով կհեշտանա: Այդ պատճառով ուրախանում էր: Երբ մայրն իրեն ընդունում էր գիշերվա ժամը երկուսին, նա ունայն հայացք էր ձգում մոր վրա, որից տանջվում էր մայրը և ողբում ճիշտ նույն թեթևացման համար, որ Ռիոն կարող էր ունենալ: Հանուն վերացարկման՝ պայքարելու համար պետք է գոնե նմանվել նրան: Բայց ինչպե՞ս կարող էր Ռամբերը զգալ դա: Վերացարկումը Ռամբերի համար այն ամենն էր, ինչը խոչընդոտում էր իր երջանկությանը: Եվ ճշմարիտն ասած՝ Ռիոն գիտեր, որ լրագրողն ինչ-որ իմաստով իրավացի էր: Բայց նաև գիտեր, որ երբեմն վերացարկումն ավելի ուժեղ է, քան երջանկությունը, և այդ ժամանակ, միայն այդ ժամանակ պետք է այն հաշվի առնել: Դա էր կատարվել Ռամբերի հետ, և բժիշկը կարողացավ այդ մասին որոշ մանրամասներ իմանալ լրագրողի՝ ավելի ուշ արած խոստովանություններից: Այսպես նա կարողացավ հետևել և նոր տեսանկյունից հետևել յուրաքանչյուր մարդու երջանկության ու ժանտախտային վերացարկումների միջև մղվող մռայլ պայքարին, որը կազմում էր այդ երկարատև ժամանակաշրջանում մեր քաղաքի ամբողջ կյանքը:

* * *

Բայց այնտեղ, որտեղ ոմանք տեսնում էին վերացարկում, ուրիշները հայտնաբերում էին ճշմարտություն: Ժանտախտի առաջին ամսվա վերջն իսկապես մռայլվեց համաճարակի բարդացումով և հայր Պանլուի բոցաշունչ քարոզով՝ այն ճիզվիտի, որն օգնել էր ծերուկ Միշելին հիվանդության սկզբում: Հայր Պանլուն արդեն մեծ ճանաչում էր ձեռք բերել իր հաճախակի թղթակցություններով Օրանի Աշխարհագրական միության տեղեկագրում, որտեղ

վիմագրությունների նրա վերծանումները մեծ հեղինակություն էին վայելում: Բայց նա ավելի շատ ունկնդիր էր նվաճել ոչ որպես մասնագետ, այլ որպես դասախոս՝ անցկացնելով մի շարք գիտաժողովներ արդի անհատապաշտության վերաբերյալ: Նա իրեն դրսևորել էր որպես քրիստոնեության պահանջկոտ, կրքոտ ջատագով, նաև հեռու՝ ժամանակակից ազատամտությունից և անցյալ դարերի խավարամոլությունից: Այդ հայեցակետով նա ուղղամտորեն դառը ճշմարտություններ էր քննարկել իր լսարանում: Այստեղից էլ՝ նրա համբավը:

Արդ, առաջին ամսվա վերջին մեր քաղաքի եկեղեցական իշխանությունները վճռեցին պայքարել ժանտախտի դեմ իրենց սեփական միջոցներով՝ կազմակերպելով կոլեկտիվ աղոթքների շաբաթ: Հանրային բարեպաշտության այս ցույցերը պետք է ավարտվեին կիրակի օրը հանդիսավոր պատարագով՝ նվիրված ժանտախտի զոհ դարձած սուրբ Ռոշի հիշատակին: Այդ առթիվ հայր Պանլուին խնդրել էին խոսք ասել: Մոտ երկու շաբաթ էր, ինչ վերջինս ավարտել էր սուրբ Օգոստինոսին և աֆրիկյան եկեղեցուն նվիրված իր աշխատությունները, որոնք իրեն ապահովել էին պատվավոր ճիզվիտականի աստիճանակարգ: Լինելով հախուռն ու կրքոտ անձնավորություն՝ նա արիաբար ընդունել էր այդ առաքելությունը, որ հանձն էր առել: Քարոզից դեռ շատ առաջ արդեն խոսում էին այդ մասին, և այն իր ձևով նշանավորեց մի կարևոր տարեթիվ տվյալ ժամանակաշրջանի պատմության մեջ:

Աղոթքների այդ շաբաթը շատ մարդ հավաքագրեց: Ոչ այն պատճառով, որ սովորական ժամանակներում Օրանի բնակիչներն առանձնապես բարեպաշտ էին: Կիրակի առավոտները, օրինակ, ծովային լոգանքները լուրջ մրցակից էին պատարագների համար: Ոչ էլ այն պատճառով, որ մի հանկարծահաս պայծառատեսություն նրանց ճշմարիտ հավատի էր բերել: Այլ այն պատճառով, որ մի կողմից՝ փակ քաղաքն ու արգելված նավահանգիստն այլևս անհնարին էին դարձնում լոգանքները, մյուս կողմից՝ օրանցիներն այնպիսի առանձնահատուկ հոգեկան վիճակի մեջ էին, որ առանց խորապես ըմբռնելու իրենց հարվածող ապշեցուցիչ իրադարձությունները,

Նրանք ակներևաբար զգում էին, որ ինչ-որ բան փոխվել է: Շատերն այսուհանդերձ շարունակում էին հուսալ, որ համաձարակը կանգ է առնելու, և որ այն խնայելու է իրենց ու իրենց ընտանիքներին: Հետևաբար նրանք դեռևս որևէ պարտավորություն չէին զգում: Ժանտախտը նրանց համար մի տհաճ այցելու էր, որն ինչպես եկել էր, այնպես էլ գնալու էր մի օր: Երկյուղած էին, բայց ոչ հուսալքված: Դեռ չէր եկել այն պահը, երբ ժանտախտը նրանց կներկայանար որպես իրենց ապրելակերպ, երբ նրանք կմոռանային այն կյանքը, որ մինչ այդ կարողացել էին ապրել: Մի խոսքով՝ նրանք սպասումի մեջ էին:

Ինչ վերաբերում է կրոնին, ի թիվս ուրիշ շատ խնդիրների՝ ժանտախտը նրան տվեց եզակի մտածողությամբ ստեղծված մի դարձված՝ կրքից, ինչպեսև անտարբերությունից շատ հեռու մի արտահայտություն, որը բավական հաջող կարելի էր սահմանել օբյեկտիվություն բառով: Աղոթքների շաբաթին հետևողների մեծամասնությունը կարող էր, օրինակ, անել իր առաջարկը, ինչպես հավատացյալներից մեկը, որ կանգնել էր բժիշկ Ռիոյի առջև. «Ամեն դեպքում դա վնաս չի կարող տալ»: Ինքը՝ Տարուն, իր օրագրերում նշելով, որ չինացիները նմանատիպ դեպքերում գնում են թմբուկներ զարկելու ժանտախտի ոգու առջև, նշել էր, որ բացարձակապես անհնար էր իմանալ, թե իրականում թմբկահարությո՞ւնն էր ավելի արդյունավետ, թե՞ կանխարգելիչ միջոցները: Նա միայն ավելացրել էր, որ հարցին պատասխան տալու համար հարկ կլիներ տեղեկություններ ձեռք բերել ժանտախտի ոգու գոյության մասին, և որ մեր անգիտությունն այս հարցում ամուլ էր դարձնում բոլոր հնարավոր կարծիքները:

Ամեն դեպքում մեր քաղաքի տաճարը գրեթե ամբողջ շաբաթը լեփ-լեցուն էր հավատացյալներով: Առաջին օրերին շատ բնակիչներ դեռևս նախընտրում էին մնալ գավթի առջև տարածվող բարդիների ու նռենիների այգիներում, որպեսզի ունկնդրեին մինչև փողոցները տարածվող ոգեկոչումների և աղոթքների ալիքները: Նույն ունկնդիրները, ունենալով առաջնորդող նախադեպ, քիչ-քիչ որոշեցին եկեղեցի մտնել և իրենց երկչոտ ձայնը խառնել մասնակիցների երգ ու պատասխանին: Իսկ կիրակի օրը մի մեծ բազմություն ներխուժեց

եկեղեցի, հասավ մինչև խորանի վերջին աստիճանները: Նախօրեից սկսած երկինքը մռայլվել էր, իսկ այժմ հորդառատ անձրև էր գալիս: Դրսում մնացածները բացել էին անձրևանոցները: Տաճարում խնկի ու խոնավ մետաքսի հոտ էր տարածված, երբ հայր Պանլուն բարձրացավ ամբիոն:

Նա միջահասակ էր, բայց թիկնեղ: Երբ հենվելով ամբիոնին եզրերի փայտը սեղմեց իր խոշոր ձեռքերով, նրանից մնաց միայն մի թանձրասև զանգված, որի վերևում երևում էին այտերի երկու բծերը, իսկ ավելի վեր՝ ակնոցի պողպատե շրջանակը: Ձայնն ուժեղ էր ու կրքոտ, խոսում էր հեռվից, և երբ հարձակվեց ունկնդիրների վրա՝ դիմելով բոցաշունչ ու ասես մուրճով դաջված նախադասությամբ՝ «Եղբայրներ, դուք դժբախտության մեջ եք, եղբայրներ, դուք արժանի էիք դրան», տաճարով մեկ խլրտուն անցավ՝ հասնելով մինչև խորան:

Շարունակությունը տրամաբանորեն չէր կապվում այդ հոգեհույզ նախաբանին: Միայն ճառի մեջտեղում մեր համաքաղաքացիները գլխի ընկան, որ հոգևոր հայրը միանգամից, հռետորական ճարպիկ հնարքով տվել էր, ինչպես կռանով հարված են հասցնում, ողջ քարոզի նյութը: Այդ նախադասությունից անմիջապես հետո իսկապես Պանլուն մեջբերեց Ելիցից մի հատված, որ վերաբերում էր եգիպտական ժանտախտին, և ավելացրեց.

– Պատմության մեջ այս արհավիրքն առաջին անգամ հայտնվում է Եգիպտոսում, որպեսզի հարված հասցնի Աստծու թշնամիներին: Փարավոնն ընդդիմանում է հավիտենական ծրագրերին, և ժանտախտը նրան ծնկի է բերում: Մարդկության պատմության սկզբից ի վեր Աստծու արհավիրքը ծնկի է բերում գոռոզներին ու կոյրերին: Լա՛վ խորհեք այդ մասին և ծնկի՛ եկեք:

Դրսում անձրևը կրկնապատկում էր իր ուժգնությունը, իսկ այդ վերջին նախադասությունը՝ արտասանված բացարձակ լռության մեջ և էլ ավելի խորացված ապակիների վրա տեղատարափի ճայթոցներով, հնչեց այնպիսի թափով, որ որոշ ունկնդիրներ մի պահ վարանելուց հետո սահեցին իրենց նստատեղերից դեպի աղոթքի աթոռակները: Մյուսներն էլ կարծեցին, թե հարկ է հետևել նրանց

օրինակին և քիչ-քիչ կատարյալ լռության մեջ, որը խախտվում էր միայն աթոռների ճռռոցներից, ողջ ունկնդիրքը ծնկի եկավ: Այդ ժամանակ Պանլուն ուղղվեց, խոր շունչ քաշեց և շարունակեց ավելի ընդգծված ինչերանգով.

– Եթե այսօր ժանտախտը ձեզ վրա է հառել հայացքը, ուրեմն ժամանակն է մտորելու: Արդարները դրանից վախենալու բան չունեն, սակայն չարերը երկյուղելու պատճառ ունեն: Տիեզերքի անծայրածիր ամբարում անողոք արհավիրքը ծեծելու է մարդկային հացահատիկը, մինչև որ հարդն առանձնանա ցորենից: Հարդն ավելի շատ է լինելու, քան ցորենը, ինքնակոչներն ավելի շատ են լինելու, քան ընտրյալները, և այդ դժբախտությունն Աստծու ցանկացածը չէ: Շատ երկար ժամանակ այս աշխարհին ապրում էր չարի հետ, շատ երկար ժամանակ նա իր հույսը դրել էր աստվածային ողորմածության վրա: Բավական էր ապաշխարել, և ամեն ինչ դառնում էր թույլատրելի: Իսկ ապաշխարելու համար յուրաքանչյուրն իրեն ուժեղ էր զգում: Երբ պահը գար, իրենք հաստատ կզգային այդ ուժը:

Իսկ մինչ այդ ամենադյուրինն անհոգ ապրելն է. աստվածային ողորմածությունը կանի մնացած ամեն բան: Դե, ուրեմն այդպես շարունակվել հնարավոր չէր: Աստված, որ երկար ժամանակ իր գթառատ դեմքն էր խոնարհել այդ քաղաքի մարդկանց վրա՝ հոգնած սպասելուց, հիասթափված իր հավիտենական հույսի մեջ, շրջեց իր հայացքը: Զրկվելով Աստծու լույսից՝ ահավասիկ մենք երկար ժամանակով հայտնվել ենք ժանտախտի խավարում:

Դահլիճում մեկը խրխնջաց անհամբեր ձիու պես: Կարճ դադարից հետո հայր Պանլուն շարունակեց ավելի ցածրաձայն.

– «Ոսկեզօծ առասպելում» մենք կարդում ենք, որ Ումբերտո Լոմբարդացի արքայի օրոք Իտալիան ավերվեց այնպիսի ուժեղ ժանտախտից, որ ողջերը հազիվ էին բավականացնում մեռածներին թաղելու համար, և այդ ժանտախտը մոլեգնում էր հատկապես Հռոմում ու Պավիայում: Այդ ժամանակ տեսանելիորեն հայտնվեց բարի հրեշտակը՝ կարգադրություններ տալով չար հրեշտակին, որը կրում էր որսորդական նիզակ: Բարի հրեշտակը հրամայում էր խփել

տներին, և քանի հարված ստանում էր տունը, այդքան մեռել էին հանում այդտեղից:

Այստեղ Պանլուն իր կարճ ձեռքերը պարզեց գավթի ուղղությամբ՝ ասես ինչ-որ բան ցույց տալով անձրևից շարժվող վարագույրի ետևում:

– Եղբայրներ,– ասաց նա ուժգնորեն,– այսօր նույն մահաբեր որսորդն է վազում մեր փողոցներով: Նայեք դրան՝ ժանտախտի այդ հրեշտակին՝ գեղեցիկ, ինչպես Լյուցիֆերը, և փայլուն, ինչպես ինքը՝ չարիքը, ցցված ձեր տանիքներին, աջ ձեռքին՝ արյունոտ նիզակը՝ բռնած գլխավերևում, ձախ ձեռքով մատնանշելով ձեր տներից մեկնումեկը: Այս պահին գուցե նրա մատն ուղղվում է դեպի ձեր դուռը, նիզակը խրվում է փայտի մեջ. այս պահին ժանտախտը ներխուժել է ձեր տուն, նստել է ձեր սենյակում և սպասում է ձեր վերադարձին: Նա այնտեղ է՝ համբերատար և ուշադիր, վստահ, ինչպես հենց աշխարհի կարգը: Այդ ձեռքը, որ ուղղվելու է ձեզ, երկրային ոչ մի ուժ և անգամ մարդկային սին գիտությունը, լավ իմացեք, անկարող է այնպես անել, որ դուք խուսափեք նրանից: Եվ ծեծված ցավի արյունոտ ամբարից դուք դուրս կնետվեք հարդի հետ:

Այստեղ հայր Պանլուն էլ ավելի մեծ ճոխությամբ վեր հանեց արհավիրքի սրտաճմլիկ պատկերը: Նա ոգեկոչեց քաղաքի վրա պտտվող հսկայական փայտե առարկան, որ խփում էր ուր պատահի, և կրկին արնոտված վեր հառնելով՝ վերջապես ցիրուցան էր անում մարդկային արյունն ու ցավը «ցանքսի համար, որոնք պիտի նախապատրաստեին ճշմարտության հունձքը»:

Այս երկարաշունչ ճառի վերջում հայր Պանլուն կանգ առավ՝ մազերը թափված ճակատին, մարմինն աշխուժացած ցնցումից, որ ձեռքերն էին հաղորդում ամբիոնին, ապա շարունակեց ավելի խուլ, բայց մեղադրական ինչերանգով.

– Այո՛, մտորելու ժամը եկել է: Դուք կարծում եք, որ եթե ձեզ նեղություն տաք՝ կիրակի օրերին այցելելով Աստծուն, մյուս օրերին ազա՞տ կլինեք: Դուք մտածում եք, թե մի քանի ծնրադրում բավական մեծ հատուցում կլինի ձեր հանցագործ անհոգության դիմաց: Սակայն Աստված անողոք է: Այդ տարածական հարաբերությունները չէին

կարող բավարարել նրա սիրո անհագուրդ քնքշությունը: Նա ցանկանում էր ձեզ ավելի երկար տեսնել, այդպիսին է նրա՝ ձեզ սիրելու ձևը: Ահավասիկ ինչո՞ւ, ձեր գալստյանը սպասելուց հոգնած, նա թույլ տվեց, որ արհավիրքն այցելի ձեզ, ինչպես այցելել էր մեղավոր բոլոր քաղաքները մարդկության պատմության սկզբից ի վեր: Դուք այժմ իմացաք, թե ինչ է մեղքը, ինչպես իմացան Կայենն ու նրա որդիները, ջրհեղեղից առաջ ապրողները, Սոդոմի ու Գոմորի բնակիչները, փարավոնն ու Հոբը, ինչպես նաև մյուս բոլոր անիծյալները: Եվ քանի որ բոլոր նրանք գործել են մեղքը, դուք նոր հայացքով պիտի նայեք մարդկանց ու իրերին այն օրից ի վեր, երբ քաղաքը փակ պատեր դրեց ձեր և արհավիրքի շուրջը: Դուք գիտեք հիմա և հատկապես, որ պետք է հասնել հիմնականին:

Այժմ մի խոնավ քամի էր ներխուժել եկեղեցի, և մոմերի բոցերը, դրանից ծռմռվելով, կախ էին գցում գլխիկները: Մոմերի թանձր հոտը, հազերի ու փռշտոցների ձայները բարձրանում էին մինչև հայր Պանլուն, որի նրբանկատությունը բարձր գնահատվեց ունկնդիրների կողմից, երբ նա, վերադառնալով իր զեկուցմանը, սկսեց խոսել հանգիստ ձայնով.

– Ձեզնից շատերը, գիտեմ, հարցնում են՝ ո՞ւր եմ տանում իրենց: Ես ուզում եմ ձեզ հասցնել ճշմարտությանը և ձեզ սովորեցնել ուրախանալ՝ չնայած այն ամենին, ինչ ասացի այստեղ: Ժամանակն այլևս այն չէ, երբ խորհուրդները կամ եղբայրական ձեռքը ձեզ դեպի բարիքը մղելու միջոցներ էին: Այսօր ճշմարտությունը հրաման է: Եվ փրկության ճանապարհը կարմիր նիզակն է, որը ցույց է տալիս այդ ճանապարհը և ձեզ մղում այնտեղ: Այստեղ է, իմ եղբայրներ, որ վերջապես բացահայտվում է աստվածային ողորմածությունը, որն ամեն ինչում հաստատում է բարին ու չարը, զայրույթն ու գթությունը, ժանտախտն ու փրկությունը: Այս աղետն անգամ, որ ձեզ սպանում է, բարձրացնում է ձեզնից յուրաքանչյուրին և ցույց տալիս փրկության ճանապարհը:

Դեռ վաղ ժամանակներում Հաբեշստանի քրիստոնյաները ժանտախտի մեջ էին տեսնում հավիտենականությունը նվաճելու մի արդյունավետ, աստվածային ծագում ունեցող միջոց: Նրանք, ովքեր

վարակված չէին, փաթաթվում էին ժանտախտահարների սպիտակեղենով, որպեսզի անպայման մեռնեին: Անշուշտ, փրկության այս կատաղի ձգտումը հանձնարարելի չէ: Այն ենթադրում է ցավալի շտապողականություն, որը շատ մոտ է գոռոզությանը: Չպետք է Աստծուց առաջ անցնել, և ամենայն բան, որ հավակնում է արագացնել անսասան կարգը, որ մեկընդմիշտ հաստատված է նրա կողմից, հանգեցնում է հերետիկոսության: Սակայն այս օրինակն առնվազն ուսանելի է: Ավելի պայծառատես մեր մտքերի համար այն արժևորում է հավիտենականության այն սքանչելի լույսը, որն առկայծում է ամեն տառապանքի խորքում: Այդ լույսն է լուսավորում աղջամուղջային ճանապարհները, որոնք տանում են դեպի ազատագրում: Այն արտահայտում է աստվածային կամքը, որն անխոնջաբար չարը վերածում է բարու: Այսօր ևս մահվան, տագնապների ու ողբերի ուղիներով նա մեզ առաջնորդում է դեպի հիմնական լռությունը և ամբողջ կյանքի իմաստը: Ահավասիկ, իմ եղբայրներ, անսահման մխիթարանքը, որ ես կուզենայի ձեզ բերել, որպեսզի այն չլինի լոկ խոսքեր, որոնք պատժում են, այլ նաև բառեր, որոնք սփոփում են:

Զգացվում էր, որ Պանլուն ավարտում է: Դրսում անձրևը դադարել էր: Արևալից և անձրևախառն երկինքը հրապարակի վրա դեղնավուն լույս էր շաղ տալիս: Փողոցից բարձրանում էին ձայների արձագանքներ, մեքենաների սահքեր, արթնացող քաղաքի ամբողջ լեզուն: Ունկնդիրները լուռումունջ իրենց իրերն էին հավաքում տաճարում սկսված խառնաշփոթի մեջ: Սակայն հայր Պանլուն վերսկսեց իր խոսքը և ասաց, որ ժանտախտի աստվածային ակունքը և այդ աղետի պատժիչ բնույթը ցույց տալուց հետո նա ավարտում է իր խոսքը և եզրափակման համար չի դիմելու պերճախոսության, որն անտեղի կլիներ՝ շոշափելով այդչափ ողբերգական նյութ: Իր կարծիքով՝ ամեն ինչ պետք է, որ հասկանալի լիներ բոլորի համար: Նա միայն հիշեցրեց, որ Մարսելի մեծ ժանտախտի առիթով ժամանակագիր Մաթյո Մարեն տրտնջացել էր, որ սուզված է եղել դժոխքում, որ այդպես ապրել էր առանց օգնության և առանց հույսի: Բայց Մաթյո Մարեն կույր է եղել: Ընդհակառակը,

այսօր առավել, քան երբևէ հայր Պանլուն չէր զգացել աստվածային օգնությունն ու քրիստոնեական հույսը, որ ընծայված է բոլորին: Նա հույս էր տածում՝ հակառակ բոլոր հույսերի, չնայած այս օրերի սոսկալիությանը և հոգեվարքի աղաղակներին՝ նա հույս ուներ, որ մեր համաքաղաքացիները երկնքին կուղղեն այն միակ խոսքը, որը կլինի քրիստոնեական և կլինի սիրո խոսք: Աստված կանի մնացյալը:

* * *

Դժվար է ասել՝ այս քարոզը ազդեցություն թողե՞ց մեր համաքաղաքացիների վրա, թե՞ ոչ: Պարոն Օթոնը՝ քննիչը, հայտարարեց բժիշկ Ռիոյին, որ իր կարծիքով հայր Պանլուի քարոզը բացարձակապես անհերքելի էր: Բայց բոլորը չէ, որ ունեին նման վճռական կարծիք: Պարզապես քարոզն ավելի զգայուն դարձրեց ոմանց, մինչ այդ նրանք տարտամորեն էին զգում, որ ինչ-որ անհայտ հանցանքի պատճառով իրենք դատապարտված են աներևակայելի բանտարկության: Եվ եթե ոմանք շարունակում էին իրենց համեստ կյանքը՝ հարմարվելով արգելափակմանը, մյուսները, ընդհակառակը, մտածում էին միմիայն այդ բանտից հնարավորինս շուտ փախչելու մասին:

Մարդիկ սկզբում ընդունել էին, որ կտրված են արտաքին աշխարհից, ինչպես կընդունեին ցանկացած ժամանակավոր հոգս, որը միայն կխաթարեր իրենց սովորություններից մի քանիսը: Սակայն հանկարծ գիտակցելով այդօրինակ մեկուսացումը երկնքի ծածկոցի տակ, երբ ամառվա տապը սկսել էր այրել, նրանք շփոթահար զգացին, որ այդ բանտարկությունը սպառնում էր իրենց ամբողջ կյանքում, և հենց երեկոն իջնում էր, նրանք զովության հետ վերագտնում էին իրենց եռանդը, որը նրանց երբեմն մղում էր հուսահատ արարքների:

Նախևառաջ թող դա լինի զուգադիպության արդյունք, այդ կիրակի օրվանից սկսած՝ մեր քաղաքը համակվեց մի տեսակ բավական համընդհանուր ու խորունկ վախով, և հնարավոր դարձավ կասկածել, թե մեր համաքաղաքացիներն իսկապես սկսում էին գիտակցել իրենց վիճակը: Այս տեսակետից մեր քաղաքի

մթնոլորտը մի քիչ փոխակերպվեց: Բայց իրականում փոփոխությունը տեղի էր ունեցել մթնոլորտո՞ւմ, թե՞ մարդկանց սրտերում. այս էր խնդիրը:

Քարոզից մի քանի օր անց Ռիոն, Գրանի հետ քննարկելով այդ իրադարձությունը, ուղևորվում էր դեպի արվարձանները, երբ մթության մեջ բախվեց մի մարդու, որը ճոճվում էր նրանց առջև՝ չփորձելով առաջ շարժվել: Հենց այդ պահին հանկարծակի փայլատակեցին քաղաքի լապտերները, որոնք այժմ վառվում էին ավելի ու ավելի ուշ: Բարձրից կախված լապտերը զբոսնողների ետևում հանկարծ լուսավորեց այն մարդուն, որը, աչքերն ամուր փակած, հռհռում էր անձայն: Համր ուրախությունից աղավաղված նրա գունատ դեմքից խոշոր կաթիլներով հոսում էր քրտինքը: Նրանք առաջ անցան:

– Խելագար է,– ասաց Գրանը:

Ռիոն, որն անմիջապես թևանցուկ արեց նրան այդ տեսարանից արագ հեռացնելու համար, զգաց՝ ինչպես է Գրանի մարմինը դողում նյարդայնությունից:

– Շուտով միայն խելագարներ կլինեն մեր պատերի տակ,– մռթմռթաց Ռիոն:

Շատ էր հոգնած և զգաց, որ կոկորդը չորացել է:

– Մի բան խմենք:

Մտան մի փոքրիկ սրճարան: Ծանր օդը լուսավորված էր կանգնակի վերևում կախված միակ լապտերով, որի արձակած կարմրավուն լույսի մեջ մարդիկ, չգիտես ինչու, չունենալով ոչ մի պատճառ, խոսում էին ցածրաձայն: Մոտենալով կանգնակին՝ Գրանը, ի զարմանս բժշկի, պատվիրեց սպիրտային խմիչք, խմեց մի ումպով և հայտարարեց, որ շատ թունդ էր: Հետո ցանկացավ դուրս գալ: Դրսում Ռիոյին թվաց, թե գիշերվա խավարում ամեն կողմից լսվում էին հեծեծանքներ: Ինչ-որ տեղ՝ սև երկնքի տակ, լապտերներից ավելի վեր հնչող մի խուլ սուլոց նրան հիշեցրեց անտեսանելի աղետի մասին, որը խառնում էր տաք օդը:

– Բարեբախտաբար, բարեբախտաբար,– ասում էր Գրանը:

Ռիոն ջանում էր հասկանալ, թե ինչ էր ուզում ասել նա:

https://1915.info

– Բարեբախտաբար,– ասում էր մյուսը,– ես իմ աշխատանքն ունեմ:

– Այո՛,– ասաց Ռիոն,– դա մեծ առավելություն է:

Եվ վճռելով խլացնել այդ սուլոցը՝ նա հարցրեց Գրանին, թե գո՞հ էր աշխատանքից:

– Դե, ինչպես ասեմ, կարծում եմ՝ ճիշտ ուղու վրա եմ:

– Եվ ինչքա՞ն ժամանակ դեռ կունենաք այդ աշխատանքը:

Թվաց, թե Գրանն աշխուժացավ, խմիչքի ջերմությունն անցավ ձայնին:

– Չգիտեմ: Բայց հարցը դա չէ, բժիշկ, հարցը դա չէ, ո՛չ:

Մթության մեջ Ռիոն գուշակում էր, որ նա թափահարում էր ձեռքերը: Ասես ինչ-որ ճառ էր պատրաստվում ասելու, որը հանկարծակի և արագ դուրս թռավ.

– Իմ ուզածը սա է, բժի՛շկ, այն օրը, երբ ձեռագիրս հասնի հրատարակչին, նա կարդալուց հետո վեր կենա և ասի իր գործընկերներին. «Պարոնա՛յք, հանե՛ք գլխարկները»:

Այս անսպասելի հայտարարությունն ապշեցրեց Ռիոյին: Նրան անգամ թվաց, թե իր ուղեկիցը գլխարկը հանելու շարժում է անում, ձեռքը գլխին է տանում և իջեցնում: Այնտեղ՝ երկնքում, տարօրինակ սուլոցը կարծես վերսկսվում էր նոր ուժգնությամբ:

– Այո՛,– ասում էր Գրանը,– պետք է այն կատարյալ լինի:

Ռիոն, չնայած այնքան էլ իրազեկ չէր գրական գործերին, այնուամենայնիվ, այն տպավորությունն ուներ, որ գործերն այդքան դյուրին չպետք է ընթանային, և որ օրինակ՝ հրատարակիչներն իրենց գրասենյակներում պետք է գլխաբաց լինեին: Բայց իրականում ի՞նչ իմանաս, և Ռիոն նախընտրեց լռել: Ակամա ականջ էր դնում ժանտախտի խորհրդավոր ձայներին: Մոտենում էին Գրանի թաղամասին, և քանի որ ճանապարհը բարձրանում էր, թեթև հովիկը թարմացնում էր նրանց և միաժամանակ մաքրում քաղաքն իր բոլոր աղմուկներից: Սակայն Գրանը շարունակում էր խոսել, և Ռիոն չէր ընկալում այն ամենը, ինչ ասում էր այդ բարի մարդը: Նա միայն հասկացավ, որ քննարկվող գործն արդեն շատ էջեր ուներ գրված, բայց հեղինակի մտահոգությունն էր այն հասցնել կատարելության՝ մի բան, որ

տանջալից էր նրա համար. «Երկար երեկոներ, ամբողջ շաբաթներ մի բառի վրա... և երբեմն ընդամենը մի պարզ կապ»: Այստեղ Գրանը կանգ առավ ու բռնեց բժշկին նրա վերարկուի կոճակից: Բառերը սայթաքելով էին դուրս թռչում նրա անատամ բերանից:

– Հասկացեք ինձ, բժի՛շկ: Ծայրահեղ դեպքում բավական դյուրին է ընտրություն կատարել բայց և իսկ բառերի միջև: Արդեն ավելի դժվար է ընտրել իսկ-ի և հետո-ի միջև: Դժվարությունն ավելի է մեծանում հետո-ի և այնուհետև-ի միջև: Բայց վստահաբար, ամենադժվարը իմանալն է՝ պե՞տք է «և» դնել, թե ոչ:

– Այո՛,– ասաց Ռիոն,– հասկանում եմ:

Եվ կրկին ճանապարհ ընկավ: Մյուսը՝ ասես շփոթահար, նորից հասավ նրա ետևից:

– Ներեցեք ինձ,– մռթմռթաց նա,– չգիտեմ այս երեկո ինչ է կատարվում ինձ հետ:

Ռիոն կամացուկ խփեց նրա ուսին և ասաց, որ շատ է ցանկանում օգնել, և որ նրա պատմությունն իրեն շատ է հետաքրքրել: Գրանն ասես մի քիչ զվարթացավ, և երբ մոտեցան տանը, փոքրինչ վարանելուց հետո բժշկին առաջարկեց բարձրանալ իր տուն: Ռիոն համաձայնեց:

Ճաշասենյակում Գրանը նրան հրավիրեց նստել սեղանի առջև, որը լի էր մանրադիտակային տառերով խզբզված թղթերով:

– Այո՛, հենց սա է,– ասաց Գրանը բժշկին, որը հարցնում էր հայացքով,– որևէ բան չե՞ք կամենա խմել: Մի քիչ գինի ունեմ:

Ռիոն հրաժարվեց: Նա դիտում էր թղթերը:

– Մի նայեք,– ասաց Գրանը:– Դա իմ առաջին նախադասությունն է: Այն ինձ ցավ պատճառեց, մեծ ցավ:

Նա էլ էր դիտում այդ թղթերը, և նրա ձեռքը կարծես անհաղթահարելիորեն ձգվեց դեպի այդ թղթերից մեկը, որ բարձրացրեց թափանցիկ լուսամփոփի էլեկտրական լամպի դիմաց: Թերթիկը դողում էր նրա ձեռքին: Ռիոն նկատեց, որ Գրանի ճակատը խոնավ էր:

– Նստեք,– ասաց Ռիոն,– և կարդացեք:

Գրանը նայեց նրան և ժպտաց մի տեսակ երախտագիտությամբ:

– Այո,– ասաց նա,– կարծում եմ, որ այդ ցանկությունն ունեմ:

Մի քիչ սպասեց՝ անթարթ նայելով թղթին, հետո նստեց: Ռիոն միաժամանակ լսում էր մի տեսակ խառնաշփոթ դզզոց, որն ասես քաղաքում պատասխանում էր աղետի սուլոցներին: Հենց այդ պահին նա չափազանց խոր ընկալեց իր ոտքերի տակ փռված այդ քաղաքը, նրա կազմած փակ աշխարհը և սոսկալի ոռնոցները, որոնք խեղդվում էին գիշերվա մեջ: Հնչում էր Գրանի խուլ ձայնը. «Մայիսյան գեղեցիկ մի առավոտ մի վայելչագեղ ամազոնուհի, սքանչելի զամբիկ հեծած, անցնում էր Բուլոնյան անտառի ծաղկած ծառուղիներով»: Լռությունը վերադարձավ, և նրա հետ նաև՝ տառապանքների մեջ գտնվող քաղաքի անորոշ աղմուկը: Գրանը մի կողմ էր դրել թուղթը և շարունակում էր զննել.

– Ի՞նչ կարծիքի եք:

Ռիոն պատասխանեց, որ սկիզբն այնպես հետաքրքրեց իրեն, որ կուզենար իմանալ շարունակությունը: Բայց Գրանն ասաց ոգևորված, որ այդ տեսակետն այնքան էլ լավը չէր: Նա ձեռնափով հարվածեց իր թղթերին:

– Այս բոլորը դեռ մոտավորապես է: Երբ ես կարողանամ կատարյալ դարձնել պատկերը, որն ունեմ երևակայությանս մեջ, երբ իմ նախադասությունը կունենա այդ նույն քայլքը՝ զբոսանքի վարգը՝ մեկ-երկու-երեք, մեկ-երկու-երեք, այն ժամանակ մնացյալն ավելի դյուրին կլինի, և հատկապես պատրանք կստեղծվի, ինչպես սկզբում, թե հնարավոր կլինի ասել. «Հանեք գլխարկները»:

Բայց դրա համար նա դեռ շատ հաց ու պանիր ուներ ուտելու: Երբեք չի համաձայնվի այս վիճակում գործը հանձնել հրատարակչին: Քանզի, չնայած բավարարվածության զգացումին, որն այդ նախադասությունը մերթընդմերթ տալիս է, նա գիտակցում է, որ դեռ լիովին չի վերարտադրում իրականության պատկերը, որ ինչ-որ չափով այն պահպանում է հեռվից հեռու իրեն պատկանող հնչերանգի հեշտությունը, բայց որն այսուհանդերձ պատկանում է որևէ կաղապարի: Նրա ասածի իմաստը մոտավորապես այս էր, երբ պատուհանի տակ լսվեցին վազող մարդկանց ոտնաձայներ: Ռիոն վեր կացավ:

– Դուք կտեսնեք, թե դրանից ինչ կսարքեմ,– ասաց Գրանը և շրջվելով դեպի պատուհանը՝ ավելացրեց,– երբ այս ամենը վերջացած լինի:

Բայց փութկոտ ոտնաձայները վերսկսվեցին: Ռիոն արդեն իջնում էր և երբ հայտնվեց փողոցում, երկու հոգի անցան նրա առջևից: Ակնհայտորեն նրանք գնում էին դեպի քաղաքի դարպասները: Մեր համաքաղաքացիներից ոմանք, իրոք, գլուխները շոգից ու ժանտախտից կորցրած, արդեն դիմում էին բռնությունների՝ փորձելով խաբել հսկիչների զգոնությունն ու փախչել քաղաքից:

* * *

Ուրիշները, ինչպես օրինակ՝ Ռամբերը, նույնպես ջանում էին փախչել ծնվող խուճապի մթնոլորտից, բայց եթե ոչ այնքան հաջող, ապա գոնե մեծ համառությամբ ու հնարամտությամբ: Ռամբերը նախ շարունակեց իր պաշտոնական գործողությունները: Ըստ իր ասածի՝ նա միշտ կարծել էր, որ համառությունն ի վերջո հաղթանակում է ամեն տեղ, և ինչ-որ տեսակետից իր մասնագիտությունը ելք էր գտնում ցանկացած իրավիճակում: Ուստի նա այցելեց մեծ թվով պաշտոնյաների ու այրերի, որոնց իրազեկությանը սովորաբար չեն կասկածում: Սակայն տվյալ դեպքում այդ իրազեկությունը ոչնչի չէր ծառայում: Հիմնականում դրանք այն մարդիկ էին, ովքեր ճշգրիտ և լավ կարգավորված մտքեր ունեին այն ամենի մասին, ինչ վերաբերում էր բանկին կամ արտահանմանը, արևադարձային մրգերի կամ գինու առևտրին, մարդիկ, ովքեր տիրապետում էին անվիճելի գիտելիքների դատահիրավական կամ ապահովագրական ասպարեզներում՝ չհաշված նրանց պատկառելի դիպլոմներն ու բացահայտ բարի կամքը: Հենց բարի կամքի՝ առկայությունն էր ամենաապշեցուցիչը նրանց մեջ: Բայց ժանտախտի պարագայում նրանց գիտելիքները հավասարվում էին զրոյի:

Բայցևայնպես նրանցից յուրաքանչյուրին ամեն անգամ, եթե հնարավոր էր եղել, Ռամբերը պատմել էր իր գործի մասին: Իր փաստարկների հիմքում նա միշտ դնում էր այն, որ ինքն օտարական էր այդ քաղաքում, և հետևաբար իր դեպքը պետք է առանձնահատուկ

ձևով քննարկվեր: Որպես կանոն՝ լրագրողի զրուցակիցները հաճույքով էին համաձայնում այս կետի հետ: Բայց նրան սովորաբար փաստարկում էին, որ որոշակի թվով մարդիկ այդ նույն վիճակում էին, և հետևաբար նրա գործն այնքան էլ առանձնահատուկ չէր, որքան պատկերացնում էր: Դրան Ռամբերն առարկում էր, որ այդ դեպքում դա ոչնչով չի փոխում իր փաստարկման էությունը, իսկ նրան պատասխանում էին, որ դա ինչ-որ բան փոխում էր վարչական դժվարությունների ընթացքում, որոնք ընդդիմանում էին որևէ մեկին առավելություն տալուն՝ վախենալով ստեղծել, այսպես ասած, նախադեպ, որը մեծագույն նողկանքի արժանի արտահայտություն էր: Ըստ Ռամբերի դասակարգման, որ նա առաջարկեց բժիշկ Ռիոյին, նման տրամաբանողները կազմում էին ձևապաշտների դասը: Դրանց կողքին դեռ կարելի էր գտնել պերճախոսներին, ովքեր վստահեցնում էին խնդրառուին, որ այս ամենից ոչինչ տևական չէ, և նրանք, ովքեր շռայլ էին իրենց բարի խորհուրդներում, երբ իրենց խնդրում էին որոշումներ կայացնել, մխիթարում էին Ռամբերին՝ վճռելով, որ խոսքը միայն վաղանցիկ տհաճության մասին է: Կային նաև բարձրաստիճան պաշտոնյաներ, ովքեր խնդրում էին այցելուին թողնել իր դեպքն ամփոփող նշումներ և խոստանում էին տեղեկացնել իրենց որոշման մասին: Հանդիպում էին դատարկախոսներ, ովքեր առաջարկում էին լավ բնակարաններ կամ էժան հյուրանոցների հասցեներ, մեթոդաբաններ, ովքեր լրացնել էին տալիս հատուկ ձև և անմիջապես տեղադրում գործում: Հանդիպում էին ավարաներ, ովքեր ձեռքերն էին վեր բարձրացնում ի նշան անզորության, և չխոսկաններ, ովքեր շրջում էին հայացքները: Վերջապես ամենամեծ թիվը կազմում էին ավանդականները, ովքեր Ռամբերին մատնանշում էին մեկ ուրիշ գրասենյակ կամ առաջարկում էին այլ բան ձեռնարկել: Լրագրողը այսպիսով ուժասպառվել էր նման այցելություններից և ճիշտ միտք էր հղացել՝ գնալ քաղաքապետարան կամ ոստիկանատուն, որովհետև ստիպված ես սպասել մեծ մոլեսկինապատ նստարանին՝ մեծ ազդագրերի դիմաց, որոնք հրավիրում էին բաժանորդագրվել պետական փոխառություններին՝ ազատվելով հարկերի վճարումներից, կամ

զինվորագրվել գաղութային բանակին, կամ ստիպված մտնել գրասենյակներ, որտեղ դեմքերը հեշտությամբ թույլ էին տալիս կռահել ոչ ավելի շատ բան, քան արագակարները կամ գործադարանները: Այդտեղ առավելությունն այն էր, ինչպես դառնորեն բացատրում էր Ռամբերը Ռիոյին, որ այդ ամենը իրենից քողարկում էր իսկական իրավիճակը: Ժանտախտի առաջխաղացումը փաստորեն անհայտ էր իրեն: Դրան գումարած այն, որ այսպես օրերն անցնում էին ավելի արագ: Եվ այն իրավիճակում, որի մեջ գտնվում էր ամբողջ քաղաքը, կարելի էր ասել, որ յուրաքանչյուր անցած օր յուրաքանչյուր մարդու մոտեցնում էր փորձությունների ավարտին, եթե, իհարկե, մինչ այդ չմեռներ: Ռիոն ստիպված էր ընդունել, որ այդ տեսակետը ճիշտ էր, բայց խոսքն այդուհանդերձ գնում էր չափազանց ընդհանրական ճշմարտության մասին:

Եղավ մի պահ, երբ Ռամբերի մեջ հույս արթնացավ: Ոստիկանությունից նա ստացավ մաքուր մի հարցաթերթիկ, որը խնդրում էր ճշգրիտ լրացնել: Հարցաթերթիկին հետաքրքրում էր իր անուն-ազգանունը, ընտանեկան վիճակը, իր նախկին և այժմյան եկամուտները, մի խոսքով՝ այն, ինչ անվանում են curriculum vitae: Սկզբում այնպիսի տպավորություն ստացավ, թե հարցաթերթիկն ուղղված էր այն անձանց, որոնք ենթակա էին ուղարկվելու իրենց հիմնական բնակավայրերը: Որոշ կցկտուր տեղեկություններ, որ ստացավ գրասենյակում, հաստատեցին այդ տպավորությունը: Բայց մի քանի վճռական քայլերից հետո նրան հաջողվեց գտնել այն բաժինը, որն ուղարկել էր հարցաթերթիկը, և այնտեղ նրան ասացին, որ այդ տեղեկությունները հավաքում էին «հնարավոր դեպքի համար»:

– Ի՞նչ հնարավոր դեպքի,– հարցրել էր Ռամբերը:

Այդժամ նրան բացատրել էին, որ դա այն դեպքը կլիներ, եթե նա հիվանդանար ժանտախտով և մահանար դրանից, մի կողմից՝ որպեսզի հնարավոր լիներ հայտնել նրա ընտանիքին, իսկ մյուս կողմից՝ պարզել, թե պե՞տք է հիվանդանոցի ծախսերը գանձվեին քաղաքի բյուջեից, կամ էլ թե կարելի՞ էր հուսալ, որ նրա հարազատները կփոխհատուցեին այդ ծախսերը: Անշուշտ, դա ապացուցում էր, որ նա լրիվ չէր բաժանվել իրեն սպասող կնոջից, քանի

որ հասարակությունը զբաղվում էր իրենց ճակատագրով: Բայց դա մխիթարանք չէր: Ավելի նշանակալիցն այն էր, և Ռամբերը դա հետագայում նկատեց, որ ձևը, որով ամենամեծ աղետի ժամանակ անգամ ինչ-որ գրասենյակ կարող էր շարունակել իր գործը և նախաձեռնություն հանդես բերել մեկ ուրիշ ժամանակի համար՝ հաճախ չտեղեկացնելով բարձր իշխանություններին, միայն մեկ պատճառով, որ այն ստեղծված էր նման ծառայության համար:

Հաջորդ ժամանակաշրջանը Ռամբերի համար եղավ միաժամանակ և՛ ամենահեշտը, և՛ ամենադժվարը: Դա ընդարմացման շրջանն էր: Լրագրողն այցելել էր բոլոր գրասենյակները, կատարել բոլոր հնարավոր քայլերը և հասկացել, որ այս կողմից առնվազն այդ պահին բոլոր ելքերը փակ էին: Նա սկսեց թափառել սրճարանից սրճարան: Առավոտյան նստում էր դարատափում՝ մի բաժակ գաղջ գարեջրի առջև, լրագրեր էր կարդում՝ հույս փայփայելով այնտեղ գտնել հիվանդության վերջն ազդարարող գոնե որևէ ակնարկ, դիտում էր փողոցի անցորդներին և զզվանքով շրջվում նրանց դեմքերի թախծոտ արտահայտությունից ու հարյուրերորդ անգամ դիմացի խանութի ցուցանակները կարդալուց հետո, ինչպես նաև հռչակավոր ըմպելիքների գովազդները, որոնք այլևս չէին մատուցվում, հետո վեր էր կենում և առանց մտածելու քայլում քաղաքի դեղնավուն փողոցներով: Այդպես անցնում էր ժամանակը մինչև երեկո՝ սրճարանից սրճարան, իսկ հետո՝ սրճարանից ռեստորան: Հենց այդպես, երեկոյան Ռիոն նրան նկատեց սրճարանի դռան մոտ, որ լրագրողը տատանվում էր բացել: Վերջապես որոշում կայացնելով՝ նա ներս մտավ և նստեց սրահի հեռավոր անկյունում: Դա այն ժամն էր, երբ սրճարաններում վերևից եկած ցուցմունքի համաձայն հնարավորինս ուշ էին միացնում լույսերը: Մթնշաղը գորշավուն ջրի նման լցնում էր դահլիճը, երկնքի վերջալույսի վարդագույնը արտացոլվում էր ապակիների վրա, և սեղանների մարմարները թեթևակի փայլում էին ահագնացող խավարում: Ամայի դահլիճի կենտրոնում Ռամբերն ասես մի կորած ստվեր լիներ, և Ռիոն մտածեց, որ դա նրա ինքնամոռացման ժամն էր: Բայց դա նաև այն պահն էր, երբ քաղաքի բոլոր բանտարկյալները նույն զգացումն էին ունենում և

մտածում էին ինչ-որ բան անել իրենց ազատագրումն արագացնելու համար: Ռիոն շրջվեց:

Ռամբերը երկար ժամեր էր անցկացնում նաև կայարանում: Կառամատույց դուրս գալն արգելված էր: Բայց սպասասրահները, որոնց մուտքը դրսից էր, բաց էին մնում, և հաճախ շոգ օրերին մուրացկանները տեղավորվում էին այնտեղ, որովհետև դահլիճները ստվերաշատ էին ու զով: Ռամբերը կայարան էր գալիս գնացքների հին չվացուցակները, հատակին թքելն արգելող հայտարարությունն ու երկաթգծի ոստիկանության կանոնակարգը կարդալու համար: Հետո նստում էր անկյունում: Սրահը մռայլ էր: Մեջտեղում կար մի հին չուգունե վառարան, որն արդեն ամիսներ շարունակ չէր տաքացվում, իսկ շուրջբոլորը երևում էին ջրաներկով վաղուց նկարված ութանման նախշեր: Պատերին մի քանի ազդագիր ջատագովում էին ազատ ու երջանիկ կյանքը Բանդոլում կամ Կաննում: Ռամբերն այստեղ ունենում էր այն ահավոր ազատության զգացումը, որն առաջանում է, երբ լինում ես խոր զրկանքներում: Այդ ժամանակ ամենադժվարին հիշողությունները նրա համար փարիզյան նկարներն էին, համենայնդեպս այդպես էր ասում Ռիոյին: Քարերի ու ջրի բնապատկերները, Պալե-Ռուայալի աղավնիները, Հյուսիսային կայարանը, Պանթեոնի դատարկ թաղամասերը և քաղաքի էլի մի քանի ուրիշ վայրեր, որ անգամ չէր կասկածել, թե այդքան սիրում էր, այժմ հետապնդում էին Ռամբերին և խանգարում որոշակի բան ձեռնարկել: Ռիոյի կարծիքով՝ նա նույնացնում էր այդ պատկերներն իր սիրո հետ: Եվ այն օրը, երբ Ռամբերն ասաց, թե սիրում է արթնանալ առավոտյան ժամը չորսին և մտածել իր քաղաքի մասին, բժիշկն անմիջապես մեկնաբանեց իր սեփական փորձից ելնելով, որ այդ ժամերին ինքն էլ էր սիրում պատկերացնել իր մեկնած կնոջը: Դա, իրոք, այն ժամն էր, երբ նա կարող էր տարվել իր կնոջով: Առավոտյան ժամը չորսին ընդհանրապես ոչինչ չեն անում, քնում են, անգամ եթե այդ գիշերը դավաճանության գիշեր է եղել: Այո, այդ ժամին քնում են, և դա հանգստացնում է, քանզի անհանգիստ սրտի ամենամեծ ցանկությունն է ընդմիշտ տիրանալ նրան, ում սիրում է, կամ բաժանման ժամին կարողանալ սուզել այդ էակին

առանց երազների քնի մեջ, որպեսզի նա արթնանա միմիայն իրենց միացման օրը:

* * *

Քարոզից շատ չանցած՝ սկսվեցին շոգերը: Արդեն հունիս ամսվա վերջերն էին: Ուշացած անձրևների հաջորդ օրերին, որոնք նշանավորեցին քարոզի կիրակին, ամառը միանգամից բռնկվեց երկնքում՝ տների վերևում: Նախ մի ուժեղ և այրող քամի բարձրացավ, փչեց ամբողջ օրը՝ չորացնելով տների պատերը: Արևն անշարժացավ: Ամբողջ ցերեկը տապի ու լույսի անընդհատ կրկնվող ալիքները հեղեցին քաղաքը: Թվում էր, թե կամարաշեն փողոցներից ու բնակարաններից բացի, քաղաքում չկար ոչ մի կետ, որ խույս տար կուրացուցիչ ճառագումից: Արևը հետապնդում էր մեր համաքաղաքացիներին փողոցի բոլոր անկյուններում, և եթե նրանք հանկարծ կանգ էին առնում, ուրեմն գլխին հարված էին ստանում: Եվ քանի որ առաջին շոգերը համընկան զոհերի թվի կտրուկ աճի հետ, որ թվերով արտահայտած հասնում էր մոտավորապես շաբաթական յոթ հարյուրի, քաղաքն ընկավ մի տեսակ ընկճախտի մեջ: Արվարձաններում, ուղիղ փողոցների և դարատափերով տների արանքներում աշխուժությունը նվազեց, և այն թաղամասերում, որտեղ մարդիկ ողջ կյանքն անցկացնում էին իրենց շեմերի վրա, այժմ դռներն ու պատուհանափեղկերը փակվեցին, և պարզ չէր՝ մարդիկ ժանտախտի՞ց, թե՞ արևից էին այդպես պատսպարվում: Որոշ տներից, այսուհանդերձ, լսվում էին տնքոցներ: Առաջ, երբ նման բան էր պատահում, հաճախ ականջ դնող հետաքրքրասերներ էին հայտնվում փողոցում: Բայց այս երկար տագնապներից հետո մարդկանց սրտերն ասես կարծրացել էին, և նրանք քայլում, ապրում էին հառաչանքների կողքին, կարծես դրանք արտահայտվում էին բնական մարդկային լեզվով:

Քաղաքի դռների խցանումները, երբ ոստիկանները ստիպված էին գործի դնել իրենց զենքերը, առաջացրին խուլ հուզումներ: Եղան, իհարկե, վիրավորներ, բայց քաղաքում, որտեղ ամեն բան չափազանցվում էր շոգի ու վախի ազդեցության տակ, խոսում էին նաև

սպանվածների մասին: Ամեն դեպքում ճիշտ էր, որ դժգոհությունը շարունակում էր աճել, որ մեր իշխանությունները վախենում էին վատթարագույնից և մտադիր էին լուրջ միջոցներ ձեռնարկել, եթե աղետի վախով զսպված բնակչությունը հանկարծ ըմբոստանար: Լրագրերը տպագրեցին հրամանագրեր, որոնք դարձյալ հաստատում էին, որ քաղաքից դուրս գալը խստիվ արգելվում է, և որ հրաման խախտողներին սպառնում էր բանտարկություն: Քաղաքում պահակախմբեր էին շրջում: Հաճախ ամայի ու շիկացած փողոցներում, փակ պատուհանների շարքերի ետևում երևում էին հեծյալ պահակախմբեր, որոնց գալուստն ազդարարվում էր նախևառաջ սալարկի վրա դոփդոփացող սմբակների աղմուկով, հետո պահակախումբն անցնում էր, և սպառնալիքի տակ ապրող քաղաքը կրկին ընկնում էր ծանր ու կասկածելի լռության մեջ: Հեռվում լսվում էին հատուկ ջոկատների հրացանների կրակոցները: Այդ հատուկ ջոկատները վերջին հրամանի համաձայն պարտավոր էին սպանել շներին ու կատուներին, որոնք հնարավոր է վարակը տարածեին լվերի միջոցով: Այդ խուլ պայթյունները նպաստում էին, որպեսզի քաղաքն ամբողջովին ընկղմվեր տագնապի մթնոլորտի մեջ:

Համատարած շոգի ու լռության մեջ մեր համաքաղաքացիների վախվորած սրտերում ամեն բան մեծ նշանակություն էր ձեռք բերում: Երկնքի գույներն ու հողի բույրերը, որոնք ներկայացնում են եղանակների փոփոխությունը, առաջին անգամ զգալի էին բոլորին: Բոլորն էլ սոսկումով հասկանում էին, որ շոգերը նպաստելու էին համաճարակի տարածմանը, և միևնույն ժամանակ բոլորն էլ տեսնում էին, որ ամառը հաստատվում է: Վայրի ծիծառների ճռվողյունը իրիկնային երկնքում քաղաքի վրա դառնում էր ավելի աղեկտուր: Այն այլևս չէր հասնում հունիսյան այն մթնշաղների բարձրությանը, որոնք ետ էին քշում հորիզոնը մեր երկրում: Շուկաներում ծաղիկներն այլևս չէին հասցնում կոկոն տալ, նրանք արագ պայթում էին, և առավոտյան վաճառքից հետո նրանց ծաղկաթերթերը թափված էին լինում փոշոտ մայթերին: Պարզ երևում էր, որ գարունը սպառված է, որ եթե այն հրաշագեղ էր հազարավոր փթթուն ծաղկանց մեջ, ամենուրեք, ինչպես շուրջպարում, ապա շուտով այն մարելու է,

դանդաղորեն ճզմվելու է ժանտախտի ու շոգի կրկնակի ծանրությունից: Մեր բոլոր համաքաղաքացիների համար այդ ամառային երկինքը, այդ փողոցները, որոնք նվաղում էին փոշու ու ճանճրույթի գույների մեջ, ունեին նույն սպառնալից իմաստը, ինչ հարյուրավոր մեռածները, որոնցից օրեցօր քաղաքն ավելի էր ծանրանում: Այդ անվերջանալի արևը, այդ քնաբեր և արձակուրդ հիշեցնող ժամերը առաջվա պես չէին հրավիրում ջրային ու մարմնական տոների: Ընդհակառակը, մեր փակ, լուռումունջ քաղաքում դրանք սին էին հնչում: Նրանք կորցրել էին երջանիկ ժամանակների պղնձե փայլատակումները: Ժանտախտի արևը խամրեցնում էր գույները և հանգցնում բոլոր ուրախությունները:

Հենց այսպես էր դրսևորվում հիվանդության ամենամեծ հեղաշրջումներից մեկը: Սովորաբար մեր համաքաղաքացիներն աշխուժորեն էին դիմավորում ամառը: Քաղաքն այդժամ բացվում էր դեպի ծովը և երիտասարդներին թափում լողափ: Այդ ամռանը, ընդհակառակը, այդքան մոտիկ ծփացող ծովն արգելված էր, և մարմինը կորցրել էր հրճվանքի իր իրավունքը: Ի՞նչ անել նման պայմաններում: Դարձյալ Տարուն է, որ տալիս է այդ ժամանակվա մեր քաղաքի ամենաճշգրիտ պատկերը: Պարզ է, որ ընդհանուր առմամբ նա հետևում էր ժանտախտի առաջխաղացմանը՝ իրավացիորեն նշելով համաճարակի շրջադարձը՝ այն, որ ռադիոն իր հաղորդումներում այլևս չէր ազդարարում շաբաթական հարյուրավոր մարդկանց մահը, այլ հաղորդում էր օրական ինն-տասներկու, հարյուր յոթ և հարյուր քսան մահացության դեպք: «Լրագրերն ու իշխանությունները շատ նրբորեն են խաղում ժանտախտի հետ: Նրանք երևակայում են, թե միավորներ են շահում, քանի որ հարյուր երեսունն ավելի փոքր թիվ է, քան ինը հարյուր տասը»: Տարուն արձանագրում է նաև հուզիչ ու գունագեղ փաստեր, ինչպես օրինակ՝ փողոցով անցնելիս ամայի ու փակ պատուհանափեղկերով թաղամասում՝ իր գլխավերևում, մի կին հանկարծ բացում է պատուհանը, արձակում երկու ահռելի ճիչ և հետո նորից ծանր վարագույրներով փակում սենյակի թանձր մթությունը: Մեկ ուրիշ տեղում Տարուն նշում է, որ դեղատներից անհետացել են

անանուխի անուշագնդիկները, որովհետև շատ մարդիկ ծծում են դրանք հնարավոր վարակից խույս տալու համար:

Նա շարունակում էր նաև դիտարկել իր նախընտրելի մարդկանց: Իմանում ենք, որ փոքրիկ ծերուկը նույնպես ողբերգություն էր ապրում իր կատուներով: Մի առավոտ, իրոք, կրակոցներ էին ճայթել, և ինչպես գրում է Տարուն, կապարի մի քանի բեկոր սպանել էր կատուների մեծ մասին և ահաբեկել մնացածներին, որոնք փախել էին փողոցից: Նույն օրը փոքրիկ ծերուկը սովորական ժամին դուրս էր եկել պատշգամբ, անակնկալից ապշել, բազրիքից դուրս կախվել, զննել փողոցը ծայրեծայր և հաշտվելով իր վիճակին՝ որոշել էր սպասել: Մատներով թխկացրել էր պատշգամբի ճաղերին: Էլի էր սպասել, պատառոտել, մաս-մաս էր արել թուղթը, ներս էր գնացել, նորից դուրս եկել, իսկ հետո որոշ ժամանակ անց հանկարծակի անհետացել էր՝ իր ետևից զայրույթով փակելով դուռ ու լուսամուտ: Հաջորդ օրերին նույն տեսարանը կրկնվել էր, սակայն փոքրիկ ծերուկի դեմքին արդեն հայտնվել էին բացահայտ տխրության և շփոթմունքի նշաններ: Մեկ շաբաթ անց Տարուն զուր էր սպասել ծերուկի ամենօրյա հայտնվելուն, պատուհանները համառորեն փակ էին մնացել հասկանալի վշտի պատճառով: «Ժանտախտի ժամանակ արգելվում է թքել կատուների վրա»,– այսպիսին էր գրագրի եզրակացությունը:

Մեկ ուրիշ մասում Տարուն պատմում է՝ երբ երեկոյան վերադառնում էր, նա միշտ վստահ էր, որ սպասասրահում կհանդիպի գիշերային պահակի մռայլ կերպարանքին, որը գնում-գալիս էր սրահի երկայնքով: Վերջինս առանց հոգնելու ամեն եկվորի հիշեցնում էր, որ ինքը կանխատեսել էր պատահածը: Ընդունելով դժբախտության մասին ծերուկի վարկածը՝ Տարուն ասում էր, որ նա ավելի շուտ երկրաշարժ էր կանխատեսել: Ծեր պահակը պատասխանում էր. «Ա՜խ, երանի երկրաշարժ լիներ: Մի լավ թափ կտար, և այլևս չէին խոսի այդ մասին... Կհաշվեին զոհերին, ողջ մնացածներին, և խաղը կավարտվեր: Իսկ այս գրողի տարած հիվանդությո՛ւնը: Նույնիսկ նրանք, ովքեր հիվանդ չեն, հիվանդությունը կրում են իրենց մեջ, իրենց սրտում»:

https://1915.info

Տնօրենը պակաս ընկճված չէր: Սկզբնական շրջանում զբոսաշրջիկները, որոնց արգելել էին դուրս գալ քաղաքից, ապրում էին հյուրանոցում քաղաքի փակ լինելու պատճառով: Բայց քիչ-քիչ, քանի որ համաճարակը երկարաձգվում էր, շատերը նախընտրել էին տեղավորվել իրենց բարեկամների մոտ: Եվ նույն պատճառներով, որոնցով միշտ լցված էին հյուրանոցի սենյակները, այժմ դրանք դատարկ էին, որովհետև նոր զբոսաշրջիկներ այլևս չէին գալիս մեր քաղաք: Տարուն վերջին հազվագյուտ վարձակալներից էր, և տնօրենը առիթը բաց չէր թողնում նրան հիշեցնելու, որ եթե հաշվի չառնենք այցելուների նկատմամբ բարեհաճ լինելու իր վերջին ցանկությունը, նա վաղուց փակած կլիներ իր հյուրանոցը: Նա հաճախ էր հարցնում Տարուին համաճարակի հավանական տևականության մասին: «Ասում են,– պատասխանում էր Տարուն,– ցրտերը խոչընդոտում են այդ տեսակի հիվանդությունների տարածմանը»: Տնօրենը խենթանում էր. «Բայց, պարո՞ն, այստեղ երբեք կարգին ցուրտ չի լինում: Այսպես թե այնպես, սա դեռ երկար ամիսներ կգնա»: Ասենք, նա համոզված էր, որ զբոսաշրջիկները դեռ երկար ժամանակ կշրջանցեին այդ քաղաքը: Ժանտախտը մահ էր զբոսաշրջության համար:

Կարճ բացակայությունից հետո ռեստորանում կրկին հայտնվեց մարդ-բվեճը՝ պարոն Օթոնը, բայց միայն երկու վարժեցրած շնիկներով: Ըստ տարածված լուրերի՝ կինը խնամել ու թաղել էր իր մորը և հիմա հիվանդանոցային մեկուսարանում էր:

– Դա ինձ դուր չի գալիս,– ասաց տնօրենը Տարուին: Մեկուսացած, թե ոչ՝ նա կասկածի տակ է, և հետևաբար նրանք՝ նույնպես:

Տարուն նկատեց, որ այդ տեսանկյունից բոլորն էլ կասկածելի էին: Սակայն տնօրենն անդրդվելի էր և այդ հարցի վերաբերյալ ուներ շատ կտրուկ տեսակետ.

– Ո՛չ, պարոն, ո՛չ դուք, ո՛չ ես, մենք կասկածելի չենք: Իսկ նրանք՝ այո՛:

Բայց պարոն Օթոնը հեշտությամբ չէր փոխում իր սովորույթները, և այս անգամ ժանտախտը հույս չէր ունենա, թե կհասնի ինչ-որ փոփոխության: Նա ռեստորան էր մտնում նույն ձևով, նույն ձևով նախ ինքն էր նստում, հետո նստեցնում երեխաներին և նրանց

շարունակ անբռնազբոսիկ ու թունոտ դիտողություններ անում: Միայն փոքր տղան էր փոխվել: Նա քրոջ նման սևազգեստ էր, մի քիչ ավելի ինքնամփոփ, ասես հոր փոքրիկ ստվերը լիներ: Գիշերահսկիչը, որը չէր սիրում պարոն Օթոնին, ասել էր Տարուին.

– Օ՛, այդ մեկը հագնված է սատկելու: Հենց էդպես, հարդարանքի կարիք չի լինի: Ուղիղ էն աշխարհը կգնա:

Պանլուի քարոզի մասին ևս տեղեկատվություն կար, բայց հետևյալ մեկնաբանություններով. «Ես հասկանում եմ նման համակրելի ոգևորությունը: Աղետների սկզբում և վերջում միշտ ճարտարախոսություն են անում: Առաջինի դեպքում սովորույթը դեռ կորսված չէ, իսկ երկրորդի դեպքում այն վերագտնված է: Հենց դժբախտության պահին է, որ վարժվում ես ճշմարտությանը, այսինքն՝ լռությանը: Սպասենք»:

Վերջապես Տարուն նշում էր նաև, որ երկար զրույց էր ունեցել Ռիոյի հետ, որից միայն հիշում էր, որ լավ արդյունքների էր հասել: Այս առիթով ընդգծում էր, որ տիկին Ռիոյի՝ բժշկի մոր աչքերը բաց շագանակագույն էին, և այստեղից հանգում էր տարօրինակ եզրակացության, որ նման հայացքը, որտեղ կարդացվում է այդչափ բարություն, շատ ավելի ուժեղ կլինի, քան ժանտախտը: Այնուհետև բավական երկար մաս էր նվիրել ծեր ասթմատիկին, որին բուժում էր Ռիոն:

Իրենց զրույցից հետո բժշկի հետ գնացել էր նրան այցելության: Ծերուկը Տարուին դիմավորել էր իր հռհռոցներով և ձեռքերն իրար շփելով: Պառկած էր եղել՝ մեջքով բարձին հենված, կողքերը՝ սիսեռով լի երկու կաթսայիկ: «Ա՛հ, ևս մեկը,– ասել էր նա՝ տեսնելով Տարուին,– աշխարհն ահա շուռ է եկել, բժիշկներն ավելի շատ են, քան հիվանդները: Նշանակում է՝ գործն արագ է ընթանում, հը՞: Քահանան իրավացի է. արժանին ստացանք»:

Հաջորդ օրը Տարուն դարձյալ առանց նախազգուշացման եկել էր նրա մոտ: Եթե հավատանք այդ հուշագրերին, ծեր ասթմատիկը՝ զբաղմունքով մանրավաճառը, հիսուն տարեկանում մտածել էր, թե բավական շատ է աշխատել իր կյանքում: Նա պառկել էր և այդ ժամանակից ի վեր այլևս վեր չէր կացել: Սակայն նրա ասթմայի

համար ավելի լավ էր կանգնած վիճակը: Այդպես էլ ապրել էր մի փոքր եկամուտով մինչև յոթանասունհինգ տարեկանը, որը թեթևությամբ էր տանում: Նա տանել չէր կարող ժամացույցի տեսքը, և այդ պատճառով էլ տանը ոչ մի ժամացույց չկար: «Ժամացույցը,– ասում էր նա,– թանկ ու հիմար բան է»: Ժամանակը, հատկապես ուտելու ժամը՝ միակը, որը կարևոր էր իր համար, նա արժևորում էր իր երկու կաթսայիկով, որից մեկը, երբ արթնանում էր, լի էր լինում սիսեռով: Մեկ առ մեկ նա սիսեռը լցնում էր դատարկ կաթսայիկը նույն ջանադիր և կանոնավոր շարժումներով: Այդպես էր նա գտնում իր կողմնորոշիչները օրվա ընթացքում, որը չափվում էր ըստ կաթսայիկների: «Տանհինգ կաթսայիկը մեկ,– ասում էր նա,– ինձ հարկավոր է մի բան ուտել: Դրանից էլ պարզ բա՞ն»:

Եթե հավատանք կնոջը, նա շատ երիտասարդ տարիքից էր դրսևորել իր տարօրինակ հակումները: Իրականում երբեք ոչինչ չէր հետաքրքրել նրան՝ ո՛չ աշխատանքը, ո՛չ ընկերները, ո՛չ սրճարանը, ո՛չ երաժշտությունը, ո՛չ կանայք, ո՛չ զբոսանքները: Նա երբեք դուրս չէր եկել քաղաքից, բացի մի անգամից, երբ ստիպված էր եղել ընտանեկան գործերով մեկնել Ալժիր, այն էլ կանգ էր առել Օրանին ամենամոտ կայարանում՝ անկարող շարունակելու իր արկածախնդրությունը: Եվ տուն էր վերադարձել առաջին իսկ գնացքով: Տարուին, որն ապշած էր նրա վարած մենակյաց կյանքից, ծերուկը մոտավորապես այսպես էր բացատրել, որ ըստ կրոնի՝ մարդու կյանքի առաջին կեսը վերելք է, մյուս կեսը՝ վայրէջք, և որ վայրէջքի ժամանակ մարդու օրերն այլևս իրեն չեն պատկանում, և որ դրանք կարող են վերցվել ցանկացած պահի, և որ դրա դեմ ոչինչ չես կարող անել, և լավագույնը իսկապես ոչինչ չանելն է: Հակասությունը, ասենք, նրան չէր սարսափեցնում, որովհետև, ինչպես ավելի ուշ բացատրել էր Տարուին, անկասկած, Աստված գոյություն չունի, հակառակ դեպքում ինչի՞ համար կլինեին քահանաները: Բայց հետագա վիճաբանություններից հետո Տարուն հասկացել էր, որ այդ փիլիսոփայությունն ուղղակիորեն հենվում էր ծերուկի հումորի վրա, որ նրան տալիս էին իր ծխականության հաճախակի որոնումները: Սակայն ծերուկի դիմանկարն ավարտվում էր մի ցանկությամբ, որը խոր էր

թվում և բազմիցս ասվել էր զրուցակցին. նա հույս էր փայփայում մեռնել խոր ծերության տարիքում:

«Սո՞ւրբ է այդ մարդը,– ինքն իրեն հարցնում էր Տարուն և պատասխանում,– այո՛, եթե սրբությունը սովորությունների ամբողջությունն է»:

Միևնույն ժամանակ Տարուն ձեռնարկում է ժանտախտահար քաղաքի մեկ օրվա բավական մանրակրկիտ նկարագրությունը և այդպիսով ճշգրիտ գաղափար տալիս այդ ամռանը մեր համաքաղաքացիների կյանքի ու զբաղմունքների մասին. «Այստեղ ոչ ոք չի ծիծաղում, բացի հարբածներից,– ասում է Տարուն,– իսկ դրանք շատ են ծիծաղում»: Հետո անցնում է բուն նկարագրությանը.

«Վաղ առավոտյան թեթև հովիկներ են փչում դեռևս ամայի քաղաքում: Այդ ժամին՝ գիշերվա վախճանների և ցերեկվա հոգեվարքների արանքում, ժանտախտն ասես մի պահ թուլացնում է իր թափը և կրկին շունչ առնում: Բոլոր խանութները դեռ փակ են: Սակայն մի քանիսի վրա փակցված «Փակ է ժանտախտի պատճառով» գրությունը հավաստում է, որ դրանք շուտով չեն բացվելու մյուսների նման: Քնատ լրագրավաճառները դեռ չեն բղավում վերջին նորությունները, այլ կռացած փողոցների անկյուններում՝ լուսնոտի շարժուձևով իրենց ապրանքն են առաջարկում լամպարներին: Շատ չանցած, արթնանալով առաջին տրամվայների աղմուկից՝ նրանք կտարածվեն ողջ քաղաքով մեկ՝ ձեռքներին բռնած թերթերը, որտեղ ընդգծվում է միայն մեկ բառ՝ ժանտախտ: «Ժանտախտ կլինի՞ աշնանը: Պրոֆեսոր Բ-ն պատասխանում է՝ ոչ: Հարյուր քսանչորս մահացություն. այսպիսին է ինսունչորսերորդ օրվա արդյունքը»: «Չնայած թղթի հետ կապված ճգնաժամին, որն ավելի ու ավելի է սրվում և ստիպում որոշ պարբերականների պակասեցնել էջերի քանակը, լույս է տեսնում մեկ այլ օրաթերթ՝ «Համաճարակի լրատու», որի պարտքն է «մանրակրկիտ օբյեկտիվությամբ տեղեկացնել մեր համաքաղաքացիներին հիվանդության առաջխաղացման կամ նահանջի մասին, նրանց մատակարարել ամենահեղինակավոր վկայությունները համաճարակի հետագա ընթացքի մասին, իր սյունակները սիրահոժար տրամադրել բոլոր նրանց՝ ծանոթ կամ անծանոթ, ովքեր հակված են պայքարելու աղետի դեմ, պահելու

բնակչության բարոյական ոգին, բնակչությանը փոխանցելու իշխանությունների ձեռնարկումները և մի խոսքով՝ համախմբելու բոլոր բարի կամքի տեր անձանց ավելի արդյունավետ պայքարելու մեզ հարվածող չարիքի դեմ»: Իրականում այդ օրաթերթը շատ արագ սահմանափակվեց նոր ապրանքների գովազդները տպագրելով, որոնք հույժ անհրաժեշտ էին ժանտախտը կանխարգելելու համար:

Առավոտյան ժամը վեցի մոտերքը բոլոր այդ լրագրերը սկսում են վաճառվել հերթերում, որ գոյանում են խանութների դռների առջև՝ բացվելուց մեկ ժամ առաջ, իսկ հետո՝ լեփ-լեցուն տրամվայներում, որոնք գալիս են արվարձաններից: Տրամվայը դարձել է միակ փոխադրամիջոցը և շարժվում է մեծ դժվարությամբ, որովհետև պայթելու աստիճան լեփ-լեցուն է սանդղակներից ու դռներից կախված մարդկանցով: Հետաքրքրական բան է սակայն, որ բոլոր ուղևորները, որքան հնարավոր է, մեջքով են շրջվում փոխադարձ վարակումից խուսափելու համար: Կանգառներում տրամվայը դատարկվում է տղամարդկանց ու կանանց հսկայական բեռից, որոնք շտապում են հեռանալ միմյանցից և մենակ մնալ: Հաճախ առաջանում են իրարանցումներ միայն և միայն վատ տրամադրության պատճառով, որը դառնում է խրոնիկական:

Առաջին տրամվայների անցնելուց հետո քաղաքը քիչ-քիչ արթնանում է. դռներն են բացում առաջին գարեջրատները, կանգնակների վրա կան գրություններ՝ «Սուրճ չկա», «Շաքարը ձեզ հետ բերեք» և այլն, և այլն: Հետո բացվում են կրպակները, աշխուժանում են փողոցները: Միևնույն ժամանակ բարձրանում է արևը, և քիչ-քիչ շոգը կապարագույն է դարձնում հուլիսյան երկինքը: Այդ ժամին նրանք, ովքեր ոչինչ չունեն անելու, համարձակվում են անցնել ծառուղիներով: Մարդկանց մեծամասնությունն ասես որոշել է ժանտախտին հալածել՝ ցուցադրելով իրենց շքեղ զարդերը: Ամեն օր՝ մոտ ժամը տասնմեկի մոտերքը, քաղաքի գլխավոր փողոցներում տեղի է ունենում երիտասարդ տղամարդկանց ու կանանց շքերթ, որտեղ զգացվում է ապրելու այն կիրքը, որն աճում է մեծ դժբախտությունների ընդերքում: Եթե համաճարակն ավելի է ծավալվում, ապա բարոյականության շրջանակները նույնպես ընդլայնվում են:

Շուտով մենք կրկին կտեսնենք միլանյան ցոփ խրախճանքներ շիր-մաթմբերի շուրջը:

Կեսօրին մի ակնթարթում լցվում են ռեստորանները: Շատ չանցած՝ դռների առջև տեղ չունեցողները հերթեր են գոյացնում: Երկինքը սկսում է գունազրկվել ուժգին շոգից: Հսկայական հովհարների ստվերում կերակրվողների թեկնածուներն իրենց հերթին են սպասում արևից շիկացած փողոցի եզրին: Եթե ռեստորաններն այդպես պաշարված են լինում, պատճառն այն է, որ նրանք հեշտացնում են սննդի հայթայթման հարցը: Սակայն նրանք չեն անցկացնում վարակման տագնապը: Հաճախորդներն ահագին ժամանակ են կորցնում՝ համբերատարորեն մաքրելով իրենց սպասքը: Վերջերս որոշ ռեստորաններում հայտնվեցին ազդագրեր. «Այստեղ սպասքը եռացված է»: Բայց քիչ-քիչ նրանք հրաժարվեցին ամեն տեսակի գովազդներից, որովհետև հաճախորդները, միևնույն է, ստիպված էին գալ: Հաճախորդը, ի դեպ, ծախսում է հաճույքով: Ամենաբարձրորակ և այդպիսին համարվող գինիներից, ամենաթանկ խորտիկներից սկսվում են անզուսպ խրախճանքները: Երևի խուճապային տեսարան էր ստեղծվել մի ռեստորանում, երբ հաճախորդներից մեկը, իրեն վատ զգալով, գույնը գցել էր, վեր էր կացել և երերալով հազիվ հասցրել դուրս գալ:

Ժամը երկուսին մոտ քաղաքը քիչ-քիչ դատարկվում է: Սա այն պահն է, երբ փողոցում դեմ առ դեմ են ելնում լռությունը, փոշին, արևն ու ժանտախտը: Մեծ ու գորշ տների ամբողջ երկայնքով անդադրում ծորում է տապը: Դրանք երկարատև ժամերն են բանտարկության, որոնք ավարտվում են մարդաշատ ու շատախոս քաղաքի վրա թափվող բոցավառ երեկոներով: Շոգի առաջին օրերին, չգիտես ինչու, երեկոներն ամայանում էին ժամանակ առ ժամանակ: Սակայն հիմա առաջին իսկ զով քամին եթե ոչ հույս, ապա հանգիստ է բերում: Բոլորն այդժամ իջնում են փողոց, փորձում շատախոսելով անջատվել, ցրվել, բարձրաձայն վիճաբանում են կամ հաճոյախոսում, և հուլիսյան ալ երկնքի ներքո քաղաքը, ծանրաբեռնված զույգերով ու աղմկարարներով, ընդառաջ է գնում շնչասպառ գիշերին: Ամեն երեկո մի ոգևորված

ծերունի՝ թաղիքե գլխարկով ու ժապավենակապ փողկապով զարդարուն, զուր է շրջում բազմության մեջ՝ անընդհատ կրկնելով. «Աստված մեծ է, եկեք նրա մոտ», որովհետև բոլորը, ընդհակառակը, աճապարում են դեպի այն բանը, որ վատ են ճանաչում, կամ որն իրենց ավելի հրատապ է թվում, քան Աստված: Սկզբում, երբ մարդիկ կարծում էին, թե սա էլ մյուս հիվանդությունների նման հիվանդություն է, կրոնն իր տեղում էր: Բայց երբ տեսան, որ սա ավելի լուրջ է, հիշեցին վայելքների մասին: Ողջ անձկությունը, որ օրվա ընթացքում դաջվում էր նրանց դեմքերին, տարրալուծվում էր բոցակեզ ու փոշոտ մթնշաղի մեջ մի տեսակ վայրագ գրգռվածությամբ, ապաշնորհ ազատության մեջ, որ տենդացնում էր մի ամբողջ ժողովուրդ:

Ես էլ նրանց նման եմ: Բայց ի՞նչ, մահը սին է ինձ նման մարդկանց համար: Պարզապես երևույթ է, որն ապացուցում է մեր իրավացիությունը»:

* * *

Տարուն ինքն էր խնդրել տեսակցությունը, որի մասին խոսում է իր հուշագրերում: Այդ երեկո, մինչ սպասում էր նրան, Ռիոն նայում էր մորը, որը խելոք նստած էր աթոռին, ճաշասենյակի մի անկյունում: Այդ կինն օրն անցկացնում էր այնտեղ, երբ վերջացնում էր տնային գործերը: Ձեռքերն իրար միացրած ծնկների վրա՝ նա սպասում էր: Ռիոն անգամ համոզված չէր, որ իրեն էր սպասում: Եվ սակայն, հենց գալիս էր, ինչ-որ բան փոխվում էր մոր դեմքին: Այն ամենը, ինչ աշխատանքով ու հոգսաշատ կյանքով նրան հասցրել էր լռակյացության, ասես միանգամից վերակենդանանում էր նրա մեջ: Հետո դարձյալ ընկղմվում էր լռության մեջ: Այդ երեկո մայրը պատուհանից նայում էր այժմ արդեն ամայացած փողոցին, որի լուսավորությունը նվազել էր երկու երրորդով: Եվ միայն հազվադեպ շատ թույլ լապտերիկներ դեռ լույս էին տալիս քաղաքի խավարում:

– Մի՞թե լույսի կրճատված մատակարարումը կպահպանվի ժանտախտի ամբողջ ընթացքում,– հարցրեց տիկին Ռիոն:

– Հավանաբար:

– Գոնե մինչև ձմեռ չտևի: Ձմռանը շատ տխուր կլինի:

– Այո,– պատասխանեց Ռիոն:

Նկատեց իր ճակատին հառած մոր հայացքը: Ռիոն ինքն էլ լավ գիտեր, որ վերջին օրերի անհանգստությունն ու գերհոգնածությունը ավելի էին կնճռոտել դեմքը:

– Այսօր գործերը լավ չէի՞ն:

– Դե, ոչ, սովորականի պես:

Այսինքն՝ Փարիզից ուղարկված նոր շիճուկն ավելի անարդյունավետ էր, քան առաջինը, իսկ վիճակագրական տվյալներն աճում էին: Բայց առաջվա պես կանխարգելիչ շիճուկ ներարկելու հնարավորություն ունեին միայն արդեն վարակված ընտանիքներում: Արդյունաբերական արտադրության մեծ քանակություն կպահանջվեր համընդհանուր օգտագործման համար: Այտուցների մեծ մասը հնարավոր չէր ծակել, կարծես դրանց կարծրանալու ժամանակը եկել էր, իսկ հիվանդները տանջահար էին լինում: Նախորդ օրվանից քաղաքում հայտնաբերվել էին համաճարակի նոր տարատեսակի երկու դեպք: Այժմ ժանտախտը դառնում էր նաև թոքային: Նույն օրը՝ ապակողմնորոշված ոստիկանապետի մոտ խորհրդակցության ժամանակ, ուժասպառ բժիշկները պահանջել և ձեռք էին բերել վարակից խուսափելու նոր միջոցների ձեռնարկման ծրագիր, քանի որ վարակը, բերանից բերան անցնելով, դառնում էր թոքային: Եվ սովորականի նման ոչ ոք ոչինչ չգիտեր:

Նայեց մորը: Շագանակագույն աչքերի գեղեցիկ հայացքը որդու մեջ արթնացրեց անցած տարիների քնքշությունը:

– Վախենո՞ւմ ես, մայրի՛կ:

– Իմ տարիքում շատ բան չկա վախենալու:

– Օրերն արդեն շատ են երկարել, իսկ ես երբեք տանը չեմ լինում:

– Ինձ համար դժվար չէ քեզ սպասելը, եթե գիտեմ, որ գալու ես: Եվ երբ այստեղ չես, ենթադրում եմ՝ ինչ ես անում: Նորություններ կա՞ն:

– Այո՛, ամեն ինչ լավ է, եթե հավատամ վերջին հեռագրին: Բայց գիտեմ, որ այդպես գրում է ինձ հանգստացնելու համար:

Դռան զանգը հնչեց: Բժիշկը ժպտաց մորը և գնաց բացելու: Սանդղահարթակի կիսախավարում մոխրագույն զգեստով Տարուն արջի տեսք ուներ: Ռիոն այցելուին հրավիրեց նստել գրասեղանի առջև, իսկ ինքը կանգնած մնաց բազկաթոռի ետևում: Նրանք իրարից բաժանված էին գրասեղանին դրված սենյակը լուսավորող միակ լապտերով:

– Ես գիտեմ,– սկսեց Տարուն առանց առաջաբանի,– որ ձեզ հետ կարող եմ խոսել անկեղծորեն:

Ռիոն լուռ հաստատեց նրա խոսքերը:

– Տասը օրից կամ մեկ ամսից դուք այլևս ոչ մի օգուտ չեք կարող տալ այստեղ, իրադարձություններն առաջ են անցել ձեզնից:

– Ճիշտ է,– ասաց Ռիոն:

– Սանիտարական ծառայությունը վատ է կազմակերպված: Չեն հերիքում ո՛չ մարդիկ, ո՛չ ժամանակը:

Ռիոն դարձյալ ընդունեց, որ դա ճշմարտություն է:

– Ես լսել եմ, որ պրեֆեկտուրան մտադիր է ստեղծել քաղաքացիական մի ծառայություն, որպեսզի ստիպի առողջ մարդկանց մասնակցել ընդհանուր փրկարարական աշխատանքներին:

– Ձեր տեղեկությունները ճիշտ են: Բայց արդեն մեծ դժգոհություն կա, և ոստիկանապետը վարանում է:

– Ինչո՞ւ չեն ներգրավում կամավորներին:

– Փորձել են, բայց արդյունքներն աննշան են:

– Փորձել են պաշտոնական ճանապարհով՝ գրեթե չհավատալով հաջողությանը: Նրանք զուրկ են երևակայությունից, որովհետև երբեք չեն գտնվել աղետի լայնություններում: Եվ դեղամիջոցները, որ օգտագործում են իրենց երևակայությամբ, չեն բարձրանում հարբուխի դեմ պայքարելու միջոցների մակարդակից: Եթե մենք նրանց թողնենք, նրանք կկործանվեն, և մենք էլ՝ նրանց հետ:

– Հնարավոր է,– ասաց Ռիոն:– Պետք է ձեզ ասեմ, որ մտածել եմ կալանավորների մասին, որ նրանց ներգրավեմ ծանր գործերի մեջ:

– Ես կնախընտրեի, որ դրանք ազատ մարդիկ լինեին:

– Ես՝ նույնպես: Բայց ինչո՞ւ ի վերջո:

– Սարսափում եմ մահապարտությունից:

Ռիոն նայեց Տարուին.

– Եվ ի՞նչ:

– Այն, որ ծրագրել եմ կազմակերպել սանիտարական կամավոր ջոկատներ: Արտոնություն տվեք ինձ դրանով զբաղվելու, իսկ ղեկավարներին մի կողմ թողեք: Առանց դրա էլ նրանք շատ գործ ունեն: Ես ամեն տեղ ընկերներ ունեմ, նրանք առաջին բջիջը կկազմեն: Բնականաբար ես նույնպես կմասնակցեմ:

– Հուսով եմ՝ չեք կասկածում, որ ձեր առաջարկը կընդունեմ ուրախությամբ,– ասաց Ռիոն:– Մարդ միշտ օգնության կարիք ունի, հատկապես մեր գործում: Ինձ վրա եմ վերցնում ձեր առաջարկը պրեֆեկտուրայում անցկացնելը: Բացի այդ, նրանք ընտրություն չունեն: Բայց...

Ռիոն մտածում էր:

– Բայց այդ աշխատանքը, ինքներդ էլ լավ եք հասկանում, մահացու վտանգ է պարունակում: Ամեն դեպքում ես պարտավոր եմ ձեզ նախազգուշացնել: Լա՞վ եք մտածել:

Տարուն զննում էր նրան իր մոխրագույն աչքերով:

– Ի՞նչ կարծիքի եք Պանլուի քարոզի մասին, բժի՛շկ:

Հարցն այնքան բնական ինչեց, որ Ռիոն նույնպես պատասխանեց միանգամայն բնական:

– Ես կյանքս շատ եմ անցկացրել հիվանդանոցներում, որպեսզի կարողանամ ընդունել համընդհանուր պատժի գաղափարը: Բայց գիտե՞ք ինչ, քրիստոնյաները երբեմն խոսում են այդ մասին՝ իրականում չհավատալով իրենց ասածներին: Նրանք ավելի լավն են, քան թվում են:

– Այսուհանդերձ, դո՞ւք էլ Պանլուի նման կարծում եք, թե ժանտախտը բարեգործություն է անում, բացում է մարդկանց աչքերը, ստիպում է մտածել:

Բժիշկն անհամբերությամբ թափահարեց գլուխը.

– Ինչպես աշխարհի բոլոր հիվանդությունները: Բայց այն, ինչ ճիշտ է աշխարհի մյուս ցավերի վերաբերյալ, նույնքան ճիշտ է նաև ժանտախտի վերաբերյալ: Նա կարող է ծառայել ոմանց հասունացմանը: Սակայն տեսնելով ժանտախտի բերած թշվառությունն ու

ցավը՝ պետք է կույր լինես, խելագար կամ ստոր, որպեսզի կարողանաս հանդուրժել այդ հիվանդությունը:

Ռիոն խոսում էր՝ գրեթե չբարձրացնելով ձայնը: Բայց Տարուն ձեռքը թափ տվեց՝ ասես ցանկանալով հանգստացնել նրան: Նա ժպտում էր:

– Այո՛,– ասաց Ռիոն՝ թոթվելով ուսերը:– Բայց դուք չպատասխանեցիք իմ հարցին, լավ մտածե՞լ եք:

Տարուն ավելի լավ տեղավորվեց բազկաթոռի մեջ և գլուխը մոտեցրեց լույսին:

– Բժիշկ, դուք հավատո՞ւմ եք Աստծուն:

Այդ հարցը դարձյալ տրված էր բնական ձևով:

Բայց այս անգամ Ռիոն տատանվեց:

– Ոչ: Բայց դա ի՞նչ նշանակություն ունի: Ես գիշերվա խավարում եմ և ջանում եմ այնտեղ լույս նշմարել: Վաղուց արդեն դա առանձնահատուկ բան չեմ համարում:

– Դա ձեզ բաժանո՞ւմ է Պանլուից:

– Չեմ կարծում: Պանլուն գիտնական է, նա շատ մահ չի տեսել և դրա համար էլ խոսում է ճշմարտության անունից: Բայց անգամ ամենափոքր գյուղի քահանան, որը ղեկավարում է իր ծխականներին և լսել է մեռնողի վերջին շունչը, մտածում է ինձ նման: Նա նախ կաշխատի բուժել ցավը և հետո միայն ցուցադրել նրա առավելությունները:

Ռիոն վեր կացավ, նրա դեմքն այժմ ստվերի մեջ էր:

– Թողնենք դա,– ասաց նա,– քանի որ չեք ուզում պատասխանել:

Տարուն ժպտաց, բայց անշարժ մնաց իր բազկաթոռում:

– Կարո՞ղ եմ պատասխանել հարցով:

Այժմ բժշկի հերթն էր ժպտալու.

– Առեղծվածնե՞ր եք սիրում,– ասաց նա:– Առա՛ջ գնանք:

– Ահավասիկ,– ասաց Տարուն:– Ինչո՞ւ դուք ինքներդ այդքան գթառատություն եք ցուցաբերում, եթե չեք հավատում Աստծուն: Ձեր պատասխանը թերևս օգնի ինձ, որ ես էլ պատասխանեմ:

Կիսախավարի միջից բժիշկը դուրս չեկավ: Նա ասաց, որ եթե հավատար ինչ-որ ամենակարող Աստծու, ապա կդադարեր բուժել մարդկանց՝ այդ հոգսը թողնելով նրան: Բայց ոչ ոք աշխարհում, ոչ էլ

անգամ Պանլուն, որ կարծում է, թե հավատում է, ոչ ոք չի հավատում այսօրինակ Աստծուն, քանզի ոչ ոք չի տրվում նրա կամքին ամբողջությամբ, և այս հարցում առնվազն ինքը՝ Ռիոն, կարծում է, որ ճշմարիտ ուղղու վրա է՝ պայքարելով այս արարված աշխարհի դեմ:

– Ա՛,– ասաց Տարուն,– ուրեմն դա այն գաղափարն է, որ դուք իրագործում եք ձեր մասնագիտությամբ:

– Մոտավորապես,– պատասխանեց բժիշկը՝ քայլելով դեպի լույսը:

Տարուն կամացուկ շվվացրեց, և բժիշկը հայացքը հառեց նրա վրա:

– Այո՛,– ասաց նա,– դուք երևի կասեք, որ պետք է գոռոզություն ունենալ: Բայց ես, հավատացեք ինձ, հենց այդ անհրաժեշտ գոռոզությունն ունեմ: Ես չգիտեմ ինչ է ինձ սպասվում, չգիտեմ ինչ է լինելու այս ամենից հետո: Այս պահին կան հիվանդներ, և պետք է նրանց բուժել: Հետո նրանք մտորումների ժամանակ կունենան, և ես՝ նույնպես: Բայց հիմա ամենահրատապը նրանց բուժելն է: Ես նրանց պաշտպանում եմ, որքան կարող եմ: Այս է եղածը:

– Ումի՞ց:

Ռիոն շրջվեց պատուհանի կողմը: Նա հեռվից գուշակում էր ծովի առկայությունը հորիզոնի ամենաթանձր խավարում: Միայն իր հոգնությունն էր զգում և միաժամանակ պայքարում էր հանկարծակի ու անխոհեմ ցանկության դեմ՝ ավելի շատ վստահել այդ առանձնահատուկ մարդուն, որին, սակայն, ընդունում էր եղբայրաբար:

– Ոչինչ չգիտեմ, Տարու, երդվում եմ, որ ոչինչ չգիտեմ: Երբ սկսեցի աշխատել այս մասնագիտությամբ, ինչ-որ ձևով վերացական էի անում ամեն ինչ, որովհետև դրա կարիքն ունեի, որովհետև դա ևս մի դիրք էր, ինչպես մյուսները, մեկն այն մասնագիտություններից, որին ձգտում են երիտասարդները: Գուցե նաև այն պատճառով, որ այն հատկապես դժվար հասանելի էր ինձ նման բանվորի որդու համար: Եվ հետո, պետք էր տեսնել՝ ինչպես են մեռնում: Գիտե՞ք, որ կան մարդիկ, որոնք հրաժարվում են մեռնելուց: Երբևէ լսե՞լ եք մեռնող կնոջ ճիչը՝ «Ո՛չ, ո՛չ, երբեք»: Ես լսել եմ: Եվ այդ ժամանակ հասկացա, որ անկարող եմ դրան վարժվել: Ես երիտասարդ էի,

և իմ զզվանքն ուղղված էր աշխարհում եղած կարգի դեմ: Ժամանակի ընթացքում ավելի համեստ եմ դարձել: Միայն թե երբեք չկարողացա վարժվել մահվան տեսարանին: Դրանից ավելին չգիտեմ: Բայց ի վերջո...

Ռիոն լռեց և նստեց: Զգաց, որ բերանը չորացել է:

– Ի վերջո...– մեղմորեն ասաց Տարուն:

– Ի վերջո...– շարունակեց բժիշկը և նորից վարանեց՝ ուշադիր նայելով Տարուին,– դա այնպիսի բան է, որ ձեզ նման մարդը կարող է հասկանալ, չէ՞, եթե աշխարհի կարգը մահն է, գուցե Աստծու համար ավելի լավ կլիներ, որ իրեն չհավատային և միահամուռ ուժերով պայքարեին մահվան դեմ՝ չհառելով հայացքն առ երկինք, որտեղ նա լռում է:

– Այո՛,– հավաստեց Տարուն,– ես կարող եմ հասկանալ: Սակայն ձեր հաղթանակները կլինեն միշտ ժամանակավոր: Սա է խնդիրը:

Ռիոն կարծես մռայլվեց:

– Գիտեմ, միշտ այդպես կլինի: Բայց դա պատճառ չէ պայքարը դադարեցնելու համար:

– Ո՛չ, դա պատճառ չէ: Բայց կարող եմ պատկերացնել, թե ինչ կարող է լինել ժանտախտը ձեզ համար:

– Այո՛,– ասաց Ռիոն,– մի անվերջանալի պարտություն:

Տարուն մի պահ անթարթ նայեց բժշկին, հետո վեր կացավ և ծանրաքայլ գնաց դեպի դուռը: Ռիոն՝ նրա ետևից: Եվ արդեն հասնում էր նրան, երբ Տարուն, որն ասես նայում էր իր ոտքերին, հանկարծ հարցրեց.

– Ո՞վ է ձեզ այդ ամենը սովորեցրել:

Անմիջապես հետևեց պատասխանը.

– Թշվառությունը:

Ռիոն բացեց առանձնասենյակի դուռը և միջանցքում ասաց Տարուին, որ ինքն էլ է դուրս գալիս նրա հետ. հարկ էր այցելել արվարձանում ապրող մի հիվանդի: Տարուն առաջարկեց ուղեկցել նրան: Բժիշկը համաձայնեց: Միջանցքի վերջում նրանք հանդիպեցին տիկին Ռիոյին, որին և բժիշկը ներկայացրեց Տարուին.

– Ընկերս է,– ասաց նա:

https://1915.info

– Օ՛, ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալու համար,– ասաց տիկին Ռիոն:

Երբ նա գնաց, Տարուն նայեց նրա ետևից: Սանդղահարթակի վրա բժիշկն ապարդյուն ճիգեր գործադրեց, որ վառի լույսը: Աստիճանները խոր խավարի մեջ էին: Բժիշկը մտածում էր, թե արդյոք դա խնայողության մի նոր ձեռնարկման արդյունք չէ՞ր: Բայց հնարավոր չէր իմանալ: Արդեն ահագին ժամանակ էր, որ քաղաքում, տներում ամեն բան փչանում էր: Գուցե պարզապես պատճառն այն էր, որ մեր բարապաններն ու համաքաղաքացիներն ընդհանրապես այլևս ոչնչի նկատմամբ հոգ չէին տանում: Բայց բժիշկն այլևս ժամանակ չունեցավ մտորելու, քանզի Տարուի ձայնը հնչեց իր ետևից.

– Եվս մեկ խոսք, բժիշկ, անգամ եթե այն ձեզ համար ծիծաղելի հնչի: Դուք իրավացի եք:

Ռիոն թոթվեց ուսերը, չնայած Տարուն մթության մեջ ոչինչ չտեսավ:

– Բայց իսկապես ես ոչինչ չգիտեմ: Իսկ դուք, դուք ի՞նչ գիտեք այդ մասին:

– Օ՛,– ասաց Տարուն առանց հուզվելու,– ես ամեն ինչ գիտեմ:

Բժիշկը կանգ առավ, և նրա ետևում Տարուի ոտքը մի աստիճան սահեց ցած: Բայց բռնելով Ռիոյի ուսից՝ Տարուն պահեց հավասարակշռությունը:

– Կարծում եք՝ ամեն ինչ գիտե՞ք կյանքում,– հարցրեց բժիշկը:

Պատասխանը մթության մեջ հնչեց նույն հանգիստ հնչերանգով.

– Այո՛:

Երբ դուրս եկան փողոց, հասկացան, որ արդեն բավական ուշ է՝ գուցե ժամը տասնմեկը: Քաղաքը համրացած էր՝ լի միայն կամացուկ շշուկներով: Ինչ-որ տեղ՝ շատ հեռվում, հնչեց շտապօգնության մեքենայի շչակը: Մեքենա նստեցին, և Ռիոն գործի դրեց շարժիչը:

– Պետք է վաղը հիվանդանոց գաք՝ կանխարգելիչ պատվաստանյութ ստանալու,– ասաց նա:– Բայց մինչ այս պատմության մեջ մտնելը, պետք է մեկընդմիշտ հիշեք, որ երեքից մեկ հնարավորություն ունեք դրանից փրկվելու:

– Այդ հաշվարկներն անիմաստ են, բժիշկ, դուք ինձնից լավ գիտեք: Հարյուր տարի առաջ ժանտախտի համաճարակը սպանեց Պարսկաստանի մի քաղաքի բոլոր բնակիչներին, ավելի ճշգրիտ, բացի մի մարդուց՝ մեռածներին լողացնողից, որը ոչ մի րոպե չէր դադարեցրել իր գործը:

– Նշանակում է՝ նրան բախտ է վիճակվել երրորդը լինել,– ասաց Ռիոն՝ հանկարծ ձայնն ավելի խլացնելով:– Բայց ճշմարիտ է, որ մենք շատ բան ունենք սովորելու այս հարցում:

Այժմ նրանք ընթանում էին արվարձաններով: Մեքենայի լուսարձակները լուսավորում էին ամայի փողոցները: Կանգ առան: Երբ դուրս եկան մեքենայից, Ռիոն հարցրեց Տարուին, թե կուզե՞նա մտնել հիվանդի մոտ, և Տարուն պատասխանեց՝ այո՛: Երկնքից իջնող մի արտացոլանք լուսավորում էր նրանց դեմքերը: Հանկարծ Ռիոն բարեկամաբար քրքջաց.

– Ասացեք, Տարու,– հարցրեց նա,– ի՞նչն է ձեզ դրդում զբաղվել այս գործով:

– Չգիտեմ: Իմ բարոյախոսությունը:

– Ո՞րն է դա:

– Հասկացողությունը:

Տարուն շրջվեց դեպի տունը, և Ռիոն այլևս չտեսավ նրա դեմքը, մինչև այն պահը, երբ մտան ծեր ասթմատիկի բնակարանը:

* * *

Հենց հաջորդ օրվանից Տարուն գործի անցավ և հավաքեց առաջին թիմը, որին հաջորդելու էին շատ ուրիշները:

Պատմիչը սակայն մտադիր չէ այս սանիտարական ձևավորումներին ավելի մեծ կարևորություն տալ, քան իրականում նրանք ունեին: Ճիշտ է, հակառակ դեպքում մեր համաքաղաքացիներն այսօր կտրվեին գայթակղությանը և կչափազանցեին այդ խմբերի դերը: Բայց պատմիչն ավելի շուտ հակված է հավատալու, որ գեղեցիկ գործողություններին մեծ կարևորություն տալով, ի վերջո անուղղակիորեն հարգանքի տուրք ես մատուցում հենց չարիքին: Քանզի կարելի է հեշտությամբ կարծել, թե գեղեցիկ արարքները

բարձր են գնահատվում միայն այն պատճառով, որ դրանք հազվադեպ են, իսկ չարությունն ու անտարբերությունը շատ ավելի հաճախակի հանդիպող շարժիչներ են մարդկանց արարքներում: Պատմիչն այս կարծիքը չի կիսում: Չարիքը, որ կա աշխարհում, գրեթե միշտ անգիտության արդյունք է, և բարի կամքը կարող է պատճառել նույնքան վնաս, որքան չարիքը, եթե այդ բարի կամքը լուսավորված չէ: Մարդիկ ավելի շուտ բարի են, քան չար, բայց ըստ էության՝ սա չէ խնդիրը: Սակայն մարդիկ ավելի կամ պակաս չափով անգիտության մեջ են, և դա է, որ կոչում են առաքինություն կամ արատ, իսկ ամենաահավոր արատը տգիտություն կոչվող արատն է, որն իրեն ամենագետ է կարծում և ուրեմն իրեն արտոնություն է տալիս սպանելու: Մարդասպանի հոգին կույր է, և չկա իսկական բարություն, ոչ էլ գեղեցիկ սեր առանց ճշմարիտ պայծառատեսության:

Ահա թե ինչու մեր սանիտարական խմբերը, որոնք իրականացան Տարուի շնորհիվ, պետք է գնահատվեն օբյեկտիվ գոհունակությամբ: Ահա թե ինչու պատմիչն իրեն չի դարձնի պերճախոս երգասանը կամքի ու հերոսականության, որոնց նա տալիս է ողջախոհ կարևորություն: Բայց նա շարունակելու է մնալ պատմաբանը մեր համաքաղաքացիների բզկտված ու խստապահանջ սրտերի, որոնց այդ ժամանակ այդպիսին դարձրեց ժանտախտը:

Նրանք, ովքեր նվիրվեցին սանիտարական խմբերի գործունեությանը, մեծ վաստակի չհասան, քանզի իրոք գիտեին, որ դա միակ բանն էր, որ կարող էին անել, և որ իրենց որոշումն այստեղ այլ կերպ պատկերացնելն անհավատալի կլիներ: Այդ խմբերն օգնեցին մեր համաքաղաքացիներին ավելի խորանալ ժանտախտի մեջ, և նրանց մասամբ համոզեցին, որ քանի դեռ կար այդ հիվանդությունը, հարկ էր անել այն ամենը, ինչ անհրաժեշտ էր դրա դեմ պայքարելու համար: Քանզի ժանտախտը, այդպիսով դառնալով ոմանց պարտականությունը, ակնհայտ էր դարձնում, թե իրականում դա ում գործն է, այսինքն՝ բոլորի:

Դա, իհարկե, լավ էր: Բայց ոչ մեկը չի շնորհավորի ուսուցչին այն բանի համար, որ նա ուսուցանում է «երկուսին գումարած երկու հավասար է չորսի»: Նրան գուցե շնորհավորեն այդ գեղեցիկ

մասնագիտությունն ընտրելու համար: Ասենք, ուրեմն գովելի էր, որ Տարուն և այլոք ընտրել էին այդ ուղին՝ ապացուցելու մարդկանց, թե «երկուսին գումարած երկու հավասար է չորսի», և ոչ թե հակառակը, բայց ասենք նաև, որ այդ բարի ցանկությունն ընդհանուր է ուսուցչի հետ, բոլոր նրանց հետ, ովքեր ունեն նույն սիրտը, ինչ որ իրենց ուսուցիչը, և որ այդ պատվարժան մարդիկ շատ ավելի բազմաթիվ են, քան կարծում են. առնվազն այսպիսին է պատմիչի կարծիքը. վերջինս, ի դեպ, շատ լավ նկատում է դիտողությունը, որ կարող են իրեն անել, այն է՝ այդ մարդիկ վտանգի էին ենթարկում իրենց կյանքը: Բայց պատմության մեջ միշտ հասնում է այն պահը, երբ նա, ով համարձակվում է ասել, թե երկուսին գումարած երկու հավասար է չորսի, մահվամբ է պատժվում: Ուսուցիչը շատ լավ գիտի դա: Եվ խնդիրն այն չէ, որ իմանաս, թե ինչ փոխհատուցում կամ պատիժ է սպասվում նման դատողության դեպքում: Խնդիրն այն է, որ իմանաս՝ երկուսին գումարած երկու հավասար է չորսի: Մեր համաքաղաքացիներին, ովքեր վտանգում էին այն ժամանակ իրենց կյանքը, պետք էր վճռել՝ այո կամ ոչ, իրենք ժանտախտի մե՞ջ էին, և պե՞տք էր պայքարել նրա դեմ՝ այո կամ ոչ:

Մեր քաղաքի շատ նորաթուխ բարոյախոսներ այդ ժամանակ ասում էին, որ ոչինչ չպետք է անել և պետք է ծնկի գալ: Ե՛վ Տարուն, և՛ Ռիոն, և՛ նրանց բարեկամները կարող էին այսպես թե այնպես պատասխանել, բայց եզրակացությունը միշտ կլիներ իրենց իմացածը՝ պետք է պայքարել այս կամ այն կերպ և ծնկի չգալ: Ամբողջ խնդիրն այս էր՝ թույլ չտալ զոհվելու որքան հնարավոր է շատ մարդկանց և չընդունել վերջնական բաժանումը: Դրա համար կար միայն մեկ միջոց՝ պայքարել ժանտախտի դեմ: Այս ճշմարիտ գաղափարը սքանչելիք չէր, այլ ընդամենը հետևություն:

Ահա թե ինչու, միանգամայն բնական էր, որ ծերուկ Կաստելը ներդներ իր ողջ ինքնավստահությունն ու եռանդը ձեռքի տակ ունեցած նյութերով տեղում շիճուկներ արտադրելու համար: Եվ նա ու Ռիոն հույս ունեին, որ հենց քաղաքը վարակող բացիլի մշակումով պատրաստված շիճուկն ավելի ուղղակի արդյունավետություն կունենա, քան դրսից եկած շիճուկները, քանի որ տեղական բացիլը

մի քիչ տարբերվում էր ժանտախտի՝ դասականորեն նկարագրված բացիլից: Կաստելը հույս ուներ շատ արագ ստանալ իր առաջին շիճուկը:

Ահա թե ինչու նույնքան բնական էր, որ հերոսականությունից զուրկ Գրանն այժմ դառնար սանիտարական խմբերի, այսպես ասած, վարչական կենտրոնը: Տարուի ստեղծած խմբերի մի մասն իր վրա վերցրեց խիտ բնակեցված թաղամասերում կանխարգելիչ օգնություն ցույց տալու գործը: Նրանք փորձում էին այնտեղ հաստատել անհրաժեշտ հիգիենա, ձեղնահարկերի ու մառաններ հաշվարկն էին անում, որոնք դեռ ախտահանված չէին: Ձևավորված թիմերի մի մասն էլ օգնում էր տնային այց կատարող բժիշկներին, ապահովում ժանտախտով վարակվածների տեղափոխումը, և որոշ ժամանակ անց, անգամ մասնագիտացված անձնակազմի բացակայության պահին վարում էին մեքենաները՝ փոխադրելով հիվանդներին ու մեռածներին: Այդ ամենը պահանջում էր վիճակագրական աշխատանք, որ Գրանը համաձայնել էր կատարել:

Այս տեսակետից պատմիչը համարում է, որ Ռիոյից և Տարուից ավելի Գրանն էր իսկական ներկայացուցիչն այն կայուն առաքինության, որը ոգեշնչում էր սանիտարական խմբերին: Նա «այո» էր ասել առանց տատանվելու, իրեն բնորոշ բարի կամքով: Միայն խնդրել էր, որ իրեն օգտագործեին «փոքրիկ գործերում», բարդ գործերի համար նա շատ ծեր էր. ժամը տասնութից քսանը՝ այդ ժամանակը, նա կարող էր տրամադրել ընդհանուր գործին: Եվ քանի որ Ռիոն ջերմագին շնորհակալություն էր հայտնել, նա զարմացած ասել էր. «Սա չէ ամենադժվար բանը: Ժանտախտ է, պետք է պաշտպանվել, պարզ է: Ա՛յ, եթե ամեն բան այդքան հեշտ լինե՛ր»: Եվ վերադարձել էր իր չգրվող նախադասությանը: Երբեմն երեկոները, երբ հաշվարկներն ավարտված էին լինում, Ռիոն զրուցում էր Գրանի հետ: Այդ զրույցներին քիչ-քիչ սկսեց մասնակցել նաև Տարուն, և Գրանը անթաքույց հաճույքով էր իր սիրտը բացում այս երկու ընկերների առջև: Վերջիններս հետաքրքրությամբ էին հետևում այն համբերատար աշխատանքին, որ նա կատարում էր ժանտախտի

մոլեգնած օրերին: Ի վերջո նրանք նույնպես լիցքաթափվեցին այդ աշխատանքում:

«Ինչպե՞ս է ամազոնուհին»,– հաճախ հարցնում էր Տարուն: Եվ Գրանը պատասխանում էր միշտ նույն ձևով՝ ծռմռված ժպիտը դեմքին. «Վարգում է, վարգում»: Մի երեկո Գրանն ասաց, որ վերջնականապես հանել էր իր ամազոնուհու վայելչագեղ մակդիրը և այսուհետ նրան որակելու էր սլացիկ ածականով: «Ավելի շոշափելի է»,– ավելացրել էր նա: Մեկ ուրիշ անգամ իր երկու ունկնդիրներին նա կարդաց առաջին նախադասությունը՝ այսպես ձևափոխված. «Մի մայիսյան գեղեցիկ առավոտ մի սլացիկ ամազոնուհի, հրաշալի շիկակարմիր աշխետ հեծած, անցնում էր Բուլոնյան անտառի ծաղկած ծառուղիներով»:

– Լավ չէ՞,– ասաց Գրանը,– նրան ավելի լավ ես տեսնում, և ես նախընտրեցի «մայիսյան մի գեղեցիկ առավոտը», որովհետև «մայիս ամիսը» մի քիչ դանդաղեցնում էր ձիու վարգը:

Այնուհետև շատ մտահոգված էր հրաշալի մակդիրով: Ըստ նրա՝ սա այնքան էլ խոսուն չէր, իսկ նա փնտրում էր մեկ ուրիշ եզրույթ, որը լուսանկարչի նման իսկույն կնկարեր իր պատկերացրած այդ շքեղ նժույգը: «Հաղլիկը» սազական չէր, առարկայական էր, բայց փոքր-ինչ բացասական իմաստով: «Շողշողունը» մի պահ գրավել էր նրան, սակայն կշռույթի մեջ չէր տեղավորվել: Մի երեկո նա հաղթական հայտարարեց, որ գտել էր. «սև աշխետ ձի»: Իր կարծիքով՝ սևն ուղղակիորեն նշում էր վայելչագեղությունը:

– Հնարավոր չէ,– ասաց Ռիոն:

– Իսկ ինչո՞ւ:

– Աշխետը չի մատնանշում ցեղը, այլ՝ գույնը:

– Ո՞ր գույնը:

– Դե մի գույն, որն ամեն դեպքում սև չէ:

Գրանը շատ հուզված տեսք ուներ:

– Շնորհակալ եմ,– ասաց նա,– բարեբախտաբար դուք այստեղ եք: Հիմա համոզվեցի՞ք, թե որքան դժվար է:

– Ի՞նչ կարծիքի եք շքեղ բառի մասին,– հարցրեց Տարուն:

Գրանը նայեց նրան: Մտածում էր:

– Այո՛,– ասաց նա,– այո՛:

Եվ աստիճանաբար նրա դեմքին ժպիտ էր գծագրվում:

Դրանից որոշ ժամանակ անց նա խոստովանեց, որ ծաղկած բառն իրեն նեղում է: Քանի որ նա, Օրանից ու Մոնտելիմարից բացի, ուրիշ ոչ մի վայրում չէր եղել, մերթընդմերթ հարցեր էր տալիս ընկերներին և խնդրում պատասխանել՝ Բուլոնյան անտառում ծաղկո՞ւմ են ծառուղիները, թե՞ ոչ: Անկեղծորեն ասած՝ ո՛չ Ռիոյի, ո՛չ Տարուի վրա դրանք երբևէ նման տպավորություն չէին թողել, սակայն Գրանի համոզվածությունը նրանց սասանեց: Իսկ ծերուկը ապշած էր նրանց անվստահությունից: «Միայն արվեստագետները գիտեն տեսնել»: Բայց մի անգամ բժիշկը նրան տեսավ չափազանց գրգռված: Նա ծաղկած բառը փոխարինել էր ծաղկալից բառով: Ձեռքերն ուրախությունից իրար էր շփում: «Վերջապես նրանց կարելի է տեսնել, կարելի է զգալ: Հանեք գլխարկները, պարոնայք»: Եվ հաղթանակած կարդաց իր նախադասությունը. «Մի մայիսյան գեղեցիկ առավոտ մի սլացիկ ամազոնուհի, մի հրաշալի աշխետ հեծած, անցնում էր Բուլոնյան անտառի ծաղկալից ծառուղիներով»: Բայց բարձրաձայն ընթերցելով երեք անգամ կրկնվող «մի» անորոշ դերանունով սկսվող նախադասությունը՝ ծերունին զգաց, որ վատ է հնչում և սկսեց կակազել: Նստեց ընկճված տեսքով: Հետո բժշկից գնալու թույլտվություն խնդրեց. մի քիչ մտորել էր պետք:

Այդ ժամանակ էր (այդ մասին հետո իմացանք), որ գրասենյակում ցրվածությունից սկսել էր վրիպակներ թույլ տալ, որոնք ընդունվել էին որպես ցավալի հանգամանքներ, հատկապես այն պահին, երբ քաղաքապետարանը նվազած անձնակազմով ստիպված էր կատարել ծանր պարտականություններ: Բաժնի աշխատանքը տուժեց, և գրասենյակի պետը խիստ հանդիմանեց Գրանին՝ հիշեցնելով, որ նրան վճարում էին մի աշխատանքի համար, որը չէր կատարվում: «Լսել եմ,– ասել էր գրասենյակի պետը,– որ սանիտարական ջոկատներում դուք կամավորական աշխատանք եք կատարում ձեր ծառայությունից դուրս: Դա ինձ չի վերաբերում: Այն, ինչ վերաբերում է ինձ, ձեր աշխատանքն է քաղաքապետարանում: Եվ այս սարսափելի պայմաններում օգտակար լինելու

առաջնային ձևը ձեր պաշտոնական աշխատանքը բարեխղճորեն կատարելն է: Այլապես մնացյալը ոչինչ է»:

– Նա իրավացի է,– ասաց Գրանը Ռիոյին:

– Այո՛, իրավացի է,– հաստատեց բժիշկը:

– Բայց ես իրոք ցրված եմ և չեմ կարող դուրս բերել իմ նախադասության ավարտը:

Նա որոշել էր ջնջել Բուլոնյան բառը՝ կարծելով, թե բոլորը կհասկանան: Բայց այդ ժամանակ նախադասությունը կարծես թե կապվում էր «ծաղիկներին», որը փաստորեն կապվում էր «ծառուղիներին»: Նա մտադրվել էր գրել նաև «անտառի ծաղկալից ծառուղիները» հնարավոր տարբերակը: Բայց այս դեպքում «անտառի» դիրքը՝ ածականից և գոյականից առաջ, կամայականորեն հայտնված առջևում, ասես մաշկի մեջ խրված փուշ լիներ: Բայց նաև պետք է ճիշտն ասել, որ երեկոները նա ավելի հոգնած տեսք էր ունենում, քան Ռիոն:

Այո՛, նա հոգնել էր այդ փնտրտուքներից, որոնք իրեն կլանում էին ամբողջությամբ, բայց այսուհանդերձ շարունակում էր հաշվարկներ անել և անհրաժեշտ վիճակագրական տվյալներ հավաքել սանիտարական ջոկատների համար: Ամեն երեկո նա համբերությամբ հանում էր իր թերթիկները, անցկացնում կորագծերը և դանդաղ ջանում հնարավորինս ճշգրիտ ներկայացնել իրավիճակը: Բավական հաճախ գնում էր Ռիոյի մոտ որևէ հիվանդանոց, նրանից սեղան խնդրում առանձնասենյակում կամ բուժքրոջ սենյակում աշխատելու համար: Տեղավորվում էր այնտեղ իր թղթերով, ճիշտ այնպես, ինչպես քաղաքապետարանի իր սեղանի առջև, և ախտահանիչներից և հենց հիվանդությունից թանձրացած օդում թափահարում էր թերթիկները թանաքը չորացնելու համար: Այդ ժամերին նա ազնվորեն փորձում էր այլևս չմտածել իր ամազոնուհու մասին և անել միայն այն, ինչ պետք էր անել:

Այո՛, եթե իրականում մարդիկ ուզում են, որ իրենց առաջարկեն օրինակներ ու նմուշներ, որոնց անվանում են հերոսներ, և եթե հույժ անհրաժեշտ են նման հերոսներ մեր պատմության մեջ, պատմիչը կառաջարկի հենց այս աննշան և նսեմ հերոսին, որը միայն

բարություն ուներ սրտում և առերևույթ ծիծաղելի մի իդեալ: Դա ճշմարտությանը կտա իր հասանելիքը, գումարմանը՝ իր վերջնական գումարը, որ երկուսին գումարած երկու հավասար է չորսի, իսկ հերոսականությանը՝ երկրորդական և իր արժանի տեղը, և դրանից հետո միայն, բայց ոչ երբեք դրանից առաջ՝ երջանիկ լինելու վեհանձն պահանջը: Դա մեր ժամանակագրությանը կհաղորդի նաև իր ուրույն բնույթը, ինչպիսին պետք է լինի բարի զգացմունքներով ստեղծված պատմությունը, այսինքն՝ զգացմունքներ, որոնք ո՛չ շատ վատ են, ո՛չ էլ շատ հուզավառ, ինչպես նողկալի թատերախաղում:

Բժիշկ Ռիոյի կարծիքն առնվազն այդպիսին էր, երբ կարդում էր լրագրերում կամ ռադիոյով լսում էր կոչերն ու քաջալերանքները, որ արտաքին աշխարհն ուղարկում էր ժանտախտահար քաղաքին: Օդային ու ցամաքային ճանապարհներով ուղարկվող օգնության հետ ամեն երեկո ռադիոալիքներով կամ մամուլով խղճահարական և հիացական մեկնաբանություններ էին թափվում այժմ արդեն միայնակ մնացած քաղաքի վրա: Եվ ամեն անգամ դրանց դյուցազներգական հնչերանգը կամ ճարտասանական ոճը համբերությունից հանում էին բժշկին: Իհարկե, նա գիտեր, որ այդ օգնությունը ձևական չէր: Սակայն այն կարող էր արտահայտվել լոկ պայմանական լեզվով, որի միջոցով մարդիկ ջանում էին արտահայտել այն, ինչը նրանց կապում էր մարդկության հետ: Եվ այդ լեզուն չէր կարող կիրառվել, օրինակ, Գրանի ամենօրյա փոքրիկ գործերում, քանի որ չէր կարող պատկերացում տալ այն մասին, թե ինչ էր նշանակում Գրանը համաճարակի ամենաճանր օրերին:

Երբեմն կեսգիշերին, արդեն ամայի քաղաքի մեծ լռության մեջ բժիշկը պառկում էր անկողնում և կարճատև քուն մտնելուց առաջ միացնում ռադիոընդունիչը: Եվ աշխարհի չորս կողմերից միլիոնավոր կիլոմետրերի միջով անծանոթ ու եղբայրական ձայներ ճախողակ փորձեր էին անում՝ հայտնելու իրենց համերաշխությունը, և իրոք, հաճախ հաջողվում էր հայտնել, սակայն միաժամանակ ի հայտ էր գալիս այն ահավոր անկարողությունը, որ մարդ իրականում չի կարող բաժանել ուրիշի վիշտը, եթե չի զգում սեփական մաշկի վրա: «Օրա՜ն, Օրա՜ն», այս կանչը զուր էր կտրում-անցնում

ծովեր, օվկիաններ, զուր էր Ռիոյին տագնապի մեջ պահում: Շուտով պերճախոսությունն էր հառնում և էլ ավելի հստակորեն երևան հանում հիմնական բաժանումը, որը Գրանին և հռետորին դարձնում էր երկու իրար օտար մարդ: «Օրա՞ն, այո, Օրա՞ն»: «Բայց ո՛չ,– խորհում էր բժիշկը,– միայն մեկ միջոց կա՝ ապրել կամ մեռնել միասին, չկա ուրիշ միջոց: Իսկ դրանք շատ հեռու են միմյանցից»:

* * *

Մինչ ժանտախտը կհասներ իր գագաթնակետին, որի ընթացքում արհավիրքը հավաքում էր իր բոլոր ուժերը քաղաքի վրա նետելու և նրան վերջնականապես տիրելու համար, մեզ մնում է ուրվագծել այն երկարաձիգ, հուսահատ ու միապաղաղ ջանքերը, որ թափում էին Ռամբերի նման հատուկենտ մարդիկ՝ վերագտնելու իրենց երջանկությունը և ժանտախտից խլելու հենց իրենց պատկանող մասը, որ պաշտպանում էին բոլոր տեսակի ոտնձգություններից: Այդ ձևով էին նրանք մերժում իրենց սպառնացող ստրկությունը, և չնայած այդ մերժումն առերևույթ այնքան էլ արդյունավետ չէր, որքան որևէ մեկ ուրիշը, պատմիչն այն կարծիքին է, որ այդ մերժումն իր իմաստն ունի և իր ամբողջ ունայնությամբ և հակասություններով հանդերձ վկայում է նաև այն հպարտության մասին, որ կա մեզնից յուրաքանչյուրի մեջ:

Ռամբերը պայքարում էր՝ դիմակայելու ժանտախտին, որ իրեն չհարվածի: Համոզվելով, որ քաղաքից չի կարող դուրս գալ օրինական ճանապարհով, նա, ինչպես ասել էր Ռիոյին, վճռել էր փնտրել այլ ուղիներ: Լրագրողը սկսել էր սրճարանի մատուցողներից: Սրճարանի մատուցողը ամեն բանից տեղյակ է: Բայց առաջին տղաները, որոնց նա հարցուփորձ էր արել, ավելի շատ տեղյակ էին խիստ պատժամիջոցներից, որ սպասվում էին նման ձեռնարկումների դեպքում: Մի սրճարանում նրան անգամ սադրիչի տեղ էին դրել: Կոթարին պատահաբար հանդիպեց Ռիոյի մոտ, և գործը մի քիչ առաջ գնաց: Այդ օրը Ռամբերը Ռիոյի հետ նորից քննարկել էր ապարդյուն քայլերը, որ լրագրողն արել էր վարչական հիմնարկներում: Մի քանի օր անց Կոթարը փողոցում հանդիպեց Ռամբերին և

https://1915.info

Նրան ընդունեց սրտաբաց, ինչպես վերջերս իրեն պահում էր բոլոր հարաբերություններում.

– Առաջվա պես ոչինչ չկա՞:

– Ոչինչ:

– Չի կարելի հույս դնել գրասենյակների վրա: Նրանք ստեղծված չեն մարդկանց հասկանալու համար:

– Ճիշտ է: Բայց ես ուրիշ բան եմ փնտրում: Դժվար է:

– Այո՛,– ասաց Կոթարը,– գիտեմ:

Նա գիտեր հարցի լուծման մեկ այլ եղանակ, և Ռամբերին, որը շատ զարմացավ, բացատրեց, որ վաղուց նա Օրանի բոլոր սրճարանների մշտական այցելուն է, որ այնտեղ շատ բարեկամներ ունի և տեղյակ է, որ գոյություն ունի այդօրինակ գործողություններով զբաղվող կազմակերպություն. ճշմարտությունն այն էր, որ Կոթարը, որի ծախսերն արդեն գերազանցում էին եկամուտները, խառնված էր սահմանափակ քանակի ապրանքների մաքսանենգային գործերում: Այդպես նա վերավաճառում էր ծխախոտ ու վատորակ խմիչք, որոնց գներն անընդհատ բարձրանում էին, և որոնք իրեն մի փոքրիկ կարողություն էին բերելու:

– Վստա՞հ եք,– հարցրեց Ռամբերը:

– Այո՛, ինձ առաջարկել են:

– Եվ դուք չօգտվեցի՞ք դրանից:

– Կասկածամիտ մի՛ եղեք,– ասաց Կոթարը բարի մարդու տեսքով,– ես չօգտվեցի, որովհետև չեմ ուզում գնալ այստեղից: Ես իմ պատճառներն ունեմ:

Եվ մի պահ լռելուց հետո ավելացրեց.

– Իսկ ձեզ չե՞ն հետաքրքրում, թե ինչ պատճառներ ունեմ:

– Կարծում եմ,– ասաց Ռամբերը,– ինձ չի վերաբերում:

– Ինչ-որ իմաստով, իրոք, դա ձեզ չի վերաբերում: Բայց մյուս կողմից... Դե, մի խոսքով, մի բան է միայն ակնհայտ, որ ժանտախտի սկսվելուց ի վեր ես ինձ ավելի լավ եմ զգում:

Լսելով այս խոսքերը՝ Ռամբերը կարճ կապեց.

– Ինչպե՞ս միանալ այդ կազմակերպությանը:

– Ա՜, դա հեշտ չէ,– ասաց Կոթարը,– եկեք ինձ հետ:

Ցերեկվա ժամը չորսն էր: Ծանր երկնքի տակ քաղաքը մարմանդ եփվում էր: Բոլոր խանութները իջեցրել էին վարագույրները: Սալարկված փողոցներն ամայի էին: Կոթարն ու Ռամբերն անցան կամարաշատ փողոցներով և երկար քայլում էին առանց խոսելու: Դա այն ժամերից մեկն էր, երբ ժանտախտն անտեսանելի էր: Այդ լռությունը, գույների և շարժումների մեռյալ վիճակը նույնպիսի հաջողությամբ կարող էր վերագրվել ամռանը, ինչպես աղետին: Պարզ չէր՝ օդը ծանրացած էր սպառնալիքների՞ց, թե՞ փոշուց ու տապից: Ժանտախտը լավ հասկանալու համար պետք էր շուրջը դիտել ու մտածել: Քանզի այն իրեն մատնում էր միայն բացասական նշաններով: Կոթարը, որ գիտեր հիվանդության նրբությունները, Ռամբերին, օրինակ, ցույց տվեց շների բացակայությունը, որոնք սովորաբար այդ ժամերին հևալով պետք է պառկած լինեին կողքի վրա՝ միջանցքների շեմերին փնտրելով գոնե մի քիչ անհնարին զովություն:

Նրանք քայլեցին Արմավենիների փողոցով, անցան Ձենքերի հրապարակն ու իջան Նավատորմիղի թաղամասը: Ձախ կողմում կանաչով ներկված մի սրճարան փորձում էր պատսպարվել շեղ ձգված դեղին կտավե վարագույրների տակ: Հենց ներս մտան, Կոթարն ու Ռամբերը սրբեցին ճակատները: Հետո տեղ գրավեցին կանաչով ներկված, թիթեղապատ սեղանների առջև՝ պարտեզի ծալովի աթոռների վրա: Սրահը լրիվ դատարկ էր: Օդում բզզում էին ճանճերը: Կանգնակի առջև՝ դեղին վանդակում, լրիվ փետրազուրկ մի թութակ էր կքել իր թառին: Պատերից կախված էին ռազմական տեսարաններ պատկերող հին նկարներ՝ անչափ աղտոտ ու թանձր սարդոստայններով պարուրված: Թիթեղապատ բոլոր սեղանների վրա և հենց Ռամբերի դիմաց չորանում էին հավի ծերտերը, որոնց ծագումը դժվար կլիներ բացատրել, եթե մի մութ անկյունից կարճատև թափթափյունից հետո ցատկոտելով դուրս չգար մի հրաշալի աքլոր:

Այդ պահին թվաց, թե տապն ավելի սաստկացավ: Կոթարը հանեց բաճկոնն ու շրխկացրեց թիթեղապատ սեղանին: Մի փոքրիկ մարդուկ՝ ամբողջովին կորած իրենից երկար, կապտավուն

գոգնոցի մեջ, դուրս եկավ ետնամասից, Կոթարին տեսնելով՝ հեռվից ողջունեց, առաջացավ դեպի նրանց սեղանը, ճանապարհին ոտքի ուժգին հարվածով թռցրեց աքլորին և փետրավորի կչկչոցի միջից հարցրեց, թե ինչո՞վ կարող է ծառայել պարոններին: Կոթարը պատվիրեց սպիտակ գինի և հարցրեց ոմն Գարսիայի մասին: Կարճլիկի ասելով՝ արդեն մի քանի օր էր՝ նա չէր երևացել սրճարանում:

– Ձեր կարծիքով՝ նա կգա՞ այս երեկո:

– Է՛, ի՞նչ իմանամ,– ասաց մատուցողը,– ես հո նրա պոչը չեմ: Իսկ դուք գիտե՞ք նրա գալու ժամը:

– Այո՛, բայց դա այնքան էլ կարևոր չէ: Ես միայն ուզում եմ ընկերոջս ներկայացնել:

Մատուցողը գոգնոցով սրբեց իր խոնավ ձեռքերը:

– Ա՛, ուրեմն պարո՞նն էլ գործ անող է:

– Այո՛,– ասաց Կոթարը:

Կարճլիկը վեր քաշեց քիթը.

– Ուրեմն եկեք երեկոյան: Երեխային կուղարկեմ նրա ետևից:

Հենց դուրս եկան, Ռամբերը հարցրեց, թե ի՞նչ գործի մասին էր խոսքը:

– Մաքսանենգության, բնականաբար: Նրանք ապրանք են անցկացնում քաղաքի դարպասներից և հետո վաճառում բարձր գներով:

– Լա՛վ,– ասաց Ռամբերը:– Ուրեմն նրանք ունեն մեղսակիցներ:

– Իհարկե:

Երեկոյան սրճարանի պատուհանի շերտավարագույրը բարձրացված էր, թութակը չաչանակում էր վանդակում, իսկ միայն ժիլետներով հաճախորդները շուրջկալել էին թիթեղապատ սեղանները: Հենց Կոթարը ներս մտավ, նրանցից մեկը՝ ծղոտե գլխարկը ետ գցած, սպիտակ, լայն բացված վերնաշապիկով, որ ցուցադրում էր այրված հողի գույն ունեցող կուրծքը, վեր կացավ: Հազիվ երեսուն տարեկան էր երևում՝ կանոնավոր դիմագծերով, մաշկը արևից դաբաղված, սև ու փոքրիկ աչքերով, ճերմակ ատամներով և մատներին երկու-երեք մատանի շարած:

– Ողջո՛ւյն,– ասաց նա,– խմենք կանգնակի մոտ:

Նրանք լուռ խմեցին՝ երեք անգամ հերթով հյուրասիրելով իրար:

– Իսկ եթե դո՞ւրս գանք:

Իջան նավահանգիստ, և Գարսիան հարցրեց՝ ի՞նչ էր նրանց ուզածը: Կոթարն ասաց, որ ընկերոջն ուզում էր ծանոթացնել ոչ թե հենց գործի, այլ, ինչպես ինքն ասաց, ելքի համար: Անվերջ ծխելով՝ Գարսիան գնում էր ուղիղ առաջ: Հարցեր էր տալիս, Ռամբերի մասին խոսելիս ասում էր «նա»՝ կարծես չնկատելով նրա ներկայությունը:

– Ի՞նչ նպատակով,– հարցրեց նա:

– Ֆրանսիայում կին ունի:

– Հա՛:

Եվ մի փոքր դադարից հետո հարցրեց.

– Ինչո՞վ է զբաղվում:

– Լրագրող է:

– Իրենց արհեստի մարդիկ շատախոս են:

Ռամբերը լռում էր:

– Բարեկամս է,– ասաց Կոթարը:

Նրանք լուռ շարունակում էին քայլել: Հասել էին կառամատույցներին, որտեղ մուտքն արգելափակված էր մեծ ճաղերով: Բայց նրանք ուղղվեցին դեպի փոքրիկ կրպակը: Այնտեղ վաճառում էին տապակած սարդիններ, որոնց ախորժելի հոտը հասնում էր նրանց:

– Ամեն դեպքում,– եզրափակեց Գարսիան,– դրանով ես չեմ զբաղվում, այլ Ռաուլը: Իսկ նրան դեռ պետք է գտնել: Դժվար գործ է:

– Ա՛,– հարցրեց աշխուժացած Կոթարը,– ուրեմն նա թաքնվո՞ւմ է:

Գարսիան չպատասխանեց: Կրպակի մոտ կանգ առավ և առաջին անգամ նայեց Ռամբերի դեմքին:

– Վաղը չէ մյուս օրը՝ ժամը տասնմեկին, մաքսատների զինանոցի մոտ՝ քաղաքի վերևում:

Ձևացրեց, թե գնում է, բայց կտրուկ շրջվեց մնացածների կողմը.

– Ծախսեր կլինեն,– ասաց նա:

Ասված էր որպես վավերացում:

– Իհարկե,– հաստատեց Ռամբերը:

Մի քանի րոպե անց լրագրողը շնորհակալություն հայտնեց Կոթարին:

– Օ՜, ո՛չ, ինչի՞ համար,– ասաց Կոթարը ուրախ-ուրախ:– Պարզապես ինձ հաճելի է ձեզ ծառայություն մատուցել: Եվ հետո՝ դուք լրագրող եք, օրերից մի օր ինձ կփոխհատուցեք:

Իսկ մի օր հետո Ռամբերն ու Կոթարը մագլցում էին ստվերազուրկ լայն փողոցներով, որոնք տանում էին դեպի քաղաքի բարձրադիր մասը: Մաքսատների զինանոցի մի մասը վերածված էր հիվանդանոցի, և դարպասների առջև բազմություն էր խռնված: Ոմանք հույս ունեին այցելել իրենց հիվանդներին, չնայած դա խիստ արգելված էր, ոմանք էլ ցանկանում էին նոր տեղեկություններ ստանալ՝ իմանալով, որ դրանք ժամ առ ժամ հնացած կլինեն: Ամեն դեպքում հավաքվածները ստեղծել էին մեծ անցուդարձ, և կարելի էր ենթադրել, որ այդ հանգամանքը հաշվի էր առնվել Գարսիայի և Ռամբերի ժամադրությունը նշանակելիս:

– Շատ հետաքրքիր է մեկնելու ձեր համառությունը,– ասաց Կոթարը:– Ի վերջո, այստեղ հետաքրքիր բաներ են տեղի ունենում:

– Ոչ ինձ համար,– պատասխանեց Ռամբերը:

– Այո՛, իհարկե, որոշակի վտանգ կա: Բայց ի վերջո, ժանտախտից առաջ էլ նույնպիսի վտանգ կար, երբ անցնում էիր մի բանուկ խաչմերուկով:

Այդ պահին նրանց մոտ կանգնեց Ռիոյի մեքենան: Վարում էր Տարուն, իսկ Ռիոն կարծես ննջում էր: Արթնացավ և լրագրողին ներկայացրեց Տարուին:

– Մենք արդեն ծանոթ ենք,– ասաց Տարուն,– նույն հյուրանոցում ենք ապրում:

Նա Ռամբերին առաջարկեց նստել մեքենան քաղաք իջնելու համար:

– Ո՛չ, այստեղ մենք ժամադրություն ունենք:

Ռիոն նայեց Ռամբերին.

– Այո՛,– հաստատեց վերջինս:

– Օհո՜,– զարմացավ Կոթարը,– ուրեմն բժիշկը գործին տեղյա՞կ է:

– Ահա և քննիչը,– զգուշացրեց Տարուն՝ նայելով Կոթարին:

Կոթարն այլայլվեց: Իսկապես, պարոն Օթոնն իջնում էր փողոցով և եռանդուն, բայց համաչափ քայլերով առաջ էր շարժվում դեպի նրանց կողմը: Նրանց մոտով անցնելիս հանեց գլխարկը:

– Բարև, պարոն քննիչ,– ասաց Տարուն:

Քննիչը նույնպես բարևեց մեքենայում նստածներին և նայելով Կոթարին ու Ռամբերին, ովքեր մնացել էին ետևում, գլխով լրջախոհ ողջունեց նրանց: Տարուն ներկայացրեց հասութատիրոջը և լրագրողին: Քննիչը մի պահ հայացքը հառեց երկնքին և հառաչեց.

– Շա՜տ տխուր ժամանակներ են:

– Ինձ ասացին, պարոն Տարու, որ դուք զբաղվում եք կանխարգելիչ միջոցների կիրառմամբ: Չեմ կարող ձեզ չհայտնել իմ հիացմունքը: Բժի՛շկ, ձեր կարծիքով հիվանդությունը կտարածվի՞:

Ռիոն ասաց, թե պետք է հուսալ, որ՝ ոչ, և քննիչը կրկնեց, որ պետք է միշտ հույս ունենալ, քանզի Աստծու գործերն անքննելի են: Տարուն նրան հարցրեց, թե արդյոք դեպքերը մեծացրե՞լ են նրա աշխատանքի ծավալը:

– Ընդհակառակը, գործերը, որ մենք անվանում ենք իրավապահպանական, նվազում են: Ես կարող եմ ընդամենը բացահայտել վերջին կարգադրություններում եղած լուրջ թերությունները: Երբեք այդքան չեն հարգել հին օրենքները:

– Պատճառն այն է,– ասաց Տարուն,– որ նոր օրենքների հետ համեմատելիս դրանք ինքնըստինքյան ավելի լավն են երևում:

Փոխվեց քննիչի երազկոտ հայացքը, որն ասես երկնքում էր կախվել, և Տարուին զննեց սառը հայացքով:

– Եվ ի՞նչ օգուտ դրանից,– ասաց նա:– Կարևորը ոչ թե օրենքն է, այլ պատիժը: Նախաքննությունն այստեղ ոչինչ չի կարող անել:

– Սա,– ասաց Կոթարը քննիչի հեռանալուց հետո,– սա իմ թիվ մեկ թշնամին է:

Մեքենան շարժվեց տեղից:

Մի քանի րոպե անց Ռամբերն ու Կոթարը տեսան, որ Գարսիան է գալիս: Մոտեցավ նրանց առանց նշան անելու և բարևի փոխարեն ասաց.

– Պետք է սպասել:

Նրանց շուրջը հավաքված բազմությունը՝ հիմնականում կանայք, սպասում էին քար լռության մեջ: Գրեթե բոլորը զամբյուղներ ունեին՝ զուր հույսեր փայփայելով, թե դրանք կհասցնեին իրենց հիվանդ ազգականներին, և դեռ ավելի խենթ մտքեր, թե վերջիններս կկարողանային օգտագործել այդ մթերքները: Մուտքը հսկում էին զինված ժամապահները, ժամանակ առ ժամանակ մի արտասովոր ճիչ էր անցնում զորանոցը դռնից բաժանող բակով: Եվ այդ ժամանակ տագնապահար դեմքերն իսկույն շրջվում էին դեպի հիվանդանոցը:

Երեք տղամարդ դիտում էին այս տեսարանը, երբ հետևի կողմից կտրուկ ու լուրջ արտասանված «բարևը» նրանց ստիպեց շրջվել: Չնայած շոգին՝ Ռաուլը հագնված էր ըստ պատշաճի: Հաղթանդամ և ուժեղ մարմինը կրում էր մուգ, երկքղանցք պիջակ՝ համապատասխան տաբատով, իսկ գլխին դրել էր ծղոտե բարձրագագաթ գլխարկ, որի եզրերը շրջված էին դեպի վեր: Դեմքը գունատ էր, աչքերը՝ շագանակագույն, շրթունքները՝ սեղմված: Խոսելաձևը հապճեպ էր ու ճշգրիտ.

– Իջնենք քաղաք,– ասաց նա:– Գարսիա, դու կարող ես մեզ թողնել:

Գարսիան վառեց ծխախոտը և սպասեց, մինչև նրանք հեռանան: Երեքն էլ արագ էին քայլում և՛ Ռամբերը, և՛ Կոթարը ջանում էին իրենց քայլքը հարմարեցնել Ռաուլին, որը գնում էր նրանց մեջտեղից:

– Գարսիան ինձ բացատրել է,– ասաց նա:– Գործը կարող է արվել: Ամեն դեպքում կարժենա տասը հազար ֆրանկ:

Ռամբերը պատասխանեց, որ համաձայն է:

– Վաղը միասին կնախաճաշենք Նավատորմիղի իսպանական ռեստորանում:

Ռամբերն ասաց, որ համաձայն է: Ռաուլը սեղմեց նրա ձեռքը և առաջին անգամ ժպտաց: Նրա գնալուց հետո Կոթարը ներողություն խնդրեց՝ ասելով, թե հաջորդ օրը զբաղված էր, և բացի այդ, Ռամբերն այլևս իր կարիքը չուներ:

Երբ հաջորդ օրը լրագրողը մտավ իսպանական ռեստորան, բոլորի գլուխները շրջվեցին և ուղեկցեցին նրան: Այդ կիսամութ նկուղը, որ տեղավորված էր արևից դեղնած ու չորացած փոքրիկ փողոցի ներքևում, մեծ մասամբ այցելում էին իսպանատիպ տղամարդիկ: Բայց հենց վերջին սեղաններից մեկի մոտ նստած Ռաուլը նշան արեց լրագրողին, և Ռամբերն ուղղվեց նրա կողմը, դեմքերի հետաքրքրասիրությունը չքացավ, և նրանք խոնարհվեցին իրենց ափսեների վրա: Ռաուլի սեղանի առջև նստած էր նիհար ու չսափրված մի մարդ՝ չափից դուրս լայն ուսերով, ձիու կերպարանքով ու ցանցառ մազերով: Վեր քշտած շապիկի տակից դուրս էին գալիս նրա նիհար ու երկար, սև մազերով ծածկված ձեռքերը: Երբ Ռաուլը ներկայացրեց լրագրողին, նա երեք անգամ տմբացրեց գլուխը: Անունը չարտասանվեց. Ռաուլը նրա մասին խոսելիս ասում էր միայն «մեր բարեկամը»:

– Մեր բարեկամի կարծիքով հնարավոր է ձեզ օգնել: Նա ձեզ...

Ռաուլը լռեց, որովհետև մատուցողուհին մոտեցավ Ռամբերի պատվերը վերցնելու:

Նա ձեզ «կապելու» է մեր երկու ընկերների հետ, որոնք ձեզ կծանոթացնեն մեզ նվիրված պահակների հետ: Բայց դա դեռ վերջը չէ: Պահակներն իրենք կորոշեն պատեհ ժամը: Ամենահեշտը կլիներ, որ դուք մի քանի գիշեր մնայիք նրանցից որևէ մեկի տանը, որն ապրում է դարպասների մոտ: Բայց նախօրոք մեր բարեկամը կապահովի ձեզ անհրաժեշտ կապերով: Երբ ամեն ինչ դասավորված կլինի, դուք նրան կտաք գումարը:

«Մեր բարեկամը» մեկ անգամ ևս տմբացրեց իր ձիու գլխով՝ շարունակ ծամելով ու կլանելով լոլիկով ու տաքդեղով աղցանը: Հետո խոսեց փոքր-ինչ իսպանական առոգանությամբ: Նա առաջարկեց Ռամբերին ժամադրվել մեկ օր հետո՝ առավոտյան ժամը ութին, տաճարի գավթում:

– Եվս երկու օր,– նկատեց Ռամբերը:

– Հեշտ գործ չէ,– ասաց Ռաուլը,– պիտի գտնել մարդկանց:

Մեր ձիանման բարեկամը դարձյալ տմբացրեց գլուխը, և Ռամբերը հավանություն տվեց, սակայն առանց խանդավառության:

Նախաճաշի մնացած ժամանակն անցավ զրույցի թեմա փնտրելով: Բայց ամեն բան չափազանց հեշտացավ, երբ Ռամբերը հայտնաբերեց, որ Ձին ֆուտբոլիստ էր եղել: Ինքն էլ երկար ժամանակ զբաղվել էր այդ մարզաձևով: Ուրեմն սկսեցին խոսել Ֆրանսիայի առաջնության, անգլիական արհեստավարժ թիմերի արժեքի և մարտավարության «դուբլը վե» տեսակի մասին: Նախաճաշի վերջում Ձին լրիվ ոգևորվել էր և Ռամբերի հետ «դու»-ով էր խոսում, ջանում նրան համոզել, որ թիմում չկա ավելի լավ տեղ, քան կիսապաշտպանական գիծը: «Հասկանո՞ւմ ես,– ասում էր նա,– կիսապաշտպանությունն այն է, ինչը համակարգում է խաղը: Իսկ ֆուտբոլ նշանակում է հենց խաղի համակարգում»: Ռամբերը նույն կարծիքին էր, չնայած միշտ կենտրոնական հարձակվող էր եղել: Բանավեճն ընդհատվեց միայն այն ժամանակ, երբ ինչ-որ ձայնն իջեցրած ռադիոընդունիչ մի քնարական մեղեդի անընդմեջ կրկնելուց հետո հայտարարեց, որ նախօրյակին ժանտախտը հարյուր երեսունյոթ կյանք էր խլել: Ներկաներից ոչ ոք չարձագանքեց: Ձիու գլխով մարդը թոթվեց ուսերն ու վեր կացավ: Ռաուլն ու Ռամբերը հետևեցին նրան:

Մեկնելիս կիսապաշտպանը ուժեղ սեղմեց Ռամբերի ձեռքը:

– Իմ անունը Գոնզալես է,– ասաց նա:

Հաջորդ երկու օրերը Ռամբերին անվերջանալի թվացին: Նա գնաց Ռիոյի մոտ և մանրամասն պատմեց իր ձեռնարկումների մասին: Հետո բժշկի հետ գնաց հիվանդայցի: Նրան հրաժեշտ տվեց միայն ինչ-որ տան առջև, որտեղ բժշկին ժանտախտով վարակված կասկածյալ հիվանդ էր սպասում: Միջանցքում լսվեց վազող ոտնաձայն, ձայնը զգուշացնում էր հիվանդի ընտանիքին, որ բժիշկն է գալիս:

– Հուսով եմ՝ Տարուն չի ուշանա,– մրմնջաց Ռիոն:

Հոգնած տեսք ուներ:

– Համաճարակը շա՞տ արագ է ծավալվում,– հարցրեց Ռամբերը:

Ռիոն ասաց, որ խնդիրը դա չէ, որ այժմ վիճակագրական տվյալների կորագիծն ավելի դանդաղ է բարձրանում: Պարզապես ժանտախտի դեմ պայքարելու միջոցները բավարար չեն:

https://1915.info

– Նյութականի պակաս ունենք,– ասաց նա:– Աշխարհի բոլոր բանակներում ռազմամթերքի պակասն ընդունված է լրացնել մարդկանցով: Բայց մենք մարդու պակաս էլ ունենք:

– Բայց դրսից բժիշկներ և բուժաշխատողներ են եկել:

– Այո՛,– ասաց Ռիոն:– Տասը բժիշկ և մոտ մի հարյուր ուրիշ մարդ: Թվում է՝ մեծ թիվ է, բայց հազիվ թե բավականացնի հիվանդության ներկա վիճակում: Իսկ եթե համաճարակն ուժգնանա, այն ժամանակ բոլորովին չի բավականացնի:

Ռիոն ականջ դրեց ներսի աղմուկին և ժպտաց Ռամբերին.

– Այո՛,– ասաց նա,– դուք պետք է շտապեք:

Մի ստվեր անցավ Ռամբերի դեմքի վրայով.

– Դուք լավ գիտեք, որ դա չէ պատճառը, որ ստիպում է ինձ մեկնել,– ասաց նա խուլ ձայնով:

Ռիոն պատասխանեց, որ գիտի, բայց Ռամբերը շարունակեց.

– Կարծում եմ՝ վախկոտ չեմ, համենայնդեպս՝ մեծ մասամբ: Առիթ եմ ունեցել ապացուցելու: Միայն թե կան մտքեր, որ անտանելի են ինձ համար:

Բժիշկը նայեց նրա դեմքին:

– Դուք կրկին կունենաք այդ առիթը,– ասաց նա:

– Գուցե, բայց անտանելի է այն միտքը, որ այս պատմությունը երկար է տևելու, իսկ նա՝ այդ կինը, ծերանալու է այդ ամբողջ ժամանակի ընթացքում: Երեսուն տարեկանում սկսում ես ծերանալ, և ուրեմն պետք է օգտվել ամեն ինչից: Չգիտեմ՝ հասկանո՞ւմ եք ինձ:

Ռիոն քրթմնջում էր, թե երևի հասկանում է նրան, երբ եկավ Տարուն՝ շատ կայտառ:

– Հենց նոր խնդրեցի հայր Պանլուին միանալ մեզ:

– Եվ ի՞նչ,– հարցրեց բժիշկը:

– Նա մտածեց և ասաց՝ այո՛:

– Ուրախ եմ,– ասաց բժիշկը:– Ուրախ եմ, որ նրան ավելի լավն եմ տեսնում, քան իր քարոզը:

– Բոլոր մարդիկ էլ այդպիսին են,– ասաց Տարուն,– պետք է պարզապես նրանց հնարավորություն տալ:

Նա ժպտաց և աչքով արեց Ռիոյին:

– Դա իմ գործն է, այդպես է եղել ամբողջ կյանքում՝ հնարավորություն տալ մարդկանց:

– Ներեցեք,– ասաց Ռամբերը,– բայց պետք է գնամ:

Պայմանավորված հինգշաբթի օրը Ռամբերը տաճարի գավթի տակ էր ժամը ութին հինգ րոպե պակաս: Դեռ բավական զով էր: Երկնքում շարժվում էին ճերմակ ու կլոր ամպի պատառիկներ, որոնց քիչ հետո մի հարվածով կլանելու էր բարձրացող շոգը: Խոնավության մի անորոշ հոտ էր դեռ բարձրանում գազոններից, որոնք, սակայն, արդեն չորացել էին: Արևելյան մասի տների ետևից արևը տաքացնում էր միայն Ժաննա դ'Արկի ոսկեզօծ սաղավարտը, որը զարդարում էր հրապարակը: Ժամացույցի զանգերը խփեցին ութը: Ռամբերը մի քանի քայլ արեց ամայի գավթի ներքո: Ներսից հասնում էին ինչ-որ սաղմոսերգեր՝ խառնված հինավուրց նկուղի ու խունկի բույրերին: Հանկարծ երգերը լռեցին: Տասնյակի չափ փոքրիկ սև կերպարանքներ դուրս եկան եկեղեցուց և մանրաքայլ գնացին դեպի քաղաք: Ռամբերի համբերությունը սպառվում էր: Ուրիշ սև կերպարանքներ էլ մագլցում էին մեծ աստիճանները և գնում դեպի գավիթ: Նա մի ծխախոտ վառեց, հետո մտքով անցավ, որ գուցե այդտեղ ծխել չի թույլատրվում:

Ժամը ութն անց տասնհինգին տաճարի երգեհոնները սկսեցին կամացուկ նվագել: Ռամբերը մտավ մութ կամարի տակ: Մեկ րոպե անց ատյանում նա կարող էր նշմարել այն սև կերպարանքները, որոնք անցել էին իր առջևից: Դրանք բոլորը հավաքվել էին անկյունում՝ մի տեսակ հանպատրաստից ստեղծված խորանի առջև, ուր վերջերս էին տեղադրել քաղաքի արհեստանոցներից մեկում հապճեպորեն ձուլված սուրբ Ռոշի արձանը: Ծնրադրած այդ կերպարանքները կարծես լրիվ քաշվել, կծկվել էին՝ կորած այդ գորշության մեջ, ինչպես հազիվ մի քիչ թանձրացած ստվերի մակարդուկներ, որ այստեղ-այնտեղ ծածանվում էին մառախուղի մեջ: Նրանց գլխավերևում երգեհոնները հնչեցնում էին անվերջանալի վարիացիաներ:

Երբ Ռամբերը դուրս եկավ, Գոնզալեսն արդեն իջնում էր աստիճաններով և երևի գնալու էր քաղաք:

– Ես կարծեցի, թե արդեն գնացել ես,– ասաց նա լրագրողին:– Եվ ճիշտ արած կլինեիր:

Եվ բացատրեց, որ իր ընկերներին նա հանդիպելու էր մեկ այլ ժամադրավայրում՝ այդտեղից ոչ հեռու, ութին տասը պակաս: Բայց զուր էր սպասել քսան րոպե:

– Ինչ-որ բան խանգարել է նրանց, պարզ է: Մեր գործերը միշտ մեր ուզածի պես չեն լինում:

Նա նշանակեց նոր ժամադրություն հաջորդ օրը՝ նույն ժամին, զոհվածների հուշարձանի մոտ: Ռամբերը հոգոց հանեց և հետ գցեց ծղոտե գլխարկը:

– Դա դեռ հեչ,– եզրակացրեց Գոնզալեսը ծիծաղելով:– Հապա մի հիշի՛ր այն բոլոր հնարքների, փոխանցումների, խաբսերի մասին, որ պետք է անել գոլ խփելու համար:

– Այո՛, իհարկե,– ասաց Ռամբերը,– սակայն խաղը տևում է ընդամենը ժամ ու կես:

Օրանի զոհվածների հուշարձանը գտնվում է այն միակ վայրում, որտեղից կարելի է նշմարել ծովը, զբոսավայրի նման կարճ տարածությամբ ձգվող ժայռախութերը, որոնք իշխում են նավահանգստի վրա: Հաջորդ օրը Ռամբերը, որն առաջինը հայտնվեց ժամադրավայրում, ուշադրությամբ կարդում էր զոհվածների ցուցակը Պատվո դաշտում: Մի քանի րոպե անց երկու մարդ մոտեցան նրան, անտարբեր նայեցին, հետո գնացին և հենվեցին զբոսավայրը ցանկապատող բազրիքին, թվում էր՝ նրանք ամբողջությամբ կլանված էին դատարկ ու ամայի կառամատույցները դիտելով: Նրանք երկուսն էլ նույն հասակին էին, կրում էին նույն կապույտ տաբատները և ծովայինի կարճաթև շապիկները: Լրագրողը հեռացավ մի քիչ, հետո նստեց նստարանին և պարապությունից սկսեց դիտել այդ մարդկանց: Այստեղ նա նկատեց, որ անծանոթները քսան տարեկանից մեծ չէին լինի: Այդ պահին նա տեսավ Գոնզալեսին, որն իր կողմ էր գալիս՝ ներողություն խնդրելով:

– Ահա և մեր բարեկամները,– ասաց նա և լրագրողին տարավ երիտասարդների մոտ՝ նրանց ներկայացնելով Մարսել և Լուի անուններով: Դեմքով շատ նման էին իրար, և Ռամբերը մտածեց, որ նրանք եղբայրներ են:

– Ահա,– ասաց Գոնզալեսը,– այժմ, երբ ծանոթացել եք, պետք է գործը դասավորել:

Այդժամ Մարսելը կամ գուցե Լուին ասաց, որ պահակության իրենց հերթը սկսվելու է երկու օրից, տևելու է մի շաբաթ, և պետք է ընտրել ամենահարմար օրը: Նրանք չորսով էին պահպանում արևմտյան դարպասները, որոնցից երկուսը կոչումով զինվորական էին: Վերջիններիս գործի մեջ ներգրավելու մասին խոսք անգամ չէր կարող լինել: Նախ՝ նրանց չէին վստահում, և հետո՝ դա կավելացներ ծախսերը: Բայց պատահում էր, որ իրենց գործընկերները գիշերվա մի մասն անցկացնում էին իրենց մի ծանոթի բարի ետևի սրահում: Մարսելը կամ գուցե Լուին այսպիսով առաջարկում էին Ռամբերին տեղավորվել իրենց մոտ՝ դարպասների մոտակայքում, և սպասել՝ երբ կգան իր ետևից: Այդ ժամանակ դարպասներն անցնելը շատ հեշտ կլիներ: Սակայն պետք էր շտապել, որովհետև լուրեր էին պտտվում, թե ուզում են մոտակա օրերին կրկնակի պահակակետեր նշանակել նաև քաղաքի դրսի կողմից:

Ռամբերը հավանություն տվեց և նրանց հյուրասիրեց իր վերջին ծխախոտներով: Երկուսից մեկը, որ դեռևս ոչ մի բառ չէր արտասանել, հարցրեց Գոնզալեսին, թե արդյոք ծախսերի հարցը կարգավորվա՞ծ է, և կարո՞ղ են ստանալ կանխավճար:

– Ոչ,– ասաց Գոնզալեսը,– կարիք չկա, մեր ընկերն է: Ծախսերը կկարգավորվեն դուրս գալու ժամանակ:

Պայմանավորվեցին նոր հանդիպման համար: Գոնզալեսը ճաշ առաջարկեց իսպանական ռեստորանում վաղը չէ մյուս օրը: Այնտեղից կարելի էր գնալ պահակների տուն:

– Առաջին գիշերը,– ասաց նա Ռամբերին,– ես քեզ կընկերակցեմ:

Հաջորդ օրը հյուրանոցի սենյակ բարձրանալիս Ռամբերը աստիճանների վրա հանդիպեց Տարուին:

– Գնում եմ Ռիոյի մոտ,– ասաց վերջինս,– ուզո՞ւմ եք գալ ինձ հետ:

– Երբեք համոզված չեմ, թե չեմ խանգարում նրան,– ասաց Ռամբերը փոքր-ինչ տատանվելուց հետո:

– Չեմ կարծում, թե խանգարում եք, ձեր մասին նա ինձ հետ շատ է խոսել:

Լրագրողը մտորում էր:

– Լսեք,– ասաց նա:– Եթե երեկոյան, թեկուզ շատ ուշ, մի որոպե ազատ ժամանակ ունենաք, երկուսով եկեք հյուրանոցի բարը:

– Դա կախված կլինի նրանից և ժանտախտից,– պատասխանեց Տարուն:

Բայցևայնպես, երեկոյան ժամը տասնմեկին Ռիոն և Տարուն մտան հյուրանոցի փոքր բարը: Մոտ երեսուն հոգի խցկված էին նեղլիկ սրահում և աղմկում էին շատ բարձրաձայն: Ժանտախտահար քաղաքի լռությունից գալով՝ երկու եկվորները շշմած կանգ առան: Բայց հետո գլխի ընկան այդ աշխուժության պատճառը, երբ տեսան, որ մատուցում էին նաև ոգելից խմիչքներ: Ռամբերը կանգնակի ծայրին էր և նրանց նշան էր անում իր բարձր աթոռակից: Նրանք շրջապատեցին լրագրողին, որն արմունկով հանգիստ մի կողմ հրեց աղմկարար հարևանին:

– Ալկոհոլը ձեզ չի՞ վախեցնում:

– Ո՛չ, ընդհակառակը,– ասաց Տարուն:

Ռիոն ներս քաշեց իր բաժակից փչող դառնահամ խոտերով լի հոտը: Դժվար էր զրուցել այդ աղմուկի մեջ, բայց Ռամբերը կարծես զբաղված էր հատկապես խմելով: Բժիշկը դեռ չէր կարող որոշել՝ հարբա՞ծ էր նա, թե՞ ոչ: Այդ նեղվածքի մնացած մասը զբաղեցնող երկու սեղաններից մեկի առջև մի ծովային սպա, ամեն թևով մի կին գրկած, իր գեր ու արնակոխ դեմքով զրուցակցին պատմում էր Կահիրեում բռնկված տիֆի համաճարակի մասին. «Ճամբարներ,– ասում էր նա,– ճամբարներ են բացել բնիկների համար, վրաններ՝ հիվանդների համար, և ամբողջ շրջակայքը կարգել ժամապահների մի շղթա, որը կրակում է ցանկացած բարեկամի վրա, եթե նա փորձում է խաբեությամբ հիվանդին փոխանցել հեքիմից վերցրած

դեղորայքը: Խիստ միջոց է, բայց արդարացի»: Մյուս սեղանի շուրջը նստած վայելչատես երիտասարդների խոսակցությունը հնարավոր չէր հասկանալ, այն կորչում էր Saint James Infirmary երգի ռիթմի մեջ, որը տարածում էր բարձրում թառած նվագարկիչը:

– Եվ ի՞նչ, գո՞հ եք,– հարցրեց Ռիոն՝ բարձրացնելով ձայնը:

– Շուտով,– ասաց Ռամբերը:– Գուցե շաբաթվա մեջ:

– Ափսո՜ս,– բղավեց Տարուն:

– Ինչո՞ւ:

Տարուն նայում էր Ռիոյին:

– Ա՛,– ասաց վերջինս,– Տարուն դա ասում է, որովհետև մտածում է, թե դուք կարող էիք մեզ օգտակար լինել այստեղ: Բայց ես շատ լավ եմ հասկանում ձեր մեկնելու ցանկությունը:

Տարուն մի-մի բաժակ էլ հյուրասիրեց: Ռամբերն իջավ աթոռակից և առաջին անգամ նրան նայեց ուղիղ աչքերի մեջ.

– Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել:

– Դե, օրինակ,– ասաց Տարուն՝ դանդաղ վերցնելով բաժակը,– մեր սանիտարական ջոկատներում:

Ռամբերն ընդունեց դեմքի մտորելու իր սովորական համառ արտահայտությունը և դարձյալ բարձրացավ աթոռակին:

– Այդ ջոկատները ձեզ օգտակա՞ր են թվում,– ասաց Տարուն, որն արդեն դատարկել էր բաժակը և ուշադիր նայում էր Ռամբերին:

– Իհարկե, շատ օգտակար,– պատասխանեց լրագրողը և խմեց:

Ռիոն նկատեց, որ նրա ձեռքը դողում էր: Եվ որոշեց, որ իրոք, նա հարբած էր:

Հաջորդ օրը, երբ Ռամբերը երկրորդ անգամ եկավ իսպանական ռեստորան, ստիպված եղավ անցնել մի խումբ մարդկանց միջով, որոնք աթոռները դուրս էին հանել և շարել մուտքի մոտ՝ ըմբոշխնելով ոսկեկանաչ երեկոն, երբ շոգն արդեն սկսել էր մեղմանալ: Նրանք ծխում էին թունդ ծխախոտ: Ռեստորանի ներսը գրեթե դատարկ էր: Ռամբերը գնաց նստելու վերջին սեղանիկի մոտ, որտեղ նա առաջին անգամ հանդիպել էր Գոնզալեսին: Մատուցողուհուն ասաց, որ մարդու է սպասում: Ժամը յոթն անց երեսուն էր: Քիչ-քիչ մարդիկ վերադարձան ներս և տեղավորվեցին: Նրանց

սկսեցին սպասարկել, և ցածրիկ կամարների տակ ռեստորանը լցվեց սպասքի չխկչխկոցով ու խոսակցությունների խուլ աղմուկով: Ժամը ութն էր, բայց Ռամբերը դեռ սպասում էր: Նա ընթրիք պատվիրեց: Ութն անց կեսին վերջացրեց ուտելը՝ այդպես էլ չտեսնելով ո՛չ Գոնզալեսին, ո՛չ երկու երիտասարդներին: Ծխեց մի քանի ծխախոտ: Սրահը կամաց-կամաց դատարկվում էր: Դրսում արագորեն գիշերն էր իջնում: Ծովից փչող գաղջ քամին մեղմորեն բարձրացնում էր դուռ-պատուհանների վարագույրները: Ժամը իննին Ռամբերը նկատեց, որ սրահը դատարկ էր, և որ մատուցողուհին զարմանքով իրեն էր նայում: Վճարեց ու դուրս եկավ: Ռեստորանի դիմաց դեռ բաց սրճարան կար: Ռամբերը տեղավորվեց կանգնակի առջև՝ հայացքով հսկելով ռեստորանի մուտքը: Ինն անց կեսին նա ուղևորվեց դեպի հյուրանոց՝ ապարդյուն ջանքեր թափելով՝ պարզելու՝ ինչպես կարող է գտնել Գոնզալեսին, որի հասցեն չգիտեր: Սիրտը ճմլվում էր այն մտքից, որ ամեն գործարք պետք է դարձյալ վերսկսեր:

Հենց այդ պահին գիշերվա մեջ անցնում էին չարագուշակ շտապօգնության մեքենաները, և նա անդրադարձավ այն մտքին, որի մասին հետո հայտնեց բժիշկ Ռիոյին, որ այդ ամբողջ ժամանակամիջոցում մոռացել էր իր կնոջը՝ զբաղված իրենց միմյանցից բաժանող պատերի միջից դուրս գալու որևէ ճեղք փնտրելով: Բայց հենց այդ պահին, երբ բոլոր ճանապարհները մեկ անգամ ևս խցանվեցին, նա հայտնաբերեց, որ կրկին կինն էր իր բոլոր ցանկությունների կենտրոնում, և իր ցավն այնպես հանկարծակի ժայթքեց, որ սկսեց վազել դեպի հյուրանոց՝ փորձելով խույս տալ այդ դաժան այրոցքից, որը սակայն քշում տանում էր իր հետ, և որից քունքերը պայթում էին:

Այսուհանդերձ, հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, նա եկավ Ռիոյի մոտ՝ հարցնելու, թե ինչպե՞ս կարող է գտնել Կոթարին.

– Ինձ մնում է միայն,– ասաց նա,– ամեն բան նորից սկսել:

– Եկե՛ք վաղը՝ երեկոյան,– ասաց Ռիոն,– Տարուն ինձ խնդրել է, չգիտեմ ինչու, հրավիրել Կոթարին: Նա պետք է գա ժամը տասին: Դուք եկեք տասն անց կեսին:

Երբ հաջորդ օրը Կոթարը եկավ բժշկի մոտ, Տարուն ու բժիշկը խոսում էին մի անսպասելի բուժման մասին, որը տեղի էր ունեցել Ռիոյի ծառայության ընթացքում:

– Տասից՝ մեկը: Բախտը բերեց,– ասում էր Տարուն:

– Օ՛, լավ,– ասաց Կոթարը,– ուրեմն ժանտախտ չի եղել:

Նրան հավատացրին, որ խոսքը հենց այդ հիվանդության մասին էր:

– Հնարավոր չէ, եթե առողջացել է: Դուք ինձնից ավելի լավ գիտեք, որ ժանտախտը խնայել չգիտի:

– Ընդհանրապես դուք իրավացի եք,– ասաց Ռիոն:– Բայց պնդաճակատության դեպքում լինում են նաև անակնկալներ:

Կոթարը քմծիծաղում էր:

– Չեմ կարծում: Այս երեկո լսե՞լ եք թվերը:

Տարուն, որ բարյացակամորեն էր նայում բաժնետիրոջը, ասաց, որ ծանոթ է այդ թվերին, և որ վիճակը ծանր էր, բայց ի՞նչ էր դա ապացուցում: Դա ապացուցում էր, որ անհրաժեշտ էին առավել բացառիկ միջոցներ:

– Է, դրանք դուք արդեն ձեռնարկե՞լ եք:

– Այո՛, բայց պետք է, որ յուրաքանչյուր ոք միջոցներ ձեռնարկի իր կողմից:

Կոթարը Տարուին էր նայում առանց հասկանալու: Վերջինս ասաց, որ շատերը դեռևս նստած են անգործ, որ համաճարակը յուրաքանչյուրի գործն է, և որ յուրաքանչյուր ոք պետք է իր պարտականությունը կատարի: Կամավորական ջոկատները բաց էին բոլորի համար:

– Լավ միտք է,– ասաց Կոթարը,– բայց ոչնչի պիտանի չէ: Ժանտախտը չափազանց ուժեղ է:

– Մենք դա կիմանանք, երբ ամեն բան փորձած կլինենք,– ասաց Տարուն համբերատար ձայնով:

Այդ ընթացքում Ռիոն իր գրասեղանի առջև արտագրում էր ցուցանիշները: Տարուն շարունակում էր նայել բաժնետիրոջը, որը ճոճվում էր աթոռի վրա:

– Ինչո՞ւ մեզ հետ չեք աշխատում, պարոն Կոթար:

Վերջինս վեր կացավ վիրավորված տեսքով՝ ձեռքը վերցնելով լայնեզր գլխարկը.

– Իմ մասնագիտությունը չէ:

Հետո խիզախ մարդու տոնով ասաց.

– Բացի այդ, ես հենց ժանտախտի մեջ եմ և չեմ հասկանում, թե ինչու պիտի խառնվեմ այն դադարեցնելու գործին:

Տարուն ձեռնափով խփեց ճակատին, ասես միտքը պայծառացավ հանկարծակի բացահայտված ճշմարտությունից.

– Հա՛, ճիշտ է, մոռացել էի, դուք առանց այդ էլ կձերբակալվեք:

Կոթարը տեղից վեր թռավ ու բռնվեց աթոռից, որ հանկարծ չընկնի: Ռիոն դադարեցրել էր գրելը և նրան էր նայում լուրջ ու հետաքրքրված տեսքով:

– Ո՞վ է դա ձեզ ասել,– բղավեց բաժնետերը:

Տարուն ասես անակնկալի եկավ և ասաց.

– Դուք ինքներդ: Կամ առնվազն բժիշկն ու ես այդպես ենք հասկացել ձեզ:

Եվ քանի որ Կոթարը, հանկարծակի բռնկվելով ուժգին կատաղությամբ, սկսեց դուրս տալ անհասկանալի խոսքեր, Տարուն ավելացրեց.

– Մի նյարդայնացեք, ո՛չ բժիշկը, ո՛չ ես, ձեզ չենք մատնի: Ձեր գործերը մեզ չեն վերաբերում: Եվ հետո, մենք երբեք չենք սիրել դրանց՝ ոստիկաններին: Դե լավ, նստեք:

Բաժնետերը նայեց աթոռին և մի քիչ վարանելուց հետո նստեց: Մեկ րոպե անց նա հառաչեց.

– Դա հին գործ է, որ բացել են նորից,– խոստովանեց նա:– Ես կարծում էի, թե մոռացված բան է: Բայց ինչ-որ մեկը խոսել է: Նրանք ինձ կանչեցին և ասացին, որ իրենց տրամադրության տակ լինեմ մինչև հարցաքննության ավարտը: Հասկացա, որ ի վերջո ինձ ձերբակալելու են:

– Լո՞ւրջ բան է,– հարցրեց Տարուն:

– Նայած ինչ եք հասկանում լուրջ ասելով: Համենայնդեպս մարդասպանություն չէ:

– Բանտարկությո՞ւն, թե՞ տաժանակիր աշխատանք:

Կոթարը լրիվ ընկճված թվաց:

– Բանտարկություն, եթե բախտս բերի...

Սակայն մի պահ անց շարունակեց ոգևորությամբ.

– Սխալմունք է: Բոլորն էլ սխալներ են թույլ տալիս: Եվ ինձ համար անտանելի է մտածել, որ դրա համար ինձ կբռնեն, կբաժանեն իմ տնից, սովորություններից, բոլոր նրանցից, ում ճանաչում եմ:

– Այդ պատճառո՞վ դուք որոշեցիք կախվել:

– Այո՛: Հիմարություն էր արածս, իհարկե:

Ռիոն, որ մինչ այդ լուռ էր, բարձրացրեց գլուխը և ասաց Կոթարին, որ հասկանում է նրա անհանգստությունը, բայց գուցե ամեն ինչ լավ վերջանա:

– Օ՛, այս պահին ես վախենալու բան չունեմ:

– Հասկանալի է,– ասաց Տարուն,– դուք չեք մտնի մեր ջոկատները:

Կոթարը, որ պտտեցնում էր գլխարկը ձեռքերի մեջ, Տարուին նայեց անվստահ հայացքով.

– Պետք չէ վատ տրամադրվել իմ հանդեպ:

– Իհարկե ոչ: Բայց ջանացեք գոնե ինքնակամ չտարածել հիվանդության մանրէն:

Կոթարը բողոքեց, որ չի ցանկացել ժանտախտ, որ այն եկել է ինքն իրեն, և որ իր մեղքը չէ, եթե համաճարակի գործերը լավ են ընթանում այս պահին: Իսկ երբ Ռամբերը հասավ դռանը, բաժնետերն ավելացրեց եռանդուն ձայնով.

– Ի դեպ, իմ կարծիքով՝ դուք ոչնչի չեք հասնի:

Ռամբերն իմացավ, որ Կոթարը չգիտեր Գոնզալեսի հասցեն, սակայն նորից կարելի էր գնալ այն փոքրիկ սրճարանը: Որոշեցին հանդիպել հաջորդ օրը: Եվ քանի որ Ռիոն ցանկություն հայտնեց իմանալու ժամադրության արդյունքների մասին, Ռամբերը նրան Տարուի հետ հրավիրեց իր սենյակը շաբաթվա վերջին, գիշերվա ցանկացած ժամին:

Առավոտյան Կոթարն ու Ռամբերը գնացին փոքր սրճարանը և Գարսիայի հետ ժամադրություն նշանակեցին երեկոյան կամ, եթե ինչ-որ բան խանգարեր, հաջորդ օրը: Երեկոյան զուր սպասեցին Գարսիային: Հաջորդ օրն այնտեղ էր: Լուռ լսեց Ռամբերի պատմածը: Տեղյակ չէր, բայց գիտեր, որ քսանչորս ժամ արգելափակել էին մի քանի թաղամաս բնակարանային ստուգումներ

անցկացնելու նպատակով: Հնարավոր է, որ Գոնզալեսն ու երկու երիտասարդ տղաները չէին կարողացել անցնել փակոցները: Միակ բանը, որ ինքը կարող էր անել, այն էր, որ նորից կապվեր Ռաուլի հետ: Բնականաբար հանդիպումը կլիներ երկու օրից ոչ շուտ:

– Տեսնում եմ,– ասաց Ռամբերը,– ամեն ինչ նորից պիտի սկսել:

Երկու օր անց փողոցի անկյունում Ռաուլը հաստատեց Գարսիայի վարկածը. ներքևի թաղամասերն արգելափակված էին: Պետք էր նորից կապ հաստատել Գոնզալեսի հետ: Երկու օր հետո Ռամբերը նախաճաշում էր ֆուտբոլիստի հետ:

– Հիմարություն է այսպես հանդիպելը,– ասում էր Գոնզալեսը:– Կարելի է իրար փնտրելու մեկ ուրիշ ձև գտնել:

Ռամբերն էլ նույն կարծիքին էր:

– Վաղն առավոտյան մենք կգնանք ջահելների մոտ, կփորձենք ամեն ինչ կարգավորել:

Հաջորդ օրը ջահելները տանը չէին: Ժամադրության կանչեցին հաջորդ օրը՝ կեսօրին, Լիցեյի հրապարակում: Ռամբերը տուն վերադարձավ այնքան ընկճված, որ հաջորդ օրը՝ կեսօրին, Տարուն ապշեց՝ տեսնելով նրա դեմքի արտահայտությունը:

– Լավ չե՞ս զգում,– հարցրեց Տարուն:

– Վերսկսելու պատճառով,– ասաց Ռամբերը:

Եվ կրկնեց իր հրավերը.

– Եկեք այս երեկո:

Երեկոյան, երբ երկուսով մտան Ռամբերի սենյակը, նա պառկած էր: Վեր կացավ, լցրեց նախօրոք պատրաստած բաժակները: Ռիոն, վերցնելով իր բաժակը, հարցրեց, թե ճի՞շտ ուղու վրա են գործերը: Լրագրողը պատասխանեց, որ նորից մի լրիվ պտույտ էր գործել և դարձյալ հասել էր նույն կետին. շուտով վերջին ժամադրությունն էր լինելու: Խմեց և ավելացրեց.

– Բնականաբար նրանք չեն գա:

– Պետք չի սկզբունք դարձնել,– ասաց Ռիոն:

– Դուք դեռ չեք հասկացել,– պատասխանեց Ռամբերը՝ թոթվելով ուսերը:

– Ի՞նչը:

– Ժանտախտը:

– Աաա՛...– ծոր տվեց Ռիոն:

– Ոչ, դուք չեք հասկացել, որ դա նշանակում է վերսկսել, ամեն ինչ վերսկսել:

Ռամբերը գնաց սենյակի անկյունը և բացեց մի փոքրիկ ձայնարկիչ:

– Այդ ի՞նչ ձայնասկավառակ է,– հարցրեց Տարուն:– Ինձ ծանոթ է:

Ռամբերը պատասխանեց, որ «Սուրբ Ջեյմսի հիվանդանոցն» է:

Երգը նոր էր կեսին հասել, երբ երկու կրակոց լսվեց հեռվում:

– Կամ շուն, կամ փախստական են խփում,– ասաց Տարուն:

Մեկ րոպե անց ձայնասկավառակը կանգ առավ, և պարզորոշ դարձավ շտապօգնության մեքենայի շչակը, հետո ավելի ուժգին հնչեց, անցավ հյուրանոցի սենյակի պատուհանների տակով, ապա նվազեց և վերջապես հանգավ:

– Այս ձայնասկավառակն այնքան էլ զվարճալի չէ,– ասաց Ռամբերը:– Եվ հետո, այսօր արդեն տասն անգամ լսել եմ նույն բանը:

– Այդքան դո՞ւր է գալիս ձեզ:

– Ոչ, դա է միակ ունեցածս:

Մի պահ լռելուց հետո ավելացրեց.

– Ես ձեզ ասում եմ, որ դա նշանակում է ամեն ինչ վերսկսել:

Նա հարցրեց Ռիոյին, թե ինչպե՞ս էին սանիտարական ջոկատների գործերը: Աշխատանքի մեջ էին հինգ թիմ: Հույս ունեին ստեղծել ուրիշ նոր խմբեր: Լրագրողը նստած էր մահճակալին և թվում էր՝ լրիվ տարված էր եղունգների ուսումնասիրությամբ: Ռիոն զննում էր անկողնու ծայրին կծկված նրա կարճ ու հզոր մարմինը: Հանկարծ նկատեց, որ Ռամբերն էլ իրեն է նայում:

– Գիտե՞ք ինչ, բժի՛շկ,– ասաց նա,– ես շատ եմ մտածել ձեր կազմակերպության մասին: Եվ եթե ձեզ հետ չեմ, ուրեմն կան պատճառներ: Ես այդ մարդը չեմ, որ դողամ կյանքիս համար, ես կռվել եմ Իսպանիայում:

– Ո՞ւմ կողմից:

– Պարտվածների: Բայց հետո շատ եմ մտածել:

– Ինչի՞ մասին,– ասաց Տարուն:

– Քաջության մասին: Այժմ գիտեմ, որ մարդն ընդունակ է մեծ գործերի: Բայց եթե ընդունակ չէ նաև մեծ զգացմունքների, նա ինձ չի հետաքրքրում:

– Երևի մարդն ընդունակ է ամեն բանի,– ասաց Տարուն:

– Ո՛չ, ո՛չ, նա անընդունակ է երկար ժամանակ տանջվելու կամ երկար ժամանակ երջանիկ լինելու: Հետևաբար նա ընդունակ չէ որևէ արժեքավոր բանի:

Ռամբերը նայում էր նրանց, հետո ասաց.

– Ինչպե՞ս թե, ասացեք, Տարո՛ւ, դուք ընդունա՞կ եք մեռնելու հանուն սիրո:

– Չգիտեմ, բայց ինձ թվում է՝ ոչ, այժմ՝ ոչ:

– Տեսնո՞ւմ եք: Բայց դուք ընդունակ եք մեռնելու հանուն գաղափարի, անզեն աչքով էլ դա տեսանելի է: Դե, ես ձանձրացել եմ գաղափարի համար մեռնող մարդկանցից: Ես չեմ հավատում հերոսությանը: Ես գիտեմ, որ հեշտ է հերոս դառնալը, բայց և հասկացել եմ, որ այն մահաբեր է: Ինձ հետաքրքրում է միայն այն, որ մեռնես կամ ապրես հանուն քո սիրո:

Ռիոն ուշադիր լսում էր լրագրողին: Հայացքը չհեռացնելով նրանից՝ Ռիոն ասաց.

– Մարդը գաղափար չէ, Ռամբե՛ր:

Ռամբերը հուզմունքից այլայլված դեմքով վեր թռավ մահճակալից:

– Ո՛չ, գաղափար է և չնչին գաղափար՝ այն պահից, երբ մարդը երես է թեքում սիրուց: Իսկ մենք ընդունակ չենք սիրո: Համակերպվենք, բժի՛շկ: Սպասենք, որ մարդն ընդունակ լինի, և եթե իսկապես դա հնարավոր չէ, սպասենք համընդհանուր ազատագրմանը՝ չխաղալով հերոսի դերը: Ես ավելի հեռուն չեմ գնա:

Ռիոն վեր կացավ՝ հանկարծ հոգնածություն զգալով.

– Դուք իրավացի եք, Ռամբե՛ր, միանգամայն իրավացի, և աշխարհում ոչ մի գնով ես չէի ցանկանա ձեզ համոզել, որ հրաժարվեիք ձեր անելիքից, որն իմ կարծիքով արդար է ու բարի:

Այսուհանդերձ, պետք է ասեմ, որ այս ամենը կապ չունի հերոսակա-նության հետ: Խոսքն այստեղ ազնվության մասին է: Միտքս կարող է ձեր ծիծաղը շարժել, սակայն պետք է ասեմ, որ ժանտախտի դեմ պայքարելու միակ ձևը ազնվությունն է:

– Իսկ ի՞նչ է ազնվությունը,– հարցրեց Ռամբերը՝ միանգամից լրջանալով:

– Չգիտեմ ինչ բան է ընդհանրապես: Բայց իմ պարագայում գիտեմ, որ ազնիվ լինել նշանակում է կատարել իր սեփական գործը:

– Օ՛,– ասաց Ռամբերը կատաղությամբ,– ես չգիտեմ որն է իմ գործը: Գուցե իսկապես սխալվում եմ՝ ընտրելով սերը:

Ռիոն հակառակվեց նրան.

– Ոչ,– ասաց նա,– դուք չեք սխալվում:

Ռամբերը նայում էր նրանց մտածկոտ տեսքով:

– Դուք երկուսդ էլ իմ կարծիքով ոչինչ չունեք կորցնելու այս ամե-նի մեջ: Հեշտ է լինել բարության կողմից:

Ռիոն դատարկեց բաժակը:

– Գնանք,– ասաց Տարուին,– շատ գործ ունենք անելու:

Նա դուրս եկավ:

Տարուն՝ նրա ետևից: Բայց դուրս գալու պահին ասես փոշմանեց, շուռ եկավ և ասաց լրագրողին.

– Իսկ գիտե՞ք, որ Ռիոյի կինն առողջարանում է՝ այստեղից մի քանի կիլոմետրի վրա:

Ռամբերը զարմացական շարժում արեց, սակայն Տարուն արդեն դուրս էր եկել:

Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, Ռամբերը զանգեց բժշկին.

– Ինձ կընդունե՞ք ձեզ մոտ աշխատանքի, մինչև քաղաքից հեռա-նալու միջոց գտնելս:

Մի պահ լռություն տիրեց հեռախոսալարի մյուս ծայրին, հետո լսվեց.

– Իհարկե, Ռամբեր: Շնորհակալ եմ ձեզ:

Այսպես՝ շաբաթներ շարունակ ժանտախտի գերիները պայքարում էին ամբողջ ուժով, որքան կարող էին: Իսկ նրանցից ոմանք, ինչպես օրինակ՝ Ռամբերը (մենք դրանում արդեն համոզվեցինք) անգամ երևակայում էին, որ իրենք գործում էին ինչպես ազատ մարդիկ և որ դեռ ընտրության հնարավորություն ունեին: Սակայն այդ պահին փաստացի կարելի էր ասել, որ օգոստոսի կեսին ժանտախտը զավթել էր ամեն ինչ: Ուրեմն այլևս չկային անհատական ճակատագրեր, այլ կար մի հավաքական պատմություն, որն ինքը ժանտախտն էր, և դրանից բխող բոլորի զգացումները: Դրանցից ամենամեծը բաժանումն էր և աքսորը՝ իր մեջ ներառած և՛ վախը, և՛ ընդվզումը: Ահա թե ինչու այս շոգի ու հիվանդության ամենաթեժ պահին պատմիչը տեղին է համարում ներկայացնել իրավիճակն ընդհանուր գծերով և որպես օրինակ՝ նկարագրել մեր կենդանի մնացած համաքաղաքացիների բռնությունները, հանգուցյալների թաղումները և բաժանված սիրահարների տառապանքները:

Հենց այդ տարվա կեսին էր, որ մրրկահողմ բարձրացավ և մի քանի օր շարունակ փչում էր ժանտախտահար քաղաքի վրա: Մրրիկը սարսափի էր մատնում Օրանի բնակիչներին հատկապես այն պատճառով, որ հարթավայրում չէր հանդիպում որևէ բնական արգելքի և առանց խոչընդոտների, իր ողջ ուժգնությամբ

ներխուժում էր քաղաքի փողոցները: Այդ երկարատև ամիսներից հետո, երբ մի կաթիլ ջուր անգամ չէր զովացրել գորշավուն շերտով ծածկված մեր քաղաքը, քամու հորձանքները սկսեցին պլոկել նրա թեփուկները: Քամին բարձրացնում էր փոշու և թղթի ամպեր, որոնք կպչում էին ավելի ու ավելի հազվագյուտ դարձող անցորդների ոտքերին: Վերջիններիս կարելի էր տեսնել փողոցներում հապճեպ քայլելիս, մարմիններն առաջ կքած, բերանները թաշկինակով կամ ձեռքով փակած: Երեկոյան հավաքույթների փոխարեն, երբ մարդիկ փորձում էին, որքան հնարավոր է, երկարացնել այդ օրերը, որոնցից յուրաքանչյուրը կարող էր վերջինը լինել իրենց համար, այժմ հանդիպում էին մարդկանց փոքրիկ խմբեր, որոնք շտապում էին վերադառնալ տուն կամ մտնել սրճարան, այնպես որ, մի քանի օրվա ընթացքում, մթնշաղին, որը սովորականից շատ ավելի արագ էր վրա հասնում, փողոցներն ամայացան: Միայն քամին էր արձակում անվերջանալի հառաչանքներ: Անհանգիստ և անտեսանելի ծովից բարձրանում էր աղի ջրիմուռների հոտը: Փոշուց լրիվ ճերմակած, ծովային հոտերով ու քամու աղաղակներով հագեցած այդ ամայի քաղաքը տնքում էր, ինչպես մի տարաբախտ կղզի:

Մինչ այդ ժանտախտն ավելի շատ զոհեր էր խլել արվարձանային՝ ավելի խիտ բնակեցված ու անհարմարավետ թաղամասերից, քան քաղաքի կենտրոնից: Բայց հանկարծ հիվանդությունը մի ոստյունով շատ մոտեցավ և տեղավորվեց քաղաքի գործարար թաղամասերում: Բնակիչները մեղադրում էին քամուն, որ քշել բերել էր վարակի սերմերը: «Նա խառնել է բոլոր խաղաթղթերը»,– ասում էր հյուրանոցի տնօրենը: Սակայն ինչ էլ որ եղած լիներ, կենտրոնի թաղամասերն իմացան, որ իրենց հերթն էլ է հասել, նրանք գիշերվա մեջ ավելի ու ավելի հաճախ էին լսում իրենց կողքով սլացող շտապօգնության մեքենաների շաչյունները, որոնք պատուհանների տակ հնչեցնում էին ժանտախտի անկիրք ու թախծալի կանչը:

Քաղաքի հենց ներսում միտք հղացավ մեկուսացնել հատկապես վարակված թաղամասերը և այնտեղից թույլատրել դուրս գալ միայն այն մարդկանց, որոնց աշխատանքը հույժ կարևոր էր: Նրանք, ովքեր ապրում էին այնտեղ, չկարողացան իրենց զսպել և

այդ միջոցառումը որակեցին որպես հատուկ իրենց դեմ ուղղված ծաղրանք, ամեն դեպքում նրանց մտահոգում էր մյուս թաղամասերի հետ գոյություն ունեցող հակադրությունը, որոնց բնակիչներն ապրում էին ինչպես ազատ մարդիկ: Այդ պատճառով վերջիններս իրենց ծանր պահերին մխիթարվում էին՝ մտածելով, որ ուրիշներն ավելի քիչ ազատություն ունեին, քան իրենք: «Ինձնից ավելի անհույս բանտարկյալ էլ կա», ահա այս նախադասության մեջ էր ամփոփված միակ հնարավոր հույսը: https://1915.info

Գրեթե այդ նույն ժամանակ բռնկվեցին սաստիկ հրդեհներ, հատկապես քաղաքի արևմտյան դարպասների մոտ գտնվող ուրախ թաղամասերում: Ըստ տեղեկությունների՝ դա կարանտինից վերադարձած մարդկանց ձեռքի գործն էր, որոնք, սգից ու վշտից խենթացած, վառում էին իրենց սեփական տները՝ հուսալով, թե դրանով կսպանեն ժանտախտը: Մեծ դժվարություններով կարողացան պայքարել նման ձեռնարկումների դեմ, որոնց հաճախականությունը մշտակա վտանգի մեջ էր պահում հսկայական թաղամասերը ուժգին քամիների պատճառով: Ապարդյուն էին բոլոր բացատրությունները, թե իշխանությունների իրագործած տների ախտահանումը բավարար էր վարակի ամեն մի վտանգ բացառելու համար, հարկ եղավ շատ խիստ պատժամիջոցներ կիրառել այդ անմեղ հրձիգների դեմ: Եվ անկասկած, բանտ ընկնելու գաղափարը չէր, որ ստիպեց նահանջել այդ դժբախտներին, այլ բոլոր բնակիչների համընդհանուր համոզվածությունը, որ բանտային դատապարտումը համարժեք էր մահապատժին, որովհետև քաղաքապետարանի բանտում չափազանց շատ էին մահացության դեպքերը: Անշուշտ, այդ կարծիքը անհիմն չէր:

Միանգամայն հասկանալի պատճառներով ժանտախտը կարծես կատաղաբար հարձակվում էր հատկապես նրանց վրա, ովքեր սովորաբար ապրում էին խմբերով՝ զինվորների, հոգևորականների կամ բանտարկյալների վրա: Չնայած որոշ կալանավորների մեկուսացմանը՝ բանտը համայնք էր, և դա լավ ապացուցվում է այն փաստով, որ քաղաքապետարանի բանտում հսկիչները նույնքան տուրք էին վճարում հիվանդությանը, որքան և դատապարտյալները: Ժանտախտի բարձրագույն տեսանկյունից դատելով՝ բոլորը՝

տնօրենից մինչև վերջին կալանավորը, դատապարտված էին մահվան, և թերևս առաջին անգամ բանտում իշխում էր բացարձակ արդարություն:

Զուր էին իշխանությունները փորձում աստիճանակարգ մտցնել այդ համընդհանուր հավասարեցման մեջ՝ միտք ունենալով շքանշաններ տալ բանտապահներին, ովքեր զոհվում էին իրենց պարտականությունները կատարելիս: Քանի որ քաղաքը պաշարված էր, ուստի որոշակի տեսանկյունից կարելի էր բանտապահներին զորակոչիկներ համարել և նրանց հետմահու պարգևատրել զինվորական մեդալներով: Բայց եթե կալանավորները բոլորովին չբողոքեցին, զինվորականները, ընդհակառակը, լավ չընդունեցին այս երևույթը և լիիրավորեն զգուշացրին, որ այն կարող է ցավալի խառնաշփոթ առաջացնել բնակչության մտածողության մեջ: Այս պահանջն ընդունվեց հավուր պատշաճի և որոշվեց, որ խնդրի ամենապարզ լուծումը կլինի ժանտախտից մեռնող պահակներին հետմահու շնորհել համաճարակային մեդալներ: Սակայն չարագործությունն արդեն իրագործված էր առաջին զոհերի համար, հնարավոր չէր անգամ մտածել շքանշանները ետ վերցնելու մասին, և զինվորականները շարունակում էին մնալ իրենց կարծիքին: Մյուս կողմից էլ՝ համաճարակային մեդալն ուներ իր թերությունը, քանի որ չէր թողնում այն բարոյական ազդեցությունը, ինչ զինվորական պարգևատրություն շնորհելիս, որովհետև համաճարակի ժամանակ նման մեդալ ստանալը պարզունակ բան էր թվում:

Դեռ ավելին՝ պատժական վարչությունը չէր կարող գործել ո՛չ կրոնական, ոչ էլ առավել ևս զինվորական իշխանությունների նման: Քաղաքում գործող ընդամենը երկու մենաստանների վանականները, իրոք, ժամանակավորապես տեղավորվել էին բարեպաշտ ընտանիքներում: Նույն կերպով, հենց հնարավորություն էր ստեղծվում, զորանոցներից փոքրիկ խմբեր էին հանվում և կայազոր էին կազմում դպրոցներում կամ այլ հասարակական շենքերում: Այսպիսով, հիվանդությունը, որը քաղաքի բնակիչներին առերևույթ հարկադրել էր պաշարվածներին հատուկ համերաշխություն, միևնույն ժամանակ քանդում էր ավանդական ընկերակցությունները

և մարդկանց կրկին վերադարձնում իրենց մենությանը: Այս ամենը խառնաշփոթ էր ստեղծում:

Կարելի է կարծել, թե այս բոլոր հանգամանքները, ավելացված քամուն, հրդեհ բռնկեցրին նաև որոշ մտքերում: Գիշերով քաղաքի դարպասները դարձյալ բազմաթիվ գրոհների ենթարկվեցին, բայց այս անգամ՝ փոքրիկ զինված խմբերով: Փոխհրաձգություն սկսվեց, եղան վիրավորներ, իսկ մի քանիսին էլ հաջողվեց փախչել: Պահակակետերն ուժեղացվեցին, և այդ փորձերն արագ դադարեցին: Սակայն դա ևս բավարար եղավ, որպեսզի քաղաքում բարձրանար հեղափոխական շունչը՝ առաջացնելով բռնության դեպքեր: Հրդեհված կամ առողջապահական պատճառաբանությամբ փակված տները թալանվեցին: Ճիշտն ասած՝ դժվար է ենթադրել, թե այդ գործողությունները կանխամտածված էին: Մեծ մասամբ որևէ հանկարծակի առիթ դրդում էր մինչ այդ հարգարժան մարդկանց կատարել դատապարտելի արարքներ, որոնք տեղում իսկ անմիջապես ընդօրինակվում էին: Այսպես՝ գտնվեցին մոլեգնած մարդիկ, որոնք խցկվում էին դեռևս բոցերի մեջ կիզվող տները վշտից ընդարմացած տանտիրոջ աչքի առաջ: Այդ ահավոր անտարբերությունը, առաջինների օրինակը խրախուսեց բազմաթիվ հանդիսատեսների, և մութ փողոցում՝ հրդեհի աղոտ լույսի տակ, երևում էին ամեն կողմից փախչող տձևացած ստվերներ՝ աղավաղված մարող բոցերից ուսերի վրա կրելով զանազան իրերի կամ կահույքի մնացորդներ: Դրանք այն միջադեպերն էին, որոնք ստիպեցին իշխանություններին ժանտախտային վիճակը նմանեցնել պաշարողական վիճակին և կիրառել դրանից բխող օրենքները: Գնդակահարեցին երկու գողի, բայց կասկածելի է, թե դա տպավորություն գործեց ուրիշների վրա, քանզի այդչափ մահերի առկայությամբ այս երկու մահապատիժն անցավ աննկատ. դա մի կաթիլ ջուր էր ծովում: Ճիշտն ասած՝ նման տեսարաններն ավելի հաճախակի դարձան, իսկ իշխանությունները ձևացրին անգամ, թե միջամտում են: Միակ միջոցառումը, որը կարծես տպավորություն գործեց մեր բոլոր համաքաղաքացիների վրա, պարեկային ժամ մտցնելն էր: Ժամը տասնմեկից հետո գիշերվա խավարի մեջ ընկղմված քաղաքը քարացած էր թվում:

Երկնահոս լույսի ներքո քաղաքը շարքերով ցուցադրում էր իր սպիտակավուն պատերն ու ուղղաձիգ փողոցները, որոնց վրա բոլորովին չէր երևում ծառի որևէ սև զանգված, որոնց լռությունը երբեք չէր խախտվում անցորդի ոտնաձայներից կամ հեռավոր շնահաչերից: Այդ ժամանակ համրացած մեծ քաղաքն այլևս դառնում էր զանգվածային ու անշարժ խորանարդների հավաքածու, որոնց մեջ մոռացված բարեգործների լռակյաց պատկերները կամ բրոնզի մեջ մեկընդմիշտ խեղդված անցյալի մեծամեծ մարդկանց կերպարանքները փորձում էին իրենց քարե կամ երկաթե շինծու դեմքերով ոգեկոչել մարդու՝ երբեմնի ունեցած աղճատված պատկերը: Այս միջակ արժեքի կուռքերը գահակալում էին թանձր երկնքի տակ, անկենդան խաչմերուկներում՝ որպես անզգա անասուններ, որոնք բավական լավ էին ներկայացնում անշարժ թագավորությունը, ուր մտել էինք մենք, կամ վերջին հրահանգը մեռյալ քաղաքի, որտեղ ժանտախտը, քարն ու խավարն ի վերջո կարող էին լռեցնել ամեն մի ձայն:

Բայց խավարը նաև բոլոր հոգիներում էր, և ճշմարտությունները, որոնք որպես լեգենդներ պատմվում էին թաղումների ժամանակ, չէին կարող վստահություն ներշնչել մեր համաքաղաքացիներին: Եվ քանի որ անհրաժեշտ է խոսել թաղումների մասին, պատմիչը դրա համար ներողություն է խնդրում: Նա լավ է հասկանում կշտամբանքը, որ կարող են իրեն ուղղել այդ կապակցությամբ, սակայն նրա միակ արդարացումն այն է, որ թաղումներ եղել են այդ ամբողջ ժամանակամիջոցում, և որ որոշակիորեն իրեն ստիպել են, ինչպես ստիպել են բոլոր համաքաղաքացիներին, զբաղվել թաղումներով: Ամեն դեպքում նա հակում չունի այս տեսակի արարողությունների նկատմամբ, ընդհակառակը, նախընտրում է ողջերի հասարակությունը, օրինակ՝ ծովային լոգանքները: Սակայն, վերջին հաշվով ծովային լոգանքներն իսպառ վերացված էին, իսկ ողջերի հասարակությունն ամբողջ օրն ահի մեջ էր, թե ստիպված կլինի զիջել մեռյալների հասարակությանը: Ահա սա էր ակնհայտությունը: Անշուշտ, միշտ կարող ես ջանալ, որ չտեսնես այդ ակնհայտությունը, փակել աչքերդ և մերժել այն, բայց ակնհայտությունը սարսափելի ուժ ունի, որն ի վերջո միշտ հաղթում է

ամեն ինչին: Ինչպես օրինակ՝ հրաժարվել թաղումներից այն օրը, երբ ձեր սիրած մարդիկ կարիք ունեն թաղման:

Եվ այսպես՝ այն, ինչ սկզբում բնորոշ էր մեր թաղման արարողություններին, արագությունն էր: Բոլոր պայմանականությունները պարզեցվել էին, և որպես կանոն՝ շքեղ թաղումները վերացված էին: Հիվանդները մեռնում էին իրենց հարազատներից հեռու, և արգելված էին ծիսական գիշերահսկումները այն աստիճանի, որ երեկոյան մեռնողը գիշերը մեն-մենակ էր մնում, իսկ նա, ով մեռնում էր ցերեկը, թաղվում էր առանց հետաձգման: Ընտանիքին իհարկե տեղյակ էին պահում, սակայն մեծ մասամբ հարազատները չէին կարող ներկա գտնվել, քանի որ իրենք էլ մեկուսացվում էին, եթե հիվանդի հետ էին ապրել: Այն դեպքում, եթե հանգուցյալն առանձին էր ապրել՝ հեռու հարազատներից, վերջիններս ներկայանում էին նշված ժամին՝ գերեզմանոց գնալու պահին, երբ մարմինն արդեն լվացված և դագաղի մեջ դրված էր լինում:

Ենթադրենք, թե այդ պայմանականությունը տեղի է ունենում բժիշկ Ռիոյի ղեկավարած օժանդակ հիվանդանոցում: Դպրոցի ելքը գտնվում էր գլխավոր մասնաշենքի ետևում: Իսկ միջանցքից մի դուռ տանում էր դեպի նկուղ, որը լի էր դագաղներով: Հենց այդ նույն միջանցքում հարազատները գտնում էին արդեն փակված մի դագաղ: Անմիջապես անցնում էին ամենակարևոր գործին, այսինքն՝ թղթերը ստորագրել էին տալիս ընտանիքի գլխավորին: Այնուհետև մարմինը բեռնում էին ավտոմեքենայի մեջ, որը կարող էր լինել կամ իսկական դիակառք, կամ շտապօգնության ձևափոխված մի մեծ մեքենա: Ազգականները նստում էին դեռևս թույլատրվող տաքսիներից որևէ մեկը, և մեքենաները ծայրամասային փողոցներով արագությամբ սլանում էին գերեզմանատուն: Այստեղ՝ դարպասների մոտ, ժանդարմները կանգնեցնում էին թափորը, արագ կնիք էին խփում պաշտոնական անցաթղթերին, որոնց առկայության դեպքում միայն հնարավոր էր ունենալ այն, ինչ մեր համաքաղաքացիներն անվանում էին վերջին կացարան, հետո մի կողմ էին քաշվում, իսկ մեքենաները գնում էին կանգնելու մի քառակուսի տարածության մոտ, որտեղ բազմաթիվ փոսեր սպասում էին լցվելու:

Քահանան ընդունում էր մարմինը, քանի որ եկեղեցում արգելված էին թաղման ծառայությունները: Աղոթքներ կարդալով՝ հանում էին դագաղը, կապում պարանով, քաշում, սահեցնում փոսի մեջ, և երբ այն հասնում էր հատակին, քահանան օրհնած ջուր էր ցողում մշտիկով, և արդեն առաջին բուռ հողն էր թափվում կափարիչի վրա: Դրանից մի քիչ առաջ հեռանում էր դիակառքը, որպեսզի անմիջապես ախտահանվի: Եվ մինչ կավահողով լի բահերը դրնգում էին ավելի ու ավելի խուլ ձայնով, հարազատները խցկվում էին տաքսու մեջ: Քառորդ ժամ անց նրանք արդեն իրենց տանն էին:

Այսպիսով, ամեն ինչ իրոք կատարվում էր առավելագույն արագությամբ և առանց նվազագույն վտանգի հնարավորության: Եվ անշուշտ, գոնե համաճարակի սկզբնական շրջանում ակնհայտ էր, որ հարազատների բնական զգացմունքները վիրավորվում էին: Սակայն ժանտախտի ժամանակ նման դատողությունները հաշվի չեն առնվում. ամեն բան զոհաբերվում է հանուն արդյունավետության: Եվ ի վերջո, եթե սկզբում բնակչության բարոյական ոգին տուժել էր նման գործելակերպից, քանզի պատշաճորեն թաղվելու ցանկությունը շատ ավելի տարածված էր, քան կարծում էին, ապա շուտով, բարեբախտաբար, սննդի մատակարարման խնդիրը սրվեց, և քաղաքի բնակիչների հետաքրքրությունը շրջվեց դեպի առավել արդիական հոգսերը: Ամբողջովին տարված հերթեր պահելով, համապատասխան քայլեր ձեռնարկելով և պայմանականություններ կատարելով, եթե ուտել էին ուզում, մարդիկ ժամանակ չունեին մտածելու, թե ինչպես էին մեռնում իրենց շուրջը, և ինչպես կմեռնեին իրենք մի օր: Այսպիսով, նյութական դժվարությունները, որ պիտի չարիք դառնային, հետագայում վերածվեցին բարիքի: Եվ ամեն բան շատ ավելի լավ կլիներ, եթե, ինչպես տեսանք, համաճարակը չծավալվեր:

Քանի որ դագաղները հազվագյուտ դարձան, կտորը չէր հերիքում պատանքների համար, տեղն էր պակասում գերեզմանոցում, պետք էր ինչ-որ բան ձեռնարկել: Ամենապարզը և դարձյալ արդյունավետության տեսակետից, մի քանի արարողություն իրար միացնելն էր, և անհրաժեշտության դեպքում բազմապատկել երթևեկը հիվանդանոցի և գերեզմանոցի միջև: Այսպես՝ Ռիոյի ղեկավարած

հիվանդանոցում այդ ժամանակ կար հինգ դագաղ: Երբ դրանք լցվում էին, բարձում էին շտապօգնության մեքենան: Գերեզմանոցում դագաղները դատարկվում էին, երկաթագույն մարմինները դրվում էին պատգարակների վրա, փոխադրվում հատուկ կառուցված սրահ: Հետո դագաղները լվանում էին հակավարակիչ լուծույթով, ետ տանում հիվանդանոց, և այս գործողությունը կրկնվում էր այնքան, որքան պահանջվում էր: Ուրեմն գործը շատ լավ էր կազմակերպված, և ոստիկանապետը գոհ էր: Նա անգամ Ռիոյին ասաց, որ ի վերջո, դա ավելի լավ էր, քան դիասայլերը, որ քշում էին սևամորթները ժանտախտը նկարագրող հին տարեգրություններում:

– Այո՛,– պատասխանեց Ռիոն,– նույն թաղումներն են, միայն թե մենք գրանցումներ ենք անում: Առաջընթացն անվիճելի է:

Չնայած այս վարչարարական հաջողություններին՝ տհաճ մթնոլորտը, որում անցնում էին պայմանականությունները, ստիպեց իշխանություններին արգելել ազգականների մասնակցությունը արարողություններին: Թույլատրվում էր գալ մինչև գերեզմանոցի դարպասները, և այն էլ՝ ոչ պաշտոնապես: Որովհետև փոփոխություններ եղան թաղման վերջին արարողության վերաբերյալ: Գերեզմանոցի վերջում՝ մազտաքի ծառերով ծածկված մի ամայի տարածքում, փորել էին երկու հսկայական փոս՝ մեկը տղամարդկանց, մյուսը կանանց համար: Այս տեսակետից իշխանությունները դեռ հարգում էին պատշաճության կանոնները, և միայն շատ ավելի ուշ էր, որ իրերի բերումով այդ վերջին պարկեշտությունն էլ չքացավ, և սկսեցին թաղել խառնիխուռն՝ իրար վրա՝ տղամարդ ու կին, առանց մտահոգվելու առաքինության մասին: Բարեբախտաբար այս ծայրահեղ խառնաշփոթությունը բնորոշ էր միայն աղետի վերջին օրերին: Մեզ հետաքրքրող ժամանակամիջոցում փոսերի առանձնացումը դեռ գոյություն ուներ, և իշխանությունները խստորեն հետևում էին դրան: Ամեն փոսի հատակին ծխում ու բլթբլթում էր չհանգած կրի մի մեծ զանգված: Փոսի եզրերին նույն չհանգած կրից բլրակներ կային, որոնցից առաջացող պղպջակները թռչում ու պայթում էին բաց օդում: Երբ շտապօգնության երթևեկն ավարտվում էր, հերթով բերում էին պատգարակները և մեկը մյուսի վրա, խիտ-խիտ փոսի մեջ էին

գցում մերկ ու թեթևակիորեն շրջված մարմինները, և անմիջապես ծածկում կրի նոր շերտով, հետո՝ հողով, բայց միայն որոշ բարձրությամբ, որպեսզի տեղ մնար հետագա եկվորների համար: Հաջորդ օրը հարազատները հրավիրվում էին ստորագրելու ինչ-որ մատյանում, որտեղ նշվում էին հնարավոր տարբերությունները մարդկանց և, ասենք, շների միջև, ամեն դեպքում հնարավոր էր ստուգել:

Այս բոլոր գործողությունների համար պետք էր ունենալ անձնակազմ, բայց մշտապես գտնվում էին անհրաժեշտ սպասարկողներ չունենալու նախօրյակին: Սկզբում պաշտոնական, հետո պատահական շատ հիվանդապահներ ու գերեզմանափորներ զոհ էին գնացել ժանտախտին: Որքան էլ նախազգուշական միջոցներ էին ձեռնարկվում, վարակը հայտնվում էր մի օր: Բայց հարկ է լավ մտածել այդ մասին, որովհետև ամենազարմանալին այն էր, որ համաճարակի ամբողջ ընթացքում այդ գործով զբաղվողների պակաս երբեք չզգացվեց: Ճգնաժամային շրջանը սկսվեց այն ժամանակից քիչ առաջ, երբ ժանտախտը հասնում էր իր գագաթնակետին, և բժիշկ Ռիոյի տագնապներն արդարացան: Ո՛չ մասնագետների, ո՛չ սև աշխատանքների համար, ինչպես ինքն էր անվանում, աշխատուժը բավարար չէր: Բայց այն պահից, երբ ժանտախտը հիմնավորապես նվաճեց ամբողջ քաղաքը, անգամ նրա ծայրահեղ ծավալումն ի վերջո ունեցավ իր բավական բարենպաստ հետևանքները, քանի որ այն կազմալուծեց քաղաքի ողջ տնտեսական կյանքը և այսպիսով առաջացրեց մեծ թվով գործազուրկներ: Մեծ մասամբ նրանք չէին կարող համալրել մասնագետների շարքերը, բայց սևագործ բանվորներ գտնելու հարցում միանգամայն հարմար էին: Այդ պահից ի վեր իսկապես երևաց, որ թշվառությունն ավելի ուժեղ էր, քան վախը, առավել ևս, որ աշխատանքը վարձատրվում էր ըստ վտանգավորության աստիճանի: Առողջապահական ծառայությունները կարողացան կազմել հայցողների ցուցակը, և հենց որ ազատ տեղ էր հայտնվում, տեղեկացնում էին առաջին համարներին, որոնք իսկույն ներկայանում էին, բացի այն դեպքերից, եթե այդ ընթացքում նրանք ևս անհետացած չէին լինում: Այդ պատճառով էլ ոստիկանապետը, որ երկար ժամանակ տատանվում էր ժամկետային

կամ ցմահ բանտարկյալներին ներգրավել այս աշխատանքներում, կարողացավ խույս տալ նման ծայրահեղություններից: Նրա կարծիքով՝ որքան էլ շատ գործազուրկներ լինեին, կարող էին սպասել:

Այսպես թե այնպես, մինչև օգոստոսի վերջը մեր համաքաղաքացիներին իրենց վերջին կացարանն էին տանում եթե ոչ հավուր պատշաճի, ապա գոնե կարգուկանոնով, որը իշխանություններին պահում էր այն համոզման մեջ, որ իրենք կատարում են իրենց պարտականությունները: Սակայն այստեղ մի քիչ դեպքերից պիտի առաջ անցնել՝ նկարագրելու այն միջոցառումները, որոնց ստիպված էին դիմել: Օգոստոս ամսից սկսած՝ ժանտախտը հասավ այնպիսի աստիճանի, որ զոհերի թիվը զգալիորեն գերազանցեց մեր փոքրիկ գերեզմանատան բոլոր հնարավորությունները: Ջուր քանդեցին պատերի պանելները՝ ննջեցյալների համար անցում բացելով դեպի շրջակա տարածքները. պետք էր ուրիշ բան մտածել: Սկզբում որոշեցին թաղել գիշերը, ինչը սկզբնական շրջանում միանգամից թույլ տվեց ազատվել որոշ պայմանականություններից: Հնարավոր էր ավելի ու ավելի շատ մարմիններ խցկել մեքենաների մեջ: Եվ որոշ ուշացած անցորդներ, ովքեր օրենքին հակառակ դեռ մնացել էին ծայրամասային թաղամասերում պարետային ժամից հետո (և կամ նրանք, ովքեր հայտնվում էին այնտեղ իրենց գործի բերումով), երբեմն հանդիպում էին երկարավուն, սպիտակ մեքենաներին, որոնք սլանում էին ողջ թափով, իսկ գիշերվա դատարկ փողոցներն արձագանքում էին նրանց խուլ շչակներին: Այնուհետև մարմինները հապշտապ նետվում էին փոսերի մեջ: Նրանք դեռ չէին հասցնում ընկնել փոսի մեջ, երբ կրահողի գնդերը փշրվում էին նրանց դեմքերին, և հողը ծածկում էր նրանց՝ անանուն, առանց տարբերակման, այն փոսերում, որոնք գնալով ավելի խոր էին փորվում:

Սակայն որոշ ժամանակ անց ստիպված էին ուրիշ և էլ ավելի լայն տարածք փնտրել: Պրեֆեկտուրայի հրամանով բռնագրավվեցին անժամկետ օգտագործման գերեզմանատեղերը և բոլոր արտաշիրմված մնացուկները տեղահան արվեցին ու ուղարկվեցին դիակիզարանի վառարանները: Շուտով հարկ եղավ ժանտախտից զոհված դիակներն էլ տանել դիակիզարան: Բայց

ստիպված եղան օգտագործել հին հրկիզարանը, որը գտնվում էր քաղաքի արևելքում՝ դարպասներից դուրս: Պահակակետերը քշվեցին ավելի հեռու, իսկ քաղաքապետարանի մի ծառայող բավականին հեշտացրեց իշխանությունների պարտականությունը՝ խորհուրդ տալով օգտագործել տրամվայները, որոնք մի ժամանակ լեռնային ճանապարհով երթևեկում էին դեպի ծովը, բայց հիմա անգործության էին մատնված: Այդ նպատակով կարգի բերվեցին տրամվայների կցորդների ու շարժիչ վագոնների ներքին մասը՝ հանելով նստարանները, և շրջեցին տրամվայների ճանապարհը դիավառարանի բարձրությամբ, որն այսպիսով դարձավ երթուղու վերջին կայանը:

Եվ ամռան վերջին, նաև աշնանային անձրևների ժամանակ, խոր գիշերվա մեջ կարելի էր տեսնել լեռնային ճանապարհի ամբողջ երկայնքով սլացող, ծովի վերևում մերթընդմերթ զրնգացող-չխկչխկացող անուղևոր տրամվայների տարօրինակ շարասյունը: Բնակիչներն ի վերջո հասկացան, թե ինչ էր դա: Եվ չնայած պարեկներն արգելում էին մոտենալ լեռնային ճանապարհին, ոմանց շատ հաճախ հաջողվում էր սողոսկել ալիքների հարվածներից հեծեծող ժայռերի մեջ և ծաղիկներ նետել անցնող տրամվայների կցորդների մեջ: Այդժամ՝ ամառվա գիշերվա մեջ, լսվում էր ծաղիկներով ու ննջեցյալներով բեռնված, ոլորավազ մեքենաների շռնդյունը:

Առավոտվա կողմ՝ առաջին օրերին, մի թանձր ու սրտխառնուք առաջացնող գոլորշի էր կախվում քաղաքի արևելյան թաղամասերի վրա: Բոլոր բժիշկների կարծիքով, որքան էլ տհաճ լինեին այս ծխարձակումները, ոչ ոքի չէին կարող վնասել: Սակայն այս թաղամասերի բնակիչներն իսկույն սպառնացին, թե կհեռանան իրենց բնակավայրերից՝ համոզված, որ այդպիսով ժանտախտն իրենց գլխին էր թափվում երկնքից, և ստիպեցին իշխանություններին բարդ կոյուղային համակարգի միջոցով շրջել այդ ծուխերը, և միայն այդ ժամանակ բնակիչները խաղաղվեցին: Միայն ուժգին քամիների ժամանակ արևելքից եկող մի տարտամ հոտ հիշեցնում էր նրանց, որ իրենք ապրում էին մի նոր հասարակարգում, և որ ժանտախտի բոցերն ամեն երեկո լափում են իրենց ցեղախմբի անդամներին:

Այդպիսին էին համաձարակի ծայրահեղ հետևանքները: Բայց բարեբախտություն էր, որ հետագայում ժանտախտն ավելի չահագ-նացավ, քանզի կարելի էր կարծել, թե մեր գրասենյակների հնա-րամտությունը, պրեֆեկտուրայի տրամադրվածությունը և անգամ դիավառարանի կարողությունը հնարավոր կլիներ հաղթահարել: Ռիոն գիտեր, որ այդ դեպքում նախատեսված էին հուսահատու-թյան վճիռներ, ինչպես օրինակ՝ դիակները ծովը նետել, և նա առանց դժվարության պատկերացնում էր դրանց հրեշավոր փրփուրը կապ-տավուն ջրի վրա: Նա նաև գիտեր, որ եթե վիճակագրական տվյալ-ները շարունակեին բարձրանալ, ոչ մի կազմակերպություն՝ անգամ ամենահիանալին, ի զորու չէր լինելու դիմակայել, որ մարդիկ մեռնելու էին կույտերով, որ դիակները հոտելու էին փողոցներում՝ չնայած պրե-ֆեկտուրայի թափած ջանքերին, և որ քաղաքը դեռ տեսնելու էր, թե ինչպես են հրապարակներում մահամերձները կառչում ապրողներից լիիրավ ատելության և տխմարագույն հույսի խառը զգացումներով:

Ամեն դեպքում հենց այդ ակնհայտությունն ու վախն էին, որ մեր համաքաղաքացիների մեջ պահում էին աքսորի և բաժանման զգացումը: Այդ տեսակետից մեր պատմիչը հիանալիորեն գիտակ-ցում է, թե որքան ցավալի է, որ իր տարեգրության մեջ չի կարող ինչ-որ գունագեղություն մտցնել, ինչպես օրինակ՝ որևէ հերոսական կերպար կամ ցնցող արարմունք, ինչպես հին պատմություններում: Բանն այն է, որ ոչինչ ավելի գունագեղ ու ազդեցիկ չէ, քան աղետը, և ամենամեծ դժբախտությունները հենց տևողության պատճառով միապաղաղ են դառնում: Ապրողների հիշողություններում ժան-տախտի ահավոր օրերը չեն հայտնվում ահեղ ու շքեղ բոցերի տես-քով, այլ ավելի շուտ որպես մի անվերջանալի ավերիչ երթևեկ, որն իր ճանապարհին ոտնակոխ է անում ամեն բան:

Ո՛չ, ժանտախտը որևէ ընդհանրություն չուներ այն հրապուրիչ մեծ պատկերների հետ, որոնք համաձարակի սկզբում հետապնդում էին բժիշկ Ռիոյին: Ժանտախտը նախևառաջ ողջախոհ և անբա-սիր գործող վարչարարություն էր: Այսպես է (թող փակագծերում ասվի), որ ոչնչին ու ոչ մեկին չդավաճանելու և հատկապես ինքն իրեն չդավաճանելու համար պատմիչը ձգտել է օբյեկտիվ լինել: Նա

գրեթե ոչինչ չի ցանկացել փոխակերպել արվեստի ազդու միջոցներով, բացի այն տարրական պահանջներից, որոնք վերաբերում են փոքրիշատե փոխկապակցված հարաբերություններ ստեղծելուն: Եվ օբյեկտիվությունն ինքն է նրան հրամայում ասել այժմ, որ այն ժամանակների ամենամեծ, ամենաընդհանուր, ինչպեսև ամենախոր տառապանքը բաժանումն էր, և եթե անհրաժեշտ է գիտակցաբար տալ ժանտախտի՝ այդ փուլի մի նոր նկարագրությունը, ապա ճշմարիտ չի լինի չասել, որ տառապանքն այդ շրջանում կորցնում էր իր հուզականությունը: Մեր համաքաղաքացիները, հատկապես նրանք, ովքեր առավելս էին տառապել այդ բաժանումից, վարժվե՞լ էին արդյոք այդ վիճակին: Ճիշտ չէի լինի լրիվ հաստատել դա: Ավելի ճշգրիտ կլիներ ասել, որ թե՛ բարոյապես, թե՛ ֆիզիկապես մարդիկ հյուծված էին: Ժանտախտի սկզբում նրանք շատ լավ էին հիշում իրենց կորցրած էակին և կարոտում էին նրան: Բայց եթե նրանք պարզորոշ հիշում էին սիրելի դեմքը, ծիծաղը, այս կամ այն օրը, որին հաջորդում էր երջանկության գիտակցումը, դժվարանում էին պատկերացնել, թե ինչ կարող էր անել իր էության մյուս կեսը այնտեղ՝ հետայսու այնքան հեռավոր վայրում և այդ նույն ժամին, երբ ոգեկոչում էին նրան: Մի խոսքով՝ այդ ժամանակաշրջանում նրանց հիշողությունը լավ էր գործում, սակայն անբավարար էր երևակայությունը: Իսկ ժանտախտի երկրորդ փուլում նրանք կորցրին նաև հիշողությունը: Ոչ թե մոռացել էին սիրելիի կերպարանքը, այլ, որն ի վերջո նույն բանն է, մոռացել էին նրա նյութականությունը, այն այլևս չէին զգում իրենց ներսում: Եվ քանի որ առաջին շաբաթները նրանք տրտնջում էին, որ իրենց սերը միայն ստվերների հետ է կապված, հետզհետե զգացին, որ այդ ստվերները կարող էին դառնալ ավելի աննյութական՝ կորցնելով անգամ հիշողության պահած փոքրագույն նրբերանգները: Այդ երկարաձիգ բաժանման վերջում նրանք այլևս չէին պատկերացնում իրենց ունեցած երբեմնի մտերմիկությունը, ոչ էլ այն, թե ինչպես կարող էր իրենց մոտ ապրել մի էակ, որին ցանկացած պահին կարող էին ձեռքով դիպչել:

Այս տեսակետից նրանք մտել էին ժանտախտի կարգավիճակի մեջ՝ նույնքան արդյունավետ, որքան և սովորական: Մեզնից ոչ մեկն

այլևս չուներ վեհ զգացմունքներ: Մինչդեռ բոլորն ունեին միօրինակ զգացումներ: «Ժամանակն է, որ սա վերջանա»,– ասում էին մեր համաքաղաքացիները, որովհետև աղետի ժամանակ միանգամայն բնական է, երբ ցանկանում ես տեսնել համընդհանուր տառապանքների վերջը, և նաև որովհետև նրանք իրոք ցանկանում էին, որ դա վերջանար: Բայց այդ ամենն ասվում էր անկիրք, առանց սկզբնական օրերի սուր ցավի և միայն մի քանի պատճառաբանությամբ, որոնք աղքատիկ էին և մեզ համար դեռևս պարզ: Առաջին շաբաթների վայրագ պոռթկումին հաջորդել էր մի տեսակ ընկճվածություն, որ սխալ կլիներ արժևորել որպես հնազանդություն, չնայած պետք է նշել, որ այն նման էր ժամանակավոր համաձայնության:

Մեր համաքաղաքացիները հնազանդվել էին կամ, ինչպես ասում են, հարմարվել էին, քանի որ այլ ելք չկար: Բնականաբար նրանք դեռ պահպանում էին թշվառության և տառապանքի մեջ գտնվող մարդկանց կեցվածքը, սակայն այլևս չէին զգում սկզբնական սրությունը: Ասենք՝ բժիշկ Ռիոն, օրինակ, համարում էր, որ հենց դա էր իսկական դժբախտությունը, և որ հուսահատությանը վարժվելն ավելի վատ է, քան ինքը՝ հուսահատությունը: Մինչ բաժանվածները իսկական դժբախտներ չէին, նրանց տառապանքում որոշակի պայծառություն կար, որն արդեն հանգչում էր: Այժմ նրանց կարելի էր տեսնել փողոցների անկյուններում, սրճարաններում կամ ընկերների մոտ՝ անվրդով, ցրված, հայացքներն այնքան ձանձրացած, որ ամբողջ քաղաքն ասես վերածվել էր հսկայական մի սպասասրահի: Նրանք, ովքեր զբաղմունք ունեին, իրենց գործն անում էին ժանտախտին համահունչ՝ ջանասիրաբար և առանց աղմկելու: Բոլորը շատ համեստ էին դարձել: Առաջին անգամ բաժանվածները բացակայի մասին խոսում էին առանց տհաճության, բոլորի կողմից ընդունված լեզվով՝ նույն անկյան տակ քննարկելով իրենց բաժանումը, ինչպես քննարկում էին վիճակագրական տվյալները: Ուրեմն նրանք, որ մինչ այդ պահը իրենց տառապանքը վայրագաբար խառնել էին համընդհանուր դժբախտությանը, այժմ ընդունում էին այդ խառնաշփոթը: Առանց հիշողության և առանց հույսի՝ նրանք տեղավորվում էին ներկայի մեջ: Ճիշտն ասած՝ ամեն բան նրանց համար

մտնում էր այսօրվա մեջ: Հարկ է ասել, որ ժանտախտը բոլորից խլել էր սիրելու և անգամ բարեկամություն անելու կարողությունը: Քանզի սերը գոնե մի քիչ ապագա է պահանջում, մինչդեռ մեզ ապրելու մնում էին հաշված րոպեներ:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս ամենի մեջ ոչինչ բացարձակ չէր: Քանզի, եթե ճիշտ է, որ բոլոր բաժանվածները հասնում են այդ վիճակին, ապա ճիշտ կլինի նաև ավելացնել, որ բոլորը չեն, որ միաժամանակ են հասնում և որ հենց հասնում են այդ նոր վիճակին, հանկարծակի կայծակներ, վերադարձներ, պայծառացումներ զոհերին տալիս են ավելի թարմ և ավելի ցավագին զգացողություններ: Ցրվելու նման պահերն անհրաժեշտ էին, որպեսզի մարդիկ ծրագրեր կազմեին, թե ժանտախտն իբր վերջացել է: Պետք է, որ նրանք կրկին զգային հանկարծահաս և ինչ-որ գթասրտությամբ առաջացած անառարկա խանդի խայթոց: Ոմանք ապրում էին նաև անսպասելի վերածնունդ, շաբաթվա որոշ օրերին դուրս գալիս իրենց թմբիրից, բնականաբար կիրակի օրերին և շաբաթ օրվա երկրորդ կեսին, քանի որ այդ օրերը որոշակի ծիսակատարությունների էին նվիրված բացակայության ժամանակներում: Կամ էլ ինչ-որ մելամաղձ էր նրանց պարուրում օրվա վերջին՝ ավետելով հույս, թեպետ ոչ միշտ հաստատուն, թե իրենք վերագտնում են հիշողությունը: Իրիկնային այդ ժամը, որը հավատացյալների համար խղճի քննության ժամ է, ծանր է կալանավորի կամ աքսորականի համար, որոնք կարող են քննության ենթարկել միայն դատարկությունը: Այն ժամը նրանց մի պահ հանում էր թմբիրից, հետո նրանք դարձյալ վերադառնում էին իրենց անզգայական վիճակին, պարփակվում ժանտախտի մեջ: Արդեն հասկանալի է, որ դա նշանակում էր հրաժարվել իրենց ունեցած ամենաթանկից՝ անձնականից: Այնժամ, երբ ժանտախտի սկզբնական շրջանում նրանք խենթանում էին իրենց համար մեծ նշանակություն ունեցող փոքրագույն բաներից, որոնք գոյություն չունեին ուրիշների համար, և այդպիսով անձնական կյանքն էին փորձարկում, այժմ, ընդհակառակը, նրանց հետաքրքրում էր միայն այն, ինչը հետաքրքրում էր մյուսներին, նրանք այլևս ունեին միայն ընդհանուր գաղափարներ, և անգամ նրանց սերը ստացել էր ամենավերացական

կերպարանքը: Նրանք այն աստիճանի էին տրվել ժանտախտին, որ երբեմն պատահում էր՝ հույս էին տածում միայն քնած ժամանակ, երբ ապշահար մտածում էին. «Ո՞ւր են այդ ուռուցքները, ամեն ինչ թող վերջանա»: Բայց նրանք իրականում արդեն քնած էին, և այդ ամբողջ ժամանակը երկարաձիգ քուն էր: Քաղաքը բնակեցված էր արթնացած քնածներով, ովքեր իրենց ճակատագրից իրապես խույս էին տալիս միայն այն եզակի դեպքերում, երբ գիշերն առերևույթ փակված վերքը հանկարծակի բացվում էր: Ու վեր թռչելով, արդեն լրիվ արթնացած՝ նրանք մի տեսակ շփոթահար կծոտում էին բորբոքված շրթունքները՝ կայծակնորեն վերագտնելով իրենց հանկարծակի երիտասարդացած տառապանքը և նրա հետ նաև իրենց սիրո տագնապահար դեմքը: Առավոտյան նրանք վերադառնում էին աղետին, այսինքն՝ հին կյանքին:

Բայց հարց է առաջանում՝ ի՞նչ տեսք ունեին այդ բաժանվածները: Պատասխանը պարզ է՝ նրանք ոչ մի տեսք չունեին: Կամ եթե նախընտրում եք, նրանց տեսքը միանման էր, լրիվ համընդհանուր տեսք: Նրանք կիսում էին քաղաքի մանկական անվրդովությունն ու տատանումները: Նրանք կորցրել էին քննադատական ոգու զգացումը՝ փոխարենը ձեռք բերելով սառնասրտության զգացում: Կարելի էր նրանց մեջ տեսնել, օրինակ, այնպիսիներին, որոնք ձևացնում էին, թե բոլորի նման լրագրերում կամ ռադիոհաղորդումներում փնտրում էին հիմքեր՝ հավատալու ժանտախտի մոտալուտ վախճանին և փայփայելու ցնորական հույսեր կամ զգալու անմիտ ահ ու սարսափ, երբ կարդում էին ինչ-որ լրագրողի դատողությունները՝ գրված հանպատրաստից և ձանձրույթից հորանջելով: Իսկ ընդհանրապես նրանք խմում էին իրենց գարեջուրը կամ խնամում հիվանդներին, ծուլանում էին կամ ուժասպառվում շատ աշխատելուց, դասավորում էին խաղաքարեր կամ պտտեցնում ձայնասկավառակներ՝ այս ձևով տարբերվելով մեկը մյուսից: Այլ կերպ ասած՝ նրանք այլևս ոչինչ չէին ընտրում: Ժանտախտը նրանց մեջ ոչնչացրել էր արժևորելու դատողությունը: Եվ դա երևում էր այն բանից, որ ոչ մեկին այլևս չէր հետաքրքրում գնած հագուստի կամ սննդի որակը: Ամեն ինչ ընդունվում էր առանց տարբերակման:

Վերջում կարելի է հավելել, որ տառապյալ բաժանվածներն այլևս չունեին այն հետաքրքիր առավելությունը, որը նրանց պաշտպանում էր սկզբնական շրջանում: Նրանք կորցրել էին սիրո եսասիրությունը և դրանից բխող նպաստավորությունը: Դրան հակառակ՝ այժմ վիճակը պարզ էր. աղետը վերաբերում էր բոլորին: Մենք քաղաքի դարպասների մոտ ճայթող կրակոցների մեջ, կնիքների հարվածների տակ, որոնք վանկարկում էին մեր կյանքը կամ մեր հուղարկավորությունը, հրդեհների ու գրանցման թերթիկների, ահաբեկչության, պայմանականությունների միջև, որոնք խոստանում էին ամոթալի, բայց ձևակերպված վախճան՝ սարսափազդու ծխերի և շտապօգնության մեքենաների անվրդով ազդանշանների մեջ, մենք բոլորս սնվում էինք աքսորի նույն հացով՝ սպասելով չգիտես թե ինչի վերամիավորմանը և նույն սրտաճմլիկ խաղաղությանը: Անշուշտ, մեր սերը մշտապես մեզ հետ էր, սակայն այն անկիրառելի էր, պարզապես ծանր՝ կրելու համար, անգործունյա՝ մեր մեջ, ստերջ, ինչպես ոճիրը կամ մահվան դատապարտիժը: Կար միայն անապագա համբերություն և համառ սպասում: Իսկ այդ տեսանկյունից մեր որոշ համաքաղաքացիների կեցվածքը, երբ նրանք հերթ էին կանգնում մթերային կրպակների առջև, քաղաքի չորս կողմերում, մտորելու առիթ էր տալիս: Ուրեմն նույն հնազանդությունն էր, նույն անսահման համբերատարությունը, բայց միևնույն ժամանակ սահմանափակ և առանց պատրանքների: Հարկ էր միայն այդ զգացումը բարձրացնել հազար անգամ ավելի բարձր աստիճանի՝ բաժանման զգացումի համեմատ, քանզի այս դեպքում խոսքը վերաբերում էր մեկ ուրիշ քաղցի, որը կարող էր ամեն ինչ լափել:

Ամեն դեպքում ենթադրվում է, որ ցանկալի կլինի ճշգրիտ պատկերացում ունենալ մեր քաղաքի բաժանվածների հոգեկան վիճակի մասին, ուրեմն հարկ կլինի կրկին ոգեկոչել այն հավերժական թվացող ոսկեզօծ և փոշեպատ երեկոները, որոնք իջնում էին ծառազուրկ քաղաքի վրա, մինչ տղամարդիկ ու կանայք լցնում էին բոլոր փողոցները: Քանզի, որքան էլ տարօրինակ թվա, մեքենաների ու մեխանիզմների դղրդյունների բացակայության պայմաններում, որով սովորաբար բարբառում են քաղաքները, դեռևս

արևով ողողված դարավանդներից բարձրանում էր ոտնաքայլերի և խուլ ձայների ահռելի աղմուկը, հազարավոր ներբանների ցավագին քստքստոցը՝ ծանրացած երկնքում չափավորվելով աղետի շաչյուններից, անվերջանալի, հետզհետե անտանելի դարձող դոփ-դոփյունը, որը քիչ-քիչ լցնում էր ամբողջ քաղաքը և երեկոյից երեկո ավելի էր հնչեցնում իր հավատարիմ ու թախծալի ձայնը՝ իբրև կոյր համառություն, որը մեր սրտերում փոխարինում էր սիրուն:

Սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին ժանտախտը շարունակում էր իր ծանրության տակ ճզմել քաղաքը: Քանի որ արդեն խոսել ենք հետիոտների մասին, նշենք, որ հարյուրհազարավոր մարդիկ դեռ իրենց դոփյուններով քայլում էին անվերջանալի շաբաթների ընթացքում: Մառախուղը, շոգն ու անձրևը անընդմեջ հաջորդում էին իրար: Հարավից եկած սարյակների ու կեռնեխների լուռ երամները թռչում էին բարձր երկնքում, բայց շրջանակի մեջ էին պահում մեր քաղաքը՝ հիշեցնելով Պանլուի նկարագրած փայտե ցորեն ծեծելու տարօրինակ կամնակը[1], որը պտույտ էր գործում տների վերևում՝ նրանց պահելով առանձնացած: Հոկտեմբերի սկզբին տեղատարափ անձրևները լվացին քաղաքի փողոցները: Այդ ամբողջ ժամանակահատվածում որևէ կարևոր բան տեղի չունեցավ՝ չհաշված հետիոտների անդադար քայլքը:

Այդ ժամանակ էր, որ Ռիոն և բարեկամները զգացին, թե որքան հոգնած էին: Փաստորեն, սանիտարական ջոկատների աշխատողներն այլևս անկարող էին տանել այդ հոգնությունը: Բժիշկ Ռիոն նկատել էր դա՝ տեսնելով ընկերների և հենց իր վրա իջած մի տեսակ տարօրինակ անտարբերությունը: Օրինակ՝ այն մարդիկ, ովքեր մինչ այդ բուռն հետաքրքրություն էին ցուցաբերել ժանտախտին

[1] Բառախաղ, ֆր. le fleau նշանակում է և՛ աղետ, և՛ ցորեն ծեծելու թակ, կամնակ:

https://1915.info

վերաբերող ամեն մի տեղեկատվության նկատմամբ, այժմ բացարձակապես չէին հետաքրքրվում դրանով:

Ռամբերը, որին ժամանակավորապես հանձնարարված էր վերջերս իր հյուրանոցում տեղավորված կարանտինային տներից մեկի ղեկավարումը, անգիր գիտեր իր հսկողության տակ գտնվողների թիվը: Գիտեր անհապաղ մեկուսացման համակարգի անգամ ամենափոքր մանրամասնը, որ ինքն էր կազմակերպում հիվանդության նշանների հանկարծակի հայտնվելու դեպքում: Կարանտինի մեջ գտնվողների վրա շիճուկի թողած ազդեցության վիճակագրությունը տպված էր նրա հիշողության մեջ: Բայց նա անկարող էր ասել ժանտախտին զոհ գնացածների շաբաթական թիվը, իրապես պատկերացում չուներ հիվանդության ծավալման կամ նահանջի մասին: Եվ չնայած այս ամենին՝ նա պահում էր մոտակա օրերին քաղաքից փախչելու հույսը:

Ինչ վերաբերում է մյուսներին, գիշերուզօր թաղված աշխատանքի մեջ՝ նրանք ո՛չ լրագիր էին կարդում, ո՛չ ռադիո լսում: Եվ եթե նրանց որևէ նորություն էին հայտնում, նրանք ձևացնում էին, թե հետաքրքրվում են դրանով, բայց իրականում այդ լուրերն ընդունում էին նույն ցրված անտարբերությամբ, ինչպես մեծ պատերազմների մարտիկները, ովքեր, հյուծված աշխատանքներից, ջանում էին միայն չթերանալ իրենց ամենօրյա պարտականություններում՝ հույս չունենալով ո՛չ վճռորոշ գործողության, ո՛չ շուտափույթ զինադադարի:

Գրանը, որը շարունակում էր իրականացնել ժանտախտի թելադրած անհրաժեշտ հաշվարկները, անշուշտ, անկարող կլիներ հրապարակել ընդհանրական ցուցանիշներ: Ի հակադրություն Տարուի, Ռամբերի և Ռիոյի, որոնք ակնհայտորեն դիմադրում էին հոգնածությանը, Գրանը երբևէ չէր փայլել իր առողջությամբ: Մինչդեռ նա համատեղում էր քաղաքապետարանի օժանդակ գործառույթներին քարտուղարի գործը Ռիոյի մոտ և նաև իր գիշերային աշխատանքները: Այսպես նրան կարելի էր տեսնել աստիճանաբար սաստկացող հյուծանքի վիճակում, նաև տարված էր մի քանի սևեռուն գաղափարներով, օրինակ՝ մտածում էր ժանտախտի

ավարտից հետո գոնե մեկ շաբաթով տրվել լիակատար հանգստի, իսկ հետո աշխատել ճիշտ ձևով «Հանե՛ք գլխարկները» գործի վրա, որին նա արդեն ընթացք էր տալիս: Երբեմն նրա վրա իջնում էին նաև հանկարծահաս քնքշություններ, և նման պահերին նա հաճույքով էր Ռիոյի հետ խոսում Ժաննայի մասին, մտածում էր, թե հիմա որտե՞ղ կարող էր նա լինել և մտաբերո՞ւմ էր արդյոք իրեն լրագրերն ընթերցելիս: Այդ նրա հետ էր, որ Ռիոն մի օր իր սեփական կնոջ մասին հանկարծ սկսեց խոսել, այն էլ շատ պարզունակ բառերով՝ մի բան, որ մինչ այդ երբեք չէր արել: Զվստահելով կնոջ առողջական վիճակի մասին նրա ուղարկած տվյալներին՝ նա որոշեց անմիջականորեն կապվել առողջարանի գլխավոր բժշկի հետ: Ստացված պատասխանը հայտնում էր, որ հիվանդի վիճակը վատթարացել էր, սակայն իրեն վստահեցնում էին, որ ամեն բան արվում էր հիվանդության զարգացումը կանխելու համար: Ռիոն այդ լուրը պահում էր իր մեջ և միայն հոգնածությամբ կարող էր բացատրել, թե ինչպես կարողացավ իր գաղտնիքը վստահել Գրանին: Վերջինս խոսել էր իր Ժաննայի մասին, հետո հարցուփորձ էր արել Ռիոյի կնոջ մասին, և Ռիոն պատասխանել էր նրան: «Գիտեք,– ասել էր Գրանը,– մեր ժամանակներում այդ հիվանդությունը մեծ հաջողությամբ բուժում են»: Ռիոն համաձայնել էր՝ միայն ասելով, որ բաժանումը շատ երկարեց, և որ ինքը գուցե կարողանար օգնել կնոջը՝ հաղթահարելու հիվանդությունը, մինչդեռ նա այսօր իրեն լրիվ միայնակ էր զգում: Հետո լռել էր և խուսափողական պատասխաններ տվել Գրանի հարցերին:

Մյուսներն էլ նույն վիճակում էին: Տարուն ամենից լավ էր դիմանում, բայց նրա օրագրերը ցույց են տալիս, որ եթե նրա հետաքրքրասիրությունը չէր նվազել խորությամբ, ապա կորցրել էր իր բազմազանությունը: Իրոք, այդ ամբողջ ժամանակահատվածում նա կարծես հետաքրքրվում էր միայն Կոթարով: Երեկոները Ռիոյի տանը, որտեղ նա ի վերջո տեղավորվել էր այն ժամանակից ի վեր, ինչ հյուրանոցը վերածվել էր կարանտինային տան, մի կերպ էր լսում Գրանին կամ բժշկին, երբ հայտնում էին արդյունքները: Նա անմիջապես խոսակցությունը տեղափոխում էր իր օրանյան կյանքի

աննշան մանրամասների վրա, որոնք իրեն ընդհանուր առմամբ ավելի էին հետաքրքրում:

Ինչ վերաբերում է Կաստելին, այդ օրը, երբ նա եկավ բժշկին հայտնելու, որ շիճուկն արդեն պատրաստ է, և երբ նրանք որոշեցին առաջին փորձարկումն անել պրն Օթոնի փոքրիկ տղայի վրա, որ նոր էին բերել հիվանդանոց, և որի վիճակը Ռիոյին անհույս էր թվում, և երբ վերջինս իր ծեր բարեկամին հաղորդում էր վիճակագրական վերջին տվյալները, նկատեց, որ խոսակիցը փլված է բազկաթոռին և քնած խորունկ քնով: Եվ այդ դեմքը՝ սովորաբար մեղմությամբ և հումորով լի, որը հավերժական ջահելության տպավորություն էր թողնում, հանկարծ այժմ լքված տեսք ուներ, և կիսաբաց շրթունքների արանքից լորձունքի մի շիթ ի ցույց էր դնում այդ դեմքի թորշոմությունն ու ծերությունը: Ռիոն զգաց, որ կոկորդը սեղմվում է:

Հենց այդ թուլությունները տեսնելով՝ Ռիոն կարող էր դատել սեփական հոգնածության մասին: Ընկալելու զգացողությունը տեղի էր տալիս: Գրեթե մշտապես պրկված, կոշտացած և ընդարմացած՝ զգալու ընդունակությունը ստեպ-ստեպ մեռնում էր, և նա տրվում էր հույզերին, որոնց անկարող էր ղեկավարել: Միակ պաշտպանությունն էր՝ կծկվել իր ներսում եղած նեղվածության մեջ և պինդ ձգել այդ հանգույցի քուղերը: Նա հասկանում էր, որ դա էր հենց լավագույն շարունակությունը: Ուրիշ շատ պատրանքներ չուներ, եղածն էլ հոգնածությունն էր կլանում: Քանզի հասկանում էր, որ այդ ժամանակաշրջանում, որի վերջը չէր տեսնում, իր դերն այլևս բուժելը չէր: Այժմ իր դերը ախտորոշելն էր: Հայտնաբերել, տեսնել, նկարագրել, արձանագրել, հետո դատապարտել մահվան, սա էր իր պարտականությունը: Կանայք բռնում էին իր թևերից՝ ոռնալով. «Բժի՛շկ, փրկե՛ք մեր ամուսինների կյանքը»: Սակայն նա գնում էր ոչ թե կյանք տալու, այլ արտոնելու հիվանդի մեկուսացումը: Ուրեմն ի՞նչ արժեք ուներ ատելությունը, որ կարդում էր նրանց դեմքերին: «Դուք սիրտ չունեք»,– մի օր ասացին նրան: Բայց ոչ, նա ուներ սիրտ: Այդ սիրտն իրեն ծառայում էր դիմանալու օրական քսան ժամ, երբ նա տեսնում էր՝ ինչպես են մեռնում մարդիկ, որոնք ստեղծված էին

ապրելու համար: Այդ սիրտն իրեն ծառայում էր վերսկսելու ամեն ինչ հաջորդ օրը: Այսուհետ իր սիրտը հերիքում էր միայն դրա համար, ինչպե՞ս կարող էր դեռ ուրիշին կյանք տալ:

Ոչ, ամբողջ օրվա ընթացքում նա ոչ թե օգնություն էր բաժանում, այլ տեղեկատվություն: Դա անշուշտ չէր կարող կոչվել տղամարդու գործ: Բայց մյուս կողմից էլ, այդ ահաբեկված ու բզկտված ամբոխի մեջ ո՞ւմ էր ուրեմն վերապահված տղամարդու արհեստով զբաղվելու հաճույքը: Դեռ երջանկություն էր, որ կար հոգնությունը: Եթե Ռիոն ավելի թարմ լիներ, ապա մահվան ամենուրեք տարածված հոտը նրան կարող էր զգացմունքային դարձնել: Բայց երբ ընդամենը չորս ժամ ես քնում, չես կարող զգացմունքային լինել: Իրերը տեսնում ես, ինչպես որ կան, այսինքն՝ իրերը դիտում ես ըստ արդարության, ըստ ժահրադեմ ու ճղճիմ արդարության: Եվ մյուսներն էլ՝ դատապարտվածները, նույնպես զգում էին դա: Ժանտախտից առաջ մարդիկ իրեն ընդունում էին ինչպես փրկչի: Նա ամեն բան կարգավորում էր ընդամենը երեք դեղահաբով և մեկ ներարկումով, նրան առաջնորդում էին մինչև միջանցքի վերջը և սեղմում ձեռքը: Դա հաճելի էր, բայց վտանգավոր: Այժմ, ընդհակառակը, նա ներկայանում էր զինվորների ուղեկցությամբ, և հարկ էր լինում հրացանակոթով հարվածել դռանը, որպեսզի հիվանդի հարազատները վերջապես որոշեին բացել: Նրանք կուզենային բժշկին և ողջ մարդկությանը իրենց հետ տանել գերեզման: Օ՜, որքա՜ն ճիշտ է, որ մարդիկ չեն կարող անտեսել մարդկանց, որ ինքը նույնպես անօգնական էր, ինչպես այդ բոլոր դժբախտները, և որ ինքն էլ արժանի էր նույնպիսի կարեկցական զգացմունքի, երբ ամեն անգամ առաջանում էր իր մեջ հիվանդներին թողնելուց հետո:

Համենայնդեպս այդպիսին էին բժշկի՝ Ռիոյի մտորումներն այդ անվերջանալի շաբաթների ընթացքում, որ նա միահյուսում էր բաժանման վիճակից առաջացած իր մտորումներին: Այդ նույն մտքերի արտացոլումն էր նաև կարդում իր բարեկամների դեմքերին: Սակայն ուժասպառության ամենավտանգավոր հետևանքը, որ քիչ-քիչ հաղթում էր աղետի դեմ պայքարողներին, անտարբերությունը չէր արտաքին իրադարձությունների և ուրիշների

ապրումների նկատմամբ, այլ անփութությունը, որին տրվում էին նրանք: Քանզի այս դեպքում նրանք ձգտում էին խույս տալ բոլոր՝ բացարձակապես ոչ անհրաժեշտ արարքներից, որոնք միշտ թվում էին իրենց ուժերից վեր: Այսպիսով էր, որ այս մարդիկ սկսեցին ավելի հաճախակի անփութություն ցուցաբերել հիգիենայի կանոնների նկատմամբ, որ հենց իրենք էին սահմանել, սկսեցին մոռանալ ախտահանման բազմաթիվ ձևերից մի քանիսը, որ պարտավոր էին կիրառել իրենք իրենց վրա: Այսպես՝ նրանք առանց հակավարակային նախազգուշական միջոցներ ձեռնարկելու աճապարում էին թոքային ժանտախտով վարակված հիվանդների մոտ, որովհետև վերջին պահին էին իրենց տեղեկացնում, որ պետք է գնան վարակված տներ, իսկ հետո ինչ-որ տեղ վերադառնալ անհրաժեշտ կաթիլային ստանալու համար. այս ամենը չափազանց հոգնեցուցիչ էր թվում նրանց: Հենց այստեղ էր իսկական վտանգը, քանզի ժանտախտի դեմ պայքարն ինքը ավելի խոցելի էր դարձնում պայքարողներին: Նրանք խաղադրույք էին դնում պատահականության վրա, իսկ պատահականությունը ոչ ոքի չի պատկանում:

Սակայն քաղաքում կար մի մարդ, որը ոչ ուժասպառ էր թվում, ոչ թևաթափ, այլ մարմնավորում էր բավարարվածության կենդանի պատկերը: Կոթարն էր: Նա առաջվա պես մեկուսի էր մնում՝ շարունակելով իր լավ հարաբերությունները մյուսների հետ: Բայց նախընտրում էր Տարուին, որին ավելի հաճախ էր տեսնում՝ այնքան, որքան նրա աշխատանքը թույլ էր տալիս, մի կողմից՝ որովհետև Տարուն շատ ավելի իրազեկ էր իր գործին, և մյուս կողմից՝ որովհետև վերջինս կարողանում էր ընդունել փոքրիկ հասութատիրոջը սրտառուչ անկեղծությամբ: Դա ասես մի անվերջանալի հրաշք էր, բայց Տարուն, չնայած իր ծանր աշխատանքին, միշտ մնում էր նույն բարյացակամն ու ուշադիրը: Անգամ երբեմն երեկոյան, երբ հոգնությունը հաղթում էր իրեն, հաջորդ առավոտյան նա նոր եռանդ էր հայտնաբերում իր մեջ: «Նրա հետ կարելի է զրուցել,– ասել էր Կոթարը Ռամբերին,– որովհետև մարդ է: Միշտ հասկանում է դիմացինին»: Ահա թե ինչու այդ շրջանում Տարուի գրառումներն ավելի ու ավելի հաճախ են անդրադառնում Կոթարի անձին: Տարուն

ձգտում է տալ Կոթարի գործողությունների ու մտորումների պատկերն այնպես, ինչպես իրեն վստահել էր Կոթարը, կամ այնպես, ինչպես ինքն էր դրանք մեկնաբանում: «Կոթարի և ժանտախտի կապը» խորագրով այս պատկերը օրագրում զբաղեցնում է մի քանի էջ, և պատմիչի կարծիքով իմաստ ունի այն հակիրճ նկարագրել այստեղ: Տարուի ընդհանուր կարծիքը Կոթարի մասին ամփոփվում է հետևյալ դատողությամբ. «Ահա մի մարդ, որն աճում է»: Հավանաբար աճում էր ոչ միայն նա, այլև նրա լավ տրամադրությունը: Նա դժգոհ չէր դեպքերի նման ընթացքից: Երբեմն Տարուին մեկնաբանում էր իր մտորումները հետևյալ կարգի նախադասություններով. «Իհարկե, դեպի լավը չենք գնում: Բայց գոնե բոլորս ենք դժոխքում»:

«Պարզ է,– ավելացնում է Տարուն,– նա նույն վտանգի մեջ է, ինչպես մյուսները, և բայց ճիշտ այնպես, ինչպես մյուսները: Եվ հետո, նա այնքան լուրջ չի մտածում (վստահ եմ դրանում), թե կարող է վարակվել ժանտախտով: Նա կարծես միայն այդ մտքով է ապրում. ասենք, այնքան էլ վատ գաղափար չէ, որ եթե մարդը տառապում է ծանր հիվանդությամբ կամ խոր անձկությամբ, դրա շնորհիվ կարող է խուսափել մնացած բոլոր հիվանդություններից և անձկություններից: «Նկատե՞լ եք,– ասաց նա մի օր,– որ հնարավոր չէ ձեռք բերել բոլոր հիվանդությունները միաժամանակ: Ենթադրեք, որ դուք տառապում եք որևէ լուրջ կամ անբուժելի հիվանդությամբ, ասենք՝ քաղցկեղով կամ թոքախտով, ուրեմն դուք երբեք չեք վարակվի ժանտախտով կամ տիֆով, դա անհնարին է: Բացի դրանից, կարելի է ավելի հեռուն գնալ. երբևէ տեսե՞լ եք, որ քաղցկեղով հիվանդ մարդը մեռնի ավտովթարի ժամանակ»: Ճիշտ թե սնանկ՝ այս գաղափարը Կոթարին պահում է լավ տրամադրության մեջ: Միակ բանը, որ նա չի ցանկանում, մարդկանցից բաժանվելն է: Նա նախընտրում է ապրել պաշարման մեջ բոլորի հետ, քան կալանավորված լինել մեն-մենակ: Ժանտախտի ժամանակ խոսք չի կարող լինել գաղտնի հարցաքննությունների, անձնական գործերի, էջանիշների, առեղծվածային հրահանգների ու անխուսափելի կալանավորումների մասին: Ըստ էության՝ չկա այլևս ոստիկանություն, հին կամ նոր հանցանքներ, չկան այլևս մեղավորներ, կան միայն դատապարտյալներ, ովքեր

սպասում են ամենակամայական ներումների, և նրանց մեջ հենց իրենք՝ ոստիկանները: Այսպիսով, Կոթարը, դարձյալ ըստ Տարուի մեկնաբանության, հիմքեր ունի դիտարկելու անձկության և մտացրիվության ախտանիշները, որ ներկայացնում էին մեր համաքաղաքացիները նման ներողամիտ ըմբռնումով ու գոհունակությամբ, որը կարող էր արտահայտվել մի ձևակերպումով. «Ինչ ուզում եք, խոսեք, ձեզնից առաջ եմ դրանք ունեցել»:

«Զուր էի ջանում համոզել նրան, որ մյուսներից անջատված չլինելու միակ ձևը ամենից առաջ հանգիստ խիղճ ունենալն է: Զարությամբ նայեց ինձ ու ասաց. «Եվ ի՞նչ, այդ դեպքում, ոչ ոք երբեք ոչ մեկի հետ չէ»: Հետո ավելացրեց. «Ինչ ուզեք, կարող եք ասել: Իսկ իմ կարծիքով՝ մարդկանց միավորելու միակ ձևը նրանց ժանտախտի մեջ գցելն է: Ապա մի նայեք ձեր շուրջը»: Ճիշտն ասած՝ ես շատ լավ հասկանում եմ՝ ինչ է ուզում ասել նա, և ինչու այսօրվա կյանքը հարմար է թվում նրան: Ինչպե՞ս կարող էր նա չիմանալ մարդկանց՝ ամեն քայլափոխի հանդիպող արձագանքները, որոնք նաև իրենն էին, ճիգը, որ գործադրում էր յուրաքանչյուր ոք բոլորի հետ լինելու համար, պարտքի զգացումը, որով օգնում էին երբեմն մոլորված անցորդին գտնելու ճանապարհը, կամ վատ տրամադրությունը, որ չէին թաքցնում մարդիկ, և աճապարանքը, որով նրանք գնում էին շքեղ ռեստորանները, հաճույքը, որ վայելում էին նրանք՝ այնտեղ գտնվելով և երկար նստելով, մարդկանց ամենօրյա խռնվելը՝ կինոթատրոնի մոտ հերթ առաջացնելով և լցնելով ներկայացման բոլոր դահլիճները, ինչպես նաև բոլոր պարասրահները, որ տարածվում են հասարակական բոլոր վայրերում, ինչպես շղթայազերծ մակընթացություն, երկյուղ ամեն մի շփումից, մարդկային ջերմության ծարավը, որն այսուհանդերձ մղում է մեկը մյուսին, արմունկը՝ արմունկին, սեռը՝ սեռին: Կոթարն ակներևաբար բոլորից շուտ էր ճաշակել այդ ամենը: Բացի կանանցից, որովհետև իր ունեցած կերպարանքով... Ես ենթադրում եմ, որ անգամ, երբ նա ցանկություն ունեցել է գնալ աղջիկների մոտ, անմիջապես հրաժարվել է այդ մտքից, որպեսզի անբարեկիրթ համբավ ձեռք չբերի, որը հետագայում գուցե իրեն վնասի:

Մի խոսքով՝ ժանտախտը ձեռնտու է նրան: Այն համախոհ է դառնում միայնակ մարդուն, որը չի ուզում լինել այդպիսին: Քանզի ակներևաբար այն համախոհ է՝ համախոհ, որը հաճույք է ստանում իր գործերից: Նա մեղսակից է այն ամենին, ինչ տեսնում է, մեղսակից է սնապաշտության, անօրինական սարսափների, տագնապահար հոգիների խոցելիության, ժանտախտի մասին հնարավորինս քիչ խոսելու, բայց միևնույն ժամանակ մեղսակից է անընդհատ դրա մասին խոսելու նրանց մոլագարության: Նա տեսնում է մարդկանց խենթանալն ու գունատվելը փոքրագույն գլխացավից՝ այն ժամանակից սկսած, երբ իմացել էին, որ հիվանդությունը սկսվում է գլխացավով, վերջապես մեղսակից է նրանց լարված, դյուրագրգիռ, անկայուն զգայնությանը, որը մոռացությունը վերածում է վիրավորանքի, բայց և ողբում է վարտիքի մի կոճակի կորստի համար»:

Հաճախ էր պատահում, որ Տարուն երեկոյան զբոսնում էր Կոթարի հետ: Հետագայում նա օրագրերում պատմում է, թե ինչպես էին նրանք խրվում մթնշաղից կամ գիշերվա խավարից սևաթույր դարձած ամբոխի մեջ, ուս ուսի խորասուզվում սպիտակ կամ սև զանգվածում, որի մեջ հեռվից հեռու ինչ-որ լապտերներ կայծեր էին արձակում՝ ուղեկցելով մարդկային հոտը դեպի տաք հաճույքները, որոնք իրենց պատսպարում էին ժանտախտային սառնությունից: Այն, ինչ ընդամենը մի քանի ամիս առաջ փնտրում էր Կոթարը հասարակական վայրերում՝ ճոխ, լիարյուն կյանք, այն, ինչ երազում էր՝ չկարողանալով հագուրդ տալ իր մոլեգին տենչանքին, այժմ մի ողջ ժողովուրդ տրվում էր դրան: Այնժամ, երբ սրընթաց աճում էին բոլոր գները, մարդիկ շռայլում էին անհամբելի փողեր, և չնայած մեծամասնությունը ամենատարրական իրերի կարիքն ուներ, ոչ ոք չէր խնայում իր ունեցածը՝ գնելով բոլորովին անօգուտ բաներ: Բազմապատկվում էին խաղերը, որոնց ապարդյունությունն ապացուցում էր միայն, որ մարդիկ գործազուրկ էին: Տարուն ու Կոթարը երբեմն երկար հետևում էին որևէ զույգի, որը նախկինում կջանար թաքցնել միմյանց ձգող կապերը, իսկ այժմ գրկախառնված քայլում էին քաղաքով մեկ՝ չնկատելով շրջակա բազմությանը մեծ կրքերին հատուկ ցրվածությամբ: Կոթարը լցվում էր խանդաղատանքով.

«Մի տես ի՞նչ կտրիճներ են, հը՛»,– ասում էր նա: Եվ խոսում էր բարձրաձայն, բացվում, ծաղկում էր համընդհանուր տենդի մեջ, շուրջը զրնգացող ասպետական թեյադրամների և բոլորի աչքի առջև խճճվող խարդավանքների մեջ: Սակայն Տարուն կարծում էր, որ Կոթարի պահվածքի մեջ այնքան էլ չարություն չկար: Նրա՝ «Այդ ամենը ես ապրել եմ նրանցից առաջ» խոսքը ավելի շատ դժբախտություն էր ինչեցնում, քան հաղթանակ: «Իմ կարծիքով,– գրում է Տարուն,– նա սկսում է սիրել իրենց քաղաքի պարիսպների ու երկնքի մեջ բանտարկված այս մարդկանց: Օրինակ՝ նա հաճույքով նրանց կբացատրեր, եթե կարողանար, որ այդ ամենը այդքան էլ սարսափելի չէ: Լսեք նրանց,– հավաստում էր ինձ,– ժանտախտից հետո ես այս եմ անելու... ժանտախտից հետո ես այն եմ անելու... Փոխանակ հանգիստ մնալու նրանք թունավորում են իրենց կյանքը: Եվ անգամ չեն գիտակցում իրենց առավելությունը: Ես, օրինակ, կարո՞ղ եմ ասել՝ իմ ձերբակալությունից հետո ես կանեմ այս բանը... Ձերբակալությունը սկիզբն է, ոչ թե վերջը: Այնինչ ժանտախտը... Ուզո՞ւմ եք իմ կարծիքն իմանալ: Նրանք դժբախտ են, որովհետև իրենք իրենց բարձիթողի չեն անում: Եվ ես գիտեմ ինչ եմ ասում»: «Եվ իրոք, նա գիտի ինչ է ասում,– հավելում է Տարուն:– Նա իրապես է գնահատում օրանցիների հակասությունները, ովքեր խորապես զգում են մարդկային ջերմության պահանջը, որն իրենց մերձեցնում է, և սակայն չեն կարող չզիջել անվստահությանը, որն իրենց բաժանում է միմյանցից: Նրանք շատ լավ հասկանում են, որ չի կարելի վստահել հարևանին, որն ընդունակ է առանց ձեր գիտության փոխանցել ժանտախտը և օգտվելով ձեր ինքնամոռացումից՝ վարակել ձեզ: Երբ ժամանակդ անցկացրել ես Կոթարի նման, այսինքն՝ հնարավոր մատնիչ տեսնելով բոլոր նրանց մեջ, ում ընկերակցությունն էիր այսուհանդերձ փնտրում, կարելի է հասկանալ այդ զգացումը: Խորապես կարելի է կարեկցել այն մարդկանց, ովքեր մշտապես ապրում են այն մտորումներում, որ այսօր կամ վաղը ժանտախտը կարող է ձեռքը ձեր ուսին դնել, որ գուցե նա պատրաստվում է այդ անել հենց այն պահին, երբ ուրախանում ես, որ դեռ ողջ-առողջ ես: Որքան դա հնարավոր է, հանգիստ ապրում ես սարսափի մեջ: Բայց

քանի որ նա այդ ամենը զգացել է նրանցից առաջ, կարծում եմ, որ նա անկարող է նրանց հետ լիովին զգալ այդ անորոշության դաժանությունը: Մի խոսքով՝ մեզ հետ, որ դեռ չենք մեռել ժանտախտից, նա հիանալի զգում է, որ իր ազատությունն ու կյանքը ամեն օր կործանման նախօրյակին են գտնվում: Բայց քանի որ նա ապրել է այդ սարսափը, բնական է համարում, որ մյուսներն էլ իրենց հերթին ճանաչեն դա: Ավելի ճշգրիտ, սարսափն իրեն ավելի ծանր կթվար, եթե միայն ինքը ստիպված լիներ կրել այն: Այստեղ, իհարկե, նա իրավացի չէ, և նրան հասկանալն ավելի դժվար է, քան մյուսներին: Սակայն, ի վերջո, հենց այստեղ է նա արժանի, որ իրեն ավելի հասկանան, քան մյուսներին»: Տարուի էջերն ավարտվում են մի պատմությամբ, որը մեկնաբանում է այդ առանձնահատուկ գիտակցումը, որը միաժամանակ պատում է և՛ Կոթարին, և՛ ժանտախտահարներին: Այդ պատմությունը մոտավորապես վերականգնում է այդ դժվարին ժամանակաշրջանի մթնոլորտը, և այդ պատճառով է, որ պատմիչը այդքան կարևորություն է տալիս դրան:

Նրանք գնացել էին քաղաքապետարանի օպերայի թատրոն, որտեղ ներկայացվում էր Գլյուկի «Օրփեոսը և Էվրիդիկեն»: Կոթարն էր հրավիրել Տարուին: Ժանտախտից առաջ՝ գարնանը, մի թատերախումբ էր հյուրախաղերի եկել մեր քաղաք: Համաճարակի պատճառով հայտնվելով շրջափակման մեջ՝ այդ խումբը հարկադրված էր մեր օպերայի հետ համաձայնության գալ և շաբաթը մեկ բեմադրել իր ներկայացումը: Այսպես՝ ամիսներ շարունակ՝ ամեն ուրբաթ, մեր քաղաքի թատրոնը զրնգում էր Օրփեոսի մեղեդային հառաչանքներից և Էվրիդիկեի անզոր կանչերից: Սակայն այս ներկայացումը շարունակում էր վայելել հասարակության համակրանքը և մեծ եկամուտ էր բերում: Զբաղեցնելով ամենաթանկ տեղերը՝ Կոթարն ու Տարուն վերևից էին նայում լեփ-լեցուն պարտերում նստած մեր վայելչատես համաքաղաքացիներին: Ներս մտնողները ցուցադրաբար ձգտում էին գրավել մարդկանց ուշադրությունը: Առաջաբեմի շլացուցիչ լույսի տակ, մինչ երաժիշտները զգուշորեն լարում էին իրենց գործիքները, պարզորոշ առանձնանում էին մարդկանց ուրվապատկերները, որոնք

անցնում էին շարքից շարք՝ նրբագեղորեն խոնարհելով գլուխները: Բարեկիրթ զրույցների թեթև գվվոցի մեջ մարդիկ վերագտնում էին վստահությունը, որ չունեին ընդամենը մի քանի ժամ առաջ քաղաքի մութ փողոցներում: Հագուստը հաղթում էր ժանտախտին:

Ամբողջ առաջին գործողության ընթացքում Օրփեոսը հեշտությամբ իր տրտունջքն էր երգում, անտիկ պատմուճաններով հանդերձավորված մի քանի կին շնորհագեղորեն մեկնաբանում էին նրա դժբախտությունը, և սերը գովերգվում էր արիետաներով: Դահլիճն արձագանքում էր զուսպ խանդավառությամբ: Հազիվ թե նկատեին, որ Օրփեոսը երկրորդ գործողության իր արիայում մտցնում է բնագրում չեղած գեղգեղանքներ և փոքր-ինչ չափազանցված հուզականությամբ աղաչում է դժոխքի տիրակալին ազդվել իր արցունքներից: Նրա թույլ տված մի քանի անհամաչափ շարժումները ամենագիտակներին թվացին ոճական հնարքներ, որոնք և ավելանում էին երգչի մեկնաբանությանը:

Հարկ եղավ, որ հնչեր Օրփեոսի և Էվրիդիկեի մեծ զուգերգը երրորդ գործողությունում (դա այն պահն է, երբ Էվրիդիկեն փախչում է իր սիրեցյալից), որպեսզի դահլիճով անցներ զարմանքի մի փոքրիկ ալիք: Եվ ասես երգիչը սպասում էր հասարակության այդ խլրտյունին, կամ էլ ավելի ճիշտ, պարտերից եկող այդ աղմուկն ասես հաստատեց այն, ինչ զգում էր, և նա ընտրեց հենց այդ պահը, որպեսզի արտառոց ձևով առաջանար դեպի բեմեզրը՝ ձեռքերն ու ոտքերը չռած իր անտիկ հանդերձանքի մեջ, և որպեսզի փլվեր հովվերգական դեկորների մեջտեղում, որոնք միշտ էլ ժամանակավրեպ են եղել, սակայն հանդիսատեսի աչքին առաջին անգամ և զարհուրելի կերպով դարձան իսկապես ժամանակավրեպ: Քանզի հենց այդ նույն ժամանակ նվագախումբը լռեց, պարտերում նստածները վեր կացան տեղերից և սկսեցին դահլիճը լքել դանդաղորեն, լուռումունջ, ինչպես դուրս են գալիս եկեղեցուց ժամերգության ավարտից հետո կամ ինչպես մահամերձի սենյակից, երբ գալիս են վերջին հրաժեշտը տալու, կանայք՝ փեշերը հավաքելով և գլուխները խոնարհած, տղամարդիկ՝ առաջնորդելով իրենց ընկերակցուհիներին, նրանց արմունկից բռնած, որպեսզի օգնեն խուսափել

ետծալովի աթոռների բախումներից: Բայց քիչ-քիչ շարժումն արագացավ, շշնջոցները դարձան բղավոցներ, և ամբոխը խռնվեց ելքերի մեջ, սեղմվեց, և ի վերջո սկսվեց հրմշտոց գոռում-գոչյունով: Կոթարն ու Տարուն նոր էին վեր կացել և այժմ դեմառդեմ կանգնած էին տեսարաններից մեկի առջև, որը ներկայացնում էր իրենց այդ օրվա կյանքը՝ ժանտախտը բեմի վրա, հոդախախտ հտպիտի կերպարանքով, իսկ դահլիճում իմաստազրկված մի ճոխություն՝ թիկնաթոռների կարմրի վրա մոռացված հովհարների ու ժանյակների տեսքով:

* * *

Սեպտեմբեր ամսի առաջին օրերին Ռամբերը Ռիոյի մոտ լրջորեն խրվել էր աշխատանքի մեջ: Մի օր միայն արձակուրդ խնդրեց, երբ տղաների լիցեյի մոտ պետք է հանդիպեր Գոնզալեսին և երկու երիտասարդին:

Այդ օրը՝ կեսօրին, Գոնզալեսը և լրագրողը տեսան, որ ծիծաղելով գալիս են երկու փոքրերը: Նրանք ասացին, որ անցած անգամ բախտները չէր բերել, բայց դա սպասելի էր: Ամեն դեպքում այդ շաբաթն իրենց պահակության հերթը չէ, և պետք է համբերել մինչև հաջորդ շաբաթը: Այն ժամանակ հարկ կլինի ամեն ինչ վերսկսել: Ռամբերն ասաց, որ ճիշտ է ասված՝ վերսկսել: Գոնզալեսը ժամադրություն նշանակեց հաջորդ երկուշաբթի օրը: Բայց այս անգամ Ռամբերին կտեղավորեին Մարսելի և Լուիի մոտ: «Մենք երկուսով կհանդիպենք: Բայց եթե ես այնտեղ չլինեմ, ուղիղ կգնաս իրենց տուն: Հիմա քեզ կբացատրեն, թե որտեղ են ապրում»: Բայց Մարսելը կամ գուցե Լուին ասաց, որ ամենահեշտը հենց հիմա ընկերոջն իրենց տուն տանելն է: Եթե ընկերը բծախնդիր չէ, այնտեղ ուտելիք կգտնվի չորս հոգու համար: Եվ այդ ձևով նա ամեն ինչից տեղյակ կլինի: Գոնզալեսն ասաց, որ շատ լավ միտք է, և նրանք չորսով իջան դեպի նավահանգիստ:

Մարսելն ու Լուին ապրում էին նավատորմիղի թաղամասի ծայրամասում՝ դարպասների մոտ, որոնք բացվում էին զառիթափային ճանապարհի վրա: Իսպանական ոճի տնակ էր՝ հաստ պատերով,

ներկված փայտե արտափեղկերով, դատարկ ու ծմակ սենյակնե-
րով: Երիտասարդների մայրը՝ մի ծեր, ժպտուն ու կնճռոտ դեմքով
իսպանուհի, նրանց բրինձ մատուցեց: Գոնզալեսը զարմացավ,
որովհետև քաղաքում արդեն բրինձ չկար: «Դարպասների մոտ
ավելի հեշտ է ելք գտնելը»,– ասաց Մարսելը: Ռամբերն ուտում
էր ու խմում: Գոնզալեսն ասաց, որ նա իսկական ընկեր է, մինչ-
դեռ լրագրողը մտածում էր միայն այն մասին, թե ինչպես պիտի
անցկացնի շաբաթը:

Իրականում հարկ եղավ սպասելու երկու շաբաթ, քանզի կրճա-
տումների պատճառով պահակահերթը դարձավ երկշաբաթյա: Եվ
այդ տասնհինգ օրվա ընթացքում Ռամբերն աշխատեց՝ չխնայե-
լով իրեն, աշխատում էր առանց շունչ առնելու, աչքերը մի տեսակ
փակ, առավոտից մինչև գիշեր: Ուշ գիշերով պառկում էր և քնում
խոր քնով: Պարապությունից կտրուկ անցումը նման աշխատանքի
ուժատում էր նրան և գրեթե զրկում երազներից: Նա քիչ էր խոսում
իր մոտակա փախուստի մասին: Մի նշանակալի փաստ առաջին
շաբաթվա վերջին նա խոստովանեց բժշկին, որ առաջին անգամ
վերջին շրջանում նախորդ գիշերը հարբել էր: Բարից դուրս գալիս
նա հանկարծ այնպիսի զգացում էր ունեցել, թե աճուկները մեծա-
նում են, թևերը դժվարությամբ են շարժվում անութների շուրջը:
Որոշել էր, որ ժանտախտ է: Եվ միակ հակադարձ քայլը՝ ոչ այնքան
խոհեմ (այստեղ համաձայն էր Ռիոյի հետ), այն էր եղել, որ վազել էր
քաղաքի ամենաբարձր մասը, բարձրացել մի փոքրիկ հրապարակ,
որտեղից, միևնույն է, չէր երևում ծովը, այլ երկինքը թվում էր ավելի
լայնարձակ, և քաղաքի պատերի վերևից բարձր գոռալով՝ կանչել
էր կնոջը: Վերադառնալով տուն և մարմնի վրա չգտնելով վարակի
ոչ մի նշան՝ նա վատ էր զգացել այդ հանկարծակի նոպայի համար:
Ռիոն ասաց, որ շատ լավ հասկանում է նման արարքը:

– Ամեն դեպքում,– ասաց նա,– հնարավոր է, որ մարդ նման ցան-
կություն ունենա:

– Այս առավոտյան պրն Օթոնը ձեր մասին էր խոսում,– հանկարծ
ավելացրեց Ռիոն այն պահին, երբ Ռամբերը հրաժեշտ էր տալիս:–
Հարցնում էր, թե ճանաչո՞ւմ եմ ձեզ: «Դե, եթե ճանաչում եք,– ասաց

նա ինձ,– ուրեմն խորհուրդ տվեք նրան գործ չունենալ մաքսանենգների հետ: Ստիպում է, որ նկատելի դառնա»:

– Իսկ ի՞նչ է նշանակում դա:

– Նշանակում է, որ դուք պետք է շտապեք:

– Շնորհակալություն,– ասաց Ռամբերը՝ սեղմելով բժշկի ձեռքը:

Դռան շեմին նա հանկարծ շրջվեց: Ռիոն նկատեց, որ ժանտախտի սկզբից ի վեր նա առաջին անգամ էր ժպտում:

– Ուրեմն ինչո՞ւ եք ինձ թողնում, որ գնամ: Դուք ունեք այդ հնարավորությունը:

Ռիոն սովորական ձևով թափահարեց գլուխը և ասաց, որ դա իր՝ Ռամբերի գործն է, որ վերջինս նախընտրել է երջանկությունը, և որ Ռիոն որևէ փաստարկ չունի նրան հակառակվելու: Նման գործերում նա իրեն անընդունակ է համարում դատել՝ որն է լավ, որը՝ վատ:

– Այդ դեպքում ինչո՞ւ եք ինձ խորհուրդ տալիս շտապել:

Ռիոն իր հերթին ժպտաց:

– Որովհետև ես նույնպես երևի ցանկություն ունեմ ինչ-որ բան անել երջանկության համար:

Հաջորդ օրը նրանք այլևս չխոսեցին այդ մասին, բայց աշխատում էին միասին:

Մյուս շաբաթ Ռամբերը վերջապես տեղավորվեց իսպանական փոքրիկ տանը: Նրա համար անկողին գցեցին ընդհանուր սենյակում: Քանի որ երիտասարդները տուն չէին գալիս ճաշելու, և քանի որ նրան խնդրել էին որքան հնարավոր է քիչ դուրս գալ, նա ժամանակի մեծ մասը միայնակ էր անցկացնում կամ զրուցում էր ծեր մայրիկի հետ: Այդ սևազգեստ կինը նիհար էր, բայց եռանդուն, նրա՝ մաքրությունից փայլող ճերմակ մազերը շրջանակում էին թուխ դեմքը, որն ակոսված էր կնճիռներով: Լռակյաց էր, միայն, երբ խոսում էր Ռամբերի հետ, ժպտում էր լայն աչքերով:

Մի անգամ հարցրեց Ռամբերին, թե չի՞ վախենում վարակը հասցնել կնոջը: Ռամբերի կարծիքով՝ դա վարակից փախչելու մի հնարավորություն էր, որն ի վերջո նվազագույնն էր, մինչդեռ մնալով քաղաքում՝ նրանք առհավետ բաժանված մնալու վտանգին էին ենթարկվում:

– Լավի՞կն է,– հարցրեց պառավը ժպտալով:

– Շա՛տ:

– Սիրո՞ւն է:

– Իմ կարծիքով՝ այո՛:

– Ա՛,– ասաց կինը,– ուրեմն դրա համա՞ր:

Ռամբերը մտածում էր: Անշուշտ, դրա համար, բայց անկարելի է, որ լիներ միայն դրա համար:

– Դուք չե՞ք հավատում Աստծուն,– հարցրեց պառավը, որն ամեն առավոտ գնում էր եկեղեցի:

Ռամբերը խոստովանեց, որ չի հավատում, և պառավը նորից ասաց, որ դրա համար է:

– Դուք պետք է գնաք նրա մոտ, իրավացի եք: Հակառակ դեպքում ի՞նչ է մնում ձեզ:

Մնացած ժամանակը Ռամբերը պտտվում էր մերկ, դրսից ծեփված պատերի շուրջը՝ ձեռքով շոյելով միջնորմներին մեխված հովհարները, կամ էլ հաշվում էր սեղանի բրդե գորգը երիզող ծոպքերի փուփուլները: Երեկոյան տուն էին վերադառնում երիտասարդները: Նրանք շատ չէին խոսում, միայն ասում էին, որ դեռ ժամանակը չէ: Ընթրիքից հետո Մարսելը կիթառ էր նվագում, և միասին անիսոնի լիկյոր էին խմում: Ռամբերը մտահոգ էր լինում:

Չորեքշաբթի օրը Մարսելը տուն մտավ՝ ասելով. «Վաղը երեկոյան՝ կեսգիշերին: Պատրաստ կլինես»: Իրենց հետ պահակախմբում հերթապահող երկու հոգուց մեկը վարակվել էր ժանտախտով, իսկ մյուսը, որն առաջինի հետ էր լինում սենյակում, հսկողության տակ էր: Այսպիսով Մարսելն ու Լուին երկու-երեք օր մենակ էին լինելու: Գիշերվա ընթացքում նրանք պետք է կարգավորեին որոշ մանրամասներ: Հաջորդ օրը հնարավոր կլիներ: Ռամբերը շնորհակալություն հայտնեց: «Գո՞հ եք»,– հարցրեց ծեր կինը: Նա պատասխանեց՝ այո, բայց այլ բանի մասին էր մտածում:

Հաջորդ օրը ծանր կախված երկնքի տակ տոթը խոնավ էր ու հեղձուցիչ: Ժանտախտի մասին կային վատ նորություններ: Ծեր իսպանուհին սակայն սառնասիրտ էր իրեն պահում: «Մեղք կա աշխարհում,– ասում էր նա,– ինքնըստինքյան հասկանալի է»: Մարսելի

և Լուիի նման Ռամբերն էլ էր մերկացած մինչև գոտկատեղը: Բայց միևնույն է, քրտինքը հոսում էր ուսերի արանքով և կրծքի վրայով: Փեղկերը փակ սենյակի կիսախավարում նրանց իրանները շագանակագույն ու լաքած էին թվում: Ռամբերը գնում-գալիս էր անխոս: Հանկարծ կեսօրից հետո՝ ժամը չորսին, հագնվեց և հայտարարեց, որ դուրս է գալիս:

– Ուշադիր,– ասաց Մարսելը:– Կեսգիշերի՛ն: Ամեն բան դասավորված է:

Ռամբերը գնաց բժշկի մոտ: Ռիոյի մայրն ասաց, որ նրան կարելի է գտնել քաղաքի բարձրադիր մասի հիվանդանոցում: Պահակակետի առջև նույն բազմությունն անընդհատ նույն երթևեկն էր անում: «Շարժվեք»,– հրամայեց դուրս ցցված աչքերով սերժանտը: Մի քանիսը պտտվում էին, սակայն իրենք իրենց շուրջը: «Ոչինչ չկա սպասելու»,– ասում էր սերժանտը, որի քրտինքը դուրս էր գալիս բաճկոնից: Մյուսների կարծիքն էլ նույնն էր, բայցևայնպես մնում էին՝ չնայած մահացու շոգին: Ռամբերը ցույց տվեց անցաթուղթը սերժանտին, որը նրան մատնացույց արեց Տարուի գրասենյակը: Դուռը բացվում էր բակի վրա: Ռամբերը շեմին բախվեց հայր Պանլուին, որը դուրս էր գալիս գրասենյակից:

Փոքր ու կեղտոտ, պատերը սպիտակեցրած սենյակում, որը լի էր դեղատնային ու խոնավ սպիտակեղենի հոտերով, Տարուն, նստած սև փայտե գրասեղանի ետևում, վերնաշապկի թևքերը վեր քշտած, թաշկինակով խծուծում էր արմնկածալից հոսող քրտինքը:

– Դեռ այստե՞ղ եք,– հարցրեց Տարուն:

– Այո՛, ուզում էի խոսել Ռիոյի հետ:

– Նա սրահում է: Բայց ավելի լավ կլինի, եթե հնարավոր է, կարգավորել առանց նրա:

– Ինչո՞ւ:

– Շատ հոգնած է: Ես ջանում եմ նրան ազատել ավելորդ հոգսերից:

Ռամբերը նայեց Տարուին: Նիհարել էր: Հոգնությունը պղտորել էր նրա աչքերը և խառնել դիմագծերը: Նրա հաղթ ուսերը կորացել, սեղմվել էին: Դուռը թակեցին, և ներս մտավ սպիտակ դիմակով

մի հիվանդապահ: Նա Տարուի գրասեղանին դրեց քարտերի մի կապոց և դիմակից խլացած ձայնով միայն ասաց՝ վեց, հետո դուրս եկավ: Տարուն նայեց լրագրողին և ցույց տվեց հովհարաձև փռած իր քարտերը:

– Գեղեցիկ քարտեր են, չէ՞: Դե, ո՛չ, սրանք մահացածներն են՝ գիշերվա մահացածները:

Ճակատը ակոսվեց կնճիռով: Քարտերը դրեց կապոցի մեջ:

– Միակ բանը, որ մնում է մեզ, հաշվապահություն անելն է:

Տարուն վեր կացավ՝ հենվելով սեղանին:

– Մեկնելո՞ւ եք շուտով:

– Այսօր՝ կեսգիշերին:

Տարուն ասաց, որ դա ուրախացնում է իրեն, և որ Ռամբերը պետք է զգույշ լինի:

– Դուք անկեղծորե՞ն եք դա ասում:

Տարուն թոթվեց ուսերը:

– Իմ տարիքում ինքնըստինքյան անկեղծ ես լինում: Ստելը շատ հոգնեցուցիչ է:

– Տարո՛ւ,– ասաց լրագրողը,– ես կուզենայի տեսնել բժշկին: Ներեցե՛ք ինձ:

– Գիտեմ: Նա ավելի մարդկային է, քան ես: Գնանք:

– Հարցն այդ չէ,– ասաց Ռամբերը դժվարությամբ և լռեց:

Տարուն նայեց նրան և հանկարծ ժպտաց:

Նրանք անցան մի նեղլիկ միջանցքով, որի բաց կանաչավուն ներկված պատերը և մեջտեղում ծածանվող լույսը ակվարիումի պատրանք էին ստեղծում: Մինչև հասնելը կրկնակի ապակեպատ դռանը, որի ետևում երևում էր ստվերների մի զարմանահրաշ շարժում, Տարուն Ռամբերին մտցրեց մի շատ փոքրիկ սենյակ՝ ամբողջովին «պաստառված» պատի պահարաններով: Բացեց դրանցից մեկը, մանրէազերծիչից հանեց երկու խոնավածուծ գազային դիմակ, մեկը մեկնեց Ռամբերին և պատվիրեց հագնել: Լրագրողը հարցրեց, թե դա ծառայո՞ւմ է ինչ-որ բանի, Տարուն պատասխանեց՝ ո՛չ, բայց շատերին վստահություն է ներշնչում:

Նրանք բացեցին ապակեպատ դուռը: Մտան մի հսկայական դահլիճ, որի պատուհանները ամուր փակված էին՝ չնայած տարվա այդ եղանակին: Պատերի վերևում՝ առաստաղի տակ դռռում էին սարքերը, որոնք թարմացնում էին օդը, նրանց կեռ թիակները խառնում էին շիկացած ու կպչուն օդը երկշարք մոխրագույն մահճակալների վերևում: Բոլոր կողմերից լսվում էին խուլ կամ սուր հառաչանքներ, որոնք միասին հնչում էին որպես միալար տրտունջք: Սպիտակազգեստ մարդիկ տեղից տեղ էին շարժվում դանդաղորեն, անտանելի լույսի տակ, որ թափվում էր ճաղազարդ բարձր լուսանցույցներից: Ռամբերը իրեն վատ զգաց այդ սրահի ահռելի շոգից և մեծ դժվարությամբ ճանաչեց Ռիոյին, որը խոնարհված էր մի տնքացող կերպարանքի վրա: Բժիշկը բացում էր հիվանդի աճուկների ավշայտուցները, իսկ երկու հիվանդապահներ մահճակալի երկու կողմերից պահում էին քառատվող մարդուն: Ուղղվելով Ռիոն գործիքները նետեց սկուտեղի մեջ, որ մի օգնական պարզեց նրան, և մի պահ անշարժ կանգնած նայում էր հիվանդին, որին վիրակապում էին:

– Ի՞նչ նորություն,– հարցրեց նա մոտեցող Տարուին:

– Պանլուն համաձայն է մեկուսարանում փոխարինել Ռամբերին: Նա արդեն բավական գործ է արել: Մնում է հավաքագրել երրորդ հետախուզական թիմը առանց Ռամբերի:

Ռիոն գլխով համաձայնության նշան արեց:

– Կաստելն ավարտել է իր առաջին պատրաստուկները: Նա առաջարկում է փորձարկել:

– Օ՛,– ասաց Ռիոն,– լավ է:

– Եվ վերջապես, այստեղ է Ռամբերը:

Ռիոն շրջվեց: Նկատելով լրագրողին՝ դիմակի վերևից նա կկոցեց աչքերը:

– Ի՞նչ եք անում այստեղ,– ասաց նա:– Դուք ուրիշ տեղ պիտի լինեիք:

Տարուն ասաց, որ այդ օրը՝ կեսգիշերին կլինի, իսկ Ռամբերն ավելացրեց.

– Սկզբունքորեն:

Ամեն անգամ, երբ խոսակցություն էր լինում, գազային դիմակն ուռչում էր և բերանի մասում խոնավանում: Դա զրույցը մի տեսակ անիրական էր դարձնում, ինչպես արձանների երկխոսություն:

– Ես ուզում եմ ձեզ հետ խոսել,– ասաց Ռամբերը:

– Միասին դուրս կգանք, եթե ուզում եք: Սպասեք ինձ Տարուի մոտ: Մեկ րոպե անց Ռամբերն ու Ռիոն տեղավորվում էին բժշկի մեքենայի հետնամասում: Տարուն էր վարում մեքենան:

– Վառելիքը վերջանում է,– ասաց Տարուն՝ միացնելով շարժիչը:– Վաղը ոտքով կգնանք:

– Բժի՛շկ,– ասաց Ռամբերը,– ես չեմ գնում, ես ուզում եմ մնալ ձեզ հետ:– Տարուն ոչ մի շարժում չարեց: Նա շարունակում էր վարել: Ռիոն երևի չէր կարողանում հաղթահարել իր հոգնությունը:

– Իսկ նա՞,– հարցրեց խուլ ձայնով:

Ռամբերն ասաց, որ երկար էր մտածել, որ առաջվա պես հավատում է, ինչին հավատում է, բայց եթե մեկնի, պիտի ամաչի: Այդ բանն իրեն խանգարելու էր, որ սիրեր նրան, ում թողել էր: Բայց Ռիոն, հանկարծ ուղղվելով տեղում, կտրուկ ասաց, որ դա հիմարություն է, և ամոթալի չէ, եթե նախընտրում ես երջանկությունը:

– Այո՛,– ասաց Ռամբերը,– բայց ամոթալի է, երբ երջանիկ ես մեն-մենակ:

Տարուն, որ մինչ այդ լռում էր առանց գլուխը հետ շրջելու, նկատեց, որ եթե Ռամբերը ցանկանում է կիսել մարդկանց դժբախտությունը, ապա երբեք ժամանակ չի ունենա երջանկության համար: Պետք էր ընտրություն կատարել:

– Այդպես չէ,– ասաց Ռամբերը:– Ես միշտ մտածում էի, որ օտար եմ այս քաղաքում և որևէ բան չունեմ ձեզ հետ անելու: Բայց հիմա տեսա այն, ինչ որ տեսա, հասկացա, որ ես այստեղից եմ, ուզեմ թե չուզեմ: Այս պատմությունը վերաբերում է բոլորիս:

Ոչ ոք չպատասխանեց: Ռամբերն ասես կորցնում էր համբերությունը:

– Ասենք, ինքներդ էլ լավ գիտեք: Այլապես ի՞նչ եք անում այս հիվանդանոցում: Ուրեմն ինքներդ էլ ընտրություն եք կատարել և հրաժարվել եք երջանկությունից:

Ո՛չ Տարուն, ո՛չ Ռիոն այս հարցին ևս չպատասխանեցին: Լռությունը երկար տևեց, մինչև որ մոտեցան բժշկի տանը: Ռամբերն ավելի ուժգին հնչեցրեց իր վերջին հարցը: Միայն Ռիոն շրջվեց նրա կողմը: Ճիգ գործադրելով՝ նա վեր կացավ.

– Ներեցեք ինձ, Ռամբեր, բայց ես ինքս չգիտեմ: Մնացեք մեզ հետ, քանի որ ուզում եք:

Մեքենայի կտրուկ շրջադարձը լռեցրեց նրան: Հետո շարունակեց՝ Ռամբերին նայելով դիմացից.

– Ոչինչ աշխարհում չարժի, որ մարդ հրաժարվի այն բանից, որ սիրում է: Եվ սակայն ես ևս հրաժարվել եմ և չգիտեմ ինչու:

Նա դարձյալ ընկավ իր բարձի վրա:

– Սա ընդամենը փաստ է,– ասաց նա հոգնաբեկ:– Արձանագրենք այն և դրանից հետևություններ անենք:

– Ի՞նչ հետևություններ,– հարցրեց Ռամբերը:

– Է՛,– ասաց Ռիոն,– հնարավոր չէ միաժամանակ և՛ բուժել, և՛ իմանալ: Այդ պատճառով բուժենք արագ, որքան հնարավոր է: Այժմ ամենահրատապը դա է:

Կեսգիշերին, երբ Տարուն և Ռիոն կազմում էին այն թաղամասի պլանը, որ Ռամբերը հանձն էր առել վերահսկել, Ռամբերը նայեց ժամացույցին: Բարձրացնելով գլուխը՝ հանդիպեց Ռիոյի հայացքին:

– Նախազգուշացրե՞լ եք:

Լրագրողը շրջեց աչքերը:

– Երկտող եմ ուղարկել,– ասաց նա դժվարությամբ,– ձեզ մոտ գալուց առաջ:

* * *

Հոկտեմբերի վերջին օրերին էր, որ Կաստելի շիճուկը փորձարկվեց: Գործնականում դա Ռիոյի վերջին հույսն էր: Նոր ձախողման դեպքում բժիշկը համոզված էր, որ քաղաքը կմատնվեր հիվանդության քմահաճույքներին, համաճարակը կամ կարող էր երկարաձգել իր ներգործությունը երկար ամիսներ, կամ հանկարծ առանց պատճառի կարող էր դադարել:

Այդ նույն օրվա նախօրյակին, երբ Կաստելն այցելել էր Ռիոյին, պարոն Օթոնի տղան հիվանդացել էր, և ողջ ընտանիքը պետք է գնար մեկուսարան: Մայրը, որ շատ ժամանակ չէր անցել, որ դուրս էր եկել այնտեղից, երկրորդ անգամ մեկուսացվեց: Հրահանգները ճշգրիտ կատարող քննիչը իր մոտ կանչեց բժիշկ Ռիոյին, հենց որ երեխայի մարմնի վրա հայտնաբերեց հիվանդության նշանները: Երբ Ռիոն հայտնվեց, հայրն ու մայրը կանգնած էին մահճակալի գլխավերևում: Փոքրիկ աղջկան տարել էին տնից: Տղան ուժասպառության շրջանում էր և անտրտունջ թույլ տվեց, որ իրեն քննեն: Երբ բժիշկը բարձրացրեց գլուխը, հանդիպեց քննիչի հայացքին, իսկ նրա ետևում մոր գունատ դեմքն էր, որը, թաշկինակը բերանին սեղմած, հետևում էր բժշկի շարժումներին՝ աչքերը լայն բացած:

– Դա է, չէ՞,– հարցրեց քննիչը սառը ձայնով:

– Այո՛,– պատասխանեց Ռիոն՝ նորից նայելով երեխային:

Մոր աչքերն ավելի մեծացան, բայց շարունակեց լռել: Քննիչը նույնպես լուռ էր, հետո ավելի ցածրաձայն ասաց.

– Դե ի՞նչ, բժիշկ, մենք պետք է անենք այն, ինչ նախատեսված է:

Ռիոն խույս էր տալիս մոր հայացքից, որը լուռ կանգնած էր՝ թաշկինակը սեղմած բերանին:

– Եթե կարողանամ զանգել, ամեն ինչ արագ կանեն,– ասաց նա վարանելով:

Պարոն Օթոնն ասաց, որ կուղեկցի նրան: Սակայն բժիշկը շրջվեց կնոջ կողմը.

– Ցավում եմ: Պետք է որոշ իրեր հավաքել: Դուք գիտեք ինչ:

Տիկին Օթոնն ասես անջատված էր: Նայում էր գետնին:

– Այո՛,– ասաց նա՝ գլուխը տմբտմբացնելով:– Հիմա կհավաքեմ:

Նրանցից հեռանալուց առաջ Ռիոն չկարողացավ զսպել իրեն և հարցրեց, թե որևէ բանի կարիք չունե՞ն: Կինը շարունակում էր լուռ նայել նրան: Բայց այս անգամ դատավորը շրջեց աչքերը:

– Ո՛չ,– ասաց նա թուքը կուլ տալով,– բայց փրկե՛ք իմ երեխային:

Մեկուսացումը, որը սկզբում ընդամենը պարզ ձևականություն էր, այժմ Ռիոյի և Ռամբերի շնորհիվ կազմակերպվեց մեծագույն խստությամբ: Մասնավորապես նրանք պահանջեցին, որ

այդ ընտանիքի անդամները մնային մեկուսի մեկը մյուսից: Եթե ընտանիքի անդամներից մեկը վարակված էր առանց իմանալու այդ մասին, չպետք է բազմապատկվեին հիվանդանալու հնարավորությունները: Ռիոն բացատրեց այս փաստարկները դատավորին, որը հավանություն տվեց դրանց: Սակայն ամուսիններն այնպես իրար նայեցին, որ բժիշկը զգաց, թե որքան ահավոր էր այդ բաժանումը նրանց համար: Տիկին Օթոնն ու դստրիկը կարող էին տեղավորվել մեկուսարանային հյուրանոցում, որ ղեկավարում էր Ռամբերը: Սակայն դատական քննիչի համար տեղ ճարվեց միայն մեկուսացման ճամբարում, որ ոստիկանատունը կազմակերպում էր քաղաքային մարզադաշտում ճանապարհաշինական վարչության տրամադրած վրանների օգնությամբ: Ռիոն ներողություն խնդրեց անհարմարության համար, սակայն պարոն Օթոնն ասաց, որ օրենքը նույնն է բոլորի համար, և որ ճիշտը օրենքին ենթարկվելն է:

Ինչ վերաբերում է երեխային, նա տեղափոխվեց օժանդակ հիվանդանոց՝ դպրոցի նախկին դասասենյակը, որտեղ տեղադրված էին տասը մահճակալ: Քսան ժամ պայքարելուց հետո Ռիոն երեխայի վիճակը անհույս համարեց: Փոքրիկ մարմինն առանց դիմադրության հանձնվել էր իրեն հոշոտող վարակին: Անչափ փոքրիկ, բայց շատ ցավոտ, հազիվ երևացող գեղձուռուցքները շրջափակում էին նրա փխրուն անդամների հոդավորությունները: Հիվանդությունն ի սկզբանե հաղթել էր տղային: Ահա թե ինչու Ռիոն որոշեց նրա վրա փորձարկել Կաստելի շիճուկը: Նույն օրը՝ ընթրիքից հետո, նրանք կաթիլային ներարկում արեցին, որին երեխան ոչ մի արձագանք չտվեց: Հաջորդ օրը լուսաբացին բոլորը հավաքվեցին փոքրիկ տղայի շուրջը, որպեսզի ստուգեին վճռական փորձի արդյունքները:

Դուրս գալով ընդարմացումից՝ երեխան ջղաձգորեն գալարվում էր սավանների մեջ: Ռիոն, Կաստելն ու Տարուն նրա մոտ էին և քայլ առ քայլ հետևում էին հիվանդության ուժգնացմանն ու թուլացմանը: Մահճակալի գլխավերևում կանգնած Տարուի հսկայական մարմինը մի փոքր կորացած էր: Մահճակալի մյուս ծայրին՝ կանգնած Ռիոյի մոտ, նստած էր Կաստելը և առերևույթ

ամենայն հանգստությամբ կարդում էր մի հին գիրք: Քիչ-քիչ, լույսը բացվելուն զուգընթաց նախկին դպրոցական դասարանը լցվեց նաև ուրիշ մարդկանցով: Նախ եկավ Պանլուն, որը տեղավորվեց մահճակալի մյուս կողմում՝ Տարուի դիմաց, և հենվեց պատին: Մի ցավագին արտահայտություն էր ընթերցվում նրա դեմքին, և այդ բոլոր օրերի հոգնությունը, որի համար անձամբ էր վճարել, խոր կնճիռներ էր ակոսել նրա արնագույն ճակատին: Եկավ նաև հևասպառ Ժոզեֆ Գրանը: Ժամը արդեն յոթն էր, և նա ներողություն խնդրեց ուշանալու համար: Ասաց, որ մեկ րոպեով է եկել, գուցե արդեն գիտեի՞ն որևէ որոշակի բան: Ռիոն անխոս ցույց տվեց երեխային, որը՝ աչքերը փակ, ցավից ծամածռվող դեմքով, ատամները սեղմած ուժերը ներածին չափ, մարմինն անշարժ, գլուխը տարուբերում էր աջ ու ձախ՝ առանց սպիտակեղենի գլանաբարձի վրա: Վերջապես, երբ բավական լույս էր, և տեսանելի էր դասասրահի խորքում՝ իր տեղում մնացած գրատախտակը, որի վրա հնարավոր էր տարբերակել հավասարման հին բանաձևերը, եկավ Ռամբերը: Նա հենվեց հարևան մահճակալի մնարին և գրպանից հանեց մի տուփ ծխախոտ: Բայց նայելով տղային՝ տուփը ետ դրեց գրպանը:

Կաստելը, որ իր տեղում նստած էր, ակնոցի վերևից նայեց Ռիոյին.

– Հորից լուր ունե՞ք:

– Ո՛չ,– ասաց Ռիոն,– նա մեկուսացման ճամբարում է:

Ռիոն ամբողջ ուժով սեղմում էր մահճակալի երկաթաձողը, որի մեջ տնքում էր երեխան: Նա աչքերը չէր հեռացնում փոքրիկ հիվանդից, որը հանկարծ ձգվելով ուղղվեց և ատամները կրկին սեղմելով՝ իրանով մի քիչ ճկվեց և դանդաղորեն բացեց թևերն ու ոտքերը: Զինվորական վերմակով ծածկված փոքրիկ մերկ մարմնից փչում էր բրդի ու քրտինքի սուր հոտ: Երեխան քիչ-քիչ թուլացրեց մարմինը, ուղղեց ոտքերն ու թևերը, դրանք տարավ դեպի մահճակալի կենտրոնը և առաջվա պես աչքերը փակ ու համրացած՝ կարծես սկսեց ավելի արագ շնչել: Ռիոն որսաց Տարուի հայացքը, բայց վերջինս շուռ տվեց աչքերը:

Նրանք արդեն տեսել էին երեխաների մահ, քանի որ սարսափը ամիսներ շարունակ չէր ընտրում իր զոհերին, բայց երբեք դեռ չէին հետևել մանկան տանջանքներին րոպե առ րոպե այնպես, ինչպես այս առավոտյան: Եվ իհարկե, այս անմեղ արարածներին հարկադրված տառապանքը նրանք միշտ էլ ընդունել էին, ինչպես եղել է իրականում, այսինքն՝ ինչպես ամոթանք: Բայց մինչ այդ նրանց ամոթը մի տեսակ վերացական էր, որովհետև երբևէ այդքան երկար չէին հետևել անմեղ էակի հոգեվարքին, ուղիղ չէին նայել մահվան դեմքին:

Եվ իրոք, երեխան, որի ստամոքսն ասես հոշոտում էին, վերսկսել էր գալարվել նվաղուն ծվծվոցով: Այսպես նա մի քանի երկար վայրկյան մնաց կծկված՝ թափահարվելով սարսուռներից և ջղաձգություններից, նրա դյուրաբեկ կմախքը կարծես ճկվում էր ժանտախտի մոլեգին հորձանքից ու ճարճատվում տենդի պարբերական պոռթկումներից: Փոթորկի ալիքը կարծես անցավ, և երեխան մի քիչ թուլացավ. տենդը, թվում է, ետ քաշվեց նրանից, հեռացավ՝ թողնելով հևասպառ խոնավ, թունավորված ավազափի վրա, որտեղ հանգիստն արդեն նմանվում էր մահվան: Երբ այրող ալիքը նորից՝ արդեն երրորդ անգամ ծածկեց ու վեր հանեց նրան, երեխան կրկին կծկվեց, նահանջեց մահճակալի խորքը սարսափելի բոցերի մեջ, որոնք այրում էին իրեն, գլուխը խենթորեն թափահարեց ու դեն նետեց ծածկոցը: Խոշոր արցունքներ, ժայթքելով շիկացած կոպերի տակից, սկսեցին հոսել նրա կապարե դեմքի վրայով, և նոպայի վերջում ուժասպառ երեխան, կծկելով ոսկրուտ տոտիկներն ու թևերը, որոնց միսը լրիվ հալվել էր երկու օրում, տապալվեց. ավերված երեխան ընդունեց խաչվածի անհեթեթ դիրք:

Տարուն հակվեց և իր ծանր ձեռքով սրբեց արցունքներից ու քրտինքից թրջված փոքրիկ դեմքը: Կաստելն արդեն փակել էր գիրքը և նայում էր հիվանդին: Նա ուզեց ինչ-որ բան ասել, բայց հանկարծակի հազը նրան ստիպեց ընդհատել, որովհետև ձայնը խզվեց.

– Ռիո, հիվանդության ժամանակավոր թեթևացում չի՞ նկատվում:– Ռիոն ասաց, որ՝ ոչ, սակայն երեխան սովորականից շատ

ավելի երկար էր դիմադրել: Պանլուն, որ ասես փլվել էր պատի վրա, խուլ ձայնով ասաց.

– Եթե նրան վիճակված է մեռնել, դրանից նրա տառապանքներն ավելի կերկարեն:

Ռիոն կտրուկ շրջվեց նրա կողմը և բերանը բացեց, որ խոսի, բայց լռեց և նկատելի ճիգ գործադրեց, որ տիրապետի ինքն իրեն, ու հայացքը կրկին հառեց երեխայի կողմը:

Սենյակում լույսն ավելի էր տարածվում: Մյուս հինգ մահճակալների վրա մարդկային կերպարանքներ էին շարժվում և հառաչում՝ ասես համաձայնեցված զսպվածությամբ: Միայն մեկն էր ճչում դահլիճի հեռավոր անկյունում՝ արձակելով կարճ, կանոնավոր ընդմիջումներով բացականչություններ, որոնք կարծես ավելի շատ զարմանք էին արտահայտում, քան ցավ: Թվում էր, թե անգամ հիվանդներն այնպես չէին սոսկում, ինչպես համաճարակի սկզբում: Այժմ նրանք կարծես մի տեսակ հնազանդությամբ էին ընդունում հիվանդությունը: Միայն երեխան էր պայքարում իր ամբողջ ուժով: Ռիոն, որ ժամանակ առ ժամանակ բռնում էր նրա զարկերակը, իմիջիայլոց, առանց անհրաժեշտության, այլ ավելի շուտ իր անզոր անշարժությունից դուրս գալու համար, աչքերը փակելով՝ զգում էր՝ ինչպես է այդ խլրտյունը խառնվում իր արյան շարժմանը: Այդժամ նա միախառնվում էր մանկան տառապանքներին և փորձում էր նրան սատարել իր դեռևս անխաթար ուժերով: Սակայն մի պահ միացած երկու սրտերի զարկերը դառնում էին տարանջատված, երեխան խույս էր տալիս իրենից, և իր ջանքերը կորչում էին ունայնության մեջ: Այդժամ նա բաց էր թողնում նիհար դաստակը և իր տեղն էր վերադառնում:

Կավճապատ պատերի երկայնքով լույսը թրթռալով վարդագույնից անցնում էր դեղնավունի: Ապակիների մյուս կողմում առավոտյան տապն էր սկսում ճարճատել: Հազիվ լսելի եղավ հեռացող Գրանի ձայնը, որն ասում էր, թե վերադառնալու է: Բոլորը սպասում էին: Երեխան, որ այդպես էլ մնում էր աչքերը փակ, թվում էր՝ փոքր-ինչ հանգստացել է: Ձեռքերը, որ վերածվել էին մագիլների, ասես փորում էին մահճակալի կողերը: Հետո

բարձրացան, քորեցին ծնկներին փռած ծածկոցը: Եվ հանկարծ երեխան ծալեց ոտքերը, ազդրերը քաշեց փորին մոտ և անշարժացավ: Այդժամ առաջին անգամ նա բացեց աչքերն ու նայեց իր առջև կանգնած Ռիոյին: Այժմ նրա՝ մոխրագույն կավածեփ, փոս ընկած դեմքի վրա բացվեց բերանը և գրեթե անմիջապես փակվեց՝ արձակելով երկարատև մի ճիչ, որին շնչառությունը հազիվ էր կարողանում երանգավորել, և որը դահլիճը լցրեց միալար, աններդաշնակ և այնքան անմարդկային բողոքով, որն ասես գալիս էր միանգամից բոլոր մարդկանցից: Ռիոն սեղմել էր ատամները, իսկ Տարուն շրջեց դեմքը: Ռամբերը մոտեցավ մահճակալին՝ Կաստելի մոտ, որը փակեց ծնկների վրա բաց մնացած գիրքը: Պանլուն նայեց հիվանդությունից աղճատված այդ մանկական բերանին, որը լի էր բոլոր տարիքի մարդկանց աղաղակներով: Եվ նա փլվեց, ծնկի եկավ: Բոլորի համար բնական հնչեց նրա մի քիչ հեղձված, բայց պարզորոշ ձայնը, որն անընդմեջ արտաբերում էր անանուն տրտունջքի ետևում թաքնված բառերը. «Տե՛ր իմ, փրկի՛ր երեխային»:

Սակայն երեխան շարունակում էր իր աղաղակը, և նրա շուրջը բոլոր հիվանդներն անհանգիստ դարձան: Այն մեկը, որը սենյակի հեռավոր անկյունից տնքոցներ էր արձակում, արագացրեց իր տարանջատ հառաչանքների ռիթմը՝ ի վերջո վերածելով իսկական աղաղակի, մինչ մյուս հիվանդները սկսեցին ավելի ու ավելի ուժգին հառաչել: Հեկեկանքների մի հուժկու ալիք բարձրացավ դահլիճում՝ ծածկելով Պանլուի աղոթքը: Ռիոն, որ կախվել էր մահճակալի ձողից, փակեց հոգնությունից ու զզվանքից հարբած աչքերը: Երբ կրկին բացեց աչքերը, իր առջև տեսավ Տարուին:

– Պետք է գնամ,– ասաց Ռիոն:– Այլևս չեմ դիմանում:

Սակայն հանկարծ մյուս հիվանդները լռեցին: Այդժամ բժիշկը հասկացավ, որ երեխայի ճիչը թուլացել էր, որ գնալով դեռ թուլանում էր և շուտով կդադարեր: Նրա շուրջը հառաչանքները վերսկսվեցին, բայց ավելի խուլ և որպես հեռավոր արձագանք ավարտված պայքարի: Քանզի այն իրոք ավարտվել էր: Կաստելն անկողնու

մյուս կողմից ասաց, որ վերջացել է: Բերանը բաց, բայց համր երեխան խրված էր խառնիխուռն ծածկոցների փոսում՝ միանգամից փոքրացած և արցունքի մնացած կաթիլները դեմքին:

Պանլուն մոտեցավ մահճակալին և օրինանքի շարժումներ արեց: Հետո փեշերը հավաքեց և դուրս եկավ կենտրոնական միջանցքով:

– Կարիք կա՞ ամեն ինչ վերսկսելու,– հարցրեց Տարուն Կաստելին:

Ծեր բժիշկը թափահարեց գլուխը:

– Երևի,– ասաց նա ծռմռված ժպիտով:– Ի վերջո, նա երկար դիմադրեց:

Բայց Ռիոն արդեն հեռանում էր դահլիճից այնպիսի արագ քայլքով, որ երբ հասավ Պանլուին, վերջինս քաշեց նրա թևից կանգնեցնելու համար:

– Դե ինչ, բժի՛շկ,– ասաց նա:

Նույն բորբոքված տեսքով Ռիոն շրջվեց և զայրացած շպրտեց.

– Հա՛, այս մեկը, ինչպես գիտեք, գոնե անմեղ էր:

Հետո շրջվեց, Պանլուից ավելի շուտ անցնելով՝ անցավ դահլիճի դռների միջով և հասավ դպրոցի բակի խորքը: Նստեց նստարանին՝ փոշոտ փոքր ծառերի արանքում, և սրբեց քրտինքը, որն արդեն աչքերն էր լցվում: Նա ցանկություն ուներ էլի բղավելու, որպեսզի վերջապես արձակեր ձգված հանգույցը, որ պայթեցնում էր սիրտը: Շոգը դանդաղորեն սահում էր ֆիկուսի ճյուղերի միջով: Առավոտվա կապույտ երկինքն արագորեն ծածկվում էր սպիտակավուն փառով, որն ավելի հեղձուցիչ էր դարձնում օդը: Ռիոն փռվեց նստարանին: Նա նայում էր ճյուղերին, երկնքին և դանդաղորեն տեղն էր գալիս շնչառությունը, որը քիչ-քիչ վանում էր հոգնությունը:

– Ինչո՞ւ ինձ հետ այդպես կոպիտ խոսեցիք,– հնչեց մի ձայն ետևից:– Ինձ համար ևս անտանելի էր այդ տեսարանը:

Ռիոն շրջվեց Պանլուի կողմը.

– Իրավացի եք,– ասաց նա:– Ներեցեք ինձ: Բայց հոգնությունը խելագարեցնում է: Եվ ժամեր են լինում այս քաղաքում, երբ իմ մեջ միայն ընդվզում եմ զգում:

– Հասկանում եմ,– մրմնջաց Պանլուն:– Իրոք, դա ընդվզում է առաջացնում, քանզի անցնում է մարդկային սահմանը: Սակայն գուցե մենք պիտի սիրե՞նք այն, ինչ չենք հասկանում:

Ռիոն միանգամից ուղղվեց: Նա նայեց Պանլուին իր ունեցած ողջ ուժով ու կրքով և թափ տվեց գլուխը:

– Ո՛չ, հա՛յր իմ,– ասաց նա:– Ես այլ պատկերացում ունեմ սիրո մասին: Եվ մինչ ի մահ ես կհրաժարվեմ ընդունել Աստծու արարած այս աշխարհը, որտեղ չարչրկվում են երեխաները:

Պանլուի տագնապալից դեմքի վրայով ասես մի ստվեր անցավ:

– Ա՜խ, բժի՛շկ,– տխուր ասաց նա,– ես հենց նոր հասկացա՝ ինչ ասել է շնորհ:

Բայց Ռիոն նորից փռվեց իր նստարանին: Նորից իրեն հաղթած հոգնության խորքից նա պատասխանեց ավելի մեղմ.

– Ես գիտեմ ինչ չունեմ: Բայց չեմ ուզում այդ մասին վիճել ձեզ հետ: Մենք միասին աշխատում ենք հանուն այն բանի, որը մեզ միացնում է աստվածանարգությունից և աղոթքներից անդին: Միայն դա է կարևորը:

Պանլուն նստեց Ռիոյի մոտ: Նա հուզված տեսք ուներ:

– Այո՛,– ասաց նա,– այո՛, դուք նույնպես աշխատում եք մարդու փրկության համար:

Ռիոն ջանաց ժպտալ:

– Մարդու փրկությունը չափազանց ուժգին է հնչում ինձ համար: Ես այդքան հեռու չեմ գնում: Մարդու առողջությունն է ինձ հետաքրքրում, նախևառաջ նրա առողջությունը:

Պանլուն վարանեց.

– Բժի՛շկ,– ասաց նա:

Սակայն իսկույն լռեց: Նրա ճակատից ևս սկսեց առվահոսել քրտինքը: Շշնջաց՝ ցտեսություն: Աչքերը փայլում էին, երբ վեր կացավ: Արդեն պիտի հեռանար, երբ Ռիոն, որ մտորում էր, նույնպես վեր կացավ և մի քայլով մոտեցավ նրան.

– Նորից ներողություն եմ խնդրում,– ասաց նա:– Այդ պոռթկումն այլևս չի կրկնվի:

Պանլուն մեկնեց ձեռքը ու տխուր ասաց.

– Եվ սակայն ես չկարողացա համոզել ձեզ:

– Ի՞նչ նշանակություն ունի: Դուք լավ գիտեք, որ ես ատում եմ չարիքն ու մահը: Եվ ուզեք թե չուզեք՝ մենք միասին ենք, որպեսզի դրանցով տառապենք և հաղթենք դրանց:

Ռիոն դեռ պահում էր Պանլուի ձեռքը:

– Տեսնո՞ւմ եք,– ասաց նա՝ խուսափելով նայել նրան:– Ինքը՝ Աստված, չի կարող այժմ մեզ բաժանել:

* * *

Այն օրից ի վեր, ինչ Պանլուն մտել էր բուժական ջոկատների մեջ, նա չէր հեռացել հիվանդանոցներից և բոլոր այն վայրերից, որտեղ կարելի էր տեսնել ժանտախտը: Փրկարարների մեջ նա իրեն դրել էր այն շարքում, որն իր կարծիքով իրենը պետք է լիներ, այսինքն՝ առաջինը: Մահվան տեսարաններն անպակաս էին եղել: Եվ թեև սկզբունքորեն նա պետք է պաշտպանված լիներ շիճուկով, բայց իր սեփական մահվան հոգսը ևս օտար չէր իրեն: Առերևույթ նա միշտ խաղաղ տեսք ուներ, բայց այն օրից, ինչ երկար դիտել էր երեխայի հոգեվարքը, թվում է՝ փոխվել էր: Մի ահագնացող լարվածություն էր ընթերցվում նրա դեմքին: Եվ երբ նա Ռիոյին ժպտալով ասաց, թե այժմ պատրաստում է կարճ տրակտատ՝ «Վանականը կարո՞ղ է դիմել բժշկի օգնությանը» թեմայով, բժիշկն այն տպավորությունը ստացավ, թե այդ խոսքերի տակ թաքնված էր շատ ավելի լուրջ բան, քան այն, ինչ ասել էր Պանլուն: Եվ քանի որ բժիշկը ցանկություն հայտնեց ծանոթանալու աշխատությանը, քահանան հայտարարեց, որ նա պետք է քարոզ կարդա պատարագի ժամանակ և այդ առիթով կջանա շարադրել առնվազն մի քանի դատողություն:

– Կուզենայի, որ դուք էլ գայիք, բժի՛շկ, թեման ձեզ կհետաքրքրի:

Հայր Պանլուն իր երկրորդ քարոզը կարդաց մի քամոտ օր: Ճիշտն ասած՝ ունկնդիրների շարքերն ավելի նոսր էին, քան առաջին քարոզի ժամանակ: Պատճառն այն էր, որ նման ներկայացումները մեր համաքաղաքացիների համար առաջվա նման չունեին նորույթի գրավչությունը: Քաղաքի ապրած դժվարին օրերի մեջ նորույթ բառն ինքը կորցրել էր իմաստը: Բացի դրանից, մարդկանց

մեծամասնությունը, եթե անգամ վերջնականապես չէին հրաժարվել իրենց կրոնական պարտականությունները կատարելուց կամ այդ պարտականությունները չէին զուգակցել իրենց խորապես անբարոյական անձնական ապրելակերպի հետ, ապա սովորական կրոնական ծեսերը փոխարինել էին անհեթեթ սնոտիապաշտություններով: Նրանք ավելի մեծ հաճույքով կկրեին պաշտպանական մեդալյոններ կամ հմայիլներ Սուրբ Ռոշի պատկերով, քան կգնային պատարագի:

Որպես օրինակ կարելի է բերել մեր համաքաղաքացիների չափազանցված հետաքրքրությունը մարգարեությունների նկատմամբ: Գարնանը, իրոք, բոլորը որպե առ որպե սպասում էին համաճարակի ավարտին, և ոչ մեկի մտքով չէր անցնում հարցնել որևէ մեկի կարծիքը համաճարակի ժամկետների մասին, քանի որ յուրաքանչյուր ոք ինքն իրեն համոզում էր, որ հիվանդությունը շուտով կվերջանա: Սակայն օրերն անցնում էին, և մարդիկ սկսեցին վախենալ, որ այդ դժբախտությունը երբևէ վերջ չի ունենա: Ուստի համաճարակի դադարումը դարձավ բոլորի հույսի առարկան: Այսպես՝ ձեռքից ձեռք էին անցնում քրմերից կամ կաթոլիկ եկեղեցու սրբերից վերցված զանազան մարգարեություններ: Քաղաքի տպագրիչները արագ գլխի ընկան, թե ինչպիսի օգուտ կարելի էր քաղել այդ համընդհանուր հափշտակությունից, և մեծաքանակ օրինակներով տեքստեր տարածեցին, որոնք շրջանառում էին ողջ քաղաքով: Նկատելով, որ հասարակության հետաքրքրասիրությունը չի հագենում՝ քաղաքային գրադարաններում հետազոտություններ ձեռնարկվեցին՝ վկայակոչություններ հայտնաբերելու այս կարգի փոքրիկ պատմությունների վերաբերյալ, որոնք տարածվեցին քաղաքում: Եվ քանի որ պատմությունն ինքը զրկված է կանխագուշակություններից, դրանք պատվիրվեցին լրագրողներին, ովքեր առնվազն այս հարցում իրենց դրսևորեցին ավելի իրազեկ, քան անցած դարերի իրենց նախորդները:

Այդ մարգարեություններն անգամ թերթոնի ձևով հայտնվեցին լրագրերում և ընթերցվեցին նույնքան հափշտակությամբ, որքան զգացմունքային պատմությունները, որ տպագրվում էին

առողջության երանելի ժամանակներում: Այդ կանխատեսումները հենվում էին տարօրինակ հաշվարկների վրա, որտեղ մեծ դեր էին խաղում տարին, ամիսը, մահացածների թիվը և ժանտախտի իշխանության տակ արդեն անցած ամիսների քանակը: Ուրիշները համեմատություններ էին անում պատմության մեծ ժանտախտների հետ, դրանց հետ գտնում նմանություններ (որ մարգարեությունները անվանում էին հաստատուն) և ոչ պակաս զարմանալի հաշվարկների միջոցով հավակնում էին դրանցից դուրս բերել ուսմունքներ ներկա փորձության վերաբերյալ: Բայց հասարակությունը միանշանակ ամենից բարձր գնահատեց այն գուշակությունները, որոնք շարադրված էին Հայտնության գրքի լեզվով և հայտարարում էին մի շարք իրադարձություններ, որոնցից յուրաքանչյուրը կիրառելի էր մեր քաղաքի դեպքում, և որոնց բարդությունը թույլ էր տալիս ցանկացած ոճի մեկնաբանություն: Այսպես՝ ամեն օր մեր համաքաղաքացիները սկսեցին քննարկել Նոստրադամուսի և սուրբ Օդիլի ստեղծագործությունները և օգտվել դրանցից: Բոլոր այս գուշակությունների համար ընդհանուրն այն էր, որ բոլորն էլ վերջին հաշվով, հուսադրող էին: Միայն ժանտախտն այդպիսին չէր:

Այս սնոտիապաշտություններն ուրեմն կրոնին էին փոխարինում մեր համաքաղաքացիների համար: Ահա թե ինչու Պանլուի քարոզը տեղի ունեցավ մի եկեղեցում, որը միայն երեք քառորդով էր լի: Քարոզի երեկոյան, երբ Ռիոն մտավ եկեղեցի, քամին, որն օդային բարակ հոսանքներով խցկվում էր մուտքի դռան արանքներից, ազատ ու անկաշկանդ երթևեկում էր ունկնդիրների շարքերում: Ահա այդպիսի ցրտաշունչ ու պապանձված եկեղեցում, ուր հավաքվել էին բացառապես տղամարդիկ, Ռիոն տեղ գրավեց և տեսավ, որ հայր Պանլուն մոտեցավ ամբիոնին: Նա խոսում էր ավելի մեղմ ու կշռադատված տոնով, քան առաջին անգամ, և ունկնդիրները բազմիցս նկատեցին, որ նրա խոսքում կար որոշակի տարակուսանք: Եվս մեկ ուրիշ հետաքրքիր հանգամանք. նա այլևս ասում էր ոչ թե դուք, այլ մենք:

Սակայն նրա ձայնը հետզհետե ամրացավ: Սկսեց հիշեցնելով, որ երկար ամիսներից ի վեր ժանտախտը մեզ հետ է, և որ այժմ մենք

Նրան ավելի լավ ենք ճանաչում, քանզի նրան բազմիցս տեսել ենք մեզ հետ սեղանի շուրջը և կամ նրանց սնարի վերևում, ում սիրում էինք, տեսել ենք մեզ հետ քայլելիս կամ մեր գալստյանը սպասելիս աշխատավայրերում, ուրեմն այժմ գուցե ավելի լավ կարողանանք ընկալել այն, ինչ ասում էր նա անդադար, որ լավ չէինք ունկնդրել առաջին անակնկալ պահերին: Այն, ինչ հայր Պանլուն արդեն քարոզել էր նույն վայրում, ճշմարիտ էր, կամ առնվազն այդպիսին էր եղել նրա համոզմունքը: Սակայն գուցե նաև, ինչպես պատահում է բոլորիս հետ, նա կուրծք էր ծեծել, այդկերպ էր մտածել և խոսել այդ մասին առանց գթասրտության: Այսուհանդերձ, ճշմարիտն այն է, որ ամենուրեք և միշտ մտապահելու բան կա. ամենադաժան փորձությունն էլ քրիստոնյայի համար բարիք է: Եվ տվյալ դեպքում հենց քրիստոնյայի պարտքն է փնտրել այդ բարիքը, պարզել ինչու է տրված և ինչպես այն գտնել:

Այդ պահին Ռիոյի շուրջը հայտնվեցին մարդիկ, որոնք, հենվելով իրենց նստարանների արմնկակալներին, ջանում էին հնարավորինս ավելի հարմար տեղավորվել: Մուտքի պաստառապատ դռներից մեկը կամացուկ խփվեց: Ինչ-որ մեկը վեր կացավ և փորձեց բռնել այն: Եվ Ռիոն, շեղված այդ խլրտյունի պատճառով, մի կերպ էր լսում Պանլուին, որը վերսկսել էր քարոզը: Նա մոտավորապես ասում էր, որ հարկ չկա ճիգ գործադրելու, որպեսզի հասկանաս ժանտախտի երևույթը, այլ պետք է յուրացնել այն, ինչ հնարավոր է յուրացնել: Ռիոն տարտամորեն հասկացավ, որ ըստ սրբազան հոր՝ ոչինչ չկար բացատրելու: Նա ավելի մեծ հետաքրքրությամբ սկսեց լսել, երբ Պանլուն ուժգին ձայնով հայտարարեց, որ շատ բաներ կարելի է մեկնել Աստծու տեսանկյունից, և կան բաներ, որոնք անմեկնելի են: Անշուշտ գոյություն ունեն չարն ու բարին, և ընդհանրապես, դժվար չէ բացատրել այն, ինչը բաժանում է նրանց: Սակայն չարի խորքում ի հայտ են գալիս դժվարություններ: Կա չար, օրինակ, որ առերևույթ անհրաժեշտ է թվում, և կա չար՝ առերևույթ անօգուտ: Կա Դոն Ժուան՝ դժոխքի խորքերում, և կա մանկան մահ: Քանզի եթե արդար է, որ անառակը շանթահարվի, ապա անհասկանալի է երեխայի տառապանքը: Եվ իրականում երեխայի տառապանքից առավել կարևոր

ոչինչ չկա, և՛ սարսափը, որ այդ տառապանքը բերում է իր ետևից, և՛ պատճառները, որ անհրաժեշտ է գտնել: Կյանքի մյուս հարցերում Աստված մեզ սատարում է ամեն ինչում, և ցայսօր կրոնի վաստակն անգնահատելի է: Բայց այստեղ, ընդհակառակը, նա մեզ պատին է դեմ տալիս: Այսպես մենք հայտնվեցինք ժանտախտի պարիսպների տակ և նրանց մահաբեր ստվերների մեջ պետք է գտնեինք մեր շնորհը: Հայր Պանլուն հրաժարվեց անգամ հիշատակել տրված արտոնությունները, որոնք թույլ էին տալիս մագլցել պատը: Նրա համար դժվար չէր լինի ասել, թե հավերժական երանությունը, որ սպասում էր երեխային, կարող էր փոխհատուցում լինել նրա երկրային տառապանքի դիմաց, սակայն իրականում այդ մասին ինքը՝ հայր սուրբը, ոչինչ չգիտեր: Իրոք, ո՞վ կկարողանար հավաստել, թե դրախտային երանությունը կարող է հատուցել մարդկային ցավի գեթ մեկ վայրկյանը: Իհարկե, հավաստողը չէր կարող լինել քրիստոնյան, քանզի Տերը նրա ցավը զգաց իր մարմնի անդամներով և հոգով: Ոչ, հայր Պանլուն մնում է պատի տակ՝ հավատարիմ այդ քառատմանը, որի խորհրդանիշը խաչն է՝ դեմ առ դեմ մանկան տառապանքին: Եվ ասում է առանց դույզն-ինչ վախի նրանց, ովքեր այդ օրը լսում են իրեն. «Եղբայրներ, ժամն է: Հարկ է ամեն բան ընդունել կամ ժխտել ամեն բան: Եվ ուրեմն, ձեզնից ո՞վ կհանդգնի ժխտել ամեն բան»:

Ռիոն հազիվ ժամանակ ունեցավ մտածելու, որ հայր սուրբը մոտեցել է հերետիկոսության սահմաններին: Նա արդեն շարունակում էր իր ճառը ավելի ուժգին, որպեսզի հաստատեր, որ այդ պատվիրանը, այդ մաքրամաքուր պահանջը քրիստոնյայի շահն է: Նաև նրա առաքինությունը: Հայր Պանլուն գիտեր, որ ծայրահեղությունը, որ պարունակում էր իր հայտարարած առաքինությունը, ցնցելու էր շատ հոգիներ, որոնք սովոր էին ավելի ներողամիտ ու ավելի դասական բարոյախոսության: Բայց ժանտախտի ժամանակների կրոնը չէր կարող լինել նույնը, ինչ սովորական ժամանակների կրոնը, և եթե Աստված կարող է ընդունել և անգամ ցանկանալ, որ հոգին հանգստանա ու կրկին հրճվի երջանիկ ժամանակներում, ապա այդ ծայրահեղությունը կցանկանա տեսնել դժբախտության

շռայլությունների մեջ: Աստված այսօր իր արարածներին շնորհ է անում՝ գցելով այնպիսի դժբախտության մեջ, որ նրանց հարկ է վերագտնել և ստանձնել ամենամեծ առաքինությունը, այն է՝ Ամեն ինչ կամ Ոչինչ:

Մի թերուս հեղինակ նախորդ դարում հավակնել էր բացահայտել Եկեղեցու գաղտնիքը՝ հաստատելով, որ Քավարան գոյություն չունի: Դրա տակ նա ենթադրում էր, որ չկան կիսաչափումներ, կային միայն Դրախտը ու Դժոխքը, և որ մարդը կարող է փրկվել կամ դատապարտվել ըստ իր ընտրության: Եթե հավատանք Պանլուին, դա հերետիկոսություն էր, որ կարող էր ծնվել միայն անառակի հոգում: Քանզի Քավարանը գոյություն ունի: Սակայն անկասկած եղել են դարաշրջաններ, երբ հնարավոր չի եղել հուսալ Քավարանի մասին, դարաշրջաններ, երբ հնարավոր չի եղել խոսել ներելի մեղքերի մասին: Ամեն մեղք մահացու է եղել, և ամեն անտարբերություն՝ դատապարտելի: Եղել է Ամեն ինչ կամ Ոչինչ:

Պանլուն լռեց, և Ռիոն ավելի պարզորոշ լսեց քամու հեծեծանքները, որոնք ասես կրկնապատկվում էին դրսում: Հայր սուրբն այդ նույն պահին ասում էր, որ ամեն ինչ ընդունելու առաքինությունը, որի մասին խոսում էր, չպետք է հասկանալ նեղ իմաստով, ինչ սովորաբար վերագրում են նրան, որ խոսքը հասարակ հնազանդության մասին չէր, ոչ էլ անգամ դժվարին նվաստացման: Խոսքն այնպիսի հնազանդեցման մասին է, երբ հնազանդվողը ինքն է գնում նման նվաստացման: Անտարակույս, երեխայի չարչարանքը նվաստացուցիչ է մտքի ու սրտի համար: Բայց հենց դրա համար պետք էր մտնել այնտեղ: Պանլուն իր ունկնդիրներին հավաստիացրեց, որ այն, ինչը պիտի ասեր, դյուրին չի ասել, պետք է ցանկանալ, որ ասվի, քանզի Աստված ինքն է ցանկանում: Այսպես միայն քրիստոնյան ոչնչի առջև կանգ չի առնի, և երբ բոլոր ելքերը փակ են, կխորանա էական ընտրության մեջ: Նա կընտրի հավատալ ամեն ինչին, որպեսզի չհանգի ամեն ինչ ժխտելուն: Եվ ինչպես քաջ կանայք, ովքեր այդ պահին եկեղեցիներում իմանալով, որ թարախաբշտիկների առաջացումը բնական ճանապարհն է, որով մարմինը կթոթափի վարակը, կասեին. «Աստված իմ, տուր

https://1915.info

Նրան բշտիկներ», քրիստոնյան կկարողանա տրվել աստվածային կամքին՝ անգամ անհասկանալի կամքին: Չի կարելի ասել. «Դա ես հասկանում եմ, բայց ինձ համար անընդունելի է, հարկ կլինի սրտից դուրս հանել այդ անընդունելին, որ տրվել է մեզ հենց այն բանի համար, որ մենք ընտրություն կատարենք: Երեխաների տառապանքը մեր դառը հացն է, սակայն առանց այդ հացի մեր հոգին կկործանվեր ոգեղեն քաղցից:

Խուլ իրարանցումը, որ սկսվում էր հայր Պանլուի դադարների ժամանակ, դարձյալ լսելի դարձավ, որովհետև քարոզիչը անսպասելիորեն իր ձառը վերսկսեց ավելի ուժգնորեն, ասես հարց էր տալիս իր ունկնդիրների փոխարեն՝ ի վերջո ինչպիսի՞ն է լինելու իրենց վարքագիծը: Նա բնավ չէր կասկածում, որ արտասանելու էին այդ սարսափելի բառը՝ ֆատալիզմ: Բայց նա չէր նահանջելու այդ բառի առջև, եթե միայն իրեն թույլ տային այդտեղ ավելացնել ակտիվ մակդիրը: Անշուշտ, հարկ չկա մեկ անգամ ևս հիշեցնելու, որ չպետք է նմանակել Հաբեշստանի քրիստոնյաներին, որոնց մասին նա խոսել է նախորդ քարոզի ժամանակ: Հարկ չկա անգամ մտածելու ժանտախտահար պարսիկների մասին, ովքեր իրենց շորերը նետում էին քրիստոնյա բուժկետերի վրա՝ երկնքին բարձրաձայն կոչ անելով ժանտախտը տալ այդ անհավատներին, ովքեր ուզում էին Աստծու ուղարկած չարիքի դեմ պայքարել: Բայց մյուս կողմից էլ՝ պետք չէր ընդօրինակել նաև Կահիրեի վանականներին, ովքեր անցած դարի համաճարակների ժամանակ հաղորդություն էին տալիս նշխարները ունելիով բռնած՝ խուսափելու համար այդ խոնավ ու տաք բերանների շփումից, որտեղ կարող էր թաքնված լինել վարակը: Վարակված պարսիկները և Կահիրեի վանականները հավասարապես մեղք էին գործում, քանզի առաջինները երեխայի տառապանքը հաշվի չէին առնում, իսկ երկրորդները, ընդհակառակը, ամբողջովին տրված էին համամարդկային տառապանքի սարսափին, որը կլանել էր ամեն բան: Երկու դեպքում էլ աղճատվում էր բուն խնդիրը: Բոլորը խուլ էին մնում՝ անհաղորդ Աստծու ձայնին: Սակայն կային նաև ուրիշ օրինակներ, որ Պանլուն կուզենար հիշեցնել: Եթե հավատանք Մարսելի Մեծ ժանտախտի տարեգրին,

Մերսիի մենաստանի ութսունմեկ կրոնավորներից միայն չորսն են դիմացել տենդին: Եվ այդ չորսից երեքն էլ փախել-փրկվել են: Այսպես էին խոսում ժամանակագիրները, և իրենց գործը չէր պահանջում ավելին ասել: Սակայն կարդալով սա՝ հայր Պանլուի միտքը սևեռվում էր այն մեկի վրա, որը մենակ էր մնացել՝ չնայած յոթանասունյոթ դիակներին և չնայած, մանավանդ, իր երեք հոգևոր եղբայրների օրինակին: Եվ հայր սուրբը բռունցքով խփեց ամբիոնի եզրին ու բղավեց.

– Եղբայրներ, պետք է լինել այն մեկը, որը մնաց:

Խոսքը նախազգուշական միջոցներից հրաժարվելու մասին չէր, այն խելամիտ կարգուկանոնից, որ մտցնում է հասարակությունը աղետի դեմ պայքարելիս: Չպետք է լսել այն բարոյախոսներին, ովքեր ասում են՝ ամեն ինչ պետք է թողնել և ծնկի գալ: Ընդհակառակը, պետք է միայն սկսել քայլել առաջ՝ խավարում թեկուզ կույրի պես խարխափելով, և պետք է ջանալ բարիք գործել: Մնացյալը պետք է թողնել Աստծուն, անգամ երեխաների մահը, և չպետք է սեփական անձի համար օգնություն հայցել: Այստեղ հայր Պանլուն ոգեկոչեց Բելգյունս եպիսկոպոսի վեհ կերպարը Մարսելի ժանտախտի ժամանակ: Նա հիշեցրեց, որ ժանտախտի վերջանալու օրերին եպիսկոպոսը, կարծելով, թե ամեն բան արել է, որ պարտավոր էր անել, և մտածելով, որ այլևս ոչ մի ճար չկա, սննդի պաշարներն առած, փակվեց իր տանը, որի շուրջը պարիսպ քաշել տվեց: Քաղաքի բնակիչները զգացմունքների մի կտրուկ փոփոխությամբ, որը հատուկ է ծայրահեղ մեծ ցավի դեպքում, զայրացան իրենց երբեմնի կուռքի դեմ, նրան վարակելու համար շրջափակեցին տունը դիակներով և անգամ մարմիններ նետեցին պարիսպներից ներս, որպեսզի հաստատապես ոչնչացնեին նրան: Այսպես եպիսկոպոսը վերջնականապես ընկճված կարծեց, թե կմեկուսանա մահվան աշխարհից, սակայն մեռյալները նրա գլխին էին թափվում երկնքից:

– Եղբայրներ,– ասաց վերջապես Պանլուն՝ հայտարարելով, որ ավարտում է,– սերն առ Աստված դժվարին սեր է: Այն ենթադրում է ամբողջական հրաժարում ինքդ քեզնից և քամահրում քո անձի նկատմամբ: Բայց միայն այդ սերն է ի զորու ջնջել երեխաների

տառապանքն ու մահը, ամեն դեպքում միայն նա է ի զորու այն դարձնել անհրաժեշտություն, քանզի անհնարին է հասկանալ, և կարելի է միայն ցանկանալ: Ահավասիկ այն դժվարին դասը, որ կուզենայի յուրացնել ձեզ հետ: Ահավասիկ հավատքը՝ դաժան մարդկանց աչքին, վճռորոշ Աստծու աչքին, այդ հավատքով պետք է միանալ: Այս սոսկալի պատկերով մենք պիտի հավասարվենք: Այս գագաթում ամեն ինչ կխառնաշփոթվի և կհավասարվի, արդարությունը կժայթքի թվացյալ անարդարությունից: Հենց այսպես է, որ Ֆրանսիայի հարավի բազմաթիվ եկեղեցիներում ժանտախտահար հիվանդները ննջում են դարեր ի վեր շիրմաքարերի տակ, և կրոնավորները խոսում են նրանց գերեզմանների վերևում, և նրանց թևածող ոգին հառնում է այն մոխրից, որի մեջ մանուկներն այսուհանդերձ ունեն իրենց բաժինը:

Երբ Ռիոն դուրս եկավ, մրրիկի մի ուժգին հորձանք ներխուժեց կիսաբաց դռնից և հարվածեց հավատացյալների հենց դեմքերին: Նա եկեղեցի էր բերում անձրևաբույրը, թաց մայթերի հոտը, որից կարող էին գուշակել քաղաքի պատկերը, մինչ դուրս կգային այդտեղից: Ռիոյից առաջ այդ պահին դուրս եկող ծեր քահանան և երիտասարդ սարկավագը դժվարությամբ պահեցին իրենց գլխադիրները: Եվ սակայն ծեր կրոնավորը շարունակում էր մեկնաբանել քարոզը: Նա գովաբանում էր Պանլուի պերճախոսությունը, բայց մտահոգված էր նրա արտահայտած մտքերի համարձակությամբ: Նա կարծում էր, որ քարոզի մեջ ավելի շատ տագնապ էր եղել, քան ուժ, իսկ Պանլուի տարիքում վանականն իրավունք չունի մտատանջվելու: Երիտասարդ սարկավագը, գլուխը հակած քամուց պաշտպանվելու համար, հավաստում էր, որ հաճախ էր լինում հայր Պանլուի քարոզներին, որ տեղյակ էր նրա առաջընթացին, և որ նրա տրակտատը կլինի էլ ավելի համարձակ և հավանաբար չի ստանա եկեղեցական գրաքննության թույլտվությունը:

– Ո՞րն է ուրեմն նրա նպատակը,– հարցրեց ծեր վանականը:

Նրանք հասել էին գավիթ: Քամին ոռնալով պտտվում էր նրանց շուրջը՝ կտրելով երիտասարդի խոսքը: Երբ կարողացավ խոսել, ասաց միայն.

– Եթե կրոնավորը խորհրդակցության է գնում բժշկի մոտ, ուրեմն հակասություն կա:

Ռիոյից իմանալով Պանլուի խոսքերը՝ Տարուն ասաց, որ ճանաչում էր մի քահանայի, որը կորցրել էր հավատքը՝ պատերազմի ժամանակ տեսնելով մի երիտասարդի դեմք՝ ավերված աչքերով:

– Պանլուն իրավացի է,– ասաց Տարուն:– Երբ անմեղությունը կորցնում է աչքերը, քրիստոնյան պետք է կորցնի հավատքը կամ նույնպես համաձայնվի ապրել առանց աչքերի: Պանլուն չի ուզում կորցնել հավատքը, նա կգնա մինչև վերջ: Ահա թե ինչ է ցանկացել ասել նա:

Տարուի այս դիտողությունը թերևս թույլ է տալիս դույզն-ինչ լույս սփռել հետագա դժնի դեպքերի վրա, երբ Պանլուի վարքագիծն անհասկանալի թվաց անգամ իր մտերիմ մարդկանց համար: Դեռ այն կքննարկեն:

Քարոզից մի քանի օր անց Պանլուն իրոք սկսեց տեղափոխվել: Դա այն պահն էր, երբ համաճարակի ծավալումը քաղաքում առաջացրել էր ստույգ տեղափոխումներ: Եվ ինչպես Տարուն ստիպված էր թողնել իր հյուրանոցը Ռիոյի մոտ տեղափոխվելու համար, այնպես էլ հայր սուրբը ստիպված էր թողնել բնակարանը, որտեղ տեղավորել էր իր կրոնական կարգը, որպեսզի բնակվեր մի ծեր կնոջ մոտ, որը մշտապես հաճախում էր եկեղեցի և դեռևս ժանտախտի վարակակիր չէր: Տեղափոխության ընթացքում հայր Պանլուն զգաց, որ իր հոգնածությունն ու տագնապն ահագնանում են: Այդ պատճառով էլ կորցրեց իր տանտիրուհու հարգանքը: Քանզի երբ վերջինս եռանդուն գովաբանել էր սուրբ Օդիլի մարգարեության արժանիքները, վանականը թեթևակի անհամբերություն էր ցուցաբերել, որն անշուշտ իր հոգնածության հետևանքն էր: Հետո նա, որքան էլ ճիգեր գործադրեց, որ ձեռք բերի ծեր կնոջ գոնե բարյացակամ անտարբերությունը, ոչնչի չհասավ: Վատ տպավորություն էր թողել: Եվ ամեն երեկո, մինչ կհեռանար իր հելունագործ ժանյակներով լեփ-լեցուն սենյակը, նա պետք է նայեր հյուրասենյակում նստած իր հյուրընկալուհու մեջքին՝ միաժամանակ որպես հիշատակ տանելով «Բարի գիշեր, հայր իմ»-ը, որ այդ կինը նետում էր չորությամբ

և առանց շրջվելու: Նման մի երեկո, երբ գնաց քնելու ծանրացած գլխով, զգաց, որ դաստակներում ու քունքերում ազատ են արձակվել տենդի շղթայազերծ ալիքները, որ արդեն երկար ժամանակից ի վեր դարանակալել էին իր ներսում:

Շարունակությունը հայտնի դարձավ միայն իր տանտիրուհու պատմածներից: Առավոտյան, ըստ իր սովորության, վերջինս վաղ էր վեր կացել: Որոշ ժամանակ անց զարմանալով, որ հայր Պանլուն դուրս չի գալիս իր սենյակից, կինը երկար վարանելուց հետո որոշել էր թակել դուռը: Նրան գտել էր դեռևս անկողնում, անքուն գիշերից հետո: Նա տառապում էր շնչարգելությունից, և դեմքը թվացել էր սովորականից ավելի կարմիր: Ըստ իր խոսքերի՝ նա բարեհամբույր առաջարկել էր բժիշկ կանչել, սակայն իր առաջարկը մերժվել էր այնպիսի կոպտությամբ, որի համար ափսոսում էր: Նրան մնացել էր միայն հեռու քաշվել: Մի փոքր անց Պանլուն զանգել էր և խնդրել գալ: Ներողություն էր խնդրել իր բռնկման համար և հայտարարել, որ խոսք չէր կարող լինել ժանտախտի մասին, որ դրա ախտանիշներից ոչ մեկը չկա, երևի տկարությունը չափազանց մեծ հոգնության արդյունք է, որն անցնելու է: Ծեր կինը արժանապատվությամբ պատասխանել էր, որ բժշկին դիմելու իր առաջարկը բնավ չէր բխում այդ կարգի մտահոգությունից, որ ինքը նկատի չէր ունեցել սեփական ապահովությունը, որն Աստծու ձեռքում է, այլ լոկ սուրբ հոր առողջությունը, որի համար իրեն պատասխանատու էր զգում: Բայց քանի որ Պանլուն ոչինչ չէր ասել, տանտիրուհին, եթե հավատանք նրան, ցանկանալով կատարել իր ուղղակի պարտականությունը, նորից էր առաջարկել կանչել բժշկին: Հայր սուրբը դարձյալ մերժել էր՝ հավելելով, կնոջ ենթադրությունների համաձայն, չափազանց տարտամ բացատրություններ: Տանտիրուհու կարծիքով՝ ինքը հասկացել էր միայն (և հենց դա էլ իրեն անհասկանալի էր թվում), որ Պանլուն հրաժարվում էր այս խորհրդատվությունից սոսկ այն պատճառով, որ այն չէր համընկնում իր սկզբունքների հետ: Կինը դրանից եզրակացրել էր, որ իր վարձակալի գիտակցությունը փոքր-ինչ մթագնել էր տենդից, և բավարարվել էր նրան թուրմ բերելով:

Վճռելով ճշգրիտ կատարել իրավիճակից բխող իր բոլոր պարտականությունները՝ ծեր կինը երկու ժամը մեկ անընդմեջ մտել էր Պանլուի սենյակը: Ամենից շատ նրան ապշեցրել էր անվերջանալի գրգռվածությունը, որի մեջ էր եղել հայր սուրբն ամբողջ օրվա ընթացքում: Մերթ մի կողմ էր նետել վերմակը, մերթ քաշել դեպի իրեն, ձեռքերով անընդհատ շփել էր խոնավ ճակատը, հաճախակի ուղղվել իր տեղում՝ ջանալով հազալ, ու խեղդող հազը՝ խռպոտ ու խոնավ, ամեն անգամ դժվարությամբ էր դուրս եկել՝ ասես ինչ-որ բան պոկելով ներսից: Թվում էր՝ ոչ մի կերպ չէր կարողանում կոկորդը մաքրել բամբակե խցաններից, որ ուզում էին խեղդել իրեն: Այս նոպաներից հետո նա փլվում էր բարձերի վրա՝ ցույց տալով ուժասպառության բոլոր նշանները: Վերջում նորից ուղղվում էր կիսով չափ և մի պահ նայում իր դիմաց, նայում էր այնպիսի սևեռուն լարվածությամբ, որ ավելի ուժգին էր թվում, քան նախորդ ամբողջ գրգռվածությունը: Բայց ծեր կինը դարձյալ վարանում էր բժիշկ կանչել և հակառակվել իր հիվանդին: Գուցե իրոք տենդի սովորական նոպա էր, որքան էլ արտառոց տեսք ունենար:

Կեսօրից հետո, այսուհանդերձ, նա փորձեց խոսել վանականի հետ և ի պատասխան ստացավ մի քանի խառնափնթոր խոսքեր: Կինը փորձեց կրկնել իր առաջարկը: Այդժամ Պանլուն նորից բարձրացավ տեղից ու կիսախեղդ ձայնով պարզորոշ պատասխանեց, որ բժիշկ չի ուզում: Տանտիրուհին որոշեց, որ կսպասի մինչ հաջորդ առավոտը, և եթե հայր սուրբի վիճակը լավացած չլինի, կզանգի այն հեռախոսահամարով, որ Տեղփաստը օրը տասն անգամ կրկնում էր ռադիոյով: Միշտ զգոն իր պարտականությունների նկատմամբ ծեր կինը մտածում էր գիշերն այցելել իր վարձակալին և հսկել նրան: Սակայն երեկոյան հիվանդին թարմ թուրմ տալուց հետո ցանկացավ մի քիչ պառկել և արթնացավ միայն հաջորդ օրը՝ վաղ առավոտյան: Վազեց նրա սենյակը:

Հայր սուրբը մեկնված էր լրիվ անշարժ: Նախօրյակի ծայրահեղ արյունազեղությանը փոխարինել էր մի տեսակ կապտավուն գունատություն՝ այնքան զգալի, որ դիմագծերը չէին կորցրել իրենց ձևերը: Անթարթ աչքերը սևեռված էին բազմագույն կախարդազարդերով

ջահին, որը կախված էր անկողնու վերևում: Երբ մտավ ծեր կինը, նա հայացքը շրջեց կնոջ կողմը: Վերջինիս ասածով՝ այդ պահին նա այնպիսի տեսք ուներ, որ ասես նրան ծեծել էին ողջ գիշեր, և այժմ ուժասպառված անկարող էր որևէ հակազդեցության: Կինը նրան հարցրեց՝ ինչպե՞ս է: Եվ նա դարձյալ տարօրինակորեն անտարբեր ձայնով պատասխանեց, որ վատ է զգում, որ բժշկի կարիք չունի, և որ բավական կլիներ, եթե իրեն հիվանդանոց տեղափոխեին ըստ գոյություն ունեցող կանոնների: Ահաբեկված ծեր կինը վազել էր հեռախոսի մոտ: Ռիոն եկավ կեսօրին: Լսեց տանտիրուհու պատմածը և ասաց, որ Պանլուն իրավացի էր, և որ արդեն չափազանց ուշ է: Հայր սուրբը նրան ընդունեց նույն անտարբեր տեսքով: Ռիոն քննեց նրան և ապշեց՝ չհայտնաբերելով այտուցային կամ թոքային ժանտախտի հիմնական ախտանիշներից և ոչ մեկը, բացի թոքային անբավարարությունից ու կրծքահեղձուկից: Ամեն դեպքում զարկերակն այնքան թույլ էր, և ընդհանուր վիճակը՝ այնքան տագնապալից, որ գրեթե հույս չկար:

– Դուք հիվանդության հիմնական ախտանիշներից ոչ մեկը չունեք,– ասաց նա Պանլուին:– Բայց քանի որ կասկածներ կան, ես պարտավոր եմ ձեզ մեկուսացնել:

Հայր սուրբը տարօրինակ ժպտաց՝ ասես քաղաքավարությունից դրդված, բայց լռեց: Ռիոն դուրս եկավ զանգելու և վերադարձավ: Նայեց Պանլուին:

– Ես կմնամ ձեզ մոտ,– ասաց քնքշաբար: Պանլուն ասես վերակենդանացավ, բժշկի կողմը շրջեց ջերմությամբ լի աչքերը: Հետո դժվարությամբ արտաբերեց խոսքեր, որոնցից անհնար էր հասկանալ՝ տխրությամբ էին ասված, թե ոչ:

– Շնորհակալ եմ,– ասաց նա:– Բայց կրոնավորները բարեկամներ չեն ունենում: Նրանք ամեն բան տալիս են Աստծուն:

Նա խնդրեց խաչելությունը, որ դրված էր սնարի վերևում, և երբ տվեցին նրան իր ուզածը, շրջվեց և սկսեց նայել:

Հիվանդանոցում Պանլուն չբացեց սեղմած բերանը: Ինչպես անզգա մի իր, նա հլու ենթարկվում էր իրեն պարտադրվող բոլոր բուժական միջոցներին, բայց ձեռքից բաց չէր թողնում խաչը:

Սակայն վանականի դեպքը մնում էր անորոշ: Կասկածը համառում էր Ռիոյի մտքում: Եվ ժանտախտ էր, և ժանտախտ չէր: Ասենք, արդեն ահագին ժամանակից ի վեր հիվանդությունն ասես հաճույք էր զգում՝ շփոթեցնելով ախտորոշումները: Բայց Պանլուի պարագայում, ինչպես ցույց տվեց դեպքերի ընթացքը, այդ անորոշությունն այլևս նշանակություն չուներ:

Տենդը սաստկացավ: Հազը գնալով դարձավ ավելի ու ավելի խռպոտ և տանջեց հիվանդին ամբողջ օրը: Երեկոյան վերջապես հայր սուրբը խխելով թքեց իրեն խեղդող բամբակը: Այն կարմիր էր: Ահագնացող տենդի մեջ Պանլուի հայացքը մնում էր անտարբեր, և առավոտյան, երբ նրան գտան մեռած, կիսով չափ դուրս եկած անկողնուց, հայացքը նրա ոչինչ չէր արտահայտում: Նրա քարտում գրանցեցին. «Կասկածելի դեպք»:

* * *

Այդ տարի Ամենայն սրբոց տոնը չանցավ այնպես, ինչպես անցնում էր սովորաբար: Իհարկե, եղանակն էլ իր դերը խաղաց, հանկարծակի փոխվեց, և ուշացած շոգերը միանգամից իրենց տեղը զիջեցին ցրտերին: Ինչպես անցած տարիներին, այժմ էլ ուժգին քամին փչում էր անընդմեջ: Մեծ-մեծ թուխպեր էին անցնում հորիզոնի մի կողմից մյուսը, ստվերով պատում տները, բայց նրանց անցնելուց հետո տների վրա ընկնում էր նոյեմբերյան երկնքի սառն ու ոսկեփայլ լույսը: Հայտնվեցին առաջին անձրևանոցները: Ամենուրեք անթիվ կաուչուկե և փայլփլուն, զարմանալի կտորներ էին: Լրագրերն իրոք տեղեկացնում էին, որ երկու հարյուր տարի առաջ Հարավի մեծ ժանտախտների ժամանակ բժիշկները հագնում էին յուղած կերպասներ հենց իրենց անվտանգությունն ապահովելու համար: Խանութներն օգտվեցին դրանից, որպեսզի իրացնեն մեծ քանակությամբ հնաոճ հագուստներ, որոնց օգնությամբ մեր համաքաղաքացիները հույս ունեին ձեռք բերել վարակի անընկալունակություն:

Բայց եղանակային այս բոլոր նշանները չէին կարող մեզ մոռանալ տալ, որ գերեզմանոցները լքված էին: Անցած տարիներին

տրամվայները լի էին լինում քրիզանթեմների՝ սրտխառնուք առաջացնող հոտով և կանանց թափորներով, որոնք գնում էին ծաղիկներ դնելու գերեզմաններին, որտեղ թաղված էին իրենց հարազատները: Դա այն օրն էր, երբ ջանում էին ՆՆջեցյալներին հատուցել մեկուսացման և մոռացումի համար, որ տևել էին երկար ամիսներ: Բայց այդ տարի ոչ ոք չէր ուզում այլևս մտածել մեռածների մասին: Նրանց մասին իրոք արդեն չափազանց շատ էին մտածել: Եվ հիմա նրանց մոտ չէին գնում, որ հայտնեին իրենց փոքրիկ զղջումն ու մեծագույն թախիծը: Նրանք այլևս այն լքվածները չէին, որոնց այցելում են տարին մեկ արդարանալու համար: Նրանք դարձել էին խորթ ինքնակոչներ, որոնց ուզում են մոռանալ: Ահա թե ինչու Մեռելոցն այդ տարի եղավ մի տեսակ աճպարարական: Այժմ ըստ Կոթարի, որի լեզուն Ռիոյի կարծիքով դառնում էր ավելի ու ավելի հեգնական, բոլոր օրերն էլ Մեռյալների տոնն էր: Եվ իսկապես, ժանտախտի ուրախության կրակներն առաջվա նման մեծ աշխուժությամբ վառվում էին դիակիզարանում: Ճիշտ է, մահացածների թիվը օրըստօրե չէր աճում, սակայն թվում էր, թե ժանտախտը շատ հարմարավետ է տեղավորվել իր բարձրագույն աստիճանում և պետական պաշտոնյայի նման իր ամենօրյա զոհերի մեջ ճշգրտում և կանոնավորություն է մտցնում: Սկզբունքորեն և իրազեկ մարդկանց կարծիքով դա լավ նշան էր: Ժանտախտի առաջխաղացքի գծապատկերն իր անդադար վերելքով և հետո դրան հաջորդող կայունությամբ, միանգամայն քաջալերիչ էր, օրինակ, բժիշկ Ռիշարի համար. «Սա լավ, հիանալի գծապատկեր է»,– ասում էր նա: Նրա կարծիքով հիվանդությունը հասել էր իր բարձրագույն սանդղահարթակին, այսուհետ նա կարող էր միայն իջնել: Այս գործում բժիշկ Ռիշարն արժանին էր մատուցում Կաստելի նոր շիճուկին, որն իրոք անսպասելի հաջողությունների էր հասել: Ծերուկ Կաստելը չէր հակաճառում, բայց համարում էր, որ փաստորեն, ոչինչ կանխագուշակելի չէ, քանի որ ժանտախտների պատմությունը ներառում է անկռահելի ցատկերի օրինակներ: Պրեֆեկտուրան, որը վաղուց ցանկանում էր հանգստացնել հանրային միտքը, բայց ժանտախտը հնարավորություն չէր ընձեռում,

մտածեց ժողովել բժիշկներին՝ խնդրելու նրանց կազմել մի զեկուցագիր այս թեմայի շուրջ: Սակայն ժանտախտը բժիշկ Ռիշարին էլ տարավ՝ նրան նույնպես, և հենց ժանտախտի իր բարձրագույն սանդղահարթակից:

Իշխանությունները, ստանալով այս՝ անկասկած տպավորիչ օրինակը, որն ի վերջո ոչինչ չէր ապացուցում, վերադարձան իրենց հոռետեսությանը նույնպիսի անխոհեմությամբ, ինչպես սկզբում ընդունել էին լավատեսությունը: Կաստելը սահմանափակվում էր ջանասիրաբար իր շիճուկը պատրաստելով: Այլևս քաղաքում չէր մնացել որևէ հասարակական վայր, որը վերածված չլիներ հիվանդանոցի կամ կարանտինային կետի, և եթե մինչև հիմա դեռ ձեռք չէին տվել պրեֆեկտուրային, ապա սոսկ այն պատճառով, որ ի վերջո մի տեղ պիտի ունենային հավաքվելու համար: Բայց ընդհանուր առմամբ և ելնելով այն փաստից, որ այդ ժամանակաշրջանի ժանտախտը հարաբերականորեն կայունացել էր, Ռիոյի նախատեսած կազմակերպությունն ամենևին կարիք չունեցավ ծավալվելու: Բժիշկներն ու նրանց օգնականները, որոնք ուժասպառող ճիգեր էին թափում, ստիպված չեղան դիմելու նոր՝ էլ ավելի մեծ ճիգերի: Նրանց միայն հարկ եղավ շարունակել կանոնավորապես, եթե կարելի է ասել, այդ գերմարդկային աշխատանքը: Վարակի թոքային ձևերը, որոնք արդեն հայտնվել էին, բազմապատկվում էին քաղաքի բոլոր կողմերում, ասես քամին վառում ու հրդեհներ էր բորբոքում մարդկանց կրծքավանդակներում: Հիվանդները հենց արյուն էին փսխում, շատ մեծ արագությամբ հեռացվում էին: Վարակելիությունն այժմ ավելի էր մեծանում համաճարակի այս նոր ձևի դեպքում: Իրականում մասնագետների կարծիքներն այս կետում միշտ հակասական էին: Ավելի մեծ զգուշության համար բուժանձնակազմը շարունակում էր շնչել գազային ախտահանված դիմակներով: Առաջին հայացքից համաճարակը պետք է ծավալվեր: Բայց քանի որ ավշահանգուցային ժանտախտի դեպքերը նվազում էին, կշեռքի նժարները հավասարակշռված էին:

Սակայն կարող էին լինել անհանգստության այլ պատճառներ՝ կապված մատակարարման դժվարությունների հետ, որոնք օրեցօր

ավելի էին ահագնանում: Ետ չէր մնում չարաշահորդների՝ առաջին անհրաժեշտության պարենամթերքի՝ առասպելական գնեորով վաճառքը, որոնք չկային սովորական շուկաներում: Այսպիսով, չքավոր ընտանիքները շատ ծանր դրության մեջ էին, մինչդեռ հարուստները գրեթե ոչ մի բանի պակաս չունեին: Այնժամ, երբ ժանտախտը թվում է՝ իր հզոր անկողմնակալությամբ և իր բերած իշխանությամբ պետք է կարողանար ամրացնել հավասարությունը մեր համաքաղաքացիների մեջ եսասիրության բնական խաղերի միջոցով, ընդհակառակը, այն ավելի սրեց անարդարության զգացումը մարդկանց սրտերում: Իհարկե, կար մահվան կատարյալ հավասարությունը, սակայն դա ոչ ոք չէր ցանկանում: Աղքատները, որոնք տառապում էին սովից, էլ ավելի մեծ կարոտով մտածում էին հարևան գյուղերի և քաղաքների մասին, որտեղ կյանքն ազատ էր, և հացը՝ էժան: Քանի որ նրանց չէին կարողանում բավարար չափով կերակրել, նրանք ունեին անխոհեմ զգացումներ, կարող էին իրենց թույլ տալ մեկնել: Հեշտությամբ սկսեց շրջել մի կարգախոս, որ երբեմն կարող էիր կարդալ պատերին կամ լսել ինչպես են բղավում, երբ անցնում էր ոստիկանապետը. «Հա՛ց կամ օ՛դ»: Այդ հեգնական նախադասությունը մի քանի ցույցի համար ազդանշան եղավ, որոնք արագ ճնշվեցին, բայց որոնց լրջախոհ բնույթը ոչ մեկի աչքից չվրիպեց:

Բնականաբար լրագրերը ամեն գնով հնազանդվում էին լավատեսության հրահանգին, որ ստացել էին: Այդ հրահանգում իրավիճակը գնահատելիս բնութագրական էր բնակչության պահվածքի գնահատումը՝ որպես «հանգստության և սառնասրտության հուզիչ օրինակ»: Սակայն փակված ու ինքնամփոփ մի քաղաքում, որտեղ ոչինչ չէր կարող գաղտնի մնալ, ոչ ոք չէր խաբվում հանրության տված «օրինակով»: Հանգստության և սառնասրտության վերաբերյալ ճիշտ պատկերացում կազմելու համար բավական էր մտնել իշխանությունների կազմակերպած որևէ կարանտինային կետ կամ մեկուսացման ճամբար: Այնպես է պատահել, որ պատմիչը, զբաղված այլ գործերով, ինքը չի տեսել այդ վայրերը: Այդ պատճառով նա կարող է այստեղ մեջբերել միայն Տարուի վկայությունները:

Տարուն իրոք իր օրագրերում զեկուցում է, որ Ռամբերի հետ այցելել է քաղաքային մարզադաշտում տեղավորված ճամբարը: Մարզադաշտը գտնվում է գրեթե քաղաքի դարպասների մոտ և մի կողմից նայում է փողոցին, որտեղ երթևեկում են տրամվայները, մյուս կողմում ինչ-որ խոպան տարածքներ են, որոնք ձգվում են մինչև սարահարթի եզրը, որի վրա կառուցված է քաղաքը: Այն շրջափակված է բետոնե բարձր պատերով, և բավական էր ժամապահներ կարգել մուտքի չորս դռների մոտ փախուստները դժվարացնելու համար: Նույն կերպ պատերը խանգարում էին դրսի մարդկանց իրենց հետաքրքրասիրությամբ չանհանգստացնելու կարանտինի մեջ գտնվող դժբախտներին: Դրա փոխարեն վերջիններս երկարաձիգ օրվա ընթացքում առանց տեսնելու լսում էին անցնող տրամվայների ձայնը և ըստ նրանց ուժգնացող աղմուկի՝ գուշակում, թե ինչ էին տեղափոխում նրանք, հասկանում էին գրասենյակային աշխատանքը սկսելու և ավարտելու ժամերը: Այսպես նրանք իմանում էին, որ կյանքը, որից իրենք արտաքսված էին, շարունակվում էր իրենցից մի քանի մետրի վրա, և որ ցեմենտե պատերը բաժանում էին երկու աշխարհներ, որոնք ավելի օտար էին իրար, քան եթե գտնվեին տարբեր մոլորակների վրա:

Կիրակի օրը՝ հետմիջօրեին, Տարուն և Ռամբերը որոշեցին գնալ մարզադաշտ: Նրանց ուղեկցում էր Գոնզալեսը՝ ֆուտբոլիստը, որին Ռամբերը կրկին գտել էր, և որը վերջապես համաձայնել էր առաջնորդել նրանց մարզադաշտի հսկողության հերթափոխի ժամանակ: Ռամբերը պետք է նրան ներկայացներ ճամբարի կառավարչին: Գոնզալեսը, հանդիպելով այս երկու մարդուն, անմիջապես ասաց, որ դա հենց այն ժամն է, երբ ժանտախտից առաջ նա հագնում էր համազգեստը խաղը սկսելու համար: Այժմ, երբ մարզադաշտերը բռնագրավված են, և այլևս ոչինչ հնարավոր չէ անել, Գոնզալեսը զգում է, որ պարապ է, և հենց այդպիսի տեսք էլ ուներ: Այդ պատճառով էլ նա ընդունել էր հսկողության հերթապահության գործը այն պայմանով, որ կաշխատի ամեն շաբաթվա վերջին օրերին: Երկինքը կիսով չափ ծածկվել էր ամպերով, և Գոնզալեսը, քիթը վեր ցցած, ափսոսանքով նկատեց, որ նման՝ ոչ անձրևային, ոչ շոգ

եղանակը ամենաբարենպաստն է ֆուտբոլային խաղի համար: Նա, որքան կարող էր, վերհիշում էր հանդերձարանների թրջոցների խոնավ հոտը, փուլ եկող տրիբունաները, վառ գույնի շապիկները շիկավուն դաշտի վրա, ընդմիջումների ժամանակ կիտրոնները կամ լիմոնադը, որ ծակում է չորացած կոկորդդ հազարավոր թարմացնող ասեղներով: Տարուն, ի դեպ, նշում է, որ ամբողջ ճանապարհին, արվարձանի դարուփոս փողոցների միջով անցնելիս մարզիկն անընդհատ ոտքով խփում էր դեմը դուրս եկած քարին, որ ջանում էր ուղիղ հարվածով գցել կոյախողովակի մեջ, և երբ դա հաջողվում էր նրան, ասում էր՝ մեկ-զրո: Երբ ծխում վերջացնում էր, մնացորդը ուժգին թքում էր և օդի մեջ փորձում ոտքով բռնել այն: Երբ մարզադաշտի մոտ ֆուտբոլ խաղացող երեխաները գնդակն ուղարկեցին անցնող խմբի ուղղությամբ, Գոնզալեսը շարքից դուրս վազեց և այն երեխաներին վերադարձրեց ճշգրիտ հարվածով:

Վերջապես նրանք մտան մարզադաշտ: Տրիբունաները լի էին մարդկանցով: Բայց դաշտը ծածկված էր մի քանի հարյուր կարմիր վրաններով, որոնց մեջ հեռվից երևում էին անկողիններ ու կապոցներ: Պահել էին տրիբունաները, որպեսզի ճամբարվածները կարողանային պատսպարվել անձրևից կամ այրող արևից: Պարզապես նրանք պետք է մայրամուտին վերադառնային վրանները: Տրիբունաների տակ տեղավորված էին ցնցուղներ, որ ձևափոխվել էին, իսկ խաղացողների նախկին հանդերձարանները վերածվել էին գրասենյակների և սանկետերի: Ճամբարվածների մեծ մասը լցվել էր տրիբունաները: Մի քանիսը թափառում էին ցնցուղների վերնամասում: Ոմանք էլ կկզել էին իրենց վրանների մուտքի առջև և անորոշ հայացքով հետևում էին ամեն ինչին: Շատերը տրիբունաներից ցած էին սահել և ասես ինչ-որ բանի էին սպասում:

– Ի՞նչ են անում ամբողջ օրը,– հարցրեց Տարուն Ռամբերին:

– Ոչինչ:

Իսկապես, գրեթե բոլորի թևերը կախ էին ընկած, իսկ ձեռքերը դատարկ էին: Մարդկային այդ հսկայական բազմությունը զարմանալիորեն լուռ էր:

– Առաջին օրերին հնարավոր չէր իրար լսել,– պատմում էր Ռամբերը: Բայց օրերի անցման հետ նրանք սկսեցին խոսել ավելի ու ավելի քիչ:

Եթե հավատանք Տարուի նշումներին, նա հասկանում էր այդ մարդկանց, նրանց սկզբում պատկերացնում էր իրար գլխի կուտակված վրաններում՝ ճանճերին լսելիս կամ քորվելիս, կատաղությունից կամ վախից ոռնալով, հենց գտնում էին մի բարեհաճ ունկնդրի: Բայց երբ ճամբարը դարձավ գերբնակեցված, բարեհաճ ունկնդիրները գնալով նվազեցին: Այլևս ուրեմն մնում էր միայն լռել և կասկածել: Տիրում էր մի տեսակ անվստահություն, որը կարմիր ճամբարի վրա իջնում էր գորշ, սակայն լուսավոր երկնքից:

Այո, նրանք բոլորն էլ կասկածամիտ մարդու տեսք ունեին: Եթե իրենց բաժանել էին մյուսներից, ուրեմն դա պատճառ ուներ, դրա համար էլ իրենց դեմքը ցույց էին տալիս նրանց, ովքեր փնտրում էին պատճառները, և ովքեր երկյուղում էին: Նրանցից յուրաքանչյուրը, որի վրա ընկնում էր Տարուի հայացքը, անզբաղ աչքով զննում էր շուրջը: Նրանք բոլորն էլ տանջվում էին համընդհանուր՝ վերացական բաժանումից, բաժանում նրանից, ով կազմել էր իրենց ողջ կյանքը: Եվ քանի որ նրանք չէին կարող շարունակ մտածել միայն մահվան մասին, նրանք ոչ մի բանի մասին էլ չէին մտածում: Նրանք արձակուրդի մեջ էին: «Սակայն վատթարագույնն այն է,– գրում է Տարուն,– որ նրանք մոռացված են, և դա հայտնի է իրենց: Նրանք, ովքեր ճանաչում էին իրենց, մոռացել են արդեն, որովհետև մտածում են այլ բաների մասին, և դա հասկանալի է: Ինչ վերաբերում է նրանց, ովքեր սիրում են իրենց, նույնպես մոռացել են, որովհետև պետք է ուժասպառ լինեն խուսանավումների և ծրագրերի մեջ իրենց ազատելու համար:

Մտածելով այդ ազատագրման մասին՝ նրանք այլևս չեն մտածում նրանց մասին, ում պետք է ազատագրեին: Դա նույնպես բնական է: Եվ վերջիվերջո հասկանում են, որ ոչ ոք իրապես ընդունակ չէ մտածելու որևէ մեկի մասին անգամ վատթարագույն դժբախտության դեպքում: Քանզի իրապես մտածել որևէ մեկի մասին՝ նշանակում է շարունակ մտածել նրա մասին, մտածել որպե առ

րոպե, առանց շեղվելու որևէ այլ մտքով՝ ո՛չ տնտեսական հոգսերով, ո՛չ թռչող ճանճով, ո՛չ կերակուրներով, ո՛չ քորվելու ցանկությամբ: Բայց միշտ եղել են ճանճերը, միշտ եղել է քորը: Այդ պատճառով էլ ապրելը դժվար է: Եվ նրանք լավ գիտեն դա»:

Կառավարիչը, որ մոտեցավ նրանց, ասաց, որ պրն Օթոնը տեսակցություն է խնդրում նրանց հետ: Նա Գոնզալեսին առաջնորդեց իր գրասենյակը, հետո նրանց տարավ դեպի տրիբունաները, որտեղ մի անկյունում մեկուսի նստած պրն Օթոնը վեր կացավ և գնաց նրանց ընդառաջ: Նա հագնված էր նույն ձևով, ինչպեսև առաջ, և կրում էր նույն բարձրադիր օձիքը: Տարուն նկատեց միայն, որ քունքերի մազափնջերն ավելի բիզ-բիզ էին, իսկ մի կոշիկի քուղը քանդված էր: Քննիչը հոգնած տեսք ուներ և ոչ մի անգամ չնայեց իր խոսակիցների դեմքին: Նա ասաց, որ ուրախ է նրանց տեսնելու համար և խնդրում է նեղություն քաշել ու իր շնորհակալությունը հաղորդել բժիշկ Ռիոյին այն ամենի համար, որ նա արել էր:

Ռամբերն ու Տարուն լուռ էին:

– Հուսով եմ,– ասաց քննիչը որոշ ժամանակ անց,– որ Ֆիլիպը շատ չտանջվեց:

Առաջին անգամ էր, որ Տարուն լսեց, թե ինչպես նա արտաբերեց իր որդու անունը, և հասկացավ, որ ինչ-որ բան փոխվել է: Արևն իջնում էր հորիզոնում, և երկու ամպերի արանքից նրա ճառագայթները շեղակիորեն արձակվում էին տրիբունաների վրա՝ ոսկեզօծելով նրանց երեքի դեմքը:

– Ո՛չ,– ասաց Տարուն,– ոչ, իսկապես նա չտանջվեց:

Երբ նրանք դուրս եկան, քննիչը դեռ երկար նայում էր մայր մտնող արևի կողմը:

Նրանք գնացին հրաժեշտ տալու Գոնզալեսին, որն ուսումնասիրում էր հերթափոխային հսկողության աղյուսակը: Ֆուտբոլիստը սեղմեց նրանց ձեռքը և ծիծաղեց.

– Գոնե հանդերձարանները տեսա,– ասաց նա,– էլի բան է:

Քիչ անց, երբ կառավարիչը նրանց ճանապարհ էր դնում, տրիբունաներում մի ահռելի դղրդյուն լսվեց: Հետո բարձրախոսները, որոնք լավագույն ժամանակներում ծառայում էին խաղի արդյունքները

հայտնելու կամ թիմերը ներկայացնելու համար, ասես քթի մեջ հայտարարեցին, որ ճամբարվածները պետք է անցնեն իրենց վրանները, որպեսզի հնարավոր լինի բաժանել ընթրիքը: Մարդիկ սկսեցին դանդաղորեն իջնել տրիբունաներից և ոտքերը կախ գցելով՝ գնալ դեպի իրենց վրանները: Երբ բոլորն արդեն տեղավորվել էին, երկու փոքրիկ էլեկտրաքարշ մեքենա, ինչպես կարելի է տեսնել կայարաններում, խոշոր կաթսաներով բեռնված, դանդաղորեն սկսեցին անցնել վրանների արանքներով: Մարդիկ մեկնում էին ձեռքերը, երկու շերեփները սուզվում էին երկու կաթսաների մեջ և դուրս գալով՝ վայրէջք կատարում թիթեղյա ամանների մեջ: Մեքենան կրկին շարժվում էր: Հաջորդ վրանի մոտ նույնը վերսկսվում էր:

– Գիտականորեն է արվում,– ասաց Տարուն կառավարչին:

– Այո՛,– պատասխանեց վերջինս գոհունակությամբ՝ սեղմելով նրանց ձեռքերը,– այո՛, գիտականորեն:

Աղջամուղջը մնաց վերևում, և երկինքը բացվում էր: Ճամբարը լցվում էր մեղմ ու մաքուր լույսով: Իրիկնապահի խաղաղության մեջ ամեն կողմից բարձրանում էր գդալների ու ափսեների աղմուկը: Չղջիկներ էին հայտնվում վրանների վերևում և անմիջապես անհետանում: Շրջադարձ կատարող մի տրամվայ ճռնչաց պատերի մյուս կողմում:

– Խեղճ քննիչ,– քրթմնջաց Տարուն՝ դարպասից դուրս գալով:– Նրա համար պետք է որևէ բան անել: Բայց ինչպե՞ս օգնես դատական քննիչին:

* * *

Մեր քաղաքում կային բազմաթիվ նման ճամբարներ, որոնց մասին պատմիչը չի կարող խոսել՝ ելնելով նրբանկատությունից և տեղեկատվության պակասից: Միայն կարող է ասել, որ այդ ճամբարների գոյությունը, մարդկանցից փչող հոտը, մայրամուտին ինչող բարձրախոսների ահռելի ձայնը, պատերի առեղծվածությունից և այդ անիծյալ վայրերից եկող ահը ծանր էին անդրադառնում մեր համաքաղաքացիների բարոյական վիճակի վրա և էլ ավելի սաստկացնում համատարած խառնաշփոթությունն ու

անձկությունը: Իշխանությունների հետ միջադեպերն ու բախումները բազմապատկվեցին:

Սակայն նոյեմբերի վերջին սկսվեցին ցուրտ առավոտները: Անձրևի հորձանուտները առատ ջրերով լվացին քաղաքի սալահատակը, մաքրեցին երկինքը և դարձրին անամպ մաքրությունից շողացող փողոցների վերևում: Ամեն առավոտ արդեն ուժատ արևը քաղաքի վրա էր տարածում իր փայլփլուն ու սառցաշունչ ճառագայթները: Երեկոյան, ընդհակառակը, օդը կրկին տաքանում էր: Հենց այդպիսի մի պահ էր ընտրել Տարուն բժիշկ Ռիոյի առջև սիրտը բացելու համար:

Մի երեկո՝ ժամը տասի մոտերքը, երկար և ուժասպառող աշխատանքից հետո Տարուն ուղեկցում էր Ռիոյին, որը որոշել էր այցելել ասթմայով հիվանդ ծերուկին: Երկինքը աղոտ փայլում էր հին թաղամասի տների վերևում: Մի մեղմիկ քամի էր անաղմուկ թևածում մութ խաչմերուկներում: Հանդարտ փողոցներից հետո Տարուն և Ռիոն հայտնվեցին ծերուկի շատախոսության կենտրոնում: Վերջինս նրանց հայտնեց այն, ինչի հետ չէին համաձայնելու, որ լավ «կտորները միշտ նույն մարդկանց համար են», և որ «կուժը ջարդվում է ջրի ճանապարհին», և որ հավանաբար, այստեղ նա հաճույքից ձեռքերն իրար էր շփում, մեծ տուրուդմփոց է լինելու: Բժիշկը քննում էր նրան, իսկ ծերուկը չէր վերջացնում իրադարձությունների իր մեկնաբանությունը:

Իրենց վերևում ոտնաձայներ լսվեցին: Հիվանդի ծեր կինը, նկատելով Տարուի հետաքրքրասեր հայացքը, բացատրեց, որ հարևանները տանիքում են՝ դարավանդում: Միևնույն ժամանակ նրանք իմացան, որ վերևից գեղեցիկ համայնապատկեր է բացվում, և որ տների դարավանդները հաճախ մի կողմով միանում են իրար, և որ թաղի կանայք իրար այցելելու հնարավորություն ունեն առանց իրենց տնից դուրս գալու:

– Այո՛,– ասաց ծերուկը,– բարձրացեք, կտեսնեք: Այնտեղ լավ օդ է: Դարավանդը դատարկ էր՝ զարդարված միայն երեք աթոռով: Մի կողմից՝ հեռվում, որքան աչքդ կտրի, երևում էր՝ ինչպես են դարավանդներն ի վերջո խոնարհվելով միանում իրար՝

վերածվելով բլրակի: Մյուս կողմից՝ մի քանի փողոցի և անտեսանելի նավահանգստի վերևում հայացքդ սուզվում էր հորիզոնի մեջ, որտեղ երկինքն ու ծովը խառնվում էին անորոշ թրթիռների մեջ: Դրանից անդին նրանք գիտեին, որ արդեն քարափներն էին: Մի աղոտ լույս, որի ակունքը չէին նշմարում, առկայծում ու մարում էր համաչափորեն, դեռ գարնանից պտտվում էր փարոսի լուսարձակը՝ նավերին ցույց տալով դեպի ուրիշ նավահանգիստներ տանող ճանապարհը: Քամուց մաքրված ու շողացող երկնքում անաղարտ աստղեր էին փայլփլում, իսկ հեռավոր լուսարձակի անցողիկ մոխրաթույրը մերթընդմերթ խառնվում էր այդ լուսավորությանը: Այուքը բերում էր ամոքանքների և քարերի բույրը: Կատարյալ լռություն էր:

– Լավ եղանակ է,– ասաց Ռիոն նստելով:– Կարծես ժանտախտը երբեք չի բարձրացել այստեղ:

Տարուն մեջքով էր շրջված և նայում էր ծովին:

– Այո,– ասաց նա մի պահ հապաղելուց հետո,– լավ եղանակ է:

Նա եկավ, նստեց բժշկի մոտ և սկսեց ուշադրությամբ հետևել նրան:

Երեք անգամ երկնքով անցավ փարոսի լույսը: Ամանեղենի չխկչխկոցը փողոցի խորքերից բարձրացավ մինչև դարավանդը: Մի դուռ ճռռալով փակվեց ներքևի տանը:

– Ռիո,– ասաց Տարուն շատ բնական հնչերանգով,– դուք երբեք չե՞ք ցանկացել իմանալ, թե ով եմ ես: Կարո՞ղ եք ինձ համարել ձեր բարեկամը:

– Այո,– պատասխանեց բժիշկը,– ես ձեզ համարում եմ իմ բարեկամը: Սակայն մինչև հիմա մենք ժամանակ չունեինք:

– Հիանալի է, դա ինձ հանգստացնում է: Ուզո՞ւմ եք, որ այս ժամը լինի մեր բարեկամության հաստատման ժամը:

Պատասխանի փոխարեն Ռիոն ժպտաց.

– Դե լավ, ահավասիկ...

Մի քանի փողոց այն կողմ ինչ-որ մեքենա երկար սահեց թաց սալարկի վրայով: Հետո հեռացավ, և նրա ետևից հեռվից եկած խառնիխուռն բացականչություններն էլ ավելի խախտեցին լռությունը:

Հետո լռությունը կրկին ընկավ այս երկու մարդկանց վրա երկնային ու աստեղային իր ողջ ծանրությամբ: Տարուն նորից ելավ տեղից ու հեծնեց դարավանդի ճաղերին՝ հենց Ռիոյի դիմաց, որը խրված էր աթոռի մեջ: Նրանից երևում էր միայն մի խոշոր զանգված՝ ասես երկնքից անջատված: Նա երկար խոսեց, և ահա մոտավորապես նրա վերականգնված ճառը.

«Պարզ լինելու համար ասեմ ձեզ, Ռիո՛, որ ես արդեն տառապում էի ժանտախտով շատ վաղուց՝ այս քաղաքն ու համաճարակը տեսնելուց առաջ: Բավական է ասել, որ բոլորի նման եմ: Բայց կան մարդիկ, որ չգիտեն դա, ովքեր հենց նույն վիճակում են, կամ ովքեր գիտեն դա և կուզենային դուրս գալ այդ վիճակից: Իսկ ես, ես միշտ ուզեցել եմ դուրս գալ այդ վիճակից:

Երբ պատանի էի, ապրում էի իմ անմեղության գաղափարով, այսինքն՝ բոլորովին առանց գաղափարի: Ես անհավասարակշիռ մարդկանցից չեմ, ես սկսել էի այնպես, ինչպես հարկն էր: Ամեն ինչ ինձ հաջողվում էր, գիտության մեջ ինձ հիանալի էի զգում, ավելի լավ՝ կանանց միջավայրում, և եթե ինչ-որ մտահոգություններ էի ունենում, դրանք անցնում էին, ինչպես հայտնվել էին: Մի օր սկսեցի խորհել: Այդ ժամանակ...

Պետք է ասեմ, որ ես չքավոր չէի ձեզ նման: Հայրս գլխավոր դատախազի տեղակալն էր, իսկ դա նշանակում էր ունենալ բարձր դիրք: Թեպետ նա այդ տեսքը չուներ՝ լինելով բնականից միամիտ և բարի մարդ: Մայրս հասարակ և աննշան կին էր: Ես նրան միշտ սիրել և սիրում եմ: Սակայն կնախընտրեի չխոսել նրա մասին: Հայրս սիրով էր զբաղվում ինձնով, կարծում եմ՝ նույնիսկ փորձում էր հասկանալ ինձ: Արկածներ էր ունենում դրսում, այժմ վստահ եմ դրանում, և ի դեպ, պատկերացրեք, ես չեմ վրդովվում: Նա իրեն այնպես էր պահում, ինչպես պետք է պահել նման դեպքերում, և ոչ մեկին չէր դիպչում: Հակիրճ լինելու համար ասեմ, որ նա շատ ինքնատիպ չէր, և այսօր՝ նրա մահից հետո, ես հասկանում եմ, որ սրբի պես չի ապրել, բայց և վատ մարդ չի եղել: Պարզապես ոսկե միջինն էր նախընտրում, իսկ նման տեսակի մարդկանց խոհեմաբար սիրում են և այն էլ երկար ժամանակ:

Այսուհանդերձ, նա մի առանձնահատկություն ուներ. Շեկսի երկաթուղային մեծ տեղեկատուն նրա սեղանի գիրքն էր: Ոչ այն պատճառով, որ նա շատ էր ճանապարհորդում, միայն արձակուրդն էր անցկացնում Բրետանում, որտեղ մի փոքրիկ կալվածք ուներ: Բայց նա պատրաստ էր անգամ ձեզ ասել Փարիզ-Բեռլին գնացքի մեկնման և ժամանման ճշգրիտ ժամերը, ամենահարմար չվացուցակային համակցությունները Լիոնից Վարշավա հասնելու համար, կարող էր ստույգ ասել ճշգրիտ կիլոմետրերի թիվը ձեր իսկ ընտրած մայրաքաղաքների միջև: Կարո՞ղ եք ասել ինչպես գնալ Բրիանսոնից Շամոնիքս: Նույնիսկ կայարանապետը չի կարող անմիջապես պատասխանել: Իմ հայրը կարող էր: Նա գրեթե ամեն երեկո վարժվում էր՝ հարստացնելով գիտելիքներն այս ասպարեզում, և հպարտանում էր դրանով: Դա ինձ շատ էր զվարճացնում, և ես նրան հաճախ հարցեր էի տալիս, հափշտակված պատասխանները ստուգում Շեկսի գրքով ու հիանում, որ նա երբեք չէր սխալվում: Այս փոքրիկ վարժանքները մեզ շատ էին կապել միմյանց, որովհետև ես այն ունկնդիրն էի, որի պատրաստակամությունը շատ էր գնահատում: Իսկ ես այն կարծիքին էի, որ այդ առավելությունը, որն արտահայտվում էր երկաթուղային չվացուցակների իմացության մեջ, նույնքան արժեքավոր էր, որքան և մեկ ուրիշը:

Բայց ես տարվում եմ և վախենամ՝ շատ մեծ նշանակություն եմ տալիս այդ ազնիվ մարդուն: Քանզի, որպեսզի ավարտեմ խոսքս, ասեմ, որ նա միայն մեկ անգամ է անուղղակի ազդեցություն ունեցել իմ կայացման գործում: Ավելին՝ նա է տվել առիթը: Երբ ես տասնյոթ տարեկան դարձա, իսկապես հայրս ինձ հրավիրեց դատարան՝ իրեն ունկնդրելու: Մի կարևոր գործ էր քննվում երդվյալների դատարանում, և անկասկած նա մտածել էր, որ իրեն ցուցադրելու համար դա լավագույն օրը կլիներ: Կարծում եմ նաև, որ հույսեր էր կապում այդ արարողության հետ պատանի երևակայությունս բորբոքելու, ինձ մղելու գործունեության այն ասպարեզը, որն իր ընտրածն էր: Ես ընդունեցի հրավերը, որովհետև հաճելի էր հորս, և որովհետև ես էլ էի շատ շահագրգռված նրան տեսնել ու լսել ուրիշ դերում, քան այն, որ խաղում էր մեր ընտանիքում: Ուրիշ ոչ մի բանի մասին չէի

մտածում: Այն, ինչ տեղի է ունենում դատական ատյանում, ինձ միշտ թվացել է նույնքան բնական ու անխուսափելի, որքան հուլիսի 14-ի զորահանդեսը կամ դպրոցական մրցանակների շնորհման արարողությունը: Ես շատ վերացական պատկերացում ունեի արդարադատության մասին, որն ինձ բնավ չէր հուզում:

Սակայն այդ օրվանից իմ մեջ մնացել է միայն մեկ պատկեր՝ հանցագործի պատկերը: Կարծում եմ՝ իրոք նա մեղավոր էր, կարևոր չէ ինչ հարցում: Սակայն փոքրամարմին, շիկահեր և գրեթե ճաղատ այդ երեսնամյա մարդը թվում էր՝ պատրաստ է ամեն ինչ ընդունելու, այնքան անկեղծորեն սարսափած էր իր կատարածի համար և նաև իր նկատմամբ արվելիքի համար, որ մի քանի րոպե անց աչքերս միմիայն նրան էի հառել և միմիայն նրան էի նայում: Շատ ուժեղ լույսից ահաբեկված բուի տեսք ուներ: Փողկապի հանգույցը ճիշտ չէր հարմարեցված օձիքի անկյան հետ: Նա կրծում էր միակ՝ աջ ձեռքի եղունգները... Մի խոսքով՝ ես չեմ պնդում, բայց դուք երևի հասկացաք՝ ինչ էի ուզում ասել. նա կենդանի մարդ էր:

Իսկ ես հանկարծ գլխի ընկա, որ մինչ այդ նրա մասին մտածել էի ինձ համար հարմար տեսանկյունից՝ նրան դիտելով իբրև սովորական «մեղադրյալ»: Չեմ կարող ասել, թե լրիվ մոռացել էի հորս, սակայն ինչ-որ բան այնպես էր սեղմում որովայնս, որ ինձնից հեռացնում էր ամեն միտք, բացի նրանից, որ կանխավ ունեի իմ մեջ: Ես այլևս գրեթե ոչինչ չէի լսում, զգում էի, որ ուզում են սպանել այդ կենդանի մարդուն, և մի անհաղթահարելի բնազդ՝ ալիքի կույր համառությամբ, կլանում էր ինձ իր խորքերը: Ես սթափվեցի միայն այն ժամանակ, երբ հայրս սկսեց իր մեղադրական ճառը:

Փոխակերպված իր կարմիր թիկնոցի մեջ, այլևս ոչ բարեմիտ, ոչ գորովալից նա արտասանում էր հսկայածավալ, խլրտացող նախադասություններ, որոնք նրա բերանից դուրս էին սողում, ինչպես թունավոր օձեր: Եվ ես հասկացա, որ նա պահանջում էր մահապատիժ հանուն հասարակության, և անգամ, որ նրա գլուխը կտրեն: Նա միայն կրկնում էր, և դա ճիշտ է. «Այս գլուխը պետք է ընկնի»: Բայց ի վերջո, տարբերությունը մեծ չէր: Եվ իրականում նույն բանը

https://1915.info

ստացվեց, քանի որ նա ստացավ այդ գլուխը: Պարզապես ինքն անձամբ չկատարեց այդ աշխատանքը: Իսկ ես, որ հետևում էի այդ բացառիկ գործին մինչև եզրակացությունը, այդ դժբախտի նկատմամբ զգացի այնպիսի գլխակորույս մտերմություն, որ երբևէ հայրս չէր կարող զգալ: Հայրս, ըստ գոյություն ունեցող սովորության, պարտավոր էր մասնակցել, ինչպես քաղաքավարությամբ անվանում էին, մահապատժի վերջին րոպեներին, որը հարկ է կոչել սպանություններից ամենանողկալին:

Այդ օրից ի վեր առանց զզվանքի չկարողացա նայել Շեկսի տեղեկատուին: Այդ օրից ի վեր սկսեցի հետաքրքրվել արդարադատությամբ, թեպետև սարսափով, նաև մահվան դատապարտումներով, մահապատիժների իրականացմամբ և գլուխս կորցրած՝ ինքս ինձ հավաստիացնում էի, որ հայրս ի պաշտոնե պետք է մասնակցած լիներ բազմաթիվ սպանությունների, և հենց այն օրերին, երբ վաղ էր արթնանում: Այո՛, նա հենց այդ օրերին էր լարում զարթուցիչը: Ես չէի համարձակվում խոսել այդ մասին մորս հետ, բայց ավելի ուշադիր սկսեցի հետևել նրան և հասկացա, որ ծնողներս կապ չունեն միմյանց հետ, և որ մորս կյանքը լրիվ ինքնահրաժարում էր: Դա ինձ օգնեց, որ ներեի նրան, ինչպես ասում էի այն ժամանակ: Ավելի ուշ իմացա, որ մորս ներելու ոչինչ չկար, որովհետև նա, մինչև ամուսնությունը, ողջ կյանքում չքավոր էր եղել, և չքավորությունը նրան սովորեցրել էր հնազանդվել: Դուք անկասկած սպասում եք, որ ասեմ, թե ես անմիջապես հեռացա տնից: Ո՛չ, ես դեռ երկար ապրեցի այնտեղ, գրեթե մի տարի: Բայց սիրտս տնքում էր: Եվ մի երեկո հայրս իր զարթուցիչը լարեց, որովհետև վաղ պիտի արթնանար: Ամբողջ գիշեր չքնեցի: Հաջորդ օրը, երբ նա տուն եկավ, ես արդեն գնացել էի: Անմիջապես ասեմ, որ հայրս փնտրեց ինձ, և ես գնացի նրա հետ հանդիպման, բայց առանց բացատրությունների: Ես նրան հանգիստ ասացի, որ ինքնասպան կլինեմ, եթե ինձ ստիպի տուն վերադառնալ: Նա ի վերջո ընդունեց, քանի որ բնավորությամբ մեղմ էր, գլխիս ճառ կարդաց հիմարության վերաբերյալ, որ կարող ես ունենալ քո կյանքն ապրելու ցանկություն (այդպես էր նա բացատրում իմ արարքը, և

ես բնավ չէի տարհամոզում նրան), հազար ու մի խորհուրդ տվեց և սրբեց անկեղծ արցունքները, որ հոսում էին աչքերից: Հետագայում՝ բավական երկար ժամանակից հետո, ես սակայն պարբերաբար գալիս էի մորս տեսնելու և այնտեղ հանդիպում էի հորս: Այդ հարաբերությունները, ինձ թվում է, նրան բավարարում էին: Ես ոխ չունեի նրա նկատմամբ, միայն սիրտս էր մի քիչ տխուր: Երբ նա մահացավ, ես մորս տարա ինձ մոտ, և դեռ հիմա էլ կլիներ ինձ հետ, եթե ինքն էլ իր հերթին չմահանար:

Ես երկարաձգեցի սկիզբը, որովհետև այն իսկապես եղավ ամեն ինչի սկիզբը: Հիմա ավելի արագ կպատմեմ: Տասնութ տարեկանում անհոգ կյանքից հետո ես ճանաչեցի աղքատությունը: Հազար արհեստ փորձեցի ապրուստս վաստակելու համար: Այնքան էլ վատ չէր ստացվում: Բայց ինձ հետաքրքրողը մահվան դատապարտումն էր: Ես հաշիվ ունեի մաքրելու շեկ բվեճի հետ: Արդյունքում, ինչպես ասում են, սկսեցի զբաղվել քաղաքականությամբ: Չէի ուզում լինել ժանտախտահար, այս էր խնդիրը: Կարծում էի, թե հասարակությունը, որտեղ ապրում էի, հիմնված է մահապատժի վրա, և պայքարելով նրա դեմ՝ ես կպայքարեի մարդասպանության դեմ: Ես հավատում էի դրան, ուրիշներն էլ էին ասում, և դա ի վերջո ճիշտ էր: Այսպիսով, ես միացա նրանց, ում սիրում էի, և ում սիրում եմ մինչև հիմա: Ես նրանց հետ եմ եղել երկար ժամանակ, և չկա Եվրոպայում որևէ երկիր, որի պայքարին մասնակցած չլինեմ: Լավ, թողնենք:

Հասկանալի է, գիտեի, որ մենք նույնպես, պատահում է, դիմում ենք մահապատիժների: Բայց ինձ ասում էին, որ այդ մի քանի մահը անհրաժեշտ է հասնելու համար մի աշխարհ, որտեղ այլևս ոչ ոքի չեն սպանելու: Դա ճիշտ էր ինչ-որ իմաստով, և ի վերջո, գուցե անկարող էի հաստատվել նման ճշմարտության մեջ: Մի բան էր հաստատ՝ ես տատանվում էի: Բայց հիշում էի բվեճին, և այդպես կարող էր շարունակվել: Մինչև այն օրը, երբ իմ աչքով տեսա մահապատիժ (Հունգարիայում էր), և նույն գլխապտույտը, որ ցնցել էր պատանուն այն ժամանակ, այդ օրը ստիպեց մթագնել հասուն մարդու աչքերը:

Երբեք չե՞ք տեսել ինչպես են գնդակահարում մարդուն: Ոչ, իհարկե, դա ընդհանրապես հատուկ հրավերով է, և մարդիկ նախապես են ընտրվում: Արդյունքն այն է, որ մնացել եք դրոշմանիշների և գրքերի մեջ: Մի կապ աչքերին, մի սյուն և հեռվում մի քանի զինվոր: Դե լավ, ոչ: Իսկ գիտե՞ք, որ կրակող զինվորների դասակը, ընդհակառակը, շարվում է դատապարտյալից մեկուկես մետր հեռավորության վրա: Գիտե՞ք, որ եթե դատապարտյալը երկու քայլ առաջ գա, կրծքով կբախվի հրացաններին: Գիտե՞ք, որ այդ կարճ հեռավորությունից կրակոցները նշան են բռնում սրտին, և բոլորը միասին իրենց խոշոր գնդակներով այնտեղ այնպիսի անցք են բացում, որտեղ կարելի է բռունցք տեղավորել: Ոչ, դուք չգիտեք, որովհետև նման մանրամասների մասին չեն խոսում: Մարդկանց քունն ավելի սուրբ է, քան կյանքը ժանտախտահարների համար: Չպետք է խանգարել լավ մարդկանց քունը: Այդ անելու համար պետք է վատ քիմք ունենալ, իսկ քիմքն այն է, երբ չես պնդում: Բոլորին հայտնի բան է: Բայց ես այդ ժամանակից ի վեր կարգին չեմ քնել: Վատ համը մնացել է բերանումս, և շարունակում եմ պնդել, այսինքն՝ այդ մասին մտածել:

Այն ժամանակ ես հասկացա, որ երկար տարիների ընթացքում առնվազն չեմ դադարել ժանտախտահար լինելուց, չնայած ամբողջ հոգով կարծում էի, թե պայքարում էի ժանտախտի դեմ: Հասկացա, որ անուղղակիորեն մահվան եմ դատապարտել հազարավոր մարդկանց, որ անգամ ես եմ հրահրել այդ մահը, որովհետև ճիշտ եմ համարել գործողություններն ու սկզբունքները, որոնք անխուսափելիորեն հանգեցրել են մահվան: Ուրիշները կարծես չէին նեղվում դրանից կամ էլ երբեք չէին խոսում անմիջականորեն: Իմ բերանն ասես կողպված էր: Ես նրանց հետ էի և միաժամանակ մենակ: Երբ պատահում էր, որ արտահայտում էի իմ կասկածները, ինձ ասում էին, որ պետք է մտածել այն մասին, թե ինչն է խաղի մեջ, և հաճախ տպավորիչ փաստարկներ էին բերում և ստիպում էին կուլ տալ այն, ինչը չէի կարողանում կուլ տալ: Բայց ես պատասխանում էի, որ ժանտախտահար մեծ մարդիկ, ովքեր կարմիր թիկնոց են կրում, նույնպես հիանալի

փաստարկներ ունեն նման դեպքերում, և եթե ես ընդունում էի արտակարգ իրավիճակներից և անհրաժեշտություններից բխող փոքրիկ ժանտախտահարների փաստարկները, դա չէր նշանակում, որ կարող էի անտեսել մեծերի բերած փաստարկները: Նրանք ինձ պատասխանում էին, որ կարմիր թիկնոցավորների փաստարկների ընդունման լավագույն ձևը մահապատժի դատապարտման մենաշնորհը նրանց թողնելն է: Սակայն այդ դեպքում ես մտածում էի՝ եթե մի անգամ զիջես, այլևս պատճառ չես ունենա շարունակելու: Ինձ թվում է՝ պատմությունն արդարացրեց իմ դատողությունները, այսօր նա է հաղթում, ով ամենից շատ է սպանում: Բոլորն այսօր մարդասպանության մարմաջով են լցված և այլ կերպ չեն կարող գործել:

Ամեն դեպքում իմ գործը դատողությունները չէին: Իմ գործը շեկ բվեճն էր, նրա կեղտոտ արկածախնդրությունը, որտեղ ժանտախտահար կեղտոտ բերանները հայտարարում էին շղթայակապ մարդուն, որ նա պետք է մեռնի, և ամեն բան կարգավորում էին այնպես, որ նա մեռնի իսկապես հոգեվարքի երկար, անվերջանալի գիշերների ընթացքում՝ սպասելով, որ սպանվի աչքերը բաց: Իմ գործը անցքն էր կրծքավանդակում: Եվ ես ինքս ինձ ասում էի, որ սպասելով գոնե իմ կողմից մեկընդմիշտ կմերժեի տալ որևէ փաստարկ, լսո՞ւմ եք, գոնե մի պատճառաբանություն այդ նողկալի սպանդին: Այո, ես ընտրեցի այդ կույր համառությունը՝ սպասելով, որ մի օր ավելի լավ կտեսնեմ:

Այդ ժամանակից ի վեր ես չեմ փոխվել: Երկար ժամանակ է, որ ամաչում եմ, մահու չափ ամաչում եմ, որ թեկուզ հեռու հեռվից, թեկուզ բարի նպատակներով նույնպես մարդասպան եմ եղել: Ժամանակի ընթացքում ես պարզապես նկատեցի, որ անգամ նրանք, որ լավագույններն էին մյուսների համեմատ, չէին կարող այսօր սպանել կամ թույլ տալ սպանություն, որովհետև դա էր տրամաբանությունը, որի մեջ ապրում էին իրենք, և որ մենք չէինք կարող անել որևէ արարք առանց վտանգի սպառնալիքի, թե մարդ ենք սպանում: Այո, առաջվա պես ամաչում էի, երբ իմացա, որ բոլորս ժանտախտի մեջ ենք, և կորցրի հոգեկան անդորրս: Այսօր էլ դեռ

փորձում եմ գտնել այն՝ ջանալով հասկանալ բոլոր մարդկանց և չլինել ոչ մեկի ոխերիմ թշնամին: Միայն այն գիտեմ, որ պետք է անել այն, ինչ պետք է այլևս ժանտախտահար չլինելու համար, և միայն դա կարող է մեզ հույս ներշնչել, թե կգտնենք հոգեկան անդորր կամ պատվավոր մահ: Դա է, որ կարող է թեթևացնել մարդկանց, եթե ոչ փրկել, գոնե նրանց հնարավորինս քիչ չարիք պատճառել և երբեմն էլ բարություն անել: Եվ դրա համար էլ որոշեցի մերժել այն ամենը, ինչը մոտիկից կամ հեռվից, լավ կամ վատ պատճառներով սպանում է կամ արդարացնում սպանությունը:

Այդ է պատճառը, որ այս համաճարակն ինձ ոչինչ չի սովորեցնում, բացի մի բանից, որ պետք է կռվել նրա դեմ ձեզ հետ, ձեր կողքին: Ես որոշակիորեն գիտեմ (այո՛, Ռիո, ես ամեն ինչ գիտեմ կյանքի մասին, դուք լավ տեսնում եք դա), որ յուրաքանչյուրը կրում է ժանտախտն իր մեջ, քանի որ ոչ ոք աշխարհում չի կարող խուսափել դրանից: Եվ հարկավոր է անընդհատ հետևել ինքդ քեզ, որպեսզի զվարճալիքի պահին մոռանաս և շնչես ուրիշի դեմքին և նրան փոխանցես վարակը: Բնականը մանրէն է: Մնացածը՝ առողջություն, միասնականություն, մաքրություն, դրանք իրականում գալիս են կամքից և այնպիսի կամքից, որը երբեք չի թուլանալու: Ազնիվ մարդն այն մարդն է, ով գրեթե չի վարակում որևէ մեկին, այն մարդը, ով հնարավորին չափ քիչ է թուլանում: Դրա համար պետք է կամք և լարվածություն երբեք ցրված չլինելու համար: Այո, Ռիո՛, շատ հոգնեցուցիչ է ժանտախտահար լինելը: Բայց էլ ավելի հոգնեցուցիչ է այդպիսին լինել չցանկանալը: Դրա համար էլ բոլորը հոգնած են, քանզի այժմ բոլորը փոքրիշատե ժանտախտահար են: Հենց դրա համար էլ որոշ մարդիկ, որ այլևս չեն ուզում ապրել ժանտախտահար վիճակում, հասնում են ծայրահեղ հոգնության, որից միայն մահը կարող է նրանց ազատել: Այսուհետև գիտեմ, որ ես ոչինչ չարժեմ այս աշխարհի համար, և այն պահից ի վեր, երբ հրաժարվեցի սպանել, ինքս ինձ դատապարտեցի վերջնական աքսորի: Ուրիշները կկերտեն պատմությունը: Իսկ ես գիտեմ նաև, որ ըստ երևույթին՝ չեմ կարող դատել մյուսներին: Կա այնպիսի հատկանիշ, որ ես չունեմ խելամիտ

մարդասպան դառնալու համար: Եվ ուրեմն, դա առավելություն չէ: Սակայն այժմ համակերպվել եմ այն մտքին, որ ես այն եմ, ինչ որ կամ, ես սովորել եմ համեստության: Միայն ուզում եմ ասել, որ մեր երկրի վրա գոյություն ունեն աղետներ ու զոհեր, և պետք է որքան հնարավոր է հրաժարվել աղետի հետ համագործակցելուց: Գուցե իմ մտքերը մի քիչ պարզունակ թվան ձեզ, և ես չգիտեմ՝ դրանք իրո՞ք պարզունակ են, բայց գիտեմ, որ դրանք ճիշտ են: Ես այնքան դատողություններ եմ լսել, որոնք քիչ էր մնացել գլխապտույտ առաջացնեին, և որոնք բավականաչափ պտտեցրել են ուրիշների գլուխները՝ նրանց ստիպելով համակերպվել սպանության հետ, այնպես որ, ես հասկացա, որ մարդկանց դժբախտությունը գալիս է այն բանից, որ նրանք հստակ լեզվով չեն արտահայտվում: Այնժամ վճռեցի խոսել և գործել հստակորեն, որպեսզի ընթանամ ճիշտ ճանապարհով: Հետևաբար ես ասում եմ, որ կան աղետներ ու զոհեր, և ուրիշ ոչ մի բան: Եթե այս ասելիս ես ինքս եմ դառնում աղետ, ապա այս դեպքում՝ առնվազն առանց իմ համաձայնության: Ես ջանում եմ լինել անմեղ մարդասպան: Տեսնո՞ւմ եք, դա մեծ փառամոլություն չէ:

Իհարկե, լավ կլիներ, որ լիներ նաև մի երրորդ կարգ՝ իսկական բժիշկների կատեգորիան, սակայն սա մի իրողություն է, որին հազվադեպ ես հանդիպում, և որը շատ դժվարին է: Այդ է պատճառը, որ ես որոշեցի բոլոր դեպքերում անցնել զոհերի կողմը, որպեսզի գոնե ինչ-որ կերպ սահմանափակեմ աղետի ավերածությունները: Հայտնվելով զոհերի շարքերում՝ ես կարող եմ գոնե գտնել երրորդ կատեգորիայի, այսինքն՝ հոգեկան անդորրի ճանապարհը»:

Վերջացնելով խոսքը՝ Տարուն սկսեց ճոճել ոտքը և ներբանով կամացուկ հարվածել դարավանդին: Լռություն էր տիրում, հետո բժիշկը իրեն թեթևացած զգաց և հարցրեց Տարուին՝ արդյոք ունե՞ր նա որևէ ճանապարհի գաղափար, որ իրեն կհասցներ խաղաղության:

– Այո, համակրանքը:

Հեռվում՝ ինչ-որ տեղ, երկու անգամ հնչեց շտապօգնության մեքենայի շչակը: Խառնափնթոր բացականչությունների արձագանքներն

այժմ միավորվեցին քաղաքի չորս կողմերից՝ քարեղեն բլրակի մոտ: Միաժամանակ լսվեց մի ձայն, որը նման էր պայթյունի: Հետո դարձյալ լռություն տիրեց: Ռիոն հաշվեց փարոսի լույսի երկու թարթում: Քամին կարծես ուժգնացավ, հենց նույն պահին ծովից փչող հովիկը բերեց աղի բույրը: Այժմ պարզորոշ լսվում էր քարափներին խփվող ալիքների խուլ շնչառությունը:

– Վերջին հաշվով,– ասաց Տարուն թեթևությամբ,– ինձ հետաքրքրում է մի հարց՝ ինչպե՞ս են դառնում սուրբ:

– Բայց դուք չեք հավատում Աստծուն:

– Ճիշտ այդպես: Կարելի՞ է սուրբ դառնալ առանց Աստծու, ահա միակ իրական խնդիրը, որ այսօր հուզում է ինձ:

Հանկարծ մի աղոտ լուսավորություն ճառագեց այն կողմից, որտեղից եկել էին աղաղակները, և մի անորոշ աղմուկ քամու հոսանքով հասավ երկու մարդկանց: Աղոտ լույսն իսկույն խավարեց և հեռվում՝ դարավանդների եզրին, մնաց լոկ մի կարմիր ցոլք: Քամու տատանումների մեջ պարզորոշ լսվեցին մարդկային ճիչեր, հետո՝ կրակահերթ ու ամբոխի աղաղակ: Տարուն վեր էր կացել և ականջ էր դնում: Այլևս ոչինչ չէր լսվում:

– Նորից կռվեցին դարպասների մոտ:

– Արդեն վերջացրին,– ասաց Ռիոն:

Տարուն քրթմնջաց, թե նման բաները երբեք չեն վերջանում, և դեռ կան զոհեր, որովհետև հրահանգն է այդպիսին:

– Գուցե,– պատասխանեց բժիշկը,– բայց գիտե՞ք ինչ, իմ համերաշխությունն ավելի պարտվածների կողմն է, քան սրբերի: Ինձ թվում է՝ ես հակում չունեմ հերոսականության և սրբազանության հանդեպ: Ինձ համար ամենակարևորը մարդ լինելն է:

– Այո, մենք նույն բանն եք փնտրում, բայց ես ավելի համեստ եմ:

Ռիոն մտածեց, թե Տարուն կատակում է, և նայեց նրան: Բայց երկնքից իջնող այդ տարտամ ու աղոտ լույսի մեջ նա տեսավ թախծոտ ու լուրջ մի կերպարանք: Քամին կրկին բարձրացավ, և Ռիոն իր մաշկին զգաց նրա տաքությունը: Տարուն սարսռաց.

– Գիտե՞ք,– ասաց նա,– ինչ պիտի անենք մեր բարեկամության համար:

– Ինչ որ կամենաք,– ասաց Ռիոն:

– Ծովային լոգանք ընդունենք: Անգամ ապագա սրբի համար արժանավայել հաճույք է:

Ռիոն ժպտում էր:

– Մեր անցաթղթերով կարող ենք հասնել մինչև ծովապատնեշ: Ի վերջո, հիմարություն է ապրել միայն ժանտախտի մեջ: Հասկանալի է, մարդը պարտավոր է պայքարել զոհերի համար: Բայց եթե դրանից զատ նա այլևս ոչինչ չի սիրում, ինչի՞ն է ծառայում իր պայքարը:

– Այո,– պատասխանեց Ռիոն,– գնացինք:

Մի քանի րոպե անց մեքենան կանգ առավ Նավահանգստի ճաղաշարի մոտ: Լուսինը բարձրացել էր: Կաթնագույն երկինքն ամենուրեք գցում էր գունատ ստվերներ: Ետևում աստիճանաձև բարձրանում էր քաղաքը, և այնտեղից փչում էր տաք ու հիվանդ մի շունչ, որը նրանց մղում էր դեպի ծովը: Նրանք ցույց տվեցին իրենց փաստաթղթերը պահակին, որը նրանց բավական երկար զննեց: Անցնելով առաջ տակառներով ծածկված հողահարթակի, գինու և ձկնային հոտերի միջով՝ նրանք բռնեցին ծովապատնեշի ուղղությունը: Եվս մի քանի քայլ անելուց հետո զգացին ծովից փչող յոդի և ջրիմուռների հոտը: Իսկ քիչ անց լսեցին նաև ծովի աղմուկը:

Նա մեղմորեն սուլում էր ծովապատնեշի հսկա կտորների ստորոտում, և քանի որ նրանք մագլցեցին վերև, այնտեղից ծովը նրանց թվաց թավշի պես խիտ, դյուրաշարժ ու ողորկ, ինչպես անասունի մեջքը: Նրանք տեղավորվեցին բաց ծովին նայող ժայռերի վրա: Ալիքներն ուռչում էին և հետո դանդաղորեն իջնում: Ծովի այդ հանդարտ շնչառությունից ջրերի վրա ծնվում ու չքանում էին յուղոտ արտացոլանքներ: Իրենց առջև գիշերն էր առանց սահմանների: Ռիոն, որն իր մատների տակ զգում էր ժայռերի չեչոտ դեմքը, լցված էր երջանկության մի տարօրինակ զգացումով: Երբ շրջվեց Տարուի կողմը, իր ընկերոջ խաղաղ ու լրջմիտ դեմքին տեսավ նույն երջանկության արտահայտությունը, որը ոչինչ չէր մոռանում, անգամ մարդասպանությունը:

Նրանք հանվեցին: Ռիոն առաջինը սուզվեց: Ջուրը սկզբում սառը թվաց, իսկ երբ դուրս եկավ՝ տաք: Մի քանի մետր բրաս լողալով՝

Ռիոն հասկացավ, որ ծովն այդ երեկո տաք էր, որքան տաք են լինում աշնանային ծովերը, երբ հողից վերցնում են երկար ամիսների ընթացքում ամբարված ջերմությունը: Լողում էր հավասարաչափ: Ոտքերի հարվածները իր ետևում թողնում էին եռացող փրփուրներ, ջուրը խույս էր տալիս իր բազուկների երկայնքով ոտքերին կպչելու համար: Մի խուլ ճողփյուն նրան տեղեկացրեց, որ Տարուն սուզվել է: Ռիոն շրջվեց մեջքի վրա և անշարժացավ, դիմացը շրջված երկինքն էր՝ լուսնով ու աստղերով լեցուն: Խոր շունչ քաշեց: Հետո ավելի ու ավելի հստակ զգաց ջրի ճողփյունը զարմանալիորեն պարզ լռության և գիշերվա մենության մեջ: Տարուն մոտենում էր, շուտով լսվեց նրա շնչառությունը: Ռիոն շրջվեց, հավասարվեց իր բարեկամին և լողաց նրա հետ նույն ռիթմով: Տարուն առաջանում էր ավելի թափով, և նա ստիպված արագացրեց իր ընթացքը: Մի քանի րոպե նրանք լողում էին նույն տակտով և նույն ուժգնությամբ, միայնակ, հեռու աշխարհից, վերջապես ազատված քաղաքից և ժանտախտից: Ռիոն առաջինը կանգ առավ, և նրանք դանդաղ ետ լողացին, բացի մի պահից, երբ մտան մի սառը հոսանքի մեջ: Առանց որևէ խոսքի նրանք արագացրին իրենց շարժումները՝ ասես մտրակված ծովի այդ անակնկալից:

Նորից հագնվեցին և մեկնեցին առանց որևէ բառ արտասանելու: Սակայն այժմ նրանք նույն սիրտն ունեին, և այդ գիշերվա հիշողությունը թանկ էր նրանց համար: Երբ հեռվից նկատեցին ժանտախտի ժամապահին, Ռիոն գուշակեց, թե ինչ էր մտածում այդ պահին Տարուն. նա, ինչպեսև Ռիոն, մտորում էր, որ հիվանդությունն իրենց մոռացել է, և որքան լավ էր դա, և հիմա նրանք պիտի վերսկսեին իրենց գործը:

* * *

Այո, պետք էր վերսկսել, իսկ ժանտախտը երկար ժամանակով ոչ մեկին չէր մոռանում: Դեկտեմբեր ամսին նա բոց գցեց մեր համաքաղաքացիների կրծքավանդակներում, լուսավորեց կիզավառարանները, ճամբարները բնակեցրեց անգործ ստվերներով և հիարկե շարունակեց իր համբերատար ու ընդհատուն

քայլքը: Իշխանությունները հույսները դրել էին ցրտերի վրա հիվանդության առաջխաղացքը կանգնեցնելու համար, և սակայն եղանակի խստությունների միջով այն անցնում էր առանց ընդմիջումների: Հարկ էր էլի սպասել: Սակայն այլևս չեն սպասում սպասելու համար, և մեր ամբողջ քաղաքն ապրում էր առանց ապագայի:

Ինչ վերաբերում է բժշկին, հանգստի և բարեկամության վաղանցուկ պահը, որ տրվել էր նրան, չունեցավ վաղվա օր: Բացեցին ևս մեկ հիվանդանոց, և Ռիոն առանձին մնում էր միայն հիվանդների հետ: Սակայն նա նկատեց, որ համաճարակի այս էտապում, երբ ժանտախտն ավելի հաճախ էր ընդունում թոքային ձև, հիվանդներն ասես ջանում էին օգնել բժշկին: Սկզբնական շրջանի ուժասպառությանը կամ խենթություններին տրվելու փոխարեն հիվանդներն այժմ ավելի ճիշտ էին դատում, թե ինչն է իրենց օգտակար, և իրենք էին պահանջում հենց այն, ինչը կարող էր նպաստավոր լինել իրենց համար: Անընդմեջ խմելու բան էին խնդրում, և բոլորը ձգտում էին ջերմության: Չնայած հոգնությունը նույնն էր բժշկի համար, այսուհանդերձ, նոր հանգամանքներում նա իրեն այլևս այնքան մենակ չէր զգում, ինչպես առաջ:

Դեկտեմբերի վերջերին Ռիոն պրն Օթոնից՝ քննիչից, որը դեռ ճամբարում էր, նամակ ստացավ, որի մեջ ասվում էր, որ իր կարանտինի ժամկետն անցել է, և որ վարչությունը ոչ մի կերպ չի կարողանում գտնել իր ընդունման ամսաթիվը, և անշուշտ, այդ սխալմունքի պատճառով իրեն դեռ պահում են ճամբարում: Իսկ կինը, որ դուրս էր եկել որոշ ժամանակ առաջ, բողոք էր ներկայացրել պրեֆեկտուրա, որտեղ նրան վատ էին ընդունել և ասել էին, որ երբեք ոչ մի սխալմունք չի լինում իրենց մոտ: Ռիոն խնդրեց միջամտել Ռամբերին, և մի քանի օր անց իր մոտ հայտնվեց ինքը՝ պրն Օթոնը: Իրոք սխալմունք էր եղել, և Ռիոն մի քիչ վրդովվեց: Բայց պրն Օթոնը, որը նիհարել էր, բարձրացրեց իր թույլ ձեռքը և ծանրութեթև անելով բառերը՝ ասաց, որ բոլորն էլ կարող են սխալվել: Բժիշկը միայն մտածեց, որ ինչ-որ բան փոխվել է:

– Ի՞նչ եք մտադիր անել, պարոն քննիչ: Գործերը ձեզ են սպասում,– ասաց Ռիոն:

– Դե, ոչինչ,– պատասխանեց քննիչը:– Կուզենայի արձակուրդ վերցնել:

– Իսկապես, ձեզ պետք է հանգստանալ:

– Ոչ այդպես: Կուզենայի վերադառնալ ճամբար:

Ռիոն զարմացավ.

– Բայց նոր եք այնտեղից դուրս եկել:

– Դուք ինձ ճիշտ չհասկացաք: Ինձ ասացին, որ ճամբարի ղեկավարությունը կամավորներ է հավաքագրում:

Քննիչը պտտեցնում էր իր կլոր աչքերը և փորձում էր հարթեցնել քունքի խոպոպիկը:

– Հասկանո՞ւմ եք, ես զբաղմունք կունենամ: Եվ հետո, գուցե հիմար բան եմ ասում, ես ինձ հեռու չեմ զգա իմ փոքրիկ տղայից:

Ռիոն նայեց քննիչին: Հնարավո՞ր էր, որ այդ խիստ ու անարտահայտիչ աչքերում հանկարծ քնքշանք էր հայտնվել: Բայց դրանք մշուշվել էին, կորցրել իրենց մետաղափայլ մաքրությունը:

– Իհարկե,– ասաց Ռիոն,– ես կզբաղվեմ դրանով, քանի որ այդպես եք ուզում:

Բժիշկն իրոք զբաղվեց դրանով, և ժանտախտահար քաղաքն ընթացավ իր հունով մինչև Ծննդյան տոները: Տարուն շարունակում էր ամենուրեք տարածել իր ազդեցիկ հանգստությունը: Ռամբերը խոստովանեց բժշկին, որ երկու փոքրիկ պահակների շնորհիվ կարողացել է ընդհատակյա հաղորդակցական կապ հաստատել իր կնոջ հետ: Ժամանակ առ ժամանակ նրանից նամակ էր ստանում: Նա առաջարկեց Ռիոյին օգտվել իր հնարամիտ համակարգից, և բժիշկը համաձայնեց: Երկար ամիսներից հետո առաջին անգամ նա գրեց, բայց մեծ դժվարությամբ: Կորել էր իր արտահայտվելու լեզուն: Նամակն ուղարկվեց: Պատասխանն ուշանում էր: Ինչ վերաբերում է Կոթարին, նա բարգավաճում էր, և առևտրական մանրմունր գործարքները հարստացնում էին նրան: Իսկ Գրանին տոները հաջողություն չբերեցին:

Ծննդյան տոներն այդ տարի եղան ավելի շուտ Դժոխքի, քան Ավետարանի տոներ:

Դատարկ և լուսազուրկ կրպակներ, արհեստական շոկոլադներ կամ դատարկ տուփեր ցուցափեղկերում, մռայլ կերպարանքներով լի տրամվայներ. ոչինչ չէր հիշեցնում անցյալի տոները: Այդ տոնը, երբ մի ժամանակ հարուստ թե աղքատ միանում էին իրար, այժմ տեղ էր լինում միայնակ և ամոթալի զվարճությունների համար, որ արտոնյալները ոսկու գնով ձեռք էին բերում խանութի որևէ աղտոտ ետնասենյակում: Եկեղեցիները լի էին ավելի շատ տրտունջքներով, քան գովաբանական աղոթքներով: Թախծալից ու սառցապատ քաղաքում միայն մի քանի երեխա էին վազվզում՝ դեռևս չգիտակցելով, թե ինչ է իրենց սպառնում: Սակայն ոչ ոք չէր համարձակվում նրանց հիշեցնել մի ժամանակվա Աստծու մասին՝ լի ընծայումներով, ծեր, ինչպես մարդկային վիշտը, և երիտասարդ, ինչպես նորելուկ հույսը: Ոչ մեկի սրտում այլևս տեղ չէր մնացել այն չափազանց հին և մռայլ հույսի համար, որը խանգարում է մարդկանց՝ մահվանը հլու-հնազանդ անձնատուր լինելուն, և որն ընդամենը մի խղճուկ համառություն է ապրելու համար:

Նախօրյակին Գրանը չեկավ ժամադրության: Ռիոն, որ անհանգիստ էր, վաղ առավոտյան գնաց նրա տուն, բայց չգտավ նրան: Բոլորին ոտքի հանեցին: Ժամը տասնմեկի մոտերքը Ռամբերը գնաց հիվանդանոց՝ հայտնելու բժշկին, որ հեռվից նկատել էր փողոցներում թափառող, այլայլված տեսքով Գրանին, բայց նա խույս էր տվել, և Ռամբերը կորցրել էր հետքը: Բժիշկն ու Տարուն նստեցին մեքենան և գնացին որոնելու Գրանին:

Կեսօրին՝ սառնամանիքային այդ ժամին, Ռիոն դուրս եկավ մեքենայից և հեռվից նկատեց Գրանին, որը գրեթե կպել էր խանութի ցուցափեղկին՝ լի փայտից քանդակված ցածրորակ խաղալիքներով: Ծեր պաշտոնյայի դեմքի վրայով արցունքները հոսում էին առանց ընդմիջումների: Այդ արցունքները տակնուվրա արեցին նաև Ռիոյին, քանզի այդ արցունքները հասկանալի էին իրեն, և իր կոկորդն էլ խեղդվում էր նման արցունքներից: Նա նույնպես հիշում էր այդ դժբախտի նշանդրեքը Ծննդյան

տոների կրպակի առջև, հիշում էր Ժաննային, որը, գլուխը հենած նրա ուսին, շշնջացել էր, որ ինքը երջանիկ է: Հեռավոր տարիների խորքից՝ հենց իրենց այդ խենթության միջից, Ժաննայի թարմ ձայնն էր հասնում Գրանին: Վստահաբար այդպես էր: Ռիոն գիտեր ինչ էր մտածում այդ պահին ծերուկը, որ լացում էր, և ինքն էլ նույն կերպ էր մտածում, որ աշխարհն առանց սիրո նման է մեռած աշխարհի, և միշտ գալիս է մի ժամ, երբ հոգնած բանտերից, աշխատանքից և ցուցաբերածդ քաջությունից՝ ձգտում ես հիշողությամբ տեսնել հարազատ էակի դեմքը և քնքշանքից հմայված սիրտը:

Հանկարծ Գրանը տեսավ Ռիոյի արտացոլանքը ապակու մեջ: Չդադարեցնելով լացը՝ մեջքով հենվեց ցուցափեղկին և նայեց իրեն մոտեցող Ռիոյին:

– Ա՛խ, բժի՛շկ, բժի՛շկ,– կրկնում էր նա:

Ռիոն՝ անընդունակ խոսելու, գլուխը սիրալիր տմբացրեց ի նշան համաձայնության: Այդ վիշտը իրենն էր, և այն, ինչից գալարվում էր իր սիրտն այդ պահին, անսահման զայրույթն էր, որ համակում է մարդուն դեմ հանդիման ցավին, որ բաժանում են բոլոր մարդիկ:

– Այո, Գրա՞ն,– ասաց Ռիոն:

– Կուզենայի ժամանակ ունենալ նրան նամակ գրելու համար: Որ իմանա... և որ կարողանա երջանիկ լինել առանց խղճի խայթի...

Ռիոն գրեթե կոպտորեն առաջ հրեց Գրանին: Վերջինս շարունակում էր քրթմնջալ ինչ-որ կցկտուր խոսքեր՝ թույլ տալով, որ իրեն քարշ տան:

– Վաղուց է այս վիճակը: Ուզում ես քեզ բարձիթողի անել: Հարկադրված ես: Ա՛խ, բժի՛շկ, այսպես ես հանգիստ տեսք ունեմ: Բայց հսկայական ճիգ եմ գործադրել, որ չխելագարվեմ: Իսկ հիմա այլևս համբերությունս սպառվել է:

Նա կանգ առավ. ամբողջ մարմնով դողում էր, նայում էր խենթի աչքերով: Բժիշկը բռնեց նրա ձեռքը: Այն այրվում էր:

– Պետք է տուն վերադառնալ:

Բայց Գրանը խույս տվեց և վազեց մի քանի քայլ, հետո կանգ առավ, թևերը տարածեց և սկսեց ճոճվել ետ ու առաջ: Պտույտներ

գործեց և ընկավ սառցակալած մայթին՝ դեմքն աղտոտված չդադարող արցունքներից: Անցորդները նայում էին հեռվից, կտրուկ կանգ էին առնում՝ չհամարձակվելով առաջանալ: Ռիոն ստիպված էր ծերուկին գրկած տանել:

Իր անկողնում Գրանը շնչահեղձ էր լինում, թոքերը բռնվել էին: Ռիոն մտորում էր: Ծառայողը ընտանիք չուներ, ի՞նչ իմաստ ուներ նրան տեղափոխել հիվանդանոց: Նա մենակ կմնար Տարուի հետ, որը կխնամեր նրան...

Գրանը խոր թաղվել էր բարձի մեջ, մաշկը կանաչավուն էր, աչքերը՝ հանգած: Անթարթ նայում էր աղոտ լույսին, որ Տարուն վառել էր բուխարիկում կոտրված դարակի բեկորներից: «Վատ եմ»,– ասաց նա: Եվ նրա այրվող թոքերից արձակվում էր մի տարօրինակ խզզոց, որն ուղեկցում էր նրա արտասանած յուրաքանչյուր բառին: Ռիոն նրան հանձնարարեց լռել և ասաց, որ շուտով կվերադառնա: Մի տարօրինակ ժպիտ իջավ հիվանդի դեմքին և դրա հետ նաև՝ մի տեսակ քնքշություն: Մեծ ճիգով աչքով արեց բժշկին. «Եթե դուրս գամ սրանից, հանեք գլխարկները, բժի՛շկ»: Բայց դրանից անմիջապես հետո ուժասպառ ընկավ:

Մի քանի ժամ անց Ռիոն և Տարուն կրկին եկան Գրանի մոտ: Հիվանդը կիսով չափ բարձրացել էր անկողնում, և Ռիոն սարսափեց՝ նրա դեմքի վրա տեսնելով այրող հիվանդության առաջխաղացումը: Սակայն նա ավելի պայծառ էր երևում, և անմիջապես զարմանալիորեն խուլ ձայնով խնդրեց ինչ-որ դարակից տալ իր ձեռագրերը: Տարուն նրան մոտեցրեց թերթիկները: Գրանը, չնայելով դրանց, սեղմեց կրծքին, հետո տվեց բժշկին՝ շարժմունքով ցույց տալով, որ խնդրում է կարդալ բարձրաձայն: Ձեռագիր գրվածքը երկար չէր՝ մոտ հիսուն էջ: Բժիշկը թերթեց ձեռագիրը և հասկացավ, որ այդ բոլոր էջերը պարունակում էին միայն նույն նախադասությունը՝ անորոշ արտագրված, վերափոխված մեկ հարուստ, մեկ աղքատիկ բառերով: Մայիս ամիսը, ամազոնուհին և Բուլոնյան անտառի ծառուղիները անընդմեջ հակադրվում էին և դասավորվում տարբեր ձևերով: Գործը պարունակում էր նաև բացատրություններ՝ երբեմն անչափ երկար, և զանազան տարբերակներ, բայց վերջին էջի ամենավերջում ջանասիրաբար

ավելացված էր թարմ նախադասություն, որի թանաքը դեռ լավ չէր չորացել. «Իմ սիրելի Ժաննա, այսօր Սուրբ ծնունդ է...»: Ներքևում խնամքով վայելչագրված էր վերջին տարբերակը:

– Կարդացեք,– ասաց Գրանը:

Եվ Ռիոն կարդաց.

– «Մայիսյան մի գեղեցիկ առավոտ մի սլացիկ ամազոնուհի, մի շքեղ աշխետ զամբիկ հեծած, անցնում էր Բուլոնյան անտառի ծառուղիների, ծաղիկների միջով...»:

– Ստացվե՞լ է,– հարցրեց տենդագին ծերուկը:

Ռիոն չհամարձակվեց գլուխը բարձրացնել:

– Ա՜խ, գիտեմ,– ասաց ծերուկը՝ շարժվելով անկողնում,– լավ գիտեմ: Գեղեցիկ, գեղեցիկ... ճիշտ բառը չէ:

Ռիոն բռնեց նրա վերմակի վրա դրված ձեռքը:

– Թողեք, բժիշկ: Ես ժամանակ չեմ ունենա:

Կուրծքը նրա դժվարությամբ էր բարձրանում: Եվ հանկարծ միանգամից բղավեց.

– Վառեք դա:

Բժիշկը վարանեց, սակայն Գրանն իր կարգադրությունը կրկնեց այնպիսի սոսկալի շեշտադրությամբ և ձայնի մեջ դնելով այնպիսի տառապանք, որ Ռիոն թղթերն իսկույն նետեց գրեթե հանգած վառարանի մեջ: Սենյակն արագ լուսավորվեց, և մի կարճատև ջերմություն տաքացրեց նրան: Երբ բժիշկը կրկին մոտեցավ հիվանդին, վերջինս մեջքը շրջել էր, և դեմքը գրեթե դիպչում էր պատին: Տարուն նայում էր պատուհանից՝ ասես անտարբեր այդ տեսարանի նկատմամբ: Շիճուկը ներարկելուց հետո Ռիոն ասաց իր բարեկամին, որ Գրանը մինչև առավոտ չի ապրի: Տարուն առաջարկեց իր ծառայությունը՝ մնալ նրա մոտ, և բժիշկը համաձայնեց:

Ամբողջ գիշեր չքնեց՝ մտածելով, որ Գրանը մեռնելու է: Սակայն հաջորդ առավոտյան Ռիոն Գրանին գտավ անկողնում նստած, Տարուի հետ խոսելիս: Տենդը չքացել էր: Մնացել էին միայն ընդհանուր հյուծվածության հետքերը:

– Ա՜խ, բժիշկ,– ասաց Գրանը,– ես սխալվեցի: Բայց ոչինչ, ես կվերսկսեմ: Ես ամեն ինչ հիշում եմ, կտեսնեք:

– Սպասենք,– ասաց Ռիոն Տարուին:

Բայց կեսօրին ոչինչ չփոխվեց: Երեկոյան Գրանը կարող էր համարվել փրկված:

Եվ սակայն գրեթե նույն ժամանակամիջոցում Ռիոյի մոտ բերեցին մի հիվանդ, որի վիճակը նա գնահատեց անհուսալի և որին անմիջապես մեկուսացնել տվեց: Դեռատի աղջիկը խոր զառանցանքների մեջ էր և ներկայացնում էր թոքային ժանտախտի բոլոր ախտանիշները: Բայց հաջորդ առավոտյան ջերմությունն իջել էր: Ռիոն կարծեց, թե նույն առավոտյան թեթևացումն է, ինչպես Գրանի դեպքում, փորձը նրան սովորեցրել էր այն համարել վատ նշան: Կեսօրին, այսուհանդերձ, ջերմությունը չբարձրացավ, երեկոյան՝ մի քանի տասնորդականով միայն, իսկ հաջորդ առավոտյան՝ լրիվ չքացավ: Դեռատի աղջիկը, թեև թույլ, շնչում էր ազատ: Ռիոն ասաց Տարուին, որ այդ աղջիկը փրկվել էր՝ հակառակ բոլոր կանոնների: Բայց շաբաթվա ընթացքում չորս նմանատիպ դեպք հանդիպեց բժշկին:

Նույն շաբաթվա վերջին ծեր ասթմատիկն ընդունեց բժշկին և Տարուին, որոնց զարմացրեց նրա այդչափ աշխուժությունը:

– Եղա՛վ,– կրկնում էր նա:– Նորից դուրս են գալիս:

– Ովքե՞ր:

– Դե, առնետները, էլի:

Ապրիլ ամսից ի վեր ոչ մի մեռած առնետ չէր հայտնաբերվել:

– Մի՞թե նորից է սկսվելու,– հարցրեց Տարուն Ռիոյին:

Ծերուկը շփում էր ձեռքերը:

– Տեսնեք ո՞նց են վազվզում: Ինչպիսի՜ հաճույք:

Նա տեսել էր, թե ինչպես փողոցից իր տուն էին մտել երկու կենդանի առնետ: Հարևանները ևս հայտնել էին նրան, որ իրենց տներում էլ են առնետներ հայտնվել: Որոշ շինհրապարակներում նորից եռուզեռ էր, լսվում էին ծանոթ, բայց արդեն մոռացված ձայներ: Ռիոն սպասում էր ընդհանուր վիճակագրական տվյալների ամփոփագրին, որը հրատարակվում էր յուրաքանչյուր շաբաթվա սկզբին: Ըստ այդ տվյալների՝ հիվանդությունը նահանջում էր:

Որքան էլ անսպասելի էր Ժանտախտի նահանջը, մեր համաքաղաքացիները չշտապեցին ուրախանալ: Անցած երկար ամիսները, անընդհատ ահագնացնելով ազատագրվելու փափագը, նրանց սովորեցրել էին ողջախոհության, վարժեցրել էին հետզհետե ավելի քիչ հույս փայփայել համաճարակի մոտակա վերջաբանի համար: Այսուհանդերձ, այս նոր լուրը բոլորի շուրթերին էր, և բոլորի սրտի խորքում թրթռում էր մի մեծ անխոստովանելի հույս: Մնացած ամեն բան անցել էր երկրորդ պլան: Ժանտախտի նոր զոհերը տեղի էին տալիս այս շշմեցուցիչ փաստի առջև, վիճակագրական տվյալների աղյուսակի կորագիծը իջել էր: Այն, որ առողջության ժամանակաշրջանը, թեպետ ոչ բացահայտ, բայցևայնպես թաքուն սպասված էր եղել, ապացուցվում է նրանով, որ մեր համաքաղաքացիներն այդ մասին անմիջապես սկսեցին խոսել հաճույքով, չնայած անտարբեր տեսքով, այնպիսի ձևով, որը հավաստում էր կյանքի հնարավոր վերակազմակերպումը Ժանտախտից հետո:

Բոլորն էլ համաձայն էին այն մտքի հետ, որ անցած կյանքի հարմարությունները միանգամից չեն վերագտնելու, և որ ավելի հեշտ է քանդելը, քան վերակառուցելը: Պարզապես կարծում էին, որ սննդամատակարարումը ինքնին կարող էր մի քիչ բարելավվել, և

այդպես հնարավոր կլիներ ազատվել ամենամտահոգիչ խնդրից: Սակայն, փաստորեն, անվտանգ դիտողությունների տակ սանձազերծվում էր մի խելացնոր հույս, որի ուժգնությունից երբեմն սթափվում էին մեր համաքաղաքացիները և այնժամ հաստատում փութկոտությամբ, որ ազատագրությունը վաղվա գործ չէ:

Եվ իսկապես, ժանտախտը չդադարեց հաջորդ օրը, բայց երևում էր, որ թուլանում է շատ ավելի արագ, քան կարելի էր տրամաբանորեն հուսալ: Հունվար ամսվա առաջին օրերին ցուրտը հաստատվեց անսովոր հետևողականությամբ և ասես բյուրեղացավ քաղաքի վերևում: Եվ սակայն երկինքը երբեք այդքան կապույտ չէր եղել: Օրեր շարունակ նրա անշարժ ու սառած փայլը հեղում էր մեր քաղաքն իր անվերջանալի լույսով: Այդ մաքրազտված օդում ժանտախտը երեք շաբաթվա ընթացքում իր անընդմեջ անկումներով, ըստ երևույթին, ուժատվում էր մահացած մարմինների ավելի ու ավելի նվազող շարքերի մեջ: Կարճ ժամանակահատվածում ժանտախտը կորցրեց գրեթե այն ամբողջ ուժը, որ կուտակել էր ամիսների ընթացքում: Տեսնելով ինչպես չեն հերիքում Գրանի կամ Ռիոյի դեռատի աղջկա նման թիրախ զոհերը, ինչպես էր հիվանդությունը մի երկու-երեք օր վիճակը սրում որոշ թաղամասերում, մինչդեռ լրիվ անհետանում ուրիշ թաղամասերից, երկուշաբթի բազմապատկում էր զոհերի թիվը, իսկ չորեքշաբթի՝ գրեթե բոլորին թույլ տալիս խույս տալ իրենից, շնչահեղձ էր լինում կամ դես ու դեն ընկնում, այս ամենը տեսնելով՝ կարելի էր ասել, որ ժանտախտը կազմալուծվում էր նյարդայնությունից և հոգնությունից, որ միևնույն ժամանակ նա կորցնում էր իշխանությունն ինքն իր նկատմամբ, մաթեմատիկական և տիրակալական իր վարկանիշը, որոնք կազմում էին իր ուժը: Կաստելի շիճուկը միանգամից հասավ մի շարք հաջողությունների, որոնք իր համար անհասանելի էին մինչ այդ: Բժիշկների ձեռնարկած յուրաքանչյուր միջոց, որ մի ժամանակ արդյունքի չէր հասնում, հանկարծ փրկարար դարձավ: Թվում էր, թե ժանտախտն իր հերթին հետապնդվում է, և նրա թուլությունը հանկարծ ուժ հաղորդեց մաշված զենքերին, որ մինչ այդ նրա դեմ էին օգտագործում: Միայն ժամանակ

առ ժամանակ համաձարակը ձգվում, ուղղվում էր և ասես կույր ցատկով տանում էր երեք-չորս հիվանդի, որոնք բուժվելու հույս էին ներշնչում: Նրանք ժանտախտի, այսպես ասած, դժբախտներն էին, որոնց նա սպանում էր, հենց որ նրանք մեծ հույսեր էին փայփայում: Այդպես եղավ նաև քննիչ Օթոնի դեպքում, որին ստիպված եղան տանել մեկուսացման ճամբարից, և Տարուն ասաց, որ իրոք, նա բախտ չունեցավ, իսկ թե ինչ նկատի ուներ՝ քննիչի կյա՞նքը, թե՞ մահը, հասկանալի չէր:

Բայց ընդհանուր առմամբ վարակը նահանջում էր բոլոր ուղղություններով, և պրեֆեկտուրայի հաղորդագրությունները, որոնք սկզբում առաջացրել էին վախվորած ու թաքուն հույս, ի վերջո հասարակության գիտակցության մեջ ամրացրին, որ հաղթանակը նվաճված է, և որ հիվանդությունը լքում է իր դիրքերը: Իրականում դժվար էր հավաստել, թե դա իրոք հաղթանակ էր: Միայն ստիպված էին հաստատել, որ համաձարակը հեռանում էր այնպես, ինչպես եկել էր: Չէր փոխվել նրան հակադրված ռազմավարությունը՝ երեկ անարդյունավետ, այսօր բացահայտ հաջողակ: Միայն այն տպավորությունն էր ստեղծվում, թե հիվանդությունն ինքն իրեն սպառել է կամ գուցե նահանջել իր բոլոր նպատակներին հասնելուց հետո: Ինչ-որ իմաստով նրա դերն ավարտված էր:

Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ քաղաքում ոչինչ չէր փոխվել: Ցերեկը փողոցները լուռ էին ու ամայի, իսկ երեկոյան լցվում էին նույն ամբոխով, որտեղ գերակշռում էին վերարկուներն ու վզնոցները: Կինոթատրոններն ու սրճարանները շարունակում էին իրենց գործը: Բայց մոտիկից նայելիս կարելի էր նկատել, որ մարդկանց դեմքերն առաջվա պես լարված չէին և անգամ երբեմն ժպտում էին: Եվ այժմ կարելի էր արձանագրել, որ մինչ այդ փողոցում ոչ ոք չէր ժպտում: Իրականում ամիսներ շարունակ քաղաքը պարուրող անթափանց քողի մեջ պատռվածք էր առաջացել, և ամեն երկուշաբթի ռադիոյով լուրեր լսող յուրաքանչյուր ոք կարող էր համոզվել, որ այդ պատռվածքը օրըստօրե մեծանում է, և վերջապես հնարավոր կլինի շնչել: Սակայն դա նաև ամբողջովին բացասական թեթևություն էր, քանի որ անկեղծ արտահայտություն չէր ստանում:

https://1915.info

Բայց առաջ, եթե առանց թերահավատության չէին կարող լսել, թե գնացք է մեկնել կամ նավ է ժամանում, կամ որ մեքենաներին նորից թույլատրված է երթևեկել քաղաքում, ապա այս իրադարձությունների հայտարարությունը հունվարի կեսերին, ընդհակառակը, չէր կարող որևէ անակնկալ առաջացնել: Դա, իհարկե, շատ քիչ էր: Բայց այդ նրբերանգը փաստորեն մեկնաբանում է այն հսկայական առաջընթացը, որ կատարել էին մեր համաքաղաքացիները հույսի ճանապարհին: Ուրեմն նաև կարելի է ասել, որ այն պահից, երբ մարդկանց համար հնարավոր դարձավ փոքրագույն հույսի փայփայումը, ժանտախտի փաստացի տիրապետությունն ավարտվեց: Բայցևայնպես ամբողջ հունվար ամսվա ընթացքում մեր համաքաղաքացիներն իրենց պահեցին հակասական ձևերով: Ավելի ճշգրիտ ասած՝ նրանք փոխեփոխ անցան գրգռվածության և ընկճախտի վիճակների միջով: Հենց այդ պատճառով էլ արձանագրվեցին փախուստի նոր փորձեր ճիշտ այն ժամանակ, երբ վիճակագրական տվյալները թվում էին չափազանց նպաստավոր: Դա շատ զարմացրեց ոչ միայն իշխանություններին, այլև հենց պահակակետերին, որովհետև փախուստների մեծ մասը հաջողվեց: Բայց իրականում այդ պահին փախուստի դիմողները հնազանդվում էին միանգամայն բնազդային զգացումներին: Ոմանց մեջ ժանտախտն արմատավորել էր այնպիսի խոր կասկածամտություն, որից նրանք անկարող էին ազատվել: Հույսն այլևս իշխանություն չուներ նրանց վրա: Անգամ այն ժամանակ, երբ ժանտախտի տիրապետության ժամանակներն անցել էին, այդ մարդիկ շարունակում էին ապրել նրա չափանիշներով: Նրանք ետ էին մնացել իրադարձություններից: Ոմանց մեջ էլ, ընդհակառակը, և հատկապես նրանց մեջ, ովքեր մինչ այդ ապրել էին իրենց սիրած էակներից բաժանված, երկար ժամանակ ազատազրկումից և ուժասպառությունից հետո հառնող հույսի քամին տենդ էր բոցավառել և անհամբերություն, որը նրանցից խլում էր ինքնատիրապետման ամեն մի փորձ: Մի տեսակ խուճապ էր նրանց համակել այն մտքից, որ լինելով այնքան մոտ նպատակին՝ կարող էին հանկարծ մեռնել և չտեսնել նրանց, ում անսահման սիրում էին, և որ իրենց երկարատև տառապանքները

չէին փոխհատուցվելու: Այն ժամանակ, երբ ամիսներ շարունակ, հակառակ բանտին ու աքսորին, մի տարտամ համառությամբ նրանք դիմադրում էին սպասումներին, առաջին հույսը բավական էր ավերելու այն, ինչ վախն ու հուսահատությունը չէին կարողացել կործանել: Խենթի նման նրանք շտապում էին առաջ անցնել ժանտախտից՝ անկարող այլևս հետևելու նրա ընթացքին, մինչև վերջին վայրկյանը:

Սակայն միևնույն ժամանակ ինքնաբերաբար հայտնվեցին լավատեսության նշաններ: Այսպես՝ արձանագրվեց գների զգալի անկում: Զուտ տնտեսական առումով այս շարժը բացատրելի չէր: Մթերային խնդիրները մնում էին նույնը, կարանտինի ձևականությունները պահպանվում էին քաղաքի դարպասների մոտ, և մատակարարումը հեռու էր բարելավված լինելուց: Ուրեմն երևույթը զուտ բարոյական բնույթի էր, կարծես պետք էր, որ ժանտախտի նահանջը արտացոլվեր ամենուրեք: Միևնույն ժամանակ լավատեսությունը պատում էր նրանց, ովքեր ժանտախտից առաջ ապրում էին խմբերով, և հիվանդությունն էր ստիպել բաժանվել: Քաղաքի երկու մենաստանները սկսեցին վերակազմավորվել, և համատեղ կյանքը հնարավոր դարձավ: Նույնը կարելի էր ասել զինվորականների մասին, որոնք կրկին հավաքագրվեցին ազատ մնացած զորանոցներում՝ վերսկսելով իրենց զորանոցային բնականոն կյանքը: Այս փոքրիկ փաստերն արդեն մեծ նշաններ էին: Քաղաքի բնակիչներն ապրեցին այս հուզումների մեջ, մինչև հունվարի քսանհինգը: Այդ շաբաթ վիճակագրական տվյալների ցուցանիշն այնքան իջավ, որ բժշկական հանձնաժողովի խորհրդակցությունից հետո պրեֆեկտուրան հայտարարեց, որ համաճարակը կարող է համարվել կասեցված: Ճիշտ է, որ հաղորդագրության մեջ ավելացված էր, որ ողջամտությունից ելնելով, որը չէր կարող չարժանանալ բնակչության հավանությանը, քաղաքի դռները փակված կմնան ևս երկու շաբաթ, և կանխարգելիչ միջոցառումները կշարունակվեն ևս մեկ ամիս: Այդ ժամանակահատվածում վտանգի վերսկսման փոքրագույն նշանի հայտնաբերման դեպքում «անհրաժեշտ կլիներ պահպանել ստատուս քվոն և այդտեղից էլ բխող բոլոր միջոցառումները»: Բոլորը

սակայն այս հավելումն ընդունեցին որպես ոճական հնարք, և հունվարի քսանհինգի երեկոյան մի ուրախ խլրտյուն լցրեց քաղաքը: Համընդհանուր ցնծությանն ընկերակցելու նպատակով ոստիկանապետը հրամայեց վերականգնել առողջ ժամանակների լուսավորությունը: Պաղ ու մաքուր երկնքի տակ մեր համաքաղաքացիները խռնվում էին լուսավորված փողոցներում աղմկոտ ու ծիծաղախիտ խմբերով:

Իհարկե, շատ տների պատուհաններ փակ էին մնում փեղկերով, և շատ ընտանիքներ լռությամբ էին ընդունում այդ գիշերային երթևեկը, որ ուրիշները լցնում էին գոռում-գոչյուններով: Այսուհանդերձ, այս սգավոր մարդկանց համար ևս խոր թեթևացում կար, որովհետև նախ՝ վերջապես հանդարտվել էր իրենց ազգականներին մեկուսարան քշելու վախը, և հետո՝ իրենց անձի պահպանման զգացումն այլևս վտանգի տակ չէր: Սակայն համընդհանուր ուրախությանն անտարբեր մնացող ընտանիքներն անկասկած պետք է լինեին այն ընտանիքները, որոնք ժանտախտով վարակված հիվանդ ունեին հիվանդանոցում կամ կարանտինի մեջ, և կամ իրենց տանը սպասում էին, որ աղետն իր սև գործը կանի՝ վերացնելով իրենց, ինչպես վերացրել էր մյուսներին: Վերջիններս անշուշտ պահպանում էին հույսը, սակայն այն պահում էին նեղ օրվա համար՝ իրենք իրենց արգելելով մտածել այդ մասին, մինչև լիովին ձեռք չբերեին հույսից օգտվելու իրավունքը: Եվ այդ սպասումը, այդ լռելյայն անքուն գիշերը, այդ կարճ հեռավորությունը հոգեվարքից և ուրախությունից ավելի սոսկալի էին թվում համընդհանուր հրճվանքի մեջ: Բայց այս բացառությունները ոչնչով չէին նսեմացնում ուրիշների գոհունակությունը: Անկասկած ժանտախտը դեռ չէր վերջացել, և դա դեռ նա պիտի ապացուցեր: Սակայն յուրաքանչյուրի մտքում շաբաթներ առաջ մեկնում էին գնացքները՝ սուլելով անվերջանալի երկաթուղիների վրա, իսկ նավերն ակոսում էին լուսեղեն ծովերը: Վաղը մտքերն ավելի խաղաղ կլինեն, և կասկածները կվերածնվեն: Բայց առայժմ քաղաքը ցնցվում է ամբողջովին, լքում իր խավար ու անշարժ թաքստոցները, ուր քարե արմատներ էր ձգել, և վերջապես երթի էր ելնում գոյատևողների իր բեռով: Այդ երեկո Տարուն

ու Ռիոն, Ռամբերն ու մյուսները բազմության մեջ էին, քայլում էին՝ չզգալով հողը ոտքերի տակ: Ճեմափողոցները թողնելուց հետո էլ դեռ երկար ժամանակ Տարուն և Ռիոն լսում էին այդ հրճվանքը, որ հետապնդում էր իրենց անգամ այն ժամին, երբ անցնում էին ամայի նեղլիկ փողոցների՝ փակ փեղկերով պատուհանների երկայնքով: Եվ դարձյալ իրենց հոգնության պատճառով նրանք չէին կարող կիսել տառապանքը, որը շարունակվում էր այդ փեղկերի ետևում, ուրախությունից, որ լցվում էր փոքր-ինչ հեռու ձգվող փողոցները: Մոտեցող ազատագրումն ուներ ծիծաղկոտ դեմք, որ լի էր արցունքներով:

Մի պահ, երբ ուրախության աղմուկն ավելի էր ուժգնացել, հանկարծ Տարուն կանգ առավ: Մութ սալարկի վրայով մի թեթև ստվեր անցավ: Կատու էր՝ գարնանից ի վեր առաջին հայտնվածը: Նա մի պահ անշարժացավ փողոցի մեջտեղում, դեսուդեն նայեց, լիզեց թաթը՝ արագ քորելով աջ ականջը, ապա կրկին անաղմուկ քայլեց և անհետացավ խավարի մեջ: Տարուն ժպտաց: Փոքրիկ ծերուկն էլ գոհ կլիներ:

Բայց այն պահին, երբ թվում էր՝ ժանտախտը քաշվում է իր անհայտ որջը, որտեղից ծածուկ դուրս էր եկել, քաղաքում կար առնվազն մեկը, որին այդ հեռացումը վշտի մեջ գցեց, և այդ մարդը Կոթարն էր, եթե հավատանք Տարուի օրագրերին:

Ճիշտն ասած՝ այդ օրագրերը բավականին տարօրինակ են դառնում այն պահից, երբ վիճակագրական տվյալների կորագիծը սկսում է իջնել: Գուցե հոգնածությունն է պատճառը, որ ձեռագիրը դառնում է դժվար ընթեռնելի, և շատ հաճախ մի թեմայից անցնում է մյուսին: Ավելին՝ առաջին անգամ այս օրագրերը զուրկ են օբյեկտիվությունից և տեղ են տալիս անձնական դատողություններին: Այսպես օրինակ՝ Կոթարին նվիրված բավականին երկար հատվածների արանքում հայտնվում է մի փոքրիկ տեղեկություն կատուների հետ խաղացող ծերուկի մասին: Եթե հավատանք Տարուին, ժանտախտը երբեք ոչինչ չի խլել այս գործող անձի հանդեպ ունեցած իր վերաբերմունքից, որն իրեն հետաքրքրում էր ժանտախտից հետո, ինչպես հետաքրքրում էր առաջ, իսկ այժմ, չնայած իր բարյացակամությանը, նա այլևս դժբախտաբար չէր կարող իրեն հետաքրքրել:

Քանզի Տարուն փորձել էր գտնել նրան: Հունվարի քսանհինգի այն երեկոյից հետո նա դարանակալել էր փոքրիկ փողոցի անկյունում: Կատուներն այնտեղ էին, արևկող էին արել՝ հավատարիմ իրենց ժամադրավայրին: Սակայն սովորական ժամին փեղկերը համառորեն չէին բացվում: Եվ հաջորդ օրերին ևս պատուհանները երբեք չբացվեցին: Տարուն տրամաբանորեն եզրակացրեց, որ ծերուկը նեղացած է կամ մեռած. եթե նա նեղացած էր՝ կարծելով, թե իրավացի է, իսկ ժանտախտը հերքել էր նրան՝ մեղավոր դարձնելով, բայց եթե նա մեռած էր, ուրեմն հարկ էր խորհել նրա մասին, ինչպես նաև ծեր ասթմատիկի, որն իրեն սուրբ էր համարել: Տարուի կարծիքով՝ այդպես չէր, սակայն ծերուկի դեպքում ինչ-որ «ցուցում» կար: «Գուցե,– դիտարկվում էր օրագրերում,– հնարավոր է հասնել միայն մոտավոր սրբազանության: Այդ դեպքում պետք է բավարարվել համեստ ու գթառատ սադայելությամբ»:

Օրագրերում, որտեղ մշտապես գտնում ենք Կոթարին վերաբերող նկատառումներ, կան նաև բազմաթիվ խառնափնթոր դիտարկումներ: Դրանցից մի քանիսը ակնարկում են այժմ արդեն ապաքինված Գրանին, որն այնպես էր կրկին աշխատում, կարծես ոչինչ չէր պատահել, և մի քանի այլ գրառում՝ բժիշկ Ռիոյի մոր մասին: Մանրամասն, մեծ խնամքով են նկարագրված համատեղ կյանքի հնարավորությամբ ստեղծված զրույցները վերջինիս և Տարուի միջև, ինչպես նաև ծեր կնոջ պահվածքը, ժպիտը, դատողությունները ժանտախտի մասին: Տարուն հատկապես ընդգծում է տիկին Ռիոյի՝ ստվերում մնալու կարողությունը, ամեն ինչ պարզ խոսքերով արտահայտելու նրա ընդունակությունը, նրա առանձնահատուկ սերը խաղաղ փողոցի վրա բացվող պատուհանի նկատմամբ, որի ետևում երեկոյան նստում էր ուղիղ, ձեռքերը՝ հանգիստ, և հայացքը՝ ուշիմ, մինչ մթնշաղն ամբողջությամբ կգրավեր սենյակը՝ նրան վերածելով սև ստվերի գորշավուն լույսի մեջ, որը քիչ-քիչ խտանում էր և իր մեջ տարրալուծում անշարժ ուրվապատկերը: Խոսվում էր թեթևության մասին, որով այդ կինն անցնում էր սենյակից սենյակ, նրա բարության մասին, որի անմիջական ապացույցները երևի երբեք չէր տվել Տարուին, սակայն որը ճառագում էր նրա ամեն

խոսքից, ամեն շարժմունքից, և վերջապես այն փաստը, որ ըստ Տարուի՝ նա ամեն ինչ գիտեր առանց այդ մասին մտածելու, և թե ինչպես լռության ու ստվերի մեջ մնալով՝ նա կարող էր լինել ցանկացած լույսի բարձրության վրա՝ անգամ ժանտախտի: Մնացյալում Տարուի ձեռագիրն անկման արտառոց նշաններ է ցուցադրում: Տողերն ավելի դժվար են ընթերցվում, և ասես այդ անկման մի նոր ապացույց վերջին խոսքերը նույն առաջին խոսքերն են, որոնք անձնական բնույթ ունեն. «Իմ մայրն էլ այդպիսին էր, նրա մեջ ես սիրում էի ստվերում մնալու այդ կարողությունը և ձգտում էի երբեք չբաժանվել նրանից: Արդեն ութ տարի է անցել, բայց դեռ չեմ կարող ասել, որ նա մահացել է: Նա իրեն սովորականից մի քիչ ավելի էր ստվերագծել, իսկ երբ շրջվեցի, նա այլևս չկար»:

Բայց վերադառնանք Կոթարին: Այն ժամանակից ի վեր, երբ վիճակագրական տվյալների կորագիծը իջնում էր, Կոթարը բազմաթիվ անգամ եկել էր Ռիոյին այցելության՝ հնարելով տարբեր պատրվակներ: Իրականում ամեն անգամ նա Ռիոյից կանխատեսումներ էր ակնկալում համաճարակի վերաբերյալ:

– Ձեր կարծիքով՝ այն կարո՞ղ է վերջանալ հենց այնպես, միանգամից, առանց որևէ նախազգուշացման:

Այս տեսակետից նա կասկածամիտ էր կամ համենայնդեպս այդպես էր իրեն պահում: Բայց համառորեն տված նրա նույն հարցերը կայուն համոզմունքի բացակայության ապացույցն էին: Հունվարի կեսերին Ռիոն նրան պատասխանել էր բավական լավատեսորեն: Եվ ամեն անգամ այդ պատասխանները Կոթարին ուրախացնելու փոխարեն իրարամերժ հակազդեցություններ էին առաջացրել՝ վատ տրամադրությունից մինչև ընկճվածություն, նայած, որ օրը ինչպես: Ի վերջո, բժիշկը ստիպված եղավ նրան ասել, որ չնայած վիճակագրական տվյալների բարենպաստ ցուցանիշներին՝ լավ կլիներ առայժմ հաղթություն չթմբկահարել:

– Այլ կերպ ասած,– նշել էր Կոթարը,– դեռ ոչինչ չգիտենք, ուրեմն դա կարո՞ղ է վերսկսվել օրերից մի օր:

– Այո, բայց նաև հնարավոր է, որ վերացման գործընթացն արագանա:

Այդ անորոշությունը, որ մտահոգում էր բոլորին, ակնհայտորեն թեթևացրեց Կոթարին, և նա Տարուի ներկայությամբ խոսակցություններ սկսեց իր թաղի առևտրականների հետ՝ ջանալով քարոզել Ռիոյի կարծիքը: Իմիջիայլոց, դա այնքան էլ դժվար բան չէր: Որովհետև առաջին տենդագին հաղթանակներից հետո, շատերի մեջ նորից բույն էր դրել կասկածը, որը, պարզվեց, ավելի տևական էր, քան պրեֆեկտուրայի հայտարարության առաջ բերած հրճվանքը: Կոթարին հանգստացնում էր այդ համընդհանուր անհանգստությունը: Բայց ուրիշ անգամ ինքն էլ կարող էր հուսահատվել:

– Այո,– ասում էր նա Տարուին,– ի վերջո կբացեն դռները: Եվ կտեսնեք, ոչ մեկը չի սատարի ինձ:

Մինչև հունվարի քսանհինգը բոլորն էլ նկատում էին նրա բնավորության անկայունությունը: Օրեր շարունակ նա ձգտում էր կարգավորել իր հարաբերությունները թաղամասի բնակիչների հետ, բայց հետո՝ կտրուկ խզեց բոլոր կապերը նրանց հետ: Առերևույթ երևում էր՝ ինչպես է նա խուսափում մարդկանցից, և օր օրի ավելի էր մեկուսի ապրում, առանձնանում իր վայրենու կենսակերպով: Նրան այլևս չէին տեսնում ճաշարաններում, թատրոնում, ոչ էլ իր սիրած սրճարաններում: Եվ սակայն, կարծես չէր վերագտնում իր նախկին չափավոր ու ինքնամփոփ կյանքը, որ վարում էր համաճարակից առաջ: Լրիվ փակվել էր իր բնակարանում: Կերակուր բերում էին հարևան ճաշարանից: Միայն երեկոյան գողունի դուրս էր գալիս, անհրաժեշտ գնումներ անում և շատ արագ հեռանում խանութներից, նետվում ամայի փողոցները: Եթե գոնե այդ ժամանակ Տարուն հանդիպում էր նրան, կարողանում էր նրա բերանից պոկել միայն միավանկ կմկմոցներ: Հետո հանկարծ միանգամից անցնում էր ժանտախտին, շատախոսում, ուրիշների կարծիքը հարցնում և հաճույքով սուզվում բազմության խորքը:

Պրեֆեկտուրայի հայտարարության օրը Կոթարը վերջնականապես անհետացավ ասպարեզից: Երկու օր անց միայն Տարուն հանդիպեց նրան. թափառում էր փողոցներում: Կոթարը նրան խնդրեց իրեն ուղեկցել մինչև արվարձանի ծայրը: Տարուն, որ իրեն առանձնակի հոգնած էր զգում այդ օրվա ծանր աշխատանքից հետո,

վարանեց: Սակայն Կոթարը պնդեց: Նա չափազանց հուզված էր երևում, անկանոն շարժումներ էր անում, խոսում էր արագ և գրեթե գոռգոռալով: Իր ուղեկցին հարցրեց, թե նրա կարծիքով իրո՞ք պրեֆեկտուրայի հայտարարությունը վերջակետ էր դնում ժանտախտին: Բնականաբար, Տարուի կարծիքով, որ վարչական մի հայտարարությունն ինքնին բավարար չէր աղետը դադարեցնելու համար, բայց խոհեմաբար կարելի էր ընդունել, որ համաճարակը վերջանալու էր, եթե անկանխատեսելի ոչինչ տեղի չունենար:

– Այո,– ասաց Կոթարը,– եթե անկանխատեսելի ոչինչ տեղի չունենա: Բայց անկանխատեսելին միշտ հայտնվում է:

Տարուն փաստարկեց, թե պրեֆեկտուրան, իմիջիայլոց, ինչ-որ չափով կանխատեսել է անկանխատեսելին՝ քաղաքի դռների բացումը հետաձգելով երկու շաբաթով:

– Եվ շատ լավ էլ արել է,– ասաց Կոթարը՝ միշտ մռայլ և լարված,– որովհետև այն ձևով, որով ընթանում են գործերը, նրա ասածները գուցե հնչեն անիմաստ:

Տարուն հնարավոր էր համարում, որ կարող էր և այդպես լինել, սակայն իր կարծիքով, այնուամենայնիվ, ավելի լավ կլիներ դիտարկել դռների մոտակա բացման և բնականոն կյանքին վերադառնալու հարցը:

– Ընդունենք,– ասաց Կոթարը,– ընդունենք: Բայց ի՞նչ նկատի ունեք՝ ասելով «վերադարձ բնականոն կյանքին»:

– Նոր կինոնկարների ցուցադրումներ,– ասաց Տարուն ժպտալով:

Բայց Կոթարը չէր ժպտում: Նա ուզում էր իմանալ՝ կարելի՞ էր կարծել, թե ժանտախտը ոչինչ չէր փոխել քաղաքում, և որ ամեն ինչ լինելու է առաջվա նման, այսինքն՝ այնպես, ասես ոչինչ տեղի չի ունեցել: Տարուն կարծում էր, որ ժանտախտը փոխելու էր և միաժամանակ չէր փոխելու քաղաքը, որ հասկանալի էր, որ մեր համաքաղաքացիների ամենամեծ ցանկությունն էր անել այնպես, որ կարծես ոչինչ չի փոխվել, և ուրեմն ինչ-որ իմաստով՝ ոչինչ չէր փոխվելու, բայց մեկ այլ իմաստով՝ ամեն ինչ հնարավոր չէ մոռանալ անգամ անհրաժեշտ կամքի ուժ ունենալու դեպքում, և ժանտախտը թողնելու էր հետքեր առնվազն սրտերում: Անաշխատ եկամուտով

ապրող փոքրիկ մարդը կտրուկ հայտարարեց, որ իրեն սրտերը չեն հետաքրքրում, և դեռ ավելին՝ սիրտն իրեն հուզող հոգսերից ամենավերջինն է: Նրան հետաքրքրում էր, թե ինքը՝ ղեկավարման համակարգը, չի՞ ձևափոխվելու արդյոք, թե բոլոր ծառայությունները գործելո՞ւ են, օրինակ, ինչպես անցյալում: Եվ Տարուն ստիպված էր խոստովանել, որ անտեղյակ էր դրան: Ըստ նրա՝ կարելի էր ենթադրել, որ համաճարակի ընթացքում բոլոր այդ խաթարված ծառայությունները դժվարությամբ պիտի կարողանան վերականգնվել: Կարելի է նաև կարծել, որ մեծ թվով նոր խնդիրներ կառաջանան, որոնք անհրաժեշտ կլինեն նախկին ծառայությունների վերակազմավորումն ապահովելու համար:

– Հա՛,– ասաց Կոթարը,– հնարավոր է, իսկապես բոլորը պետք է ամեն բան նորից սկսեն:

Երկու ուղեկիցներն արդեն հասել էին Կոթարի տան մոտ: Վերջինս աշխուժացել էր՝ ձգտելով լավատես երևալ: Նա պատկերացնում էր քաղաքը, որը նոր կյանքով էր սկսում ապրել՝ ջնջելով անցյալը, կյանքը վերսկսելով զրոյից:

– Լավ,– ասաց Տարուն:– Գուցե ձեզ համար էլ ամեն ինչ դասավորվի: Ինչպես էլ լինի, նոր կյանք է սկսվելու:

Նրանք արդեն դռան մոտ էին և իրար ձեռք էին սեղմում:

– Դուք իրավացի եք,– ասաց Կոթարը՝ ավելի ու ավելի աշխուժանալով,– հիանալի կլինի վերսկսել զրոյից:

Բայց միջանցքի խավարի միջից երկու հոգի հայտնվեցին: Տարուն հազիվ ժամանակ ունեցավ լսելու Կոթարի հարցը, թե ի՞նչ էին ուզում այդ թռչնակները: Թռչնակները, որոնք զարդարված պաշտոնյաների տեսք ունեին, հարցնում էին Կոթարին, թե իրո՞ք նրա անունը Կոթար է, իսկ վերջինս, արձակելով մի տեսակ խուլ բացականչություն, պտույտ գործեց ինքն իր շուրջը և չքացավ գիշերվա մեջ, մինչ մյուսները և Տարուն նույնպես կկարողանային որևէ շարժմունք անել: Անակնկալ պահն անցավ, և Տարուն հարցրեց այդ երկու մարդկանց՝ ի՞նչ էին ուզում: Սրանք, ընդունելով զուսպ և քաղաքավարի տեսք, ասացին, թե տեղեկություն էին ուզում ստանալ, և գնացին նույն ուղղությամբ, ինչ որ Կոթարը:

Տուն վերադառնալով՝ Տարուն գրի էր առել այդ տեսարանը և անմիջապես (ձեռագիրն էլ է այդ ապացուցում) ընդգծել էր իր հոգնությունը: Նա ավելացրել էր, որ դեռ շատ գործեր ուներ անելու, բայց դա փաստարկ չէր, և պետք էր միշտ պատրաստ լինել, և ինքն իրեն հարց է տալիս, թե իրո՞ք ինքը պատրաստ է: Վերջում պատասխանում է, և այստեղ էլ հենց ավարտվում են Տարուի գրառումները, որ օրվա և գիշերվա մեջ միշտ կա մի ժամ, երբ մարդ դառնում է վախկոտ, և որ ինքը վախենում է հենց այդ ժամից:

* * *

Քաղաքի դռները բացվելուց մի քանի օր առաջ բժիշկ Ռիոն կեսօրին տուն էր վերադառնում՝ ինքն իրեն հարցնելով՝ արդյոք այնքան սպասված հեռագիրը եկե՞լ էր: Չնայած այդ օրերն իր համար նույնքան ուժասպառող էին, որքան ժանտախտի ամենաթեժ պահին, վերջնական ազատագրման սպասումը ջնջում էր իր մեջ ամեն տեսակի հոգնություն: Այժմ նա հույս ուներ և հրճվում էր դրանով: Հնարավոր չէ անվերջ ապրել պրկված կամքով, լարել ողջ էությունդ, և ինչպիսի երջանկություն է վերջապես զեղումներում թուլացնել և արձակել պայքարի համար քակված ուժերի այդ խուրձը: Եթե սպասված հեռագիրը նույնպես լիներ բարեպատեհ, Ռիոն կարող էր ամեն ինչ վերսկսել: Եվ նա այն կարծիքին էր, որ բոլորն էլ կարող էին վերսկսել կյանքը:

Ռիոն անցավ դռնապանի խցիկի առջևից: Նոր դռնապանը, կպած քառակուսի պատուհանիկին, ժպտաց նրան: Աստիճաններով բարձրանալիս բժիշկը դեռ տեսնում էր հոգնությունից ու զրկանքներից դալկացած նրա դեմքը:

Այո, նա կվերսկսեր կյանքը, երբ վերացարկումն ավարտված կլիներ, և եթե մի փոքր բախտը բերեր... Բայց հենց այդ պահին նա բացեց դուռը, և մայրը նրան ընդառաջ եկավ ու հայտնեց, որ պարոն Տարուն վատ էր զգում: Նա առավոտյան վեր էր կացել, բայց չէր կարողացել դուրս գալ և նորից պառկել էր: Տիկին Ռիոն անհանգիստ էր:

– Գուցե լուրջ բան չկա,– ասաց որդին:

Տարուն ձգվել էր իր ողջ հասակով մեկ, ծանր գլուխը խրված էր բարձի մեջ, հուժկու կրծքավանդակը գծագրվում էր հաստ վերմակի տակից: Ջերմություն ուներ, գլուխը ցավում էր: Ռիոյին ասաց, որ ախտանիշներն անորոշ էին, բայց կարող են լինել նաև ժանտախտի նշաններ:

– Ոչ, դեռ ոչ մի որոշակի բան չկա,– ասաց բժիշկը նրան քննելուց հետո:

Սակայն Տարուն տանջվում էր ծարավից: Միջանցքում բժիշկն ասաց մորը, որ շատ հնարավոր է, որ դա ժանտախտի սկիզբն էր:

– Օ՜, ո՛չ,– ասաց մայրը,– անհնար է, ո՛չ, հատկապես հիմա:

Եվ անմիջապես ավելացրեց.

– Պահենք նրան, Բեռնար:

Ռիոն մտորում էր.

– Իրավունք չունեմ,– պատասխանեց նա:– Բայց քաղաքի դռները վաղը-մյուս օրը կբացվեն: Կարծում եմ, որ կանեի իմ առաջին օրինախախտումը, եթե դու այստեղ չլինեիր:

– Բեռնա՜ր,– ասաց մայրը,– պահի՛ր մեզ երկուսիս էլ: Գիտես, որ բոլորովին վերջերս ինձ կրկին շիճուկ ներարկեցին:

Բժիշկն ասաց, որ Տարուն էլ էր ներարկված, սակայն գուցե հոգնության պատճառով բաց էր թողել շիճուկի վերջին ներարկումը և մոռացել ձեռք առնել մի քանի նախազգուշական միջոցներ:

Ռիոն արդեն գնում էր իր առանձնասենյակը: Երբ վերադարձավ ննջարան, Տարուն տեսավ, որ բժիշկը բերում է շիճուկով լի հսկայական սրվակներ:

– Հա՜, ուրեմն դա է,– ասաց նա:

– Ոչ, ընդամենը նախազգուշություն է:

Տարուն մեկնեց ձեռքը իբրև պատասխան և ընդունեց անվերջանալի ներարկումը, որ ինքն էր արել ուրիշ հիվանդներին:

– Այս երեկո կտեսնենք,– ասաց Ռիոն և նայեց Տարուի դեմքին:

– Իսկ մեկուսացո՞ւմը, Ռիո:

– Չկա լրիվ համոզվածություն, որ ժանտախտ է:

Տարուն դժվարությամբ ժպտաց:

– Առաջին անգամ եմ տեսնում, որ շիճուկ ներարկեն առանց միաժամանակ մեկուսացնելու:

Ռիոն շրջվեց:

– Մայրս ու ես կխնամենք ձեզ: Այստեղ ավելի լավ կլինի ձեզ համար:

Տարուն լռեց: Բժիշկը սրվակներն էր դասավորում և սպասում, որ նա խոսի, որպեսզի կարողանար շրջվել: Ի վերջո նա մոտեցավ մահճակալին: Հիվանդը նայում էր իրեն: Դեմքը հոգնած էր, սակայն նրա գորշ աչքերը հանգիստ էին: Ռիոն ժպտաց նրան:

– Քնեք, եթե կարող եք: Հիմա կվերադառնամ:

Դռան մոտ նա լսեց Տարուի ձայնը, որն իրեն էր կանչում: Վերադարձավ նրա մոտ: Տարուն ասես պայքարում էր անգամ խոսքերի դեմ, որ ուզում էր ասել.

– Ռիո,– վերջապես արտաբերեց նա,– պետք է ամեն ինչ ինձ ասել, ինձ դա անհրաժեշտ է:

– Ես ձեզ խոստանում եմ:

Տարուն ծամածռեց լայն դեմքը, որպեսզի ժպտա:

– Շնորհակալ եմ: Ես չեմ ուզում մեռնել և կպայքարեմ: Բայց եթե խաղը տանուլ եմ տվել, ուզում եմ վերջաբանը լավ լինի:

Ռիոն հակվեց ու սեղմեց հիվանդի ուսը:

– Ոչ,– ասաց նա,–սուրբ դառնալու համար պետք է ապրել: Պայքարեք:

Ցերեկը ուժգին ցուրտը նվազեց մի քիչ, որպեսզի հետմիջօրեից հետո տեղ բացեր տեղատարափ անձրևի և կարկուտի համար: Մթնշաղին երկինքը մի քիչ բացվեց, և ցուրտը դարձավ ավելի ծակող: Ռիոն տուն վերադարձավ ուշ երեկոյան: Առանց վերարկուն հանելու մտավ ընկերոջ ննջասենյակը: Մայրը նստած էր նրա մոտ և հյուսում էր: Տարուն ասես տեղից չէր շարժվել, բայց տենդից ճերմակած շրթունքները պատմում էին պայքարի մասին, որ նա մղում էր:

– Դե, հիմա ի՞նչ կասես,– հարցրեց բժիշկը:

Տարուն մի քիչ թոթվեց վերմակից դուրս եկած ուսերը:

– Հիմա կասեմ, որ խաղը տանուլ է տրված:

Բժիշկը կռացավ նրա վրա: Գեղձերը հյուսվել էին այրվող մաշկի տակ, կրծքավանդակն ասես հնչեցնում էր ստորգետնյա դարբնոցից արձակվող բոլոր ձայները: Զարմանալիորեն Տարուն ներկայացնում էր ախտանիշների երկու տեսակը միաժամանակ: Ռիոն դարձյալ վեր կացավ և ասաց, որ շիճուկը դեռ ժամանակ չի ունեցել

լրիվ ազդելու: Սակայն տենդի մի նոր ալիք բարձրացավ և Տարուի կոկորդում խեղդեց բառերը, որ նա ջանում էր արտաբերել:

– Ընթրիքից հետո Ռիոն և մայրը եկան տեղավորվելու հիվանդի սենյակում: Նրա համար գիշերը սկսվում էր պայքարով, և Ռիոն գիտեր, որ այդ դժվարին ճակատամարտը ժանտախտի հրեշ-տակի հետ տևելու է մինչև արշալույս: Այդ մարտում Տարուի լավա-գույն զենքերը ոչ թե ամուր ուսերն ու լայն կուրծքն էին, այլ արյունը, որ Ռիոն իր ասեղով ցայտեցնում էր նրա եղունգների տակից, այդ արյան մեջ էր թաքնված այն, ինչն ավելի խոր էր, քան հոգին, և ոչ մի գիտություն չէր կարող այն բացահայտել: Իսկ ինքը պետք է միայն հետևեր իր ընկերոջ պայքարին: Պետք է մշակեր թարա-խային պալարները, ներարկեր կորովիչներ. բազմաթիվ ամիսներ կրկնվող անհաջողությունները նրան սովորեցրել էին բարձրացնել դրանց արդյունավետությունը: Ըստ էության՝ իր միակ պարտա-կանությունն էր գործելու հնարավորություն տալ պատահակա-նությանը, որը հաճախ ննջում է, մինչև նրան չես արթնացնում և չես գրգռում: Այժմ անհրաժեշտ էին նախադրյալներ, որ պատա-հականությունը գործեր: Քանզի Ռիոն գտնվում էր ժանտախտի մի այնպիսի դեպքի առջև, որն ամբողջովին շփոթեցնում էր իրեն: Մեկ անգամ ևս ժանտախտը ջանում էր ոչնչացնել իր դեմ բարձ-րացված մարտավարությունները՝ հայտնվելով այնտեղ, որտեղ չէին սպասում իրեն, անհետանալով այն վայրերից, որտեղ թվում է՝ ամուր հաստատված էր արդեն: Մեկ անգամ ևս նա ջանք էր թափում զարմացնել բոլորին:

Տարուն պայքարում էր անշարժ պառկած: Ամբողջ գիշեր ոչ մի անգամ նա չդիմադրեց ցավի տենդագին հարձակումներին՝ կռվե-լով միայն իր մարմնի ուժով և իր լռությամբ: Բայց նաև չխոսեց ոչ մի անգամ՝ ասես այսպես, իր ձևով խոստովանելով, որ ցրվե-լու հնարավորություն չունի: Ռիոն հետևում էր պայքարի փուլերին՝ միայն նայելով իր ընկերոջ աչքերին, որոնք մերթ բացվում էին ու մերթ փակվում, կոպերն ամուր սեղմում աչքի խնձորակի շուրջը կամ, ընդհակառակը, լարված բացում՝ հայացքը հառելով որևէ առարկայի կամ բժշկին և նրա մորը: Եվ ամեն անգամ, երբ նրանց

հայացքները հանդիպում էին, Տարուն, մեծ ճիգ գործադրելով, ժպտում էր:

Մի պահ փողոցում լսվեցին փութկոտ քայլեր: Նրանք ասես փախչում էին հեռավոր դղրդյունից, որն աստիճանաբար մոտենում էր և ի վերջո լցրեց փողոցը իր առվահոս ձայներով, անձրևը վերսկսվեց, շուտով նրան միախառնվեց կարկուտը, որ կտկտացնում էր մայթերի վրա: Մեծ վարագույրների պաստառները ծածանվում էին պատուհանների առջև: Սենյակի կիսախավարում Ռիոն, մի պահ շեղված անձրևով, դարձյալ դիտում էր սնարի լամպով լուսավորված Տարուին: Մայրը շարունակում էր հյուսել՝ ժամանակ առ ժամանակ գլուխը բարձրացնելով ու սևեռուն նայելով հիվանդին: Բժիշկն արել էր այն ամենը, ինչ հնարավոր էր անել: Անձրևից հետո լռությունը թանձրացավ սենյակում, որը լցված էր միայն անտեսանելի կռվի անխոս տագնապով: Անքնությունից ջարդված մարմնով բժշկին թվում էր, թե լռության սահմաններից անդին լսվում է մեղմ ու համաչափ սուլոցը, որն իրեն ուղեկցել էր համաճարակի ողջ ընթացքում: Մորը նշան արեց, որ գնա քնելու: Մայրը գլխով հրաժարական շարժում արեց, աչքերը փայլեցին, հետո շյուղերի ծայրով խնամքով սկսեց փնտրել կորցրած օղակը: Ռիոն վեր կացավ, հիվանդին ջուր խմեցրեց, հետո կրկին նստեց տեղը:

Անցորդները, օգտվելով անձրևի ժամանակավոր դադարից, արագացրել էին իրենց քայլերը մայթերի վրա: Նրանց ոտնաձայները նվազում էին և հեռանում: Բժիշկն առաջին անգամ զգաց, որ այդ գիշերը՝ լի ուշացած անցորդներով և զուրկ շտապօգնության մեքենաների շաչյուններից, նման էր մի ժամանակվա գիշերներին: Սա ժանտախտից ազատագրված գիշեր էր: Եվ ասես հիվանդությունը, որին քշել էին ցուրտը, լույսերն ու ամբոխը, փախել էր քաղաքի մթին անկյուններից և այժմ պատսպարվել էր այս տաք սենյակում՝ վերջին գրոհն իրականացնելու Տարուի անտարբեր մարմնի վրա: Աղետն այլևս չէր սավառնում քաղաքի երկնքում: Բայց մեղմորեն սուլում էր սենյակի ծանր օդում: Այդ նրան էր Ռիոն լսում ժամեր ի վեր: Պետք էր սպասել, որ այստեղ նույնպես նա դադարեր, որ այստեղ նույնպես իրեն պարտված ճանաչեր:

Արդեն գրեթե լուսանում էր: Ռիոն հակվեց մոր կողմը.

– Դու պետք է քնես, որ ինձ փոխարինես ժամը ութին: Պառկելուց առաջ չմոռանաս ողողումներ անել:

Տիկին Ռիոն վեր կացավ, հավաքեց իր հյուսքը և մոտեցավ մահճակալին: Տարուն արդեն որոշ ժամանակից ի վեր աչքերը չէր բացում: Քրտնքից մազերը գանգրացել էին կարծր ճակատին: Տիկին Ռիոն հոգոց հանեց, և հիվանդը բացեց աչքերը: Նա տեսավ իր վրա հակված քնքուշ դեմքը, և տենդի շարժուն ալիքների միջով տոկուն ժպիտը կրկին փայլեց նրա դեմքին: Բայց աչքերը իսկույնևեթ փակվեցին: Մենակ մնալով՝ Ռիոն տեղավորվեց մոր թողած բազկաթոռում: Փողոցը համր էր, և այժմ համակ լռություն էր տիրում: Լուսաբացի ցուրտն իրեն զգացնել էր տալիս սենյակում:

Բժիշկը ննջեց, բայց արշալույսի առաջին մեքենան նրան հանեց իր քնից: Սարսռաց, նայեց Տարուին և հասկացավ, որ դադար էր եղել, և որ հիվանդը նույնպես քնել էր: Ձիակառքի երկաթե օղակով ամրացված փայտե անիվները դեռ պտտվում էին հեռվում: Պատուհանի այն կողմում դեռ մութ էր: Երբ բժիշկը մոտեցավ անկողնուն, Տարուն նրան նայեց ոչինչ չարտահայտող հայացքով, կարծես դեռ քնի մեջ էր:

– Քնած էիք, չէ՞,– հարցրեց Ռիոն:

– Այո՛:

– Ավելի լա՞վ եք շնչում:

– Մի քիչ: Դա որևէ բան նշանակո՞ւմ է:

Ռիոն լռեց, իսկ մի պահ հետո ավելացրեց.

– Ո՛չ, Տարու, դա ոչինչ չի նշանակում: Ինձնից լավ գիտեք հիվանդության առավոտվա թեթևացումը:

Տարուն համաձայնեց:

– Շնորհակալ եմ,– ասաց նա:– Ինձ միշտ ասացեք ճշմարտությունը:

Ռիոն նստած էր մահճակալի եզրին: Նա մոտիկից էր զգում հիվանդի ոտքերը՝ երկար ու անշարժ, ինչպես մարմնի հանգչող անդամներ: Տարուն շնչում էր ավելի ու ավելի ուժգնորեն:

– Ռիո, տենդը վերսկսվելու է, չէ՞,– հարցրեց նա շնչակտուր ձայնով:

– Այո, բայց կեսօրին մենք կողմնորոշված կլինենք:

Տարուն փակեց աչքերը՝ ասես հավաքելով բոլոր ուժերը: Հոգնության արտահայտություն էր ընթերցվում նրա դիմագծերում: Սպասում էր տենդի ուժգնացմանը, որն արդեն բարձրանում էր ինչ-որ տեղ՝ իր ներսում: Երբ բարձրացրեց կոպերը, աչքերը խամրած էին: Հայացքը պայծառացավ, երբ նկատեց իր վրա խոնարհված Ռիոյին:

– Խմեք,– ասաց Ռիոն:

Տարուն խմեց, իսկ գլուխը ցած ընկավ բարձին:

– Երկար է տևում,– ասաց նա:

Ռիոն բռնեց նրա ձեռքը, բայց Տարուն շրջեց հայացքը, և ասես այլևս չէր պատասխանում ազդակներին: Հանկարծ ջերմությունը նկատելիորեն բարձրացավ, տարածվեց մինչև ճակատը, ասես ներսում ինչ-որ ամբար էր պայթել: Երբ Տարուի աչքերը կրկին նայեցին բժշկին, վերջինս իր լարված դեմքով քաջալերում էր նրան: Տարուն ջանաց դարձյալ ժպտալ, բայց ժպիտը չկարողացավ դուրս գալ սեղմված ծնոտների և սպիտակավուն փրփուրով պատված շրթունքների արանքից: Սակայն կարծրացած դեմքին դեռ առկայծում էին արիությամբ լի աչքերը:

Ժամը յոթին տիկին Ռիոն եկավ ննջարան: Բժիշկը գնաց գրասենյակ հիվանդանոց զանգելու և իրեն փոխարինող գտնելու համար: Նա որոշեց հետաձգել իր խորհրդատվությունները, մի պահ փռվեց առանձնասենյակի բազմոցին, բայց գրեթե իսկույն վեր թռավ և վերադարձավ ննջասենյակ: Տարուն գլուխը շրջել էր տիկին Ռիոյի կողմը: Նրա աչքերն ուղղված էին իր մոր՝ աթոռին կծկված, ձեռքերը ոտքերի վրա խաչած փոքրիկ ուրվականին: Տարուն այնքան ակնդետ էր նայում, որ տիկին Ռիոն մատը դրեց շրթունքներին ու վեր կացավ սնարի լամպը հանգցնելու: Սակայն վարագույրների ետևից ցերեկային լույսն էր արդեն ներս թափանցում, և քիչ անց, երբ հիվանդի դիմագծերը դուրս եկան մթությունից, տիկին Ռիոն տեսավ, որ նա շարունակում էր իրեն դիտել: Հակվեց հիվանդի վրա, ուղղեց բարձը և ձեռքը մի պահ դրեց թաց ու խոնված մազերին: Այդժամ նա լսեց մի խուլ ձայն, որ գալիս էր հեռվից՝ իրեն «շնորհակալություն» հայտնելու և ասելու, որ այժմ ամեն ինչ լավ է:

https://1915.info

Երբ տիկին Ռիոն կրկին նստեց, Տարուն արդեն փակել էր աչքերը. նրա հյուծված դեմքը, չնայած պինդ սեղմած շրթունքներին, դարձյալ ժպտում էր:

Կեսօրին տենդը հասավ իր գագաթնակետին: Ասես ընդերքից եկող մի հազ՝ ցնցում էր հիվանդի մարմինը, և նա սկսեց արյուն թքել: Գեղձերն այլևս ուռած չէին, նույն տեղում էին, կարծր՝ պտուտակների նման ամրացված հոդերի փոսիկներում: Ռիոն անհնարին համարեց բացել դրանք: Տենդի և հազի նոպաների արանքներում Տարուն հեռվից հեռու նշմարում էր ընկերներին: Բայց գնալով նրա աչքերն ավելի ուշ-ուշ սկսեցին բացվել, և լույսը, որ քիչ առաջ պայծառացնում էր նրա ավերված դեմքը, հետզհետե սկսեց դալկանալ: Ամպրոպն ավելի հազվադեպ կայծակներով էր լուսավորում ջղաձիգ ցնցումներից գալարվող այդ մարմինը, և Տարուն դանդաղորեն էր ընկղմվում փոթորկի խորքը: Այժմ Ռիոն իր առջև տեսնում էր միայն անտարբեր մի դիմակ, որի վրայից անհետացել էր ժպիտը: Մարդկային այդ ձևը, որն իրեն այնքան հարազատ էր դարձել, այժմ նիզակի հարվածներից ծակծկված, գերմարդկային ցավից այրված, երկնային բոլոր ատելի քամիներից ծվատված՝ իր աչքերի առաջ ընկղմվում էր ժանտախտի ջրերի մեջ, և ինքն այլևս ոչինչ չէր կարող անել այդ նավաբեկության դեմ: Նա պիտի մնար ափին՝ ձեռքերը դատարկ ու սիրտը քամված, անզեն, անօգնական, մեկ անգամ ևս այս արհավիրքին դեմ հանդիման: Իսկ վերջում անզորությունից նա ազատություն տվեց արցունքներին, որոնք խանգարեցին Ռիոյին տեսնելու՝ ինչպես Տարուն հանկարծ շրջվեց դեպի պատը և հոգին ավանդեց մի խուլ տրտունջով, ասես իր մարմնի մեջ՝ ինչ-որ տեղում, իր մարմնի հիմնական լարը կտրվեց:

Հաջորդ գիշերն արդեն ոչ թե պայքարի գիշեր էր, այլ լռության: Աշխարհից կտրված այդ ննջարանում, մահացած, այժմ արդեն հագնված մարմնի վերևում Ռիոն զգում էր, որ սավառնում է զարմանալի մի հանդարտություն, որը մինչ այդ գիշերներ շարունակ ժանտախտի վերևից դարավանդների վրա հետևել էր նրա հարձակումներին դարպասների վրա: Այն ժամանակ արդեն բժիշկը մտածում էր լռության մասին, որը բարձրանում էր անկողիններից,

որտեղ թողել էր մեռնողներին: Ամենուրեք նույն դադարն էր, նույն հանդիսավոր ժամանակահատվածը, միշտ նույն հանդարտեցումը, որը հաջորդում է ճակատամարտին, դա պարտության լռությունն էր: Բայց այդ լռությունը, որն այժմ պարուրել էր իր բարեկամին, այնքան ամփոփ էր, այնքան սերտորեն էր ներդաշնակված ժանտախտից ազատագրված քաղաքի և փողոցների լռությանը, որ Ռիոն զգում էր, որ խոսքն այժմ վերաբերում էր վերջնական պարտությանը՝ այն պարտությանը, որն ավարտում է պատերազմը և հաստատում խաղաղությունը, որն ինքնին անբուժելի տառապանք է: Բժիշկը չգիտեր՝ վերջում Տարուն գտել էր այդ խաղաղությունը, թե ոչ, բայց այդ պահին առնվազն գիտեր, որ իր համար այլևս երբեք չի լինի հնարավոր խաղաղություն, չի լինի զինադադար այն մոր համար, որի որդին անդամահատված է, կամ մարդու համար, որ հողին է հանձնել իր բարեկամին:

Դրսում նույն ցուրտ գիշերն էր, նույն սառցակալած աստղերը սառնաշունչ ու պարզկա երկնքում: Կիսախավար սենյակում զգացվում էր ապակիների վրա ծանրացած ցուրտը, բևեռային գիշերների փայլատ խոր շնչառությունը: Անկողնու մոտ նստած էր տիկին Ռիոն իր ընտանեկան կեցվածքով՝ աջից լուսավորված մահճակալի սնարի լամպով: Սենյակի մեջտեղում՝ լույսից ահագին հեռու, Ռիոն սպասում էր իր բազկաթոռում: Գլխում իր կնոջ մասին մտածմունքն էր, որ անընդհատ ջանում էր հեռու վանել իրենից:

Անցորդների կրունկների դոփդոփյունը պարզորոշ հնչում էր պաղ գիշերվա լռության մեջ:

– Ամեն ինչ արե՞լ ես,– հարցրեց տիկին Ռիոն:

– Այո, զանգահարել եմ:

Նրանք վերսկսեցին մարմնի լուռ գիշերահսկումը: Տիկին Ռիոն ժամանակ առ ժամանակ նայում էր որդուն: Վերջինս ժպտում էր մորը, երբ որսում էր նրա հայացքներից մեկը: Գիշերվա մտերմիկ ձայները հաջորդում էին միմյանց փողոցում: Չնայած պաշտոնական թույլտվության բացակայությանը՝ այսուհանդերձ, մեքենաները սկսել էին իրենց երթևեկությունը: Նրանք ասես կլանում էին սալարկը, անհետանում էին, հետո կրկին հայտնվում: Ձայներ, կանչեր, նորից լռություն, նորից

ձիու պայտի դոփիդոփյուն, երկվագոն տրամվայի շրջադարձի ճռնչյուն, անորոշ աղմուկներ և հետո նորից գիշերվա շնչառությունը:

– Բեռնա՞ր:

– Այո:

– Չե՞ս հոգնել:

– Ոչ:

Նա գիտեր ինչ էր մտածում մայրը, գիտեր, որ այդ պահին նա սիրում էր իրեն: Բայց նա գիտեր նաև, որ մեծ բան չէր սիրել որևէ մարդու կամ առնվազն այն, որ սերը երբեք այնքան ուժեղ չէ, որ կարողանա իր յուրահատուկ արտահայտությունը գտնել: Այդպես էլ իրենք՝ մայրն ու ինքը, միշտ սիրելու են իրար լռության մեջ: Եվ մայրն էլ իր հերթին մեռնելու է, և ինքն էլ. ամբողջ կյանքում չեն կարողանալու ավելի հեռու գնալ իրենց քնքշանքի խոստովանության մեջ: Նույն կերպ նա ապրել էր Տարուի կողքին, իսկ նա մեռել էր այդ երեկոյան, և իրենց բարեկամությունը ժամանակ չէր ունեցել իսկապես ապրված լինելու: Տարուն, ինչպես ինքն էր ասում, տանուլ էր տվել խաղը: Իսկ ինքը՝ Ռիոն, ի՞նչ էր շահել: Միայն այն, որ ճանաչել էր ժանտախտը, և հիշում էր այն, որ ճանաչել էր բարեկամությունը, և հիշում էր այն, որ ճանաչել էր քնքշանքը, և մի օր իր պարտքն էր հիշել այն: Այն ամենը, ինչ մարդն ընդունակ է շահել ժանտախտի և կյանքի հետ ունեցած խաղի ժամանակ, գիտելիքն էր և հիշողությունը: Գուցե հենց դա էր, որ Տարուն ասում էր «շահել խաղը»:

Դարձյալ մեքենա անցավ, և տիկին Ռիոն մի փոքր շարժվեց աթոռի վրա: Ռիոն ժպտաց նրան: Մայրն ասաց, որ ինքը հոգնած չէ և անմիջապես ավելացրեց.

– Լավ կլիներ, որ գնայիր հանգստանալու այնտեղ՝ լեռներում:

– Անպայման, մայրիկ:

Այո, այնտեղ նա կհանգստանար: Ինչո՞ւ ոչ: Դա նույնպես մի պատրվակ կլիներ հիշելու համար: Բայց մի՞թե շահել խաղը նշանակում էր՝ ամուր մնալ միայն ապրելու համար նրա հետ, որին գիտես և որին հիշում ես, և զրկված լինել հույսից: Անկասկած այդպես էր ապրել Տարուն, քանզի գիտակցում էր, թե որքան ստերջ է ապրելը

պատրանքներից զուրկ կյանքով: Չկա խաղաղություն առանց հույսի, և Տարուն, որը մերժում էր մարդկանց իրավունքը՝ դատապարտել որևէ մեկին, և գիտեր սակայն, որ ոչ ոք չի կարող արգելել դատապարտումը, և որ անգամ զոհերը երբեմն դառնում են դահիճներ: Տարուն ապրել էր հոգեկան տառապանքների և հակասությունների մեջ՝ երբեք չիմանալով ինչ է հույսը: Գուցե դա էր պատճառը, որ սրբություն էր փնտրում և փորձում էր խաղաղությունը գտնել մարդկանց ծառայելու մեջ: Իրականում Ռիոն ոչինչ չգիտեր, և դա կարևոր չէր: Տարուի միակ պատկերներից, որ կունենար այժմ հիշողության մեջ, մի մարդու պատկերն էր, որը, երկու ձեռքով իր մեքենայի ղեկը բռնած, առաջնորդում է իրեն, կամ այդ հոծ մարմնի պատկերը, որն այժմ փռված էր առանց շարժվելու: Կյանքի ջերմությունը և մահվան պատկերը՝ սրանք էին նրա գիտելիքները:

Ահա թե ինչու, անկասկած, բժիշկ Ռիոն առավոտյան հանգիստ ընդունեց իր կնոջ մահվան լուրը: Իր աշխատասենյակում էր: Մայրը գրեթե վազեվազ բերեց հեռագիրը, հետո անմիջապես դուրս եկավ թեյադրամ տալու փոստատարին: Երբ ետ եկավ, որդին ձեռքին բռնել էր բացված հեռագիրը: Մայրը նայեց նրան, բայց նա համառորեն պատուհանից դուրս էր նայում. մի հոյակապ առավոտ էր բացվում նավահանգստի վրա:

– Բեռնար,– ասաց տիկին Ռիոն:

Բժիշկը ցրված հայացքով նայեց նրան:

– Հեռագրո՞ւմ,– հարցրեց մայրը:

– Այո՛, այդպես է,– հաստատեց որդին,– ութ օր առաջ:

Տիկին Ռիոն գլուխը շրջեց պատուհանի կողմը: Բժիշկը լուռ էր: Հետո ասաց մորը, որ լաց չլինի, որ ինքը սպասում էր դրան, բայց այդուհանդերձ դժվար է: Այդ ասելով՝ նա պարզապես գիտեր, որ իր տառապանքն անակնկալ չէր: Ամիսներ շարունակ և երկու օրից ի վեր նույն տառապանքը շարունակվում էր:

* * *

Փետրվարյան մի գեղեցիկ առավոտ՝ վաղ արշալույսին, քաղաքի դարպասները վերջապես բացվեցին. ժողովուրդը, լրագրերը,

ռադիոն և պրեֆեկտուրայի պաշտոնական հաղորդագրությունները ցնծությամբ ընդունեցին այդ լուրը: Ուրեմն պատմիչին մնում է դառնալ ժամանակագիրը այդ ուրախության ժամերի, որոնք հետևեցին դռների բացմանը, չնայած ինքը նրանցից էր, ովքեր չունեին այդ հրճվանքին միանալու լիակատար ազատությունը:

Մեծ տոնախմբություններ էին կազմակերպվել այդ օրվա առթիվ, որոնք շարունակվեցին նաև գիշերը: Միևնույն ժամանակ գնացքները սկսեցին ծուխ արձակել կայարաններում, մինչ նավերը հեռավոր ծովերից արդեն ուղղություն էին վերցնում դեպի մեր նավահանգիստը՝ իրենց ձևով ընդգծելով, որ այդ օրը բոլոր նրանց համար է, ովքեր տառապում էին բաժանումից. մեծ միացման օրն է:

Այստեղ հեշտությամբ կարելի է պատկերացնել, թե ինչի կարող է վերածվել բաժանման զգացումը, որ ապրել են մեր համաքաղաքացիներից շատերը: Գնացքները, որ մեր քաղաք էին մտնում ամբողջ օրվա ընթացքում, նույնքան ծանրաբեռնված էին, որքան քաղաքից մեկնողները: Յուրաքանչյուր ուղևոր պահել էր իր տեղը այդ օրվա համար երկու շաբաթվա հետաձգման ընթացքում՝ վախենալով, որ պրեֆեկտուրայի որոշումը կարող է վերջին պահին չեղյալ հայտարարվել: Որոշ ուղևորներ, որ մոտենում էին քաղաքին, դեռ ամբողջովին չէին ազատագրվել իրենց երկյուղից, քանի որ ընդհանուր առմամբ իմանալով նրանց ճակատագիրը, ովքեր մոտիկ էին իրենց, անտեղյակ էին մյուսների՝ հատկապես քաղաքում եղածների մասին, որոնց վերագրում էին զարհուրելի կերպարանքներ: Բայց դա ճիշտ էր միայն նրանց համար, ովքեր այս ամբողջ ժամանակամիջոցում չէին այրվել սիրով:

Սիրահարներն իրոք տրված էին իրենց սևեռուն գաղափարին: Միայն մի բան էր փոխվել նրանց համար. իրենց աքսորի ամիսներին նրանք կուզենային, որ ժամանակը չհապաղեր, որին նրանք մոլեգնաբար ասես հրում էին, որ աճապարեր, մինչդեռ հիմա, երբ նրանք արդեն մեր քաղաքի տեսադաշտում էին, երբ գնացքը սեղմել էր արգելակները կանգնելուց առաջ, ընդհակառակը, նրանք կուզենային դանդաղեցնել ժամանակի ընթացքը, կախված պահել այն: Իրենց սիրո կորած կյանքի այս բոլոր վերջին ամիսներին

միաժամանակ և՛ անորոշ, և՛ այրող զգացումը նրանցից խառ-նաշփոթ ձևով պահանջում էր ինչ-որ փոխհատուցում, որի շնորհիվ հրճվանքի ժամանակը երկու անգամ ավելի դանդաղ կանցներ, քան սպասումի ժամանակը: Իսկ նրանք, որ սպասում էին սենյակում կամ կառամատույցում, ինչպես Ռամբերը, որի՝ նախօրոք զգուշաց-ված կինը շաբաթներ ի վեր արել էր անհրաժեշտ ամեն բան գալու թույլտվություն ստանալու համար, նույն անհամբերության և խառ-նաշփոթի մեջ էին: Որովհետև այդ սիրուն կամ քնքշանքին, որ ժան-տախտի ամիսները վերածել էին վերացարկման, Ռամբերը սպա-սում էր մեծ հուզմունքով՝ առճակատվելով այդ կենդանի էակին և զգացմունքներին, որոնց հենարանն էր եղել նա:

Ռամբերը կուզենար նորից դառնալ այն մարդը, որը համաճա-րակի սկզբում պատրաստ էր մեծ խոյանքով նետվել քաղաքից դուրս՝ հանդիպելու իր սիրած կնոջը: Բայց գիտեր, որ դա այլևս հնարավոր չէր: Նա փոխվել էր, ժանտախտն իր մեջ ամրացրել էր մի տեսակ մտացրություն, որ նա ամբողջ ուժով ջանում էր ժխտել, բայց որը սակայն շարունակվում էր իր մեջ ինչպես մի խուլ անձկու-թյուն: Նա նաև այնպիսի զգացում ուներ, թե ժանտախտը շատ կտրուկ ու բիրտ էր վերջացել, որին նա դեռևս հոգեպես պատրաստ չէր: Երջանկությունը գալիս էր արագ քայլերով, իրադարձություն-ների զարգացումն ավելի սրընթաց էր, քան սպասումը: Ռամբերը հասկացավ, որ ամեն բան իրեն միանգամից է վերադարձվում, իսկ հրճվանքը այրոցք է, որ չես կարող վայելել:

Բոլորն էլ, իմիջիայլոց, ավելի կամ պակաս գիտակցաբար նման էին իրեն, և հենց այդ բոլորի մասին է, որ պետք է խոսել: Կայարանի կառամատույցում, որտեղ նրանք վերսկսելու էին իրենց անձնա-կան կյանքը, դեռ զգում էին իրենց ընդհանրությունը՝ հայացքներ և ժպիտներ փոխանակելով: Բայց հենց որ տեսան գնացքի ծուխը, աքսորի իրենց զգացողությունը հանգավ միանգամից խառնաշփոթ ու շշմեցնող ուրախության տարափի ներքո: Երբ գնացքը կանգնեց, անվերջանալի բաժանումները, որոնց սկիզբը հաճախ հենց նույն կառամատույցում էր դրվել, մեկ վայրկյանում չքացան այն պահին, երբ գրկախառնված թևերը ցնծագին ագահությամբ փակվեցին

մարմինների վրա, որոնց կենդանի ձևերը մոռացել էին: Ռամբերը նույնիսկ ժամանակ չունեցավ նայելու դեպի իրեն վազող այդ մարմնաձևին, որն արդեն փլվում էր իր կրծքին: Նա կնոջն առավ թևերի մեջ՝ կրծքին սեղմելով գլուխը, որից տեսնում էր միայն հարազատ մազերը, ազատություն տվեց արցունքներին՝ չիմանալով՝ դրանք ներկա երջանկությունից էին հորդում, թե երկար ժամանակ ճնշված վշտից, և սակայն գոնե վստահ էր, որ դրանք կխանգարեին ստուգել, թե իր ուսափոսում թաքնված այդ դեմքը նրանն էր, որին այնքան երկար էր երազել կամ, ընդհակառակը, օտարուհու դեմք էր: Նա միայն հետո կիմանար, թե արդյոք ճի՞շտ էր իր կասկածը: Իսկ այժմ ուզում էր լինել մյուսների նման, որոնք այնպիսի տեսք ունեին իր շուրջը, թե հավատում են, որ ժանտախտը կարող է գալ ու գնալ առանց դույզն-ինչ փոխելու մարդկանց հոգիները:

Մեկը մյուսին գրկած՝ այսպես բոլորը վերադառնում էին իրենց տները՝ աչքերը փակած աշխարհում մնացած ամեն բանի վրա, առերևույթ հաղթական ժանտախտի նկատմամբ, մոռացած ամեն տեսակի թշվառություն և նրանց, ովքեր նույն գնացքով էին եկել և կառամատույցում չգտնելով ոչ ոքի՝ տրամադրվել էին իրենց տանն ընդունել վախի հաստատումը, որ երկարատև լռությունն արդեն դրել էր իրենց սրտում: Վերջիններիս համար, ում այժմ ուղեկցում էր միայն իրենց դեռ թարմ վիշտը, ուրիշների համար, ովքեր այդ պահին ուխտում էին նվիրվել անհետացած էակի հիշատակին, ամեն ինչ այլ կերպ էր, և բաժանման զգացումը հասել էր իր գագաթնակետին: Նրանց՝ մայրերի, ամուսինների, սիրեկանների համար, ովքեր կորցրել էին ամեն ուրախություն այն մարդու հետ, որն այժմ կորած էր անանուն մի փոսում կամ հանգչում էր մոխրակույտի մեջ, մշտապես գոյություն ուներ միայն ժանտախտը:

Բայց ո՞վ էր մտածում այդ միայնակ հոգիների մասին: Կեսորին արևը, հաղթելով սառը քամիներին, որոնք լուսաբացից ի վեր պայքարում էին օդում, քաղաքի վրա էր շռայլում անշարժ լույսի անընդմեջ ալիքները: Օրն ասես կանգ էր առել: Բլրակների գագաթներից ամրոցների թնդանոթները անընդհատ որոտում էին քարացած երկնքում: Ամբողջ քաղաքը դուրս էր նետվել՝ տոնելու այդ

շունչը կտրող ռոպեն, երբ տառապանքների ժամանակն ավարտվում էր, իսկ մոռացման ժամանակը դեռ չէր սկսվել:

Պարում էին բոլոր հրապարակներում: Միանգամից երթևեկությունը զգալիորեն ավելացել էր, և բազմաթիվ մեքենաներ դժվարությամբ էին երթևեկում մարդկանցով լեփ-լեցուն փողոցներում: Ողջ հետմիջօրեին ուժգնորեն հնչում էին քաղաքի բոլոր զանգերը: Նրանք իրենց ղողանջներով լցնում էին կապտաոսկեթույր երկինքը: Եկեղեցիներում, իրոք, գոհության աղոթքներ էին արտասանվում: Բայց և զվարճանքի վայրերը նույնպես պայթելու աստիճանի լի էին մարդկանցով, և սրճարաններն առանց մտածելու ապագայի մասին բաժանում էին իրենց վերջին ոգելից խմիչքները: Վաճառասեղանների առջև խռնվում էին մարդկանց՝ ակնհայտորեն գրգռված խմբերը, և նրանց մեջ բազմաթիվ գրկախառն զույգեր, որոնք համարձակորեն ցուցադրում էին իրենց զգացմունքները: Բոլորը կամ բղավում էին, կամ հռհռում: Կյանքի խնայված պաշարները, որ նրանք կուտակել էին այս ամիսների ընթացքում, երբ յուրաքանչյուրն իր հոգին դրել էր գիշերահսկման վիճակի մեջ, այդ խնայողությունը նրանք ծախսում էին այնպես, կարծես այդ օրն իրենց գոյատևման օրն էր: Վաղը սկսվելու էր կյանքը ինչպես որ կար՝ իր զգուշավորություններով: Իսկ այս պահին տարբեր ծագումով մարդիկ հրմշտվում էին և եղբայրանում: Հավասարությունը, որ մահվան ներկայությունը չէր իրականացրել, փաստորեն հավաստում էր ազատագրման հրճվանքը, թեկուզև մի քանի ժամով:

Բայց այդ հասարակ զգայազեղությունը չէր կարող արտահայտել ամեն բան, և մարդիկ, որ լցվում էին փողոցները կեսօրից հետո Ռամբերի կողքին՝ հաճախ անվրդով տեսքի տակ քողարկելով մի տեսակ ավելի նուրբ երջանկություն: Շատ զույգեր և ընտանիքներ իրոք արտաքնապես թվում էին խաղաղ անցորդներ: Իրականում նրանք նրբանկատ ուխտագնացություն էին կատարում դեպի այն վայրերը, որտեղ տառապել էին: Նրանք ցանկանում էին նոր եկածներին ցույց տալ ժանտախտի թողած ակնհայտ կամ թաքնված նշանները, նրա պատմության հետքերը: Որոշ դեպքերում բավարարվում էին ուղեցույցի դերով, որը ժանտախտի ժամանակակիցն

է եղել և իբր ականատես է եղել շատ բանի, խոսում էին դրա հետ կապված վտանգի մասին՝ չհիշելով վախը: Դրանք անվնաս հաճույքներ էին: Բայց ուրիշ դեպքերում էլ, երբ խոսքը սարսուռ առաջացնող երթուղիների մասին էր, սիրահարը, հանձնված հիշողությունների քաղցր տագնապին, կարող էր ասել իր սիրած կնոջը. «Հենց այստեղ այն ժամանակներում ես շատ եմ քեզ ցանկացել, իսկ դու չկայիր»: Այդժամ կրքոտ զբոսաշրջիկները կարող էին միմյանց ճանաչել, նրանք քայլելով ասես քչփչոցների և խոստովանությունների կղզյակներ էին կազմում մարդկային ժխորի մեջ: Խաչմերուկներում նվազող նվագախմբերից առավել լավ նրանք էին ազդարարում իսկական ազատագրությունը: Քանզի այս հմայված զույգերը աղքատիկ ու հարմարեցված խոսքերով բազմության իրարանցման մեջ հավաստում էին երջանկության ամբողջական հաղթանակը և անարդարությունը, հաստատում էին, որ ժանտախտը վերջացել է, և որ ահաբեկչությունը սպառել է իր ժամանակը: Հակառակ ակնհայտ փաստերին՝ նրանք հանգիստ ժխտում էին, թե մենք երբևէ ճանաչել ենք նման անիմաստ աշխարհ, որտեղ մարդասպանը նույնքան առօրեական էր, որքան ճանճասպան մարդը, ժխտում էին այդ՝ որոշակիորեն սահմանված վայրագությունը, այդ հաշվարկված զառանցանքը, այդ բանտարկությունը, որն իր հետ բերում է մի ահավոր ազատություն այն ամենի նկատմամբ, որը ներկա չէ, այդ մահվան հոտը, որը քարացնում էր բոլոր նրանց, ում չէր սպանել, ի վերջո, նրանք ժխտում էին, որ մենք ենք եղել այն խլացած մարդիկ, որոնցից ամեն օր մի մասը, հավաքված փռի երախի մեջ, գոլորշիանում էր ճենճահոտ ծուխ արձակելով, մինչ մեկ ուրիշ խումբ, անկարողության և վախի շղթաներով կապանքված, սպասում էր իր հերթին:

Համենայնդեպս առաջինը սրանք էին զարնում Ռիոյի աչքերին, որը երեկոյան կողմ արվարձանները հասնելու համար ոտքով միայնակ քայլում էր զանգերի, թնդանոթների, երաժշտության և խլացուցիչ գոռում-գոչյունների միջով: Իր գործը շարունակվում էր, որովհետև հիվանդներն արձակուրդ չունեն: Քաղաքի վրա իջնող սքանչելի և նրբին լույսի մեջ դեռ զգացվում էին խորոված մսի և

անիսօղու հոտերը: Իր շուրջը Ռիոն տեսնում էր երկնքին նայող զվարթ դեմքեր, իրար կառչած տղամարդ ու կին՝ խանդավառ, նյարդայնացած ու ցանկասեր ճիչերով: Այո, ժանտախտն ավարտվել էր ահաբեկչությամբ, և այդ իրար գրկող ձեռքերն ասում էին, որ իրոք եղել է աքսոր, եղել է բաժանում բառի ամենախոր իմաստով:

Առաջին անգամ Ռիոն կարող էր անուն տալ այդ ընտանեկան արտահայտությանը, որ ամիսներ շարունակ ընթերցել էր բոլոր անցորդների դեմքերին: Բավական էր, որ նայեր շուրջը: Դժբախտություններով ու զրկանքներով այս բոլոր մարդիկ, հասնելով ժանտախտի վերջին, ի վերջո հագել էին այն դերի հանդերձանքը, որ խաղում էին վաղուց ի վեր՝ վտարանդու դերը, որի նախ՝ դեմքը, այժմ՝ հագուստները խոսում էին հեռավոր հայրենիքի բացակայության մասին: Այն պահից սկսած, երբ ժանտախտը փակել էր քաղաքի դարպասները, նրանք այլևս ապրել էին միայն բաժանման մեջ՝ կորցնելով մարդկային ջերմությունը, որը մոռացնել է տալիս ամեն ինչ: Քաղաքի բոլոր անկյուններում այս տղամարդիկ ու կանայք տարբեր չափով ներշնչել էին վերամիավորումներ, որոնք բոլորի համար նույն բնույթի չէին, սակայն բոլորի համար հավասարապես անհնարին էին: Նրանց մեծամասնությունը ամբողջ ուժով կանչում էր ինչ-որ բացակայի, ինչ-որ մարմնի ջերմության, քնքշանքի կամ սովորության: Ոմանք հաճախ առանց իմանալու տանջվում էին, որ մարդկային բարեկամությունից դուրս էին, որ այլևս չէին կարող մյուսների հետ հաղորդակցվել բարեկամության սովորական միջոցներով, ինչպիսիք են նամակները, գնացքներն ու նավերը: Մյուս տեսակը՝ առավել հազվադեպ, ինչպիսին էր գուցե Տարուն, ձգտում էր միանալ ինչ-որ բանի, որն ինքն էլ չէր կարող որոշակիորեն սահմանել, բայց հենց դա էր նրանց թվում միակ ցանկալին: Եվ այլ անուն չգտնելու պատճառով էր, որ երբեմն դա անվանում էին խաղաղություն:

Ռիոն շարունակում էր քայլել: Որքան առաջանում էր, այնքան բազմությունը ստվարանում էր նրա շուրջը, ժխորը՝ մեծանում, և նրան թվում էր, թե արվարձանները, որ ուզում էր հասնել, այնքան ետ-ետ էին գնում: Կամաց-կամաց նա հալվում էր այդ

հսկայական ոռնացող մարմնի մեջ, որին ավելի ու ավելի լավ էր հասկանում, որովհետև այդ աղաղակի առնվազն մի մասը իր ճիչն էր: Այո՛, բոլորը միասին էին տառապել, ինչպես իրենց միս ու արյունով, այնպես էլ հոգով, տանջվել էին դժվարին բացակայությունից, անբուժելի աքսորից և չհագեցող ծարավից: Կուտակված մեռյալների մեջ՝ շտապօգնության մեքենաների սուլոցները, նախազգուշացումները, որ հարկ է անվանել ճակատագիր, ահ ու սարսափի համառ դոփդոփյունը և նրանց սրտի սոսկալի ընդվզումը մի մեծ աղմուկ էր շարունակ շրջում և զգուշացնում այդ ահաբեկված էակներին՝ նրանց ասելով, որ հարկ է գտնել իրենց իսկական հայրենիքը: Նրանց բոլորի համար իսկական հայրենիքը գտնվում էր այդ շնչահեղձ քաղաքի պատերից անդին: Այն բուրումնավետ թփուտներում էր՝ բլրակների վրա, ծովում, ազատ երկրներում և սիրո ծանրության մեջ: Եվ դեպի կինն էր՝ դեպի երջանկությունը, որին ուզում էին վերադառնալ՝ զզվանքով շրջվելով մնացյալ ամեն ինչից:

Իսկ ի՞նչ իմաստ կարող էին ունենալ այդ աքսորն ու միավորման այդ ցանկությունը, Ռիոն անտեղյակ էր դրան: Շարունակ քայլելով, բոլոր կողմերից սեղմվելով, հարցաքննվելով՝ նա հետզհետե ավելի էր հեռանում մարդաշատ փողոցներից և մտածում էր, որ ի վերջո կարևոր չէր, որ իրերն իմաստ ունենային կամ ոչ, կարևոր էր և պետք էր տեսնել միայն այն, ինչը պատասխան էր տալիս մարդկային հույսին:

Այսուհետ նա գիտեր ինչ պատասխան էր տրված և այդ պատասխանն ավելի լավ էր նշմարում արվարձանների գրեթե դատարկ փողոցներում: Նրանք, ովքեր, քչով բավարարված, ցանկացել էին ընդամենը վերադառնալ իրենց սիրո օջախը, երբեմն փոխհատուցվել էին: Անշուշտ, նրանցից մի քանիսը դեռ միայնակ թափառում էին փողոցներում՝ զրկված այն էակից, որին սպասում էին: Թերևս ավելի երջանիկ էին նրանք, ովքեր երկու անգամ չէին բաժանվել, քան նրանք, որ համաձարակից առաջ չէին հասցրել միանգամից ստեղծել իրենց սերը, և որոնք տարիներ շարունակ կուրորեն փորձել էին հասնել դժվարին համաձայնության, որն ի վերջո կնքում է երկու սիրահար թշնամիների կյանքը: Վերջիններս, ինչպեսև ինքը՝ Ռիոն,

հույսը թեթևամտորեն դրել էին ամեն բան հարթող ժամանակի վրա. սրանք առհավետ բաժանվածներն էին: Բայց Ռամբերի նման-ները, որին բժիշկն առավոտյան ասաց. «Արիացիր, այժմ է, որ պետք է իրավացի լինել», առանց վարանելու գտան իրենց բացակային, որ կորած էին կարծում: Որոշ ժամանակ համենայնդեպս երջանիկ կլի-նեն: Նրանք այժմ գիտեին, որ եթե կա մի բան, որ կարող են մշտա-պես ցանկանալ և երբեմն էլ ձեռք բերել, մարդկային քնքշությունն է: Բոլոր նրանց համար, ովքեր, ընդհակառակը, դիմել էին իրենցից վերև, որ մարդն ինչ-որ բան նշանակում է, որ իրենք անգամ չէին պատկերացնում, ոչ մի պատասխան չեղավ: Տարուն երևի միացել էր այդ դժվարին խաղաղությանը, որի մասին խոսում էր, սակայն միայն մահվան մեջ, երբ այն այլևս ոչնչով չէր կարող ծառայել իրեն: Ուրիշները, ընդհակառակը, ինչպես Ռիոն տեսնում էր տների շեմե-րին, ուժգին գրկախառնված և կրքոտ հայացքով նայելով միմյանց, ձեռք բերեցին այն, ինչ ցանկանում էին, որովհետև խնդրել էին այն միակ բանը, որ իրենցից էր կախված: Եվ Ռիոն, շրջվելով այն փողոցը, որտեղ ապրում էին Գրանը և Կոթարը, մտածում էր, որ արդարացի է, եթե գոնե ժամանակ առ ժամանակ ուրախությունը փոխհատուցում է նրանց, ովքեր բավարարվում են մարդով և մարդկային խղճուկ ու սոսկալի սիրով:

Այս ժամանակագրությունը մոտենում է իր ավարտին: Ժամա-նակն է, որ բժիշկ Բեռնար Ռիոն խոստովանի, թե ով է դրա հեղի-նակը: Սակայն վերջին իրադարձությունները պատմելուց առաջ նա կուզենար գոնե արդարացնել իր միջամտությունը և հասկանալի դարձնել իր անկողմնակալ վկայակոչի հնչերանգը: Ժանտախտի տևողության ամբողջ ընթացքում մասնագիտության բերումով նա ստիպված էր եղել հանդիպել իր համաքաղաքացիներից շատե-րին և վերապրել նրանց զգացմունքները: Ուստի նա մեծ հաջողու-թյամբ կարող էր պատմել իր տեսածն ու լսածը: Բայց կուզենար դա անել պատշաճ ձևով: Ընդհանուր առմամբ նա ջանացել է չհաղոր-դել ավելին, քան կարողացել էր տեսնել, ժանտախտի իր գործըն-կերներին չփոխանցել այնպիսի մտքեր, որոնք ի վերջո պարտադիր չէր, որ առաջանային նրանց մեջ, և ձգտել է օգտագործել այնպիսի

տվյալներ, որ պատահականությունը կամ դժբախտությունը դրել էր իր ձեռքի տակ:

Ասես կանչված լինելով վկայություն տալու ոճրագործության դեպքի առիթով՝ նա պահպանում էր որոշակի զսպվածություն, ինչպես վայել է բարի կամքի տեր վկային: Բայց միաժամանակ, ազնիվ հոգու օրենքի համաձայն, նա գիտակցաբար կիսում էր նաև զոհի դերը՝ ցանկանալով միանալ մարդկանց, իր համաքաղաքացիներին՝ վստահ և համոզված, որ իրենք ունեն ընդհանրություններ՝ սերը, տառապանքն ու աքսորը: Այդպիսով իր համաքաղաքացիների անձկություններից չեղավ և ոչ մեկը, որ նա չբաժաներ, չգտնվեց ոչ մի իրավիճակ, որ չլիներ նաև իրենը:

Ազնիվ վկա լինելու համար նա պետք է զեկուցեր հատկապես գործողությունների, փաստաթղթերի և ասեկոսեների մասին: Բայց իր անձնական ասելիքը, իր սպասումներն ու փորձությունները նա պետք է լռեցներ: Իսկ եթե երբեմն օգտվել է դրանցից, ապա միմիայն հասկանալու կամ իր համաքաղաքացիներին հասկացնելու համար, և որքան հնարավոր է ճշգրիտ ձևով փոխանցելու այն ամենը, ինչ նրանք շատ ժամանակ զգում էին տարտամորեն: Ճիշտն ասած՝ այդ բանական ճիգը նրա վրա թանկ էր նստել: Երբ նա փորձել էր իր հավատամքը անմիջականորեն խառնել հազարավոր ժանտախտահար ձայներին, հանկարծ ծառս էր եղել այն մտքից, որ չի եղել ոչ մի տառապանք, որ միաժամանակ ուրիշների տառապանքը եղած չլինի, և որ աշխարհում, ուր ցավը շատ հաճախ միայնակ էր, այդ բանն առավելություն էր: Հետևաբար նա պարտավոր էր խոսել բոլորի անունից:

Սակայն մեր համաքաղաքացիների մեջ կար առնվազն մեկը, ում անունից Ռիոն չէր կարող խոսել: Խոսքն հիարկե վերաբերում է նրան, ում մասին Տարուն մի օր ասել էր Ռիոյին. «Նրա միակ իսկական հանցանքն այն է, որ չի կարող իր սրտի խորքում մերժել այն, ինչը սպանում է երեխաներին և մարդկանց: Մնացյալը հասկանում եմ, բայց այս մեկը ստիպված եմ պարզապես ներել»: Արդարացի է, որ այս ժամանակագրությունն ավարտվում է հենց նրանով, ում սիրտն անգիտակից է, այսինքն՝ միայնակ:

Երբ բժիշկ Ռիոն դուրս եկավ տոնախմբությունների աղմկոտ մեծ փողոցներից և երբ շրջվեց դեպի Գրանի ու Կոթարի փողոցը, նրան կանգնեցրեց ոստիկանների մի հոծ պատնեշ: Դա անսպասելի էր իր համար: Տոնախմբությունների հեռավոր ժխորը առանձնացնում էր լուռ թաղամասը, որը թվում էր նույնքան ամայի, որքան և համր: Ռիոն հանեց անցաթուղթը:

– Անհնար է, բժի՛շկ,– ասաց ոստիկանը,– մի խենթ կրակում է ամբոխի վրա: Բայց մնացեք այստեղ, կարող եք օգտակար լինել:

Այդ պահին Ռիոն տեսավ իր կողմը եկող Գրանին: Նա ևս ոչինչ չգիտեր: Նրան թույլ չէին տվել անցնել, բայց իմացել էր, որ կրակոցները գալիս էին իր շենքից: Հեռվից իրոք երևում էր չջերմացնող արևի վերջին լույսերից ոսկեզօծված տան ճակատը: Տան շուրջը մի ընդարձակ դատարկ տարածություն էր առանձնացված, որը հասնում էր մինչև մայթը: Խճուղու մեջտեղում պարզորոշ նշմարվում էր մի գլխարկ և աղտոտ լաթի մի կտոր: Ռիոն ու Գրանը կարող էին տեսնել շատ հեռվում՝ փողոցի մյուս կողմում, ոստիկանների մեկ այլ շղթա՝ զուգահեռ այս մեկին, որն իրենց թույլ չէր տալիս առաջանալ: Շենքի մոտ՝ ոստիկանների ետևում, թաղամասի մի քանի բնակիչ գնում-գալիս էին արագորեն: Ուշադիր նայելով՝ նրանք նկատեցին նաև այլ ոստիկանների՝ ատրճանակները ձեռքներին, դարանակալած տան դիմացի շենքերի դռների արանքներում: Տան բոլոր լուսափեղկերը փակված էին: Այսուհանդերձ, երրորդ հարկում փեղկերից մեկն ասես կիսով չափ բաց էր: Փողոցում լռությունը կատարյալ էր: Միայն լսվում էին երաժշտության պատառիկներ, որոնք հասնում էին քաղաքի կենտրոնից:

Հանկարծ այդ տան դիմացի մի շենքից ատրճանակի երկու կրակոց արձակվեց, և փշրված փեղկից դուրս թռան պայթյուններ: Այնուհետև դարձյալ լռություն տիրեց: Հեռվից և օրվա ժխորից հետո այդ ամենն անիրական էր թվում:

– Դա Կոթարի պատուհանն է,– հանկարծ բացականչեց Գրանը չափազանց հուզված:– Բայց չէ՞ որ Կոթարն անհետացած է:

– Ինչո՞ւ են կրակում,– հարցրեց Ռիոն ոստիկանին:

– Զվարճանում են: Սպասում են բոլոր անհրաժեշտ իրերով բեռնված մեքենային, որովհետև կրակում են, կրակում են նրանց վրա, ովքեր փորձում են մտնել շենքից ներս: Մի ոստիկան արդեն վիրավորված է:

– Ինչո՞ւ են կրակում:

– Չգիտենք: Մարդիկ իրենց համար ուրախանում էին փողոցում: Ատրճանակի առաջին կրակոցից նրանք ոչինչ չհասկացան: Երկրորդից հետո ճիչեր լսվեցին, մեկը վիրավորվեց, և բոլորը փախան: Դե ինչ-որ խելագար է, պարզ է:

Վերականգնված լռության մեջ րոպեներն ասես հապաղում էին: Հանկարծ փողոցի մյուս կողմից նրանք տեսան, որ մի շուն ցատկեց՝ առաջին շունը, որ Ռիոն տեսնում էր վաղուց ի վեր՝ մի կեղտոտ սպանիել, որի տերերը երևի ստիպված էին եղել նրան թաքցնել մինչ այդ, և որը սկսեց թռչկոտել պատերի երկայնքով: Հասնելով մուտքի դռանը՝ նա վարանեց, նստեց ետևի թաթերին և պտտվեց ինքն իր շուրջը լվերին խժռելու համար: Ոստիկանների սուլիչների բազմաթիվ կանչերը նրան սթափեցրին: Նա բարձրացրեց գլուխը, հետո որոշեց դանդաղորեն կտրել-անցնել խճուղին գլխարկը հոտոտելու համար: Հենց այդ պահին ատրճանակը կրակոց արձակեց երրորդ հարկից, և շունը շրջվեց, ինչպես բլիթը թավայի մեջ, կտրուկ թափահարեց տոտիկները, վերջապես տապալվեց կողքի վրա՝ ջղաձգվելով երկար ցնցումներից: Ի պատասխան, դիմացից արձակված հինգ-վեց կրակոցներն էլ ավելի փշրեցին պատուհանափեղկը: Լռությունը վերահաստատվեց: Արևն արդեն շրջվել էր մի քիչ, և ստվերը սկսել էր մոտենալ Կոթարի պատուհանին: Փողոցում՝ բժշկի ետևում, մեքենան կամացուկ արգելակվեց:

– Ահա և նրանք:

Բազմաթիվ ոստիկաններ իջան ցած՝ մեջքներին բարձած պարաններ, սանդուղք և երկու երկարավուն գլան՝ փաթեթավորված յուղապատ կտավով: Նրանք գնացին Գրանի շենքի դիմացի փողոցը, որն ուրվագծում էր խառնիխուռն տների կույտը: Մի պահ անց ոչ թե տեսան, այլ գլխի ընկան, որ այդ տների դռների մեջ

անցուդարձ կար: Հետո սպասում էին: Շունն այլևս չէր շարժվում, բայց այժմ լողում էր մուգ արնափոսում:

Հանկարծ ոստիկանների գրաված տների պատուհաններից պայթեց գնդացրի մի կրակահերթ: Կրակահերթի ամբողջ ընթացքում պատուհանափեղկը, որին նշան էին բռնել, բառացիորեն փլուզվեց և բացահայտեց մի սև տարածք, որտեղ Ռիոն ու Գրանը իրենց տեղից ոչինչ չէին կարող զանազանել: Երբ կրակոցները դադարեցին, մեկ այլ անկյունից՝ ավելի հեռու մի տնից, մի երկրորդ գնդացիր սկսեց ճարճատել: Գնդակներն անկասկած մտնում էին պատուհանի շրջանակից ներս, քանի որ դրանցից մեկը թռցրեց աղյուսի բեկորներ: Նույն վայրկյանին երեք ոստիկան վազքով անցան փողոցը և խուժեցին մուտքի դռան մեջ: Գրեթե նույն պահին երեք այլ ոստիկան աճապարեցին նրանց ետևից, և գնդացրի կրակոցը դադարեց: Մի քիչ էլ սպասեցին: Երկու հեռավոր պայթյուն լսվեց շենքի ներսում: Հետո խլրտյուն սկսվեց, և տեսան, որ տնից դուրս է բերվում, ավելի շուտ գրկած, քան թե քարշ տալով, մի փոքրամարմին մարդ՝ միայն շապիկով, որն անընդմեջ բղավում էր: Ասես հրաշքով փողոցի բոլոր փակ փեղկերը բացվեցին, և պատուհանները լցվեցին հետաքրքրասերներով, մինչ մարդիկ խմբերով դուրս էին գալիս տներից և շտապում էին տեղ գրավել պատնեշների ետևում: Մի պահ միայն տեսան փոքրիկ մարդուն՝ ոտքերը վերջապես գետնին դրած. թևերը ետևից բռնել էին ոստիկանները: Նա բղավում էր: Մի ոստիկան մոտեցավ նրան և բռունցքի ամբողջ ուժով երկու հարված հասցրեց անշտապ և հմտորեն:

– Կոթարն է,– մրմնջում էր Գրանը,– գժվել է:

Կոթարն ընկել էր: Երևաց նաև ոստիկանը՝ ինչպես է ոտքի ամբողջ ուժով հարվածում գետնի վրա գալարվող այդ կույտին: Հետո մարդկանց մի անորոշ խումբ շարժվեց և գնաց դեպի բժիշկն ու իր հին բարեկամը:

– Շարժվեք,– ասաց ոստիկանը:

Երբ մարդիկ անցնում էին, Ռիոն շրջեց հայացքը:

Գրանն ու բժիշկը հեռացան հանգչող մթնշաղի մեջ: Կարծես այս դեպքը ցնցել էր ընդարմացումը, որի մեջ ննջում էր թաղամասը,

https://1915.info

տարանջատ փողոցները կրկին լցվում էին խմբերով քայլող ամբոխի բզզոցներով: Տան ներքևում Գրանը հրաժեշտ տվեց բժշկին: Նագնում էր աշխատելու: Բայց բարձրանալու պահին նա բժշկին ասաց, որ Մաննային նամակ էր գրել, և որ այժմ գոհ էր: Հետո վերսկսեց իր խոսքը. «Ես ջնջել էի բոլոր ածականները»,– ասաց նա:

Եվ մի խորամանկ ժպիտով բարձրացրեց գլխարկը հանդիսավոր ողջույնով: Սակայն Ռիոն մտածում էր Կոթարի մասին, և բռունցքների խուլ աղմուկը, որը ջնջխում էր վերջինիս դեմքը, ուղեկցում էր նրան ամբողջ ճանապարհին, երբ նա գնում էր ծեր ասթմատիկի տուն: Գուցե ավելի դժվար է մտածել մեղավոր մարդու մասին, քան մեռածի:

Երբ Ռիոն հասավ իր ծերուկ հիվանդի մոտ, գիշերն արդեն կլանել էր ամբողջ երկինքը: Սենյակից կարելի էր լսել ազատության հեռավոր ժխորը, իսկ ծերուկը շարունակում էր նույն հումորով լցնել ու դատարկել իր սիսեռները:

– Իրավունք ունեն ուրախանալու,– ասաց նա,– ամեն ինչ պետք է աշխարհը ստեղծելու համար: Իսկ ձեր գործընկերը, բժի՛շկ, ի՞նչ եղավ նա:

Պայթյուններ էին լսվում, բայց դրանք խաղաղասիրական էին. երեխաներն արձակում էին իրենց պայթուցիկները:

– Նա մահացավ,– ասաց բժիշկը՝ լսելով նրա խռխռացող կրծքավանդակը:

– Ի՞նչ եք ասում,– ասաց ծերուկը փոքր-ինչ այլայլված:

– Ժանտախտից,– ավելացրեց Ռիոն:

– Այո,– ընդունեց ծերուկը փոքր դադարից հետո,– լավագույնները գնում են: Դա է կյանքը: Բայց այդ մարդը գիտեր, թե ինչ էր ուզում:

– Ինչո՞ւ եք այդպես խոսում,– հարցրեց բժիշկը, որը դասավորում էր իր ստեթոսկոպը:

– Հենց այնպես: Իսկ նա, նա հենց այնպես չէր խոսում: Եվ հետո՝ նա ինձ դուր էր գալիս: Միշտ այդպես է: Ուրիշներն ասում են. «Ժանտախտ էր: Ժանտախտ տեսանք»: Քիչ է մնում շքանշան պահանջեն: Բայց ի՞նչ է նշանակում ժանտախտ: Դա կյանքն է, և այս է ամենը:

– Կանոնավոր կատարեք ձեր ինհալացիաները:

– Օ՜, չվախենաք: Ես դեռ երկար ժամանակ ունեմ և պիտի տեսնեմ բոլորի մահը: Ես գիտեմ ապրել:

Հեռվից ուրախության ոռնոցները պատասխանեցին նրան: Բժիշկը կանգ առավ սենյակի մեջտեղում:

– Ձեզ չե՞մ խանգարի, եթե դարավանդ բարձրանամ:

– Ոչ, ոչ: Ուզում եք նրանց բարձրից դիտել, հա՞: Ինչպես կամենաք: Բայց նրանք միշտ նույնն են:

Ռիոն ուղղվեց դեպի սանդուղքը:

– Ասացեք, բժիշկ, ճի՞շտ է, որ հուշարձան են կառուցելու ժանտախտի զոհերի համար:

– Լրագրում են գրել: Հուշասյուն կամ հուշատախտակ:

– Համոզված էի: Ճառեր էլ կարտասանեն:

Ծերուկը հևիհև հռհռում էր:

– Ես հիմա արդեն լսում եմ նրանց՝ «Մեր զոհվածները...», և հետո գնում են «մի կտոր հաց» ուտելու:

Ռիոն արդեն բարձրանում էր սանդուղքով: Հսկայական սառը երկինքը փայլում էր տների վերևում, և բլրակների մոտ աստղերը կարծր էին թվում, ինչպես կայծքարեր: Այս գիշերն այնքան էլ չէր տարբերվում այն գիշերից, երբ Տարուի հետ եկել էին այդ դարավանդը ժանտախտը մոռանալու համար: Միայն այժմ ժայռերի ստորոտում ծովն ավելի աղմկոտ էր, քան այն ժամանակ: Օդն անշարժ էր ու թեթև, մաքրված աղաբույր շնչառությունից, որ բերում էր աշնան գաղջ քամին: Այսուհանդերձ, քաղաքի ժխորը ալիքի նման շարունակ հարվածում էր դարավանդների ստորոտներին: Սակայն այս գիշերը ազատագրման գիշերն էր և ոչ թե ընդվզումի: Հեռվում՝ կարմրաթույր խավարի մեջ, առանձնանում էին կանոնավոր ճեմափողոցներն ու լուսավորված հրապարակները: Այժմ արդեն ազատագրված գիշերվա մեջ տենչանքը դառնում էր անսանձելի, և նրա մռնչյունը հասնում էր Ռիոյին: Մութ նավահանգստից բարձրացան պաշտոնական տոնախմբությունների առաջին հրթիռները: Քաղաքը դրանց արձագանքեց երկարաձիգ ու զուսպ բացականչությամբ: Կոթարը, Տարուն՝ այն մարդիկ, որոնց Ռիոն սիրել էր

և կորցրել, բոլորը՝ մեռած թե մեղավոր, բոլորը մոռացված էին: Ծերուկն իրավացի էր՝ մարդիկ միշտ նույնն են մնում: Բայց հենց դա էր նրանց ուժն ու անմեղությունը, և հենց այստեղ էր, որ ամեն ցավից վեր Ռիոն զգում էր, որ միանում է նրանց: Ուժգնությամբ և տևողությամբ կրկնապատկվող աղաղակների մեջ, որոնք երկարաձգվում էին մինչև դարավանդները, մինչև հրավառությունների գույնզգույն փնջերը բազմանալով բարձրանում էին երկինք, Ռիոն ուրեմն որոշեց շարադրել այս պատմությունը, որն ավարտվում է այստեղ, գրեց, որպեսզի չլինի նրանց նման, ովքեր լռում են, որպեսզի վկայի՝ հօգուտ այդ ժանտախտահարների, որպեսզի գոնե թողնի հիշողությունը անարդարության ու բռնության, որ կիրառվել է նրանց նկատմամբ, և որպեսզի պարզապես ասի այն, ինչ սովորում են արհավիրքի ժամանակ, այն է՝ մարդկանց մեջ ավելի շատ բան կա արժանի հիացմունքի, քան արհամարհանքի:

Սակայն նա գիտեր, որ այս ժամանակագրությունը չի կարող լինել վերջնական հաղթանակի ժամանակագրություն: Այն կարող է վկայությունը լինել լոկ այն բանի, ինչ պետք էր կատարել, և անշուշտ, ինչ պետք է, որ դեռ կատարվի ահաբեկչության ու նրա անդադրում զենքի դեմ՝ չնայած անձնական վիրավորանքներին, իսկ բոլոր նրանք, ովքեր չեն կարողացել սրբեր դառնալ, բայց մերժում են աղետները, փորձում են դառնալ բժիշկներ: Ականջ դնելով քաղաքից բարձրացող զվարթ աղաղակներին՝ Ռիոն հիշում էր, որ այդ հրճվանքը միշտ էլ եղել է սպառնալիքի տակ, քանզի հրճվող այդ ամբոխը չի հասկանում, և դա կարելի է կարդալ գրքերում, որ ժանտախտի բացիլը երբեք չի մեռնում կամ անհետանում, որ այն կարող է քնած մնալ տասնյակ տարիներ կահույքի ու սպիտակեղենի մեջ, որ այն համբերատար սպասում է ննջարաններում, նկուղներում, ճամպրուկներում, թաշկինակներում ու գզրոցներում, և որ գուցե գա մի օր, երբ մարդկանց դժբախտության ու դաստիարակության համար ժանտախտն արթնացնի իր առնետներին և ուղարկի սատկելու որևէ երջանիկ քաղաքում:

ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ (1913-1960)

1913, նոյեմբերի 7 - Մինդովիայում (Ալժիր) ծնվում է Ալբեր Կամյուն: Հայրը՝ Լյուիեն Կամյուն, բանվոր էր, 1871թ. Ալժիրում հաստատված էլզասյան ընտանիքից: Մայրը՝ Կատրին Սընթեսը (Կատրինը հետագայում կդառնա Կամյուի դստեր անունը, իսկ Սընթեսը՝ Մյորսոյի ընկերոջ ազգանունը), ծագումով մալյորկացի էր:

1914, օգոստոսի 2 - Սկսվում է առաջին աշխարհամարտը: Հայրը վիրավորվում է Մարնի ճակատամարտում և մահանում Սեն-Բրիյոքի հիվանդանոցում: Մայրը վերադառնում է Ալժիր և հաստատվում մայրաքաղաքի Բելկուր թաղամասում: Ալբեր Կամյուն մեծանում է աղքատության մեջ: «...Ազատությունը ես չեմ ուսանել Մարքսի գործերում: Իրականում ազատությունը ես սովորել եմ թշվառության մեջ»:

1918-1923 – Հաճախում է համայնքային դպրոց:

1923-1930 – Ուսումնառություն Ալժիրի լիցեյում:

1930 – Ընդունվում է գրականության բարձրագույն դպրոց:

1932 – Հրատարակում է չորս հոդված «Հարավ» ամսագրում:

Ի հայտ են գալիս թոքախտի առաջին նշանները:

1933 – Ուսանում է Ալժիրի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում:

Ամուսնանում է Սիմոն Հիի հետ, որից բաժանվում է երկու տարի անց:

1934 – Հարում է կոմունիստական կուսակցությանը:

1935 – Դուրս է գալիս կոմունիստական կուսակցությունից:

1936 – Ստանում է փիլիսոփայության բարձրագույն դպրոցի դիպլոմ:

1936 – Հիմնում է «Աշխատանքի թատրոնը»:

1937 – Լրագրող «Ալժե ռեպյուբլիկեն» թերթում: Հիմնում է «Էկիպ» թատրոնը: Հրատարակում է «Երես և աստառ» ժողովածուն:

Սկսում է «Երջանիկ մահ» վեպը, որը մնում է անավարտ:

Այն լույս տեսավ հետմահու՝ 1971 թվականին:

1939 – Գրում է «Ամուսնություններ» էսսեն:

1939, սեպտեմբերի 3 - Երկրորդ աշխարհամարտի սկիզբը:

1940 – Ամուսնանում է երկրորդ անգամ օրանցի Ֆրանսին Ֆորի հետ: Փակվում է «Ալժե ռեպյուբլիկենը»՝ վերածվելով «Սուար ռեպյուբլիկենի»:

1940, մայիսի 10 - Գերմանացիները ներխուժում են Ֆրանսիա:

Կամյուն հաստատվում է Փարիզում: Աշխատում է «Պարի-Սուարի» խմբագրությունում:

1942 – «Գալիմար» հրատարակչությունը տպագրում է «Օտարը»: Մասնակցում է Դիմադրության շարժմանը: Հիմնում է «Կոբրա» լրագիրը:

1942 – Հրատարակում է «Սիզիփոսի առասպելը»:

1944 – Ստանձնում է «Կոբրայի» տնօրինությունը:

Բեմադրվում է «Թյուրիմացություն» պիեսը, գլխավոր դերում՝ Մարիա Կազարես:

1945 – Բեմադրվում է «Կալիգուլան». գլխավոր դերում՝ Ժերար Ֆիլիպ:

1946 – Ճանապարհորդություն ԱՄՆ-ով: Նյու Յորքում ելույթ է ունենում ամերիկյան ուսանողների առջև:

1947 – Լույս է տեսնում «Ժանտախտը»: Աննախադեպ հաջողություն, արժանանում է «Քննադատների մրցանակին»:

1948 – Բեմադրվում է «Պաշարված վիճակը»:

1949 – Ճանապարհորդություն Հարավային Ամերիկայով:

Բեմադրվում է «Արդարադատները» պիեսը:

1951 – Լույս է տեսնում «Ընդվզող մարդը» էսսեն:

1954 – Հրատարակվում է «Ամառը» ժողովածուն՝ գրված 1939-1953 թվականներին:

1956 – Լույս է տեսնում «Անկումը» պատմվածքը:

Թարգմանում և բեմադրում է Ուիլյամ Ֆոլքների «Ռեքվիեմ միանձնուհու համար» պիեսը:

1957 – Հրատարակվում է «Աքսոր և արքայություն» պատմվածքների ժողովածուն:

Գրականության Նոբելյան մրցանակի շնորհում:

1958 – Լույս է տեսնում «Շվեդական ճառերը» ելույթների ժողովածուն:

1959 – Բեմադրում է Դոստոևսկու «Դևերը»:

Ուրվագծում է «Առաջին մարդը» վեպը:

1960 հունվարի 4 - Զոհվում է ավտովթարից, Փարիզի ճանապարհին՝ Վիլբլըվինի մոտ:

https://1915.info

https://1915.info

ՆՈԲԵԼՅԱՆ
ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔ	«Իմ անունը Կարմիր է»
2. ԷԼՖՐԻԴԵ ԵԼԻՆԵԿ	«Դաշնակահարուհին»
3. ԳՅՈՒՆԹԵՐ ԳՐԱՍ	«Թիթեղյա թմբուկը»
4. ՆԱՋԻԲ ՄԱՀՖՈՒՋ	«Ռադոբիս»
5. ՄԱՐԻՈ ՎԱՐԳԱՍ ԼՅՈՍԱ	«Պանտալեոնը և Այցելուների ջոկատը»
6. ՊԱՏՐԻԿ ՄՈԴԻԱՆՈ	«Որ չկորչես թաղամասում»
7. ՎԻԼՅԱՄ ԳՈԼԴԻՆԳ	«Ճանճերի Տերը»
8. ԻՄՐԵ ԿԵՐՏԵՍ	«Անբախտություն»
9. ԺԱՆ-ՊՈԼ ՍԱՐՏՐ	«Սրտխառնոց»
10. ՍՎԵՏԼԱՆԱ ԱԼԵՔՍԻԵՎԻՉ	«Պատերազմը կնոջ դեմք չունի»
11. ՀԵՐՄԱՆ ՀԵՍՍԵ	«Հուլունքախաղ»
12. ԳԱԲՐԻԵԼ ԳԱՐՍԻԱ ՄԱՐԿԵՍ	«Նահապետի աշունը»
13. ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔ	«Սև գիրքը»
14. ԱԼԻՍ ՄԱՆՐՈ	«Պատրանքով տարված»
15. ՈՒԻԼՅԱՄ ՖՈԼՔՆԵՐ	«Ես այնժամ դեռ մահամերձ»
16. ԿԼՈԴ ՍԻՄՈՆ	«Քամին»
17. ԳԱԲՐԻԵԼ ԳԱՐՍԻԱ ՄԱՐԿԵՍ	«Հարյուր տարվա մենություն»
18. ՇՄՈՒԵԼ ՅՈՍԵՖ ԱԳՆՈՆ	«Մի գիշերվա հյուր»
19. ՈՒԻԼՅԱՄ ՖՈԼՔՆԵՐ	«Շառաչ և ցասում»
20. ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ	«Օտարը»

ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ

ԺԱՆՏԱԽՏԸ

ALBERT CAMUS

LA PESTE

Թարգմանիչ՝ Աննա Հակոբյան

Հրատ. խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Սրբագրիչ՝ Լիանա Զոբանյան
Էջադրող՝ Արմինե Պապանյան
Շապիկը՝ Սոֆի Հարությունյանի
Կազմի ձևավորումը՝ Արաքս Սարգսյանի

Նոբելյան բանախոսության
հատվածի թարգմանությունը՝ Հռիփսիմե Դայանի

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան 0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am

https://1915.info